

ՆԱՐ ՃՐԵՎԸ

Ի ՏՈՒՐԻ

ՄՅՈՒՖՔ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՈԱԳԻՐ

№ 12

ԳԵԿՏԵՄԲԵՐ

1901

ԹԻ ՖԼԻՇ

Տպոգրաֆիա Հրայր և Տիգրան Գրիգոր Հրայր, Ամերիկական,
1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

- | | | |
|-----|--|-----|
| 1. | ՏԵՐՏԵՐԻՆ ՈՒԽՏԸ, պատմուածք, 1. Բաւալեանի | 5 |
| 2. | ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՆԵՐԲՈՂ, բանաստ. Նեկրասովի,
թարգմ. Ալ. Շատուրեանի | 13 |
| 3. | «ՀՈՎԱՆԱՊԻՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...», պատ-
մուածք Օ. Շրէյնէրի, թարգմ. Ա. Ն. | 15 |
| 4. | ՀԱՅԻՊՏՄԱՆ ԵՒ ՆԲԱ ԳԼԽԱՒՈՐ ԵՐԿԵՐԸ, յօդ. Ե.
Թոփչեանի | 24 |
| 5. | ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալ. Դողէի (վերջ), թարգ. Տ. Յ. | 47 |
| 6. | ՅԱԻՔԺԱՐՄԱՆ, պօէմա Պուշկինի, թարգմ. Կ. Կրա-
սինիկեանի | 57 |
| 7. | ԴԵՐՄՈՆԱՑԻՆԵՐԸ ԱՐԵՒԵԼ, Քի Միջ, յօդ. Առանձարի | 80 |
| 8. | ՍԵՐՈԲԵՆՑ ԱՆԵՐԸ, պատմուածք Ա. Շահնազարեանի | 87 |
| 9. | ՊԱՏԻԺՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՄԱՆՈՒՄ, յօդ. Ե. Ֆրանցեանի | 116 |
| 10. | ԽԱԻՄՐԵՍ, ԼՈԴՈՒԻՆ, պատմուածք Ա. Ահարոնեանի . | 121 |
| 11. | ԽԱՂԱՂՈՒԹԵՍԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Խ ԿՈՆԳՐԵՍԸ,
Հ. Առաքելեանի | 134 |
| 12. | ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՑՆԵՐ, Ստեփան Հոկան, Լեօն . | 146 |
| 13. | ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—(52) „Մաтериалы по вопросу о
фаленопикакий“ Լ. Ա.—(53) Алавердянցъ. „Кончина
Грабоэдова. Լ.—(54) Ա. Թառյանց, „Գէօթէ“, Վ. Կ.
—(55) „Հանդէս հայադիտութեան“, Վ. Կ. | 177 |
| 14. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Փանձարանի նաւթարեր հո-
գերի սլուղավճարի ասիթով, Ի. | 193 |
| 15. | ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մոռած գործիչներին հրապարա-
կական յարգունք արտայատերու ամենամողովրդական
ձևը մեր մէջ.—Յ. Լազարեանի մահուան հարիւրամեատ-
կի առիթով որոշաւմներ մայբաքաղաքներում.—Գամա-
թիսպատի մահարձանի բացումը և հայի հասարակա-
կան անտարբերութեան նոր ապացույներ. —Ղետնդ Ս-
լիշանի հոգեհանգստի առիթով յայտնած ճնոր սկզբ-
ուունք. —Հայ-կաթոլիկ Ելիշանի օրինակը ի՞նչ ապա-
ցուցեց. —Մի թուրք գաճառականի հասարակական լայն
ձգտումները. —Գիտութեան անաշուռութիւնը. —Հնագի-
տական բնկ. ճիւղի նշանակութիւնը կովկասցիներիս
համար. —Խօրօլիկինը ոգբական պրօլետարիացի» մա-
սին. —Դրական մշակներին օդուող ընկերութիւններ և | |

Խար. Հրատան 1 տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1901

ԹԻՖԼԻՍ

Տիպոգրիա Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1901

Дозволено цензурою Тифлисъ, 26-го декабря 1901 г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

- | | | |
|-----|--|-----|
| 1. | ՏԵՐՑԵՐԻՆ ՈՒԽՏԸ, պատմուածք, Լ. Բաւալեանի | 5 |
| 2. | ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՆԵՐԲՈՒՆ, բանաստ. Նեկրասովի,
թարգմ. Ա. Ծառուշեանի | 13 |
| 3. | «ՀՈՎԱՆԱԼԻՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...», պատ-
մուածք Օ. Շրէյնէրի, թարգմ. Ա. Ն. | 15 |
| 4. | ՀԱՌԻՊՏՄԱՆ ԵՒ ՆԲՍ. ԳԼԽԱԼԻՈՐ ԵՐԿԵՐԻ, յօդ. Ե.
Թոփիշեանի | 24 |
| 5. | ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ա. Դոգէի (վերջ), թարգ. Տ. Յ. . | 47 |
| 6. | ՅԱՒԷՐԺՄԱՆ պօէմա Պուշկինի, թարգմ. Կ. Կրա-
սիլնիկեանի | 57 |
| 7. | ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԱՐԵԽԵԼՔԻ Մէջ, յօդ. Առանձարի | 80 |
| 8. | ՍԵՐՈԲԵՆՅԱ ԱԾԵՐԸ, պատմուածք Ա. Շահնազարեանի | 87 |
| 9. | ՊԱՏԻԺՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, յօդ. Ե. Ֆրանցեանի | 116 |
| 10. | ԽԱՒՅՈՒՆ, ԼՈԴՈՒՆ, պատմուածք Ա. Ահարոնեանի . | 121 |
| 11. | ԽԱՂԱՋՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՅՐՀԱՅԻՆ Խ ԿՅՆԳՐԵՍԻ,
Հ. Առաքելեանի | 134 |
| 12. | ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՏՍՆԵՐ. Ստուֆան Հական, Լեօփ . | 146 |
| 13. | ՄԱՏԵՎԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ.—52) „Մատերիալ ո вопросу о
фалсификации“ Լ. Ս.—53) Ալավերդյանը. „Կոչինա
Գրիբոեւովա. Լ.—54) Ս. Թառալեանց, „Գէօթէ“, Ա. Ն.
—55) „Հանդէս հայադիտութեան“, Ա. Ն. | 177 |
| 14. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑՆ, Գանձարանի նաւթարեր հո-
ղերի պուգավճարի առիթով, Ի. | 193 |
| 15. | ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեռած գործիչներին հրապարա-
կական լարգանք արտադայուելու ամենաճողովրդական
ձեւ մեր մէջ.—Յ. Լազարեանի մահուան հարիւրամեա-
կի առիթով որոշումներ մայրաքաղաքներում.—Դամաս-
Քաթիպայի մահարձանի բացումը և հայի հասարակա-
կան անտարրերութեան նոր ապացույցներ.—Ղեղնդ Ա-
լիշանի հռգեհանգստի առիթով լարտնած անոր սկըզ-
բումքը.—Հայ-կաթոլիկ Ալիշանի օրինակը ի՞նչ ապա-
ցուցեց.—Մի թուրք վաճառականի հասարակական լայն
ձդուումները.—Դիտութեան անաշառութիւնը.—Հնագի-
տական Ընկը. ճիւպի նշանակութիւնը կովկասցիներիս
համոր.—Քօրօղլիմնը գրական պրուետորիալիու մա-
սին.—Դրական մշակներին օգնող ընկերութիւններ և | |

զրոգների զրութիւնը բարտքելու նոր կարմակերպութիւն, - Դրական և սազդիվների սինդիկատը և կօնտրանելիքիատ, - Ճագանդի լենտան հայերիս մէջ, - Հայի դանզալուշարծութիւնը, - Բառասոն սասրուաց զրական անսպաս նիւթ, - Ա. Կաճկածիսնի մահը, - Սաստկացրած սրահպաններն զրութիւնը, - Լուսաւորութեան մինիստրի հրամանը, և. Ասազնանի առաջնորդ հենապարաւի ջրանցքը, - Անդ-

197

- | | | |
|-----|--|---------|
| 16. | ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆ. Նիկարագուալի ջրանցքը. | 264 |
| | Իմաստ վիճականութիւնը. — Թօպելքի և Զեմբելէնի
վերջին ճառելը. — Գիւմանաւական շօվինդմը վիրաւոր-
ուած կշմարիս խօսքերից. — Վրէշէնի դէպքը. — Լեհա-
կան աղիսացիա. — Ազգակին համալսարանների հարցը
Աստրիայում. — Վալցէկ-Շուսօփ վերաբերմանքը դէպի-
ներսի և զրոյի մարտանութիւնները. — Թիւբքաց վեզիր-
ների նշանակութիւնը. — Կիլիկիակի նոր կաթողիկոսի
ընտրութիւնը, և ս. | 211 |
| 17. | ՊԱՏՍՍԽԱՆՆԵՐ | 218 |
| 18. | 1901 թ. «ՄՈՒՐՃԻ» վճարող բաժանորդների վիճակա-
պութիւնը | 219 |
| 19. | «ՄՈՒՐՃԻ» ԱՄՍԱԴՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ 1901 թ. | 221 |
| 20. | ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ | 230 |
| 21. | ՑԱՅԵԼՈՒԱԾ. «ՑԱՅՈՒԹԻՒՆ», Վարչ և Տօլստօվի, թարգ.
Տ. Յայնանցիստանի | 385—472 |

ՏԵՐՏԵՐԻՆ ՈՒԽՏԸ

Ամբողջ գիւղին մէջ անոր պէս կարիճ մը չի կար։
Թորոսենց Ակօքը, ծհ, եաման, եաման։

Երբ գիւղին մէջէն կ'անցնէր իր աշխէտ ձիուն վրայ
նստած, հրացանը կոնակը և աջ ձեռքին մէջ սանձը
ժողված խրոխտաբար, լայն իրանը ձիուն դաւակին
վրայ շիպ շիտակ,—ամենքն ալ իրարու ցոյց կուտային
զինքը սքանչացման ու հպարտութեան շեշտով մը.

—Աստուած արևը պահէ։

Իրան ալ, Աստուած կը լսէր գեղջուկներուն մաղ-
թանքին։ Ոչ ոք Ակոբին պէս արկածալից կեանք մը կը
վարէր։ Քսան անգամ քիչ էր մնացեր որ մեռնէր, և
քսան անգամուն ալ ազատեր էր։ Իր կեանքը անհատ-
նում շարք մըն էր եղած, մատաղագոյն տարիքէն,
հրացանի գնտակներու փոխանակութեան, վտանգաւոր
որսորդութեանց, բէժիի դէտերու հետ անվերջանալի
կոփւներու, լեռներու վրայ և անտառներու խորը։

Գիւղական ու լեռնական կեանքի կատարեալ ու
անխառն տիպար մը, այդ թորոսենց Ակօքը։ Ինքը ու-
նեոր ընտանիքի զաւակ, գիւղին վարժարանին մէջ բա-
ւական ուսում ստացած, այնպէս որ իր շրջանակին
մէջ «ուսումնական» երիտասարդի համբաւ կը վայելէր,
ամեն բան թողեր ու իր բնազդներուն ետևէն վազեր
էր։ Բարձրահասակ ջղուտ տղայ մըն էր, արևէն սեցած,
քիչ մը նիհար, սև գուուզ մազերով ու կրակոտ սև աչուլ-
ներով։ Քսան տարեկան չի կար դեռ, սակայն գիւղէր իր

գաւառին ամեն ծակուծուկը, ամեն հովիտները ու ամեն լեռները, ամենէն խստախոր թաւուտները։ Կեանքին մեծ մասը կ'անցընէր տնէն գուրս։ Աւելի արուեստասէր քան գործնական մարդ, իր զբաղումներուն մէջ կը փնտուէր ոչ այնչափ շահաւորը որքան վտանդաւորը։ Իր քաջագործութիւնները բերնէ բերան կը զբուցուէին բոլոր գաւառին մէջ։ Գլխաւոր գործը ծխախոտի մաքսանենգութիւն էր. բայց ոչ թէ մուժ գիշերին, անտառներու ստուերին կամ ձորերու խաւարին մէջ կ'աշխատէր, հապա արձակ համարձակ, պայծառ լուսնին, լեռներէն վար իջած ատենը բարձրաձայն երգելով։ Երբ մէկ քանի ընկերներու հետ կուգար, երեք ձիու վրայ հազար օխա ծխախոտ բեռցած, ինք ամենէն առաջ կ'ընթանար, իր ձիուն վրայ կարմիր դրոշակ մը հաստատած, —իր արհամարհուտ անփութութեան նշանը ընդդէմ դէտերուն, և կոկորդը պատուելու աստիճան կ'երդէր.

Այինկանը *) կէլիալ կէչէր տաղլէրի.

Բայց իր ամենէն սիրական զբաղումը որսորդութիւնն էր։ Խիստ ճարտար հրացանաձիգ, ոչ ոք կրնար անոր հետ բաղդատուել։ Իր հրացանը իր սիրուհին էր, գրեթէ միշտ անկից անբաժան։ ու կը զբուցէին թէ մինչեւ իսկ գիշերը մէկ ձեռքով հրացանը բռնած կը քնանար։ Պաշտամունքի պէս բան մըն էր ատիկա. ու վառօդն էր խունկը, զոր կը մատուցանէր իրը նուեր այդ սրբութեանը։ Ամառը, թռչունները ու իրենց շրջակայ անտառներուն գիրուկ տասրակները՝ ամենօրեայ ողջակեզներն էին այդ անյագ աստուածութեան։ Խոկ ձմեռը, օ, ձմեռը Ակոբին եղանակն էր. այդ ձիւնապատ լեռներուն ու անտառներուն մէջ մանաւանդ, ուր ծառերը սառոյցէ խօլական ճիւղերով կը բեռնաւորուէին, երիտասարդը առտուլնէ մինչեւ իրիկուն կը պարտէր

*) Իր գաւառակին ու Կ. Պոլսի մերձակայ ալդ ամբողջ նահանգին մէջ, ծխախոտի մաքսանենգութիւնը այսին կա կը կոչուի։

մէկ քանի ընկերներու հետ. ու դարձին, իրենց աւարը
կ'ըլլար եօթը-ութ վարագ, հինգ-վեց եղնիկ: Երբոր
ձիւներուն մէջ շտկած իր յաղթ հասակը, հրացանը
ձեռքը նշան կ'առնէր վարազին որ հեռուէն զիրենք կը
դիտէր՝ մոլեգին խանչիւններ արձակելով կամ ահեղ
դունչովը տապալելով թեսի հաստութեամբ ծառեր, և
երբ իր բոլոր ուշագրութիւնը հրացանին թիրախին վրայ
կենտրոնացած կը սպասէր,—այդ ձիւնազարդ տարա-
ծութեան վրայ, կատազի հովին տակ որ իր երեսը կը
ձաղկէր ձիւնի փոշիներով և պեխն ու մօրուքը կը զար-
դարէր սառի զանակներով, ինքն իսկ կը նմանէր բնու-
թեան անխառն ու հարազատ զաւկի մը, սկզբնական
դարերու էակի մը, մարդկութենէն դուրս բոլորովին,
բաղաքակրթութեան աղդեցութենէն զերծ, որ հողէն
ելած մէկ բղխիւնով, հողին վրայ կը շարունակէր իր
ազատ անասունի կեանքը, վայրագ ու վեհապանծ:—
Որսի մէջ, դիւրինը չէր քնտուեր երբէք. դիտէր ու կը
տեսնէր թէ ուրիշներ, փախստական եղնիկը հալածե-
լու ատեն, յանկարծ վազքերնին կը դադրեցնէին, մեղ-
միկ մը սուլելով. ու խեղճ միամիտ անասունը կանգ-
կ'առնէր ընդոսա, գլուխը ետին դարձնելով իլուր այդ
անուշ կոչին, ու նոյն հետայն գնտակահար գետին կը
դլորէր. ու մինչեւ իսկ վարազը, երբ կը լսէր օրսորդին
բարձրածայն աղաղակը, հուր, հուր, հուր, զարմացած
կը կենար, իր պանդոյր իմացականութեանը մէջ կար-
ծես հասկնալ ուզելով այդ ձայնին նշանակութիւնը,
չգիտնալով թէ այդ մէկ վայրկենի դադարը իր մահն
էր: Զէ, Ակորին դործը չէր ատիկա. պէտք էր որ իր
ճապուկ սրունքներուն բոլոր ուժովը սրանար երէին ե-
տեէն, ու այդ խօլարշաւ վազքին մէջ, իր գնտակը եր-
թար մխուէր վարազին աչքին կամ ծիշտ սրտին վրայ:

Իր գեղին պահապանն էր նաև: Ինքն էր որ դի-
շերային պահնորդ խմբին գլուխը կ'անցնէր յաճախ:
Երբ դիւղացիները իմանային թէ Թորոսենց Ակորը գեղին
շուրջը ման կուգար դիշերը, հանդարտ ու անխուզ բուն

մը կը քնանային։ Զէ մի որ շատ մը գէպքեր կ'արդարացնէին իրենց վստահութիւնը այդ քաջարի տղուն վրայ։ Որուն մտքէն ելած էր մանաւանդ եկեղեցիին գէպքը, որ պարծանքով կը պատմուէր միշտ։

Դիւղացիները ժամանակէ մը ի վեր զարմանքով կը տեսնէին թէ իրենց եկեղեցիին պարտէղին եգիպտացորենները, որոնք գպրոցին հասոյթներէն մին կը կազմեն, օրէ օր կը պակսէին։ Իրողութիւնը Ակոբի ականջը հասած էր։ Զայն հանած չէր. բայց նոյն իրեկունը դարանակալ կը սպասէր պարտէղին մէջ հաստ ծառի տակ։ Կէս գիշերը անցած, երկու գաղթական թուրք գաղտագողի պարտէզը կը մտնեն ձի մը քշելով, կը կտրեն եգիպտացորենները, պարկերով ձիուն վրայ կը բեռցնեն ու կը պատրաստուին մեկնելու, երբ Ակոբ պահուած տեղէն ելլելով հրացանը ուղղած և գողերէն մէկուն ականջը թուցուցած էր. վիրաւորը, ընկերոջը հետ, հոն թողած իրենց ձին, որարշաւ փախած էր և անգամ մըն ալ երեան ելած չէր, իբր գող բռնուելու վախէն։ Ակոբ ձին ծախած էր գիւղին մէջ և գումարը եկեղեցիին յանձնած՝ արդէն զողցուած եգիպտացորեններուն իբր փոխարինութիւն։

Եթէ գեղացիներուն մէջ մէկը կար որ Ակոբէն գոհ չէր, ան ալ իր ընտանիքն էր, իր ծերունի հայրն ու մայրը մանաւանդ։ Ամեն վայրկեան գողի մէջ թէ իրենց զաւկին գլխուն փորձանք մը չհասնի, ամբողջ կեանքերնին սիրտ-հատնում մըն էր։ Ամեն խրատ, ամեն պաղատանք անօգուտ կը մնային։ Թորոսենց հաճի Ալթին աղան ու կինը վերջապէս խորհուրդ մը յղացան իրենց զաւկին անզուսապ եռանդը մարելու. որոշեցին զանի ամուսնացնել։ Ակոբ քսանըհինդ տարեկան եղած էր, և ամուսնութիւնը մտքէն չէր անցուցած տակաւին։ Իր վայրի արուի աղատ ու աստանդական կեանքին մէջ, երբէք յուզմամբ չէր նայած գիւղացի աղջկան մը շիկնոտ այտերուն։

Եւ սակայն, չհակառակեցաւ հօրը մօրը պաղատանքին, ու ամուսնացաւ համեստ աղւոր աղջկան մը հետ:

Միայն թէ հաճի Արթինի հաշխւները սխալ ելան: Չորս հինգ ամիս չանցած, Ակոք նորէն դարձած էր իր առջի կեանքին, ժամանակը բաժնելով լեռներուն ու անտառին մէջտեղ, հազիւ մէկ քանի ժամ գողնալով անոնցմէ՝ իր ընտանեկան յարկին համար:

Ան ատեն էր որ հաճի Արթին մտածեց թէ մեծ չարիքներուն մեծ դարմաններ պէտք են: Ուրիշ միջոց չի կար զաւակը կարգի բերելու, բայց եթէ քահանայ ընել զանի: Ճիշդ այդ միջոցները գեղին տէրտէրը գործէ կը քաշուէր խոր ծերութեան պատճառաւ, ու նաև հանգին Առաջնորդ Սրբազանը հովուական պտոյտի մը մէջ գիւղն էր եկած ու Հաճի Արթինի տունը իջած:

Ու իրիկուն մը, Սրբազանին ներկայութեանը, Հաճի Արթին ու կինը իրենց զաւկին ոտքը ինկան, լալագին աղերսելով որ քահանայ ձեռնադրուի, մինչ Սրբազանը հայրական յորդորներով նոյն խրատը կուտար: Սրաի դպչող մաքառում մը եղաւ տսիկա, որ ժամերով տեսեց, և, կատաղի մերժումներէ ետքը, Ակոք ուրիշ բան չգտաւ ընելիք բայց եթէ տղու մը պէս լալ: Այդ լացը իր պարտութիւնն էր:

Երեք ամիս ետքը, իր հովուական պտոյտէն դարձին, Սրբազանը ձեռնադրեց զանի հանդիսաւոր կերպով: Այն վայրկեանին ուր նորընծան իր ուխտերը կը կատարէր, Սրբազանը անոր ականչն ի վայր ծռեցաւ և ըսաւ.

— Ուխտ լրէ որ ալ ձեռքդ հրացան չառնես:

Նորընծան գլուխը վեր առաւ, անբացառքելի նայուածքով մը նայեցաւ հօրը որ եպիսկոպոսին մօտ կանգնած էր, ու տկար ձայնով մը,

— Կ'ուխտեմ, Սրբազան, ըսաւ

Ու աչքերը լեցան:

Կնոջ ընել չկրցածը՝ եկեղեցին ըրաւ: Տ. Մեսրոպ

քահանան հանդարտ մարդ մըն էր հիմակ, անձայն անշուկ: Իր տենդոտ գործունէութեան յաջորդող այդ անդորրութիւնը տեսակ մը թմրութեան մէջ խորասուզած էր զինքը: Առջի զուարժ մարդը չէր. ժամերով կը նստէր լուռ ու տրտում, դիտելով գիւղին շրջակայ լեռներն ու անտառները, որոնք երկնքին տակ կը փոէին իրենց յաւտենական անփոփոխ գեղեցկութիւնը, ազատ, անզգայ ու անկարեկից: Հետզհետէ կը նիհարնար. խաղաղ կեանքը կը հատցնէր զինքը: Իր ներքին էութիւնը յաճախ կ'ապստամբէր, ու տունէն գուրս, եկեղեցիէն գուրս, գիւղէն գուրս նետուելու խենդ գաղափարներ կ'ունենար, առջի ամիսները մանաւանդ. և սակայն հանդիսաւոր վայրկենի մը մէջ իր ըրած ուխտը կը կասեցնէր զինքը և ձեռքերն ու ոտքերը կը կրտւրէր: Այդ ուխտը, իր սրտին գիւղական անխառն սըրբութեանը մէջ, իր հաւատալիքին մէկ մասը կը կազմէր, աննիւթ ու գերբնական բան մը, ահաւոր ու անողոք, որ իր վերացականութեամբը կ'ընկճէր զինքը: Աւնայուածքը ցաւագին կերպով կը գարձնէր իր սիրական հրացանին, որ պատին վրայ կը ժանդուէր հիմա:

Քիչ քիչ, առջի ընդգումներն ալ չունեցաւ: Իր բաղդին համակերպեցաւ, և անվեհեր որսորդէն ու խաչախնիկն՝ տխուր ու աննշան մարդ մը մնաց, որ կնունք կ'ընէր ու մեռել կը թաղէր:

Երեք տարի ետքը, Առաջնորդ Սրբազանը նորէն հոգուական պտոյտի ելած էր ու Հաճի Արթինի տունը իջած: Այն իրիկունը մեծ կոչունք կար տանը մէջ ի պատիւ Սրբազանին: Տ. Մեսրոպ կարեսր գործի մը համեմատ մերձակայ գիւղ մը գացած էր և աճապարանքով ետ կը գառնար՝ իրիկուան պատրաստութիւններուն հսկելու: Անտառէն կ'անցնէր՝ երբ կանգ առաւ հրացանի բոմբիւններ լսելով. քիչ ետքը նշմարեց գիւղացի մը որ որսի ելած էր, բայց անվարժ ու անճարտար, գնտակները պարապը կ'երթային առանց թոշուն

մը գետին ձգելու։ Տէրտէրը մէկ-երկու վայրկեան դիտեց. կուրծքը կ'ելլէր կ'իջնէր փռոցի մը պէս. խուլ պայքար մը կը մղուէր իր ներսիդին. յետոյ, մէկէն, յիմարի մը պէս, իր փիլոնին քղանցքները ժողվեց մէջ-քը խոթեց, վազեց և հրացանը գեղացիին ձեռքէն յափրշտակելով, ուսին դրաւ, նշան առաւ, պարպեց և տատրակ մը գետին գլորեցաւ։ Տէրտէրը ալ ինքզինքին տէրը չէր. և, իրարու ետեէ, տասմներկու անգամ կրակ ըրաւ, ու տասմներկու տատրակ պառկեցուց։ Երբ ալ ինքզինքը գտաւ, երբ իր ստքի ելած բնաղդները հանգարտեցան իրենց յագուրդին մէջ, ան ատեն միայն մտածեց իր ըրածին ահաւորութեանը, ու տատրակները ժողվելով, տուն դարձաւ դլխիկոր։

Տունը բան մը ըստաւ սակայն։ Ինք իր ձեռքով մաքրեց թուչունները, բրինձի վրայ ձգեց ու փուռը զրկեց, պատուիրելով որ գիշերուան ժամը մէկին ըերեն։

Իրիկունը, սեղանին վրայ, երբ մեծ ափսէի մը մէջ, տատրակները բերուեցան՝ տակաւին ծխաշունչ, կարմը-րած բրինձին վրայ, Սրբազնը թեերը սոթթեց, և,

—Հը, աս պատուական բան կ'երևայ կոր, հը, մնլտաց անյագ նայուածքով մը, լեզուն բերնին մէջ շաղեցնելով և թուքը կլլելով։

Եւ իրօք, երբ Սրբազնը մէկ քանի պատառով կուլ տուաւ ամբողջ թուչուն մը, դովասանական բառերը վերջ շգտան։

—Օ՛ֆ, պատուական, պատուական։ Եզի պէս վար կ'երթայ կոր։ Ես գեռ ասանկ համով կերակուր կերած շունէի։ Տէրտէր, դիտցած ըլլաս, վազն իրիկուն նորէն կ'ուզեմ։ Զուրցէ բռնողին։

—Ծառայ եմ; Սրբազն։ ձենէ հրաման կ'ուզէ միւնակ։

—Ծօ, խուլան խուլան իզին, ուզածին չափ թող բռնէ։ Քոէ նայիմ ով է։

—Չեր խոնարհ ծառան, Սրբազն։

—Ծօ վայ թշուառական, դուն ես։ Էյ, ինչ ընենք,

ալ մէյ մը ըսած գտնուեցայ, ուխտէդ կ'ազատեմ քեզի:
Բայց ասկից ետքը պատուական կտոր մը զարնելու ըլ-
լաս նէ Առաջնորդարան դրկելու չմոռնաս:

Ու երկրորդ տատրակ մը քաշեց առջին:

Հետեւեալ օրը, մութն ի լուսուն, Տ. Մեսրոպ ան-
տառն էր, հրացանը կռնակը, իր նախկին ընկերներէն
մէկ քանիին հետո նոր մարդ մը եղած էր, երեսը կար-
մըրած, աչքերը վառ, հասակը ուղիղ: Ճշտիւ այդ պա-
հուն, եղնիկ մը երևցաւ հեռուէն ծառերուն ետին, և
սկսաւ սրարշաւ փախչիլ. տէրտէրը հրացանը ուղղեց,
կրակ ըրաւ, և անասունը գետին փոեց: Ոն ատեն ու-
րախութեան յիմարական աղազակ մը արձակեց որ լեռ-
ներուն մէջ արձագանք գտաւ, ու սկսաւ դողդղալով
պագնել իր հրացանին բունը, փողը, բլթակը. ու իր
խօլական հրճուանքին չկրնալով ատով յագեցում տալ,
ափ մը վառօդ առաւ և սկսաւ ուտել, ձեռքէն թափ-
թը կերպով, պեխերուն ու մօրուքին մէջ խառնուելով,
մինչ արցունքի լայն կաթիլներ կուգային խառնուել
փոշիին հետ և իր բերնին վրայ, իր ոունդերուն բոլոր-
տիքը, ու խմոր մը շաղուել:

ԼԵԽՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՐԲՈՂ

(Նեկրառուլ)

Բարի զործեր են կեանքըդ զարդարում,
Նոցա չի հասնի ոչ ո՛վ իւր զործենլ.
Եւ—օ՞հ, երկինքն եմ ես վըկայ բերում,
Որ ժեզ յարգում եմ խորին յարգանքուլ...

Դու ճանճին անգամ չես հասցնի չարիք,
Պատրաստ ես օգնել եւ չարազործին.
Եւ չե՞ն զողնովի նո անբաւ բարիք,
Չե՞ս զրկած անտէր այրիին, որքին:

Արպէս զի զործերդ երթան աջողակ,
Չե՞ս ձրգտում «հրզօր մարդու» խնամութեան,
Եւ ծուռ մըսին չես նորա հետ մենակ
Թողնում նո հասուն, սիրուն աղջըկան:

Չե՞ս զարտում երթէք դու անուս, կոպիս
Ռամկական դասի անմաքուր տեսֆից,
Եւ մեծամօրուս ազգակիցներիդ
Բոռնցքով չե՞ս լըտում նո դրուն չէմֆից:

Չե՞մ հարցնիլ—ո՞ւսկից եւ ե՞րբ ձեռք բերար
Այդ բոլորն, ինչ որ դու ունես հիմա.

Գիտեմ, ո՞ւ ազնիւ գործերի համար—
Ո՞ղջը երկնից է բափուել ո՞ւ վերայ...

Բարի գործեր են կեանիքդ զարդարում,
Նոցա չի հասնի ոչ ո՞ւ իւր գործենվ.
Եւ—օ՞հ, երկինքն եմ ես վըկայ բերում,
Որ ժեզ յարզում եմ խորին յարզանենվ...

ԱԼ. ՇԱՏՈՒՐԵԱՆ

«ՀՈՎԱՆԱԿԻՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...»

Տիկ. Օլիվ Շրեյմերի *)

Մի սխալ մոռնք էր ալդ, թէ ոչ:
(Շալֆ Ալբոն)

Սենեակի մի անկիւնում, գրասեղանի առաջ նստած էր
մի կին:

Նրա յետնում վառւում էր կրակը ուրախ փայլով:
Ներս մտաւ ծառան և յանձնեց նրան մի տոմսակ:
—Ասացէք որ զբաղուած եմ և ոչ ոքի չեմ կարող ընդու-
նել: Մինչև ժամը երկուսը պիտի անպատճառ վերջացնեմ այս
յօդուածը:

Մառան դուրս գնաց, բայց շւտտով կրկին վերադարձաւ.
այսելուն, որ մի երիտասարդ կին էր, ասում էր որ միայն մի
բոտէ պիտի խանգարէ և կ'ուզէր անպատճառ տեսակցուել հետը
մի կարեոր գործի համար:

Կինը բարձրացաւ տեղից.

—Ասացէք տղին որ սպասէ, իսկ տիկնոջ ներս հրաւի-
րեցէք:

Ներս մտաւ մի երիտասարդ կին, մնապսեայ հագուստով
և մինչև ոտները համնող վերարկուով: Նա բարձրահասակ էր,
քնքոյց ու բարակ կազմուածքով և շիկահեր:

—Ես զիտէի, որ չեք մերժի. ես այնքան ուզում էի տես-
նել ձեզ:

Կինը առաջարկեց նրան մի աթոռ կրակի մօտ:

—Կարող եմ հանել ձեր վերարկուն, սենեակը տաք է:

—Ա'խ, ես այնքան ուզում էի տեսնել ձեզ: Դուք միակ
անձնաւորութիւնն էք, որ կարող է օգնել ինձ: Ես գիտեմ,
դուք այնքան վեհանձն ու բարի էք դէպի ուրիշ կանայք:

Նա նստեց: Նրա խոշոր և կապոյտ աչքերը լքուած էին

*) Հեղինակի մասին տե՛ս „Մոլոք“, № 11 եր. 250:

արտասուքով։ Նա անգիտակցօրէն հանում էր իր փոքրիկ ձեռնոցները։

—Դուք ճանաչում էք պարոն ...ին (նա ասայ մի հանրածանօթ պարոնի անուն)։—Ես զիտեմ, դուք յաճախ հանգիւպում էք նրան ձեր գործում։ Ես ուզում եմ, որ դուք ինձ համար մի բան անէք։

Կինը կանգնած վառարանի առաջ նայում էր դէպի նրան։

—Ես չեմ կարող ասել այդ ոչ հօրս, ոչ մօրս, ոչ ոքի, բայցի ձեզնից, չը նայելով որ ես ձեզ հետ համարեա ծանօթ չեմ։ Անցեալ ամառ նա եկաւ մեզ մօտ և մի ամիս ապրեց մեզ հետ։ Ես սկսեցի անտարբեր չը լինել դէպի նաև Զը զիտեմ, նա սիրում էր ինձ թէ ոչ, զիտեմ, որ նա սիրում էր իմ երգելս և մենք յաճախ գնում էինք միասին ձիով զրօմնելու, ես սիրում էի նրան աւելի քան ուրիշ տղամարդկանց, որոնց ես երբեցի հանդիպել եմ կեանքում։ Օ՛, զիտէք, սիալ է որ ասում են, իր թէ կինը կարող է սիրել աղամարդուն միայն այն դէպրում, երբ սիրում է նրանից։ Երբ քաղաք տեղափոխուեցինք, մենք հրաւիրեցինք նրան, բայց նա ոչ մի անգամ չեկաւ մեզ այցելելու։ Գուցէ ուրիշները նրան մի վատ բան են ասել իմ մասին։ Դուք ճանաչում էք և միշտ տեսնում էք նրան։ արդեօք չէիք կարող մի բան անել կամ խօսել ինձ համար։—Նա նայում էր վեր, գունատ շրթունքները կիսաբաց։—Երբեմն թըւում է ինձ, որ խելազար եմ... Օ, որքան սարսափելի բան է կին լինելը...»

Կինը նայում էր դէպի նրան։

«Այժմ, լսում եմ, նա սիրում է մէկ ուրիշին։ Ես չը գիտեմ ով է այդ, բայց ասում են, նա շատ ճարտար է և խելացի, և նոյնպէս գրում է։ Օ՛, այդ սոսկալի է, ես չեմ կարող տանել այդ...»

Կինը յենուեց վառարանին և բռնեց ճակատը։ Նա նայում էր կրակին։ յետոյ նա դարձաւ դէպի երիտասարդ կինը, նայեց նրան և արտասանեց։ «Այն, սարսափելի բան է կին լինելը»։—Նա լոեց։ Մի քիչ անցած նա ասաց համարեա գժուարութեամբ։ «Վստահ էք դուք արդեօք, որ սիրում էք նրան։ Վստահ էք, որ ձեզ մօտ այդ այն զգացումը չէ, որը տածում է մի ջահէլ աղջիկ դէպի մի հասակաւոր տղամարդ, որը բարի հոչակ ունի և որի մասին խօսում են»։

—Ես խելազարուածի պէս եմ եղել։ Ես շաբաթներով չեմ քնել։ Նա այնպիսի ոյժով տրորում ու սեղմում էր իր փոքրիկ

ձեռները, որ քարեղիններով զարդարուած մատանիները պիտի կտրէին նրա մարմինը:

«Եա ամեն բան է ինձ համար. բայցի նրանից ինձ համար ոչինչ գոյութիւն չունի աշխարհում: Դուք, որ այնքան վեհ էք, ուժեղ և ձարտար, որ մտածում էք միայն ձեր գործի վրայ և նայում էք տղամարդկանց միայն ինչպէս ձեր ընկերների վրայ, դուք չեք կարող հասկանալ թէ ինչ է նշանակում, երբ մէկի համար մի հատիկ անձնաւորութիւնը կազմում է նրա ամբողջ աշխարհը»:

—Եւ ինչ էք ցանկանում որ ես անեմ ձեզ համար:

—Ա՛յս, ես չը գիտեմ,—նա նայեց վեր,—կինը զիտէ թէ ինչ կարող է նա անել: Չասէք նրան, որ ես սիրում եմ:—Նա կրկին վեր նայեց:—Որևէ մի բան ասացէք: Օ՛, սարսափելի բան է կին լինելը: Ես ոչինչ չը գիտեմ, և ոչինչ չեմ կարող անել: Դուք չը պիտի ուղղակի ասէք, որ ես սիրում եմ նրան, այնպէս չք. այդ մի բան է, որի համար տղամարդիկ ատում են կանանց:

—Եթէ ես նրա հետ խօսեմ, ես պիտի բաց խօսեմ. նա իմ ընկերս է. ես չեմ կարող նրա հետ ծածկամտութեամբ վարուել. ես նրա հետ երբէք այդպէս չեմ վարուել իմ մասնաւոր գործերում:

Նա մի շարժում արաւ վառարանից հեռանալու համար, բայց յետոյ գարձաւ և ասաց.

—Մտածել էք դուք արդեօք, թէ ինչ է այն սէրը, որը ենթադրում է ամուսնութիւնն. ինչ է այն երկար-երկար կեանքը միասին, զուրկ տարածութիւնից և րօմանտիզմից, այն առօրեականութիւնը, երբ պիտի ապրէք միշտ դէմ առ դէմ, նայէք և տեսնէք իրար հոգիները—ձեր սեփական հոգու պարզութեամբ... Արդեօք, դուք իսկապէս հասել էք այն հայեացքին, որ ամուսնութեան նպատակն է՝ աւելի ուժեղացնել տղամարդուն ու կնոջ, քան նրանք էին առաջ. և զիտակցում էք, որ ձեզ այդ նպատակից շեղուած և ձեր քայլը մի սիսալմունք պիտի նկատէք, եթէ մի օր, ծերութեան հասակում, մարդ ու կին նստած կրակի առաջ, չը կարողանաք հանգիստ սրտով առաել. «Որովհետև մենք անցանք ձեռք-ձեռքի տուած, կեանքը մեզ համար աւելի առաքինի, աղատ և քաղցր էր, քան թէ կը լինէր, եթէ մենք անցնէինք երկուսս էլ առանձին»: Արդեօք նրա մասին ունեցած ձեր հոգացողութիւնը հերիք է, որպէս զի դուք ապրէք նրա համար ոչ միայն վաղը, այլ և այն ժամանակ, երբ նա մի ծեր ու թառամած տղամարդ է և դուք մի

ծեր ու թառամած կին: Ընդունակ էք ներել նրան իր մեղքերը և թուլութիւնները, եթէ նրանք նոյն իսկ խորը վիրաւորեն ձեզ: Եթէ նա դառնար մի անվերջ տրանջող հիւանդ և քսան տարի մեար պառկած, արդեօք ընդունակ կը լինէիք գուք պահպանելու ու խնամելու նրան այդ ամրող ժամանակ այնպէս, ինչպէս մի մարդ կը խնամէր իր զաւակին...

—Օ՛, ես նրան շատ եմ սիրում: Ես ուրախութեամբ կը մնունէի, եթէ միայն իմանայի, որ նա սիրում է ինձ աւելի, քան որիէ բան աշխարհը ուն:

Կինը կանգնած նայում էր դէպի նրան:

—Զէք հարցրել ձեզնից երբէք, թէ, արդեօք, չէր երջանկացնի նրան այն միւս կինը գուցէ նոյնչափ, որչափ և դուք,— հարցրեց նա հանդարտութեամբ:

—Օ՛հ, ոչ մի կին երբէք չի կարող լինել նրա համար այն, ինչ որ ես կը լինէի: Ես կ'ուզենայի ապրել նրա համար: Նա ինձ է պատիանում... Ա՛խ, ինչքան սարսափելի բան է կին լինելը. ընդունակ չը լինել մի բան անելու, մի բան ասելու:

Կինը զրեց ձեռքը նրա ուսի վրայ. Երիտասարդ կինը նայեց վեր նրա դէմքին. Հասակաւոր կինը հեռացաւ նրանից, կանգնեց ու սկսեց նայել կրակին: Սկսեակում տիրեց խորին լոռութիւն. Լսուում էր միայն գրասեղանի վրայից ժամացոյցի տիկւտակը:

Կինը ասաց.

—Մի բան կայ միայն, որ կարող եմ անել ձեզ համար. չը գիտեմ նա ինչքան ձեզ կ'օգնէ, բայց ես այդ կ'անեմ: Նա գնաց մի կողմ:

—Օ՛, դուք այնքան վեհ էք և բարի, այնքան սիրուն, այնքան տարբեր ուրիշ կանանցից, որոնք միայն իրանց մասին են մատածում: Շատ չնորհակալ եմ. ես զիտեմ, ես կարող եմ վրատահ լինել ձեր վրայ: Ես չէի կարող այդ ասել նոյն իսկ մօրս, ոչ ոքին բացի ձեզնից:

—Այժմ դուք պիտի գնաք, սիրելիս, ես պիտի վերջացնեմ աշխատանքս:

Երիտասարդ կինը զրկեց նրան.—Օ՛, դուք այնքան սիրուն էք, այնքան բարի էք:

Մետաքսեայ հագուստները և մորթեայ վերարկուն դուրս խչխացին սենեակից: Կինը սկսեց քայլել սենեակում. վերջը աւելի ու աւելի արագ. նրա ճակատի վրայ երեացին քրտնքի կաթիներ: Նա մօտեցաւ զրասեղանին. այնտեղ ընկած էր մի հասարակ թղթեայ կտոր, որի վրայ գրուած էր տղամարդու և դժուար կարդացող ձեռով հետեալը. «Կարող եմ այսօր կէս-

օրից յետոյ գալ ձեր տեսութեանը»։ Դրա մօտ ընկած էր և մի ծրագ՝ փակած և հասցէն վրան գրած։

Կինը բայց վերջինս, այնտեղ գրուած էր, «Այս, ինզրեմ, եկէք»։ Նա պատուց այդ, մի ուրիշ թուղթ առաւ և գրեց. «Ո՞չ, ես ազատ չեմ»։—Նա փակեց այդ ծրարում, և հասցէն գրեց. յետոյ ծալեց ձեռագիրը, կանչեց ծառային և ասաց. «Տուէք այդ տղային, թող ասէ իր պարոնին, որ յօդուածը կիսատ է և որ սիտի նշանակեն «աշրունակելի»։ Վերջը վաղը կ'ուղարկեմ։ № 20-ի մօտով անցնելիս, որ ճանապարհի վրայ է, թող այդ տումսակն էլ յանձնէ այնտեղ»։

Մառան դուրս գնաց։ Կինը սկսեց կրկին քայլել, դլուխը բռնած ձեռներով։

Երկու ամիս անցած այդ օրից հասակաւոր կինը կանգնած էր վառարանի առաջ։ Դուռը յանկարծ բացուեց և ներս մտաւ. երիտասարդ կինը։

—Ես անպատճառ սիտի ձեզ տեսնէի. այլ ևս չը կարողացայ համբերել։ Դուք լսեցիք. նա այսօր պսակւում է։ 0°, կարծում էք ճիշտ է այդ լուրը։ 0°, օգնեցէք ինձ, նա տարածեց ձեռները։

—Նստեցէք։ Այն, այդ բոլորովին ճիշտ է։

—0°, այդ սարսափելի է. և ես ոչինչ չը գիտէի... Դուք նրան ասել էք որ և է բան իմ մասին. —Նա բռնեց կնոջ ձեռները։

—Այն օրից յետոյ, երբ դուք այստեղ էիք, ես այլ ևս ոչ մի անգամ չեմ տեսել նրան, այնպէս որ ոչինչ չէի կարող ասել. սակայն ես արի այն, ինչ որ կարող էի. —Նա կանգնած էր և նայում էր հանդարտութեամբ կրակին։

—Եւ ասում են, որ օրիորդը գեռ կատարեալ երեխայ է, միայն 18 տարեկան. և ասում են, որ մինչև առաջարկութիւն անելը հաղիւ երեք անգամ է տեսել նրան։ Կարծում էք որ այդ ճիշտ է։

—Այն, այդ ճիշտ է։

—Նա չի կարող սիրել այդ օրիորդին։ Ասում են, որ նա ամուսնանում է միայն օրիորդի անուան և փողի վրայ։

Կինը հանդարտութեամբ դարձաւ նրան։

—Ի՞նչ իրաւունք ունիք դուք այդ ասելու։ Ո՞չ ոք, բացի ինձնից չէ ճանաչում նրան։ Ի՞նչ կարիք ունի նա որնէ մէկի անուան կամ կարողաւթեան, երբ ինքը աւելի է, քան այդ բոլորը միասին։ Կարող է պատահել որ նա հիսաթափուած է աւելի հասակաւոր կանանց վերաբերմամբ և այժմ, իրան վարձատրելու համար, դարձել է զէպի մի աւելի մատաղ էակ, որը այնպէս սիրուն է և թարմ, որ իւրաքանչիւր մի աղամարդ կը սիրէր

նրան. նա մի ընտանիքից է, որը յայտնի է իր կրթութեամբ. և եթէ նա ընտելանայ իր ամուսնուն, կարող է երջանկացնել նրան աւելի, քան այդ կ'անէր մի որեէ ուրիշ կին:

—Օհ, բայց ես չեմ կարող տանել այդ, չեմ կարող... նա նստեց. այդ օրիորդը պիտի լինի նրա կինը և նրա զաւակների մայրը»:

—Այո!

Հասակաւոր կինը մի արագ շարժում արաւ. «Ով սիրում է մանուկներին, թող առնէ նրանց իր ծոցը և կերակրէ նրանց, նոյն իսկ եթէ նրանք ուրիշի են»: Նա անհանգիստ շարժումներ էր անում:

— Օհ, հձ, ես չէի կարող տանել այն կնոջ երեխային... երբ ես մտածում եմ նրա մասին, քիչ է մնում որ խելազարուեմ ձեռներս սառչում են և մահս եմ զգում: Օհ, դուք միայն նրա ընկերն էիք, գուք չէք կարող հասկանալ...—Հասակաւոր կինը ասաց արագութեամբ և ընկուշութեամբ. «Միթէ դուք գոնեա մի քիչ քնքուշութիւն էլ չէք զգում գէպի այն կինը, որը պատրաստուում է լինելու երա ամուսինը, նրա զաւակների մայրը; Ես կը փափազէի գրկել ու համբուրել նրան գէթ մի անգամ, եթէ միայն նա թոյլատրէր. նա այնքան սիրուն է, ասում ենք»:

— Օ՛, ես երբէք չէի կարող տեսնել, տանել նրան. այդ ինձ կը սպանէր. և նրանք այնպէս երջանիկ են այսօր...

—Դուք չէք ցանկանում, որ նա երջանիկ լինի,—հասակաւոր կինը նայեց գէպի նրան.—գուք առհասարակ երբէք չէք սիրել նրան:

Երիտասարդ կինը ծածկել էր գէմքը ձեռներով և լալիս էր.

— Օհ, որքան սարսափելի և մոայլ է այդ, և ես տարուց տարի պիտի ապրեմ այդ տանջող ցաւը սրտումս... Ա՛խ, եթէ կարողանայի միայն մեռնել...

Հասակաւոր կինը կանգնած նայում էր կրակին. նա հանգարտութեամբ և իւրաքանչիւր բառը չափելով ասաց. «Կեանք քում լինում են բոպէներ, երբ ամեն ինչ մոայլ է երեսում մարդուս, երբ մարդ կորցնում է խելքը, շուարում է և ոչինչ բացի մահից չէ տեսնում. սակայն երբ մարդ համբերում է, երկար երկար տարիներից յետոյ խաղաղութիւնը կրկին վերադառնում է. գուցէ մենք չասենք որ այդ լաւ է, բայց մենք գոհ ենք լինում և հաշտուում ենք անցեալի հետ: Կոիւը արդէն վերջացած է վնում: Այդ օրը կարող է և ձեզ համար գալ, և գուցէ աւելի կանուխ, քան ինքներդ էք սպասում:

Նա խօսում էր դժուարութեամբ և կամաց:

—Ո՞չ, այդ օրը երբէք չի կարող գալ ինձ համար. եթէ ես մի անգամ սիրեցի մի բան, ես կը սիրեմ այդ արդէն ընդմիշտ. ես չեմ կարող երբէք մոռանալ այդ:

—Կեսանքի միակ նպատակը սէրը չէ. շատ բաներ կան, որոնց համար հարկաւոր է և պիտի ապրել:

—Օ՛, այդ ձեզ համար. ինձ համար սէրը ամեն ինչ է:

—Այժմ, սիրելիս, դուք պիտի զնաք:

Երիտասարդ կինը բարձրացաւ տեղից:

—Այնքան մխիթարուեցայ ձեզ հետ խօսալով: Ինձ թւում է, որ պիտի սպանէի ինձ, եթէ ձեզ մօտ եկած չը լինէի. դուք ինձ այնպէս օգնում էք. ես միշտ երախտագէտ կը մնամ դէպի ձեզ:

Հասակաւոր կինը բռնեց նրա ձեռքը.

—Ես կը ցանկանայի մի բան միայն խնդրել ձեզնից:

—Ի՞նչ:

—Ես չեմ կարող ձեզ պարզ բացատրել այդ. դուք չեք հասկանայ: Կան կեանքում բաներ, որոնք ընդունակ են մարդու համար ստեղծելու աւելի սարսափելի բոպէներ, քան սիրածից զրկուելը: Երեակայեցէք որ դուք երբ և իցէ երազել էք: Ֆի կեանքի մասին—մինոյնն է՝ ինչպիսի կեանք էլ վնի այդ—և ճիգեր էք անում իրականացնելու նրան, բայց այդ չի յաջողւում ձեզ. այդ ժամանակ մի ինչ որ ձայն, որին դուք մազուց սպանել էք ձեր սրտում, կրկին արթնանում է և աղաղակում. «Թող իւրաքանչիւրը իր խաղը խաղայ—և ոչ ոք հոգ չսնի իր մերձաւորի համար. իւրաքանչիւրը իր համար»: Դուք սկսում էք կասկածանքով վերաբերուել դէպի այն ամենը, ինչի համար դուք ապրել էք և թւում է ձեզ, որ զետինը փախչում է ձեր ոտների տակից...—Նա կանգ առաւ. «ահա մի այդպիսի բոպէում, եմ գտնում ես այժմ. և եթէ դուք ինձ խոստանաք, որ դուք նոյնպէս կ'օգնէք մի որեէ ուրիշ կնոջ, որը դուցէ երբ և իցէ զայ ձեզ մօտ ձեր օգնութիւնը փնտուելու... ես կարծում եմ, որ այդ կ'օգնէ ինձ: Ես կարծում եմ, որ այդ կ'օգնէք ինձ պահպանելու իմ հաւատս և իմ զաւանանքներս:

—Օ՛, ես ամենը կ'անեմ, ինչ որ դուք խնդրում էք. դուք այնքան վեհ էք և բարի:

—Օ՛, վեհ և բարի: Եթէ միայն գիտենայէք: Այժմ զնացէք, սիրելիս:

—Ես չը խանգարեցի ձեզ, չը:

—Ո՞չ, ես չէի աշխատում: Գնաք բարի, սիրելիս:

Երիտասարդ կինը զնաց, իսկ հասակաւորը մի աթոռի առաջ ընկաւ ծնկների վրայ և սկսեց այնպէս հեկեկալ, ինչպէս

Դեկտեմբեր, 1901.

հեկելում է փոքրիկ երեխան, որին ծեծել են, բայց որը չէ համարձակւում ազաղակել բարձր ձայնով:

Անցաւ մի տարի կրկին վաղ գարուն էր:
Կինը նստած էր իր գրասեղանի առաջ և գրում էր:
Նրա յետեռում վառուում էր կրակը ուրախ փայլով:
Նա գրում էր մի առաջնորդող յօդուած ազատ առնտուրի
և զանազան երկրներում հովանաւորող քաղաքականութեան
սկզբունքները ընդունելու պատճառների մասին: Նա գրում էր
արագութեամբ: Ներս մտաւ ծառան և գրեց սեղանի վրայ մի
թուփ նամակիներ:

—Ասացէք տղային, որ 15 րոպէից յետոյ կը տամ:
Նա շարունակում էր գրել. յանկարծ նամակներից մէկը
գրաւեց նրա հայեացքը. նա մի կողմ գրեց գրիչը և բացեց. այդ
նամակի բովանդակութիւնը հետեւալին էր.

«Թանկագին բարեկամ,

«Գրում եմ ձեզ, որովհետու զիտեմ, որ սկսուի ուրախանաք
լսելով իմ երջանկութեանս մասին: Ցիշում էք ինչպէս այն օրը,
կրակի առաջ, ինձ ասում էիք որ սպասեմ, և որ երկար-երկար
տարիներից յետոյ ես կը տեսնեմ որ հէնց լաւը այն էր, ինչ որ
կատարում էր: Այդ օրը աւելի շուտով եկաւ, քան մենք սպա-
սում էինք: Անցեալ շաբաթ Հունում ես ամուսնացաց բոլոր
տղամարդկանց միջից ամենալավի և ամենաառաքինի հետ.
այժմ մենք միասին ֆլորենցիայումն ենք: Զէք կարող երևա-
կայել որչափ երջանիկ եմ ես: Ես հիմա եմ տեսնում, որ ան-
ցած զգացմունքներս ջահէլ աղջկայ խելացնոր երազներ էին
միայն: Իմ ամուսինս առաջինն է, որին ես իսկապէս սիրում
եմ: Նա հասկանում է ու սիրում է ինձ այնպէս, ինչպէս ոչ
ոք: Ես շատ գոռ եմ, որ երազներս խորտակուեցին. Աստուած
աւելի լաւ բաներ ունէր պահած ինձ համար: Ես այլնս ամե-
նին չեմ առում այն կնոջ, ես բոլորին սիրում եմ: Ի՞նչպէս էք
դուք, սիրելիս Մենք կը գանք ձեր տեսութեան, խորյուն երբ
վերադառնանք Անգլիա: Ես միշտ մտածում եմ ձեր մասին, որ
այնքան բախտաւոր էք ձեր մեծ գործով և ուրիշներին օգնե-
լով: Ես չեմ մտածում այլնս, որ սարսափելի բան է կին լի-
նելը. ընդհակառակը, սքանչնիլ է...

«Յուսով եմ, որ դուք նոյնպէս վայելում էք այս հրաշալի
գարունը:

Կինը կարդաց նամակը, բարձրացաւ տեղից և մօտեցաւ
կրակին. նա կրկին չը կարդաց նամակը, այլ ձեռին բռնած

Նրան՝ նայում էր կրակին։ Նրա շրթունքները ծռուել էին բերանի անկիւններում։ Նա պատռեց նամակը և հանդարտութեամբ հետեւում էր մէկը միւսի հետեից կրակի մէջ թռչող թղթի կտորներին։ Յետոյ նա մօտեցաւ զրասեղանին և սկսեց գրել։ բերանի անկիւններում շրթունքները գեռ ծռուած էին մնում։ Բայց մի քիչ անցած նա ձեռքերը գրեց թղթի վրայ և գլուխը յենեց նրանց։ Նա, կարծես, ննջում էր։ Այդ ժամանակ ներս մտաւ ծառան, տղան սպասում էր։

—Ասացէք նրան, որ սպասէ 10 րոպէ ես,—և վերցրեց գրիչը։ «Աւստրալիայի կառավարութեան հովանաւորող քաղաքականութիւնը հասկանալի է...»։ Նա կանգ առաւ. «Եթէ ի նկատի առնենք այն փաստերը... այն փաստերը...»

Յ ետոյ նա աւարտեց յօդուածը։

Թարգմ. անգլերէնից Ա. Ն.

ԳԵՐՃԱՐԾ ՀԱՌԻՊՏՄԱՆ ԵԽ ՆԲԱ. ԳԼԽԱԽՈՐ ԵՐԿԵՐԸ

Die Dichter sind die Thränen der Geschichte,
Die heisse Zeiten mit Begierde schlürfen...

G. Hauptmann

I

Շլեզիայի կուրօրտների շարքում մեծ հոչակ էր վայելում Օբերգալցրուննը: Գեղեցիկ է նա իր դիրքով, զրաւիչ է ճոխ բուսականութեամբ: Բնութեան այդ գեղեցիկ վայրում 1862 թ. նոյեմբերի 15-ին ծնուեց Գերհարտ Հառլապտման *): Նրա հայրը — Թօբիրտ Հառլապտմանը «Zur Preussischen Krone» հիւրանոցի տէրն էր և յայտնի էր իր կարգապահութեամբ, մաքրասիրութեամբ ու ուղղամիտ բնաւորութեամբ: Նրա մայրն էլ ունէր զգայուն սիրտ, զեղուն զգացմունքներ և սէր ու գութ զէպի խեղճերն ու ընկճուածները: Նա ջանասէր էր բառիս բռւն նըշանակութեամբ և աշխատում էր զիշեր-ցերեկ, կատարում էր տնային գործերը, օգնում էր ամուսնուն, խնամում էր երեխաներին:

Ահա այդպիսի ծնողների հոգատարութեան տակ մեծացաւ մասուկ Գերհարտը: Նա ունէր իրանից մեծ չորս քոյրեր և 2 եղբայրներ, բայց դրանցից տարրերւում էր իր բնաւորութեամբ ու ընդունակութեամբ: Նա գեռ եօթը տարեկան հասակում իր քոյրերի հետ սկսեց այցելել դիւզական գավրոցը, որի զեկավարն էր Բրենդել անունով մի ուսուցիչ: Մանկավարժական տաղանդից զուրկ էր այդ ուսուցիչը, բայց զիտէր զրաւել իր սաներին, զիտէր քաղցրացնել նրանց օրերն ու ժամերը: Շատ անգամ նա տանում էր նրանց բացօգեայ զրօսանքի, շատ անգամ

*) Կենսագրական տեղեկութիւնները Հառլապտմանի մասին քաղում ենք հետեւալ աղբիւններից. 1) P. Schlenther: „G. Hauptmann“, 2) A. Hanstein: „G. Gauptmann“, 3) A. Bartel: „G. H.“ 4) U. Woerner: „G. H.“ 45) A. Stern: „Studien zur Litteratur der Gegenwart“.

թափառում էր նրանց հետ դաշտերում ու անտառներում, սաւրերում ու ձորերում: Դժբախտաբար այստեղ ոչ միայն ազատ բնութեան գեղգեղանքն էր մատաղ սաներին գրաղեցնողը, ոչ միայն թուչունների քաղցր գայլայլիկը, միջատների մրակերպ բզզոցը և ծաղիկների անուշ բուրմունքն էր նրանց մտքին ու սրտին սնունդ տուողը, այլ և չոր ու ցամաք լատիներէնն իր քերականական կանոններով: Աւսուցիչը մերթ ընդ մերթ բայատրում էր այս կամ այն կանոնը և ապա կրկնել տալիս: Իսկ փոքրիկ Գերհարտը ատում էր այդ պարապմունքը: Նրա համար աւելի գրաւիչ էին հայրական գրադարանի բնագիտական ուսկեցօծ գրքերը, քան թէ դպրոցական լեկսիկոնն ու քերականութիւնը: Նա ամենավատ աշակերտներից մէկն էր...

1874 թուականին նրան ուզարկեցին Բրեսլաու՝ եղբայրների մօտ, որպէս զի պատրաստուի և մանի տեղական բէալական դպրոցը Սակայն այս տեղափախութիւնը և այս նոր դպրոցը աւելի վատ ազգեցին Գերհարտի վրայ: Տարիներն անցնում էին միմեանց յետնից, բայց նա չէր առաջադիմում, գասարանը չէր փոխում: Աւսուցիչները չէին կարողանում թափանցել նրա հոգու մթին խորքը, իսկ ինքը՝ գեղջուկ երեխան չէր հասկանում ուսուցիչներին, չէր ըմբռնում քաղաքային բարդ կեանքըն ու յարաբերութիւնները: Դպրոցական ընկերներն էլ ծաղրու ծանակի առարկայ էին գարձնում նրա վազաժամ ցնորքներն ու վառ երեակայութիւնը:

Նրա մեծ եղբայր Կարլը նկատում էր այս ամենը և յուսահատ կերպով մտածում, թէ արդեօք ինչ է լինելու այդ անձնորդք երեխայի վերջը, թէ ինչ է լինելու նրա բաղդն ու վիճակը... Բայց անողոք ճակատագիրը ինքը վճռեց այդ ծանր հարցը:

Տօրերտ Հառապտմանի գործերը շատ անաշող էին գնում: Ելեգիայում տիրող աղգային երկպառակութիւնները հետզհետէ սուր կերպարանք էին ստանում: Լեհացի մազնատները այլու չէին յաճախում Օբերզալցբրուննը: Հաղորդակցութեան յարմար և էժան միջոցների չնորհիւ նրանք աւելի հեռաւոր տեղեր էին գնում, գերմանացիներից աւելի հեռու մնալ էին աշխատում: Եւ «Zur Preussischen Krone» հիւրանոցի լայնարձակ դահլիճներն ու սենեակները դատարկ էին մնում: Այդպիսի ձախորդ հանգամանկների պատճառով Հառապտմանի պարտքերը աւելանում էին, այնպէս որ վերջ ի վերջոյ նա զրկուեց իր ամբողջ ունեցուածքից և դատարկածնեն հեռացաւ Օբերզալցբրուննից: Նա երկաթուղու կայարանի կապալառուն դարձաւ:

Նիւթական միջաղների սղութեան պատճառով նա ստիպ-

ուած էր գպրոցից հանել Գերհարտին: 1878 թ. ապրիլ ամսին վերջինս հեռացաւ Բրեսլավուից, իր հետ վերցնելով ստացած վկայագիրը, որ միայնակ չատ քիչ բան էր պարունակում իր մէջ:

Այստեղ որոշուած էր նրա վարքը—լաւ, աշխատասիրութիւնը—բաւարար, իսկ ընդունակութիւնն ու ուշադրութիւնը—մի հաստիկ միաւորով: Միւս առարկաներից լաւ էր միայն նըկարչութիւնը: Արդեօք ինչ կարող էր զանալ այդպիսի պատճենն:

Նրա գպրոցական տետրական մէջ կային բազմաթիւ լիրիկական ուսանաւորներ, որոնց վրայ նշմարւում էր Անդէրսէնի ուժեղ ազդեցութիւնը: Քիչ չէին դրանց մէջ այնպիսի ուսանաւորները, որոնցից բանաստեղծութիւնները և ինքնն իրան մտարում, թէ արդեօք հնարաւոր է, որ առանձին տարեկան մի պատճեն, առանց ընդունակութեան, առանց նոյն իսկ միջնակարգ կրթութեան գրական ասպարէզը մտնի—հեղինակ դառնայ:

Բայց հայրը թոյլ չտուեց, որ ազատութիւնն ու ժամանակը լուծէին այդ հարցը: Նա Գերհարտին իսկոյն ուզարկեց Շարիգառու, որտեղ նրա քինակալը—Շուբերտը երկու կալուածների կառավարիչ էր: Այստեղ Գերհարտը պիտի օգնէր Շուբերտին և ապրէր նրա տանը, նրա հսկողութեան տակի: Եւ նա մեծ ուրախութեամբ դիմեց դէպի նոր բնակալայրը, որովհետեւ յոյս ունէր այնտեղ վայելել մաքուր օդ ու լոյս, աղատ կենցաղ ու հանգիստ:

Գերհարտը միանգամայն հասաւ իր նպատակին, գտաւ իր սպասածները և դրանց հետ միասին մայրական ինսամբ ու հոգացողութիւն ամբողջ ընտանիքի կողմից: Այստեղ էին նրա երկու մօրագրութեանը գիմեց դէպի նոր բնակալայրը, որովհետեւ յոյս ամբողջ ընտանիքը և ունկնդիր լինում այդ հմայիչ երաժշտութեանը, այդ գրաւիչ երգեցողութեանը: Գերհարտն էլ այդ ժամանակ լուր ու մունջ նստում էր ու լսում, լսում էր ու աւելի մոայլում: Երաժշտութիւնը բաց էր տնում նրա զգայուն միրտը և առաջ քաշում բանաստեղծական նուրբ ձգտումները: Անհասկանալի թափիծը մեծանում էր օրէցօր և կարում նրա հանգիստը: Գիշական կեսանքը այլ ևս բաւականութիւն չէր տալիս նրան, նա ձգտում էր դէպի հեռուն, դէպի մի սնորոշ նպատակ...

1880 թ. նա վերագարձաւ Բրեսլավու և իր եղբօր ջան-

քերով ընդունուեց «Գեղարուեստաց դպրոցի» նախապատրաստական դասարանը: Բայց այստեղ էլ նրա բաղդի անիւը չբանեց, այստեղ էլ նա չը կարողացաւ ցանկալի առաջադիմութիւնը ցոյց տալ և 1881 թ. դպրոցից արձակուեց: Դրանից յետոյ նա մի տարի էլ աշխատում էր իր հոգանաւոր՝ քանդակագործութեան պրօֆեսոր Հերտելի մօտ, որը կարգացել էր նրա ձեռագիր բանաստեղծութիւնները և աշխատում էր ամեն կերպ զարկ տալ նրա տաղանդին ու մտաւոր զարգացման: Այդ միւնոյն հոգանաւորի չնորհիւն էր, որ նա 1882 թ. ընդունուեց Ենայի համալսարանը—իբրև պատմութեան ուսանող: Նոր կեանքը, նոր միջավայրը ունեցաւ զօրեղ ազդեցութիւն: Գերհարտը ջերմ կերպով հետաքրքրուել պիսեց լնազիտական ու հասարակական գիտութիւններուի: Դարվինն ու Կարլ Մաքսը նրա ընթերցանութեան ամենասիրելի նիւթերն էին: Դարվինիզմի ու Մարքսիզմը նրան ամենից շատ զբաղեցնալ հարցերը դարձան:

Բայց այդ նոր դրութիւնն էլ չը կարողացաւ նրա հոգեւկան թափիծը փարատել, նրա մելամաղձառութիւնը վերացնել: Նա որոշեց երկար ճանապարհորդութեան մէջ որոնել հանգիստ ու խաղաղութիւն, եկաւ Համբուրգ, որտեղ նրա մեծ եղբայրը—Գէօրգը ամուսնացել էր և տուեարական գործ սկսել և այդտեղից նաւով ճանապարհ ընկաւ գէպի Միջերկրական ծով: Սպանիայի և Իտալիայի նաւահանգիստներն այցելելով նա հասաւ Բիվերիա, որտեղ նրան սպասում էր Կարլ եղբայրը: Այսաեղից երկու եղբայրները միասին շարունակեցին ճանապարհորդութիւնը: Նըրանց գրաւում էր Իտալիան իր բնութեան գեղեցիկ տեսարաններով: Սակայն նրա կլիման վատ աղջեց Գերհարտի առողջութեան վրայ, ուստի երիտասարդ ճանապարհորդները ստիպուած էին օր առաջ վերադառնալ Գերմանիա:

Սակայն այդ բանաստեղծական երկրի թողած տպաւորութիւնները այնքան խորը, ամնքան ուժեղ էին, Գերհարտի ձրդառումը գէտի գեղարուեստը այնքան եռուն էր, որ նա երկրորդ անգամ այցելեց Խառլիան և այս անգամ նոյն իսկ քանդակագործութեան մի արհեստանոց հիմնեց Հոովմում: Բայց նրան վիճակուած չէր երկար մնալ այդտեղ: Վերահաս ծանր հիւնդութիւնը նրան նորից տարաւ հայրենիք և յանձնեց սիրեցեալ նշանածի—Մարիայի խնամքին: Անշան հիւնդութեան օրերը և Գերհարտը պատկուեց (1885) Մարիայի հետ, կազմելով մի երջանիկ զոյգ: Կնոջ բաժինը հնարաւորութիւն տուեց Հառւպամտնին հեռու մնալ նիւթական հոգսերից, առօրեայ կարիքներից և ամբողջապէս նուիրուել գրականութեանը:

Արդէն անցել էր գեգերումների շրջանը, արդէն պարզ-

ուել էր, որ Հառւպտմանի կոչումը բանաստեղծութեան մէջն էր: Դեռ ուսանողութեան շրջանում, զեռ իր ճանապարհորդութեան ժամանակ նա բանաստեղծօրէն արտայայտում էր իր զգացմունքներն ու տպաւորութիւնները, գրում էր լիրիկական ոտանաւորներ, բայց գրանք չէին նրան հոչակ պարզեցները, այլ յետագայ գրուածքները—դրամաները:

II

Բանաստեղծում էր Հառւպտման, բայց անհասկանալի էին նրա բանաստեղծութեան մթին մտքերը: Բոլոր ոտանաւորների մէջ աչքի էր ընկնում միայն մի ընդհանուր դիմ, մի ընդհանուր առանձնայատկութիւն—զա հեղինակի զգայուն սիրան իր, որ միշտ թեքւում էր դէպի թշուառների, ընկնուածների կողմը, զա նրա զեղուն զգացմունքներն էին, որ միշտ դուրս էին թոչում յանուն արդարութեան, յօգուա խեղճերի, անօդնականների:

Եւ այդ բանում շատ մեծ դեր էին խոզում մանուկ հասակում ստացած տպաւորութիւնները: Դեռ Օրերդալցրուննում եղած ժամանակ նա տեսնում էր հասարակական կեանքի անհաւասարութիւնը, տեսնում էր մի կողմում իր հօր հիւրանոցի հարուստ յաճախորդներին, իսկ միւս կողմում հարեան գիւղերի աղքատիկ գիւղացիներին, մի կողմում—շոայլութիւն ու փարթամութիւն, իսկ միւս կողմում—ծայրայեղ չքաւորութիւն ու խեղճութիւն... Տեսնում էր այդ ամենը և իր սրաի խորքում սննդատելի կերպով արմատացնում տանկութիւն դէպի հարուստներն և ուժեղները...

Դպրոցում եղած ժամանակ նա պախարտկում էր այն զիտութիւնները, որոնք հետու էին կանգնած կեանքից ու իրականութիւնից, որոնք միայն սակաւաթիւ ընտրեալների սեփականութիւնն էին կազմում...

Սպանիայում և Խոալիայում ճանապարհորդելիս նա տեսնում էր բնութեան հարստութիւններն ու գեղեցիկ տեսարանները, բայց գրանց հետ միտսին տեսնում էր և չոր հացի կարօս, կարիքների տակ ճնշուած բնակիչներին, և այդ ամենը խոր գրոշմ էր թողնում նրա վափուկ սրտում:

Ահա այդ հակագիր տպաւորութիւնների բովով են անցել նրա բանաստեղծութիւնները, գրանց ազգեցութեան տակ է գրուած «Promethidenlos» էպոսը:

Սելին անունով մի երիտասարդ է այդ գրուածքի հերոսը: Նա հեռանում է հայրենական տնից և ծովային ճանապարհոր-

դութիւն սկսում նա դառնութեամբ է յիշում իր անցեալը, բանականեր է համարում իր դաստիարակներին, որոնք միայն ոյժի բանակալութեան միջոցով էին գործում: Նա մոալլ է և յուսահատ: Սակայն օգնութեան են համառ երկու գեղանի կանայք, որոնք ուզում են առաջնորդել նրան դէպի առաջ, դէպի ապադան...

Այդ կանանցից մէկը բանել է ձեռքին փորիչ դուրը—զաքանդակագործութեան մուսան է, իսկ միւսը—շղարչն ու գափնեայ պատկը—զա էլ բանաստեղծութեան մուսան է, լեզճուկ Սելինը առանաւում է այդ երկուսի մէջ տեղը և չը կիտէ որին հետեւ, որի խորհուրդը կատարէ...

Սպանիա այցելելով, նա առաջին անգամ տեսնում է վեղին կեանքը, առաջին անգամ հասկանում է անառակ կանանց անբարոյականութիւնը: Զայրոյթի հետ միասին նրա սրտում զարթանում է և յաւակցութեան զգացմունքը: Զարիքի ամբողջ յանցանքը նա գտում է այն մարդկանց զգին, որոնք խաբուսիկ յօյսերով այդ կանանց գուրս են մղել բարոյական ճանապարհոց: Նա որոշում է քարոզել մի նոր կրօնու, մի նոր դաւանանք, որը իր հավանաւորութեան տակ տոնէր և բախտազուրկ թշուաններին և անառակութեամբ հալ ու մաշ եղած կանանց: Նա հէնց նաւի վրայ սկսում է իր քարոզը, բայց մարդիկ նրան չեն հասկանում, ամբոխը նրան ծաղը ու ծանակի առարկայ է դարձնում:

Սելինը շարունակում է իր ճանապարհը, և համառ է մինչև Խոտալիա: Սյստեղ էլ նա տեսնում է սով ու աղքատութիւն, ծայրայիշ կարիք ու յուսահատութիւն: Զգայուն սիրտը նորից վրդտվում է տիրող անարդարութեան դէմ: Նա նորից վճռում է թշուանների բախտին զոհել իր ջանքն ու հոանողը, իր երգն ու կեանքը: Նա ուզում է բարձրանալ մինչև «անյուսալիութեան ժայռը» և այնտեղից քարոզել ճշմարտութիւնը: Բայց յանկարծ յուսահատութիւնը տիրում է նրան և վարդագոյն երազը մնում է անկատար: Զայրացած Սելինը ծովի անդունին է շարտաւմ իր քնարը և միայնակ մնում: Գալիս է բանաստեղծութեան մուսան և ջրասոյզ քնարը երկնք բարձրացնում: Իսկ Սելինը մնում է դատարկաձեռն, մնում է յուսահատ ու յուսախաբ:

Այստեղ հեղինակը յանդիմանում է Սելինին, պախարակում է նրա թուլակամութիւնը և կարծես դրանով ցոյց տալ է ուզում, թէ ինքը արդէն անցել է այդ շրջանը, պատրաստ է «անյուսալիութեան ժայռը» բարձրանալ, պատրաստ է միշտ իր մօտ պահել քնարը և նրա լարերը հնչեցնել յանուն արգարու-

թեան ու ճշմարտութեան, յօդուտ թշուառների ու հալածուածների:

Մի ուրիշ աեղում Հառուպտման աւելի բնորոշում է իր այդ պարտականութիւնը, գրելով.

Իմ ազատ սրտի, իմ անկախ կամքի բնոչ փոյթն է,
Թէ ինձ չեն գնահատի այժմ և ապագայում.

Ես երգում եմ, նպատակս հասկանալով...

Եւ իսկապէս Հառուպտման իր բեղմաւոր գրչով դարձել է մի անվախ զինուոր, որ միշտ կուտ է մղում ցանկալի նպատակին հասնելու համար, որ միշտ ասպարէզ է մտնում իր անկաշառ ձայնը լսելի զարձնելու համար: Նա մեծ եռանդով ուսումնասիրում էր էվոլյուցիայի և տնտեսական մատերիալիզմի թէօրաները: Հետհում էր հասարակական հրատապ հարցերին, բայց և այնպէս մնում անկախ, առանց միանալու այս կամ այն կուսակցութեանը: Նա ուշի ուշով կարգում էր «պատմութեան որոտ ու կայծակ» համարուող Շիլէրին, բայց չէր ենթարկում նրա ազգեցութեանը: Նրան աւելի գրաւում էր Բայրընը իր համաշխարհային վշտով, Զօլան իր նկարագրած կեանքի քստմելի երևոյթներով: Սակայն այստեղ էլ պահպանում էր իր ինքնուրոյնութիւնը:

Ահա այդ է պատճառը, որ մի զարմանալի բազմակողմանիութիւն է նշմարւում նրա բոլոր գրուածքներում, որ կարելի է բաժանել վեց զանազան կատեգորիաների: 1) Նօվելլաներ՝ «Bahnwärter Thiele» և «Der Apostel», 2) սոցիալական դրամաներ՝ «Vor Sonnenaufgang» և «Die Weber». 3) Ընտանեկան կեանքից վերցրած դրամաներ՝ «Das Friedensfest», «Einsame Menschen», «Fuhrmann Henschel» և «Michael Kramer». 4) Կոմեդիաներ՝ «College Crampton» և «Der Biberpelz». 5) Պատմական գրամա՝ «Florian Geyer», վերջապէս ն-րորդ տեղը բըռնում է նրա հերիաթախառն և միստիկական դրամաներ՝ «Die versunkene Glocke» և «Hannele»:

III

Նօվելլաներից մենք կը պատմենք 1887 թուին գրուած «Երկաթուղու պահապան Տիլը» («Bahnwärter Thiele»)-ի բովանդակութիւնը: Բարդ չէ այդ պատմուածքը, երկար չէ նրա բովանդակութիւնը, բայց չափազանց յուղիչ, չափազանց խոր է նրա թողած տպաւորութիւնը:

Գլխաւոր հերոսը պահապան Տիլն է—մի բարեսիրաց ու

աշխատասէր մարդ; Նա միշտ ճշտութեամբ կատարում է իր պաշտօնը, գնացքը մօտենալիս կանգնում է ճանապարհի կողքին և բաց անում կանաչ գրօշակը; Հեալով ու թանձր ծուխ արձակելով անցնում է գնացքը, իսկ Տիլը վերադառնում է փայտէ խուցը և նորից անձնատուր լինում իր մաածմունքներին, իր անցեալի տխուր յիշողութիւններին...

Տխուր է Տիլը, մշտական թախիծ են արտայայտում նրա աչքերը... Տարիներ առաջ մեռաւ նրա տուաջին կինը—նիհարիկ, բարեսիրտ Մեննան: Մեռաւ նա, իր յետից յիշատակ թողնելով նորածին Տօրիասին: Տիլը նորից ամուսնացաւ, բայց երկրորդ կինը—Լենան չունէր ցանկալի գութն ու բարեսրտութիւնը: Երկրորդ ամուսնութիւնը զուրկ էր հոգեկան կապից, միայն տոփանքն էր նրա հիմքը կազմում:

Այսպիսի պայմաններում ցաւալի էր փոքրիկ Տօրիասի վիճակը: Նա մեծանում էր առանց խնամքի, առանց մայրական գորովի: Խորթ մայրը շատ յաճախ ծեծում էր նրան ու հնեղութիւն տալիս. նրա կեանքը դառն էր ու չարբաշ:

Նկատում էր այդ բանը պահապան Տիլը և աւելի տրխուրում: Յաճախ նա նատում էր միայնակ, բաց էր անում ազօթքագիրքը, գնում էր առաջը հանդուցեալ կնոջ պատկերը և երդում ու ազօթում, ազօթում ու պատկերին նայում: Այդ բոպէին պատկերը դառնում էր նրա համար մի աստուածութիւն, մի սլաշտելի սրբութիւն:

Ընտանեկան կեանքը չէր գրաւում Տիլին: Տօրիասն էր նրա միակ մխիթարանքը, հաստլիկ-կայտառ Տօրիասը: Եւ հոգատար հօր մի հատիկ տենչանքն էր ճանապարհի վարպետ գարձնել նրան: Այդքանն էլ մեծ բան էր նրա համար: Բայց անողաք ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել:

Աշնանային օր էր—սկս ու մութ օր Տիլի համար: Գիշերը շատ վատ երալ էր տեսել... Ցերեկն էլ նրա աչքին մերթ լնդ մերթ երեսում էր Մեննացի դալուկ դէմքը և կարծես մի ինչ-որ բանի համար յանդիմանում:

Ահա նրա մօտ են կինն ու երեխաները: Կայտառ Տօրիասը խաղում է, իսկ կինը աշխատում: Տիլը նայում է շուրջը և տուիլի մույլում: Ահա լաւում է ազդանշան դանդը, երեսում է վիթխարի օձը—գնացքը: Տիլը վագում է իր տեղում կանգնելու, պայմանական գրօշակը ծածանելու:

Բայց ինչ սարսափ... գնացքը յանկարծ կանգ է առնում... Դժբախտութիւն, դժբախտութիւն, լաւում է այս ու այն կողմից: Մարդիկ վագում են դէպի րելսները: Վագում է և Տիլը և ինչ է տեսնում: Ճանապարհի մէջ տեղը կիսամահ

ընկած է Տօրիասը։ Գնացքը նրա վրայից էր անցել... Լուռում ևն ցաւակցութեան բացականչութիւններ, լուռում է շոգեկառքի շվոցը և դնացքը, փրթկալով ու հեւալով, նորից առաջ է շարժւում:

Մնում է Տիլը ձեռքերը ծոցում, դառն վիշտը սրտում։ Նրա աչքերը արցունք չեն թափում, բայց դրա փոխարէն մի կատաղի զայրոյթ են արտայայտում։ Լաց է լինում նրա կինը, բայց ռըքան անկեղծ է այդ լացը... Մնում է յուսոյ մի չնչին նշոյլ—բժշկի օգնութիւնը։ Բայց շուտով այդ յոյսն էլ ոչնչանում է։ Տօրիասն երեխյեան աւանդում է հոգին...

Լուսանում է։ հարեանները բազխում են Տիլի բնակարանի գուռը, բայց ձայն-ծագումն չի լսում։ Ներս են մտնում և բնչ տեսնում։ յատակի վրայ արևան մէջ ընկած է անշունչ կենան, իսկ նրա կշտին—խեղիսամահ արած փոքրիկ երեխյան։ Հապա այդ բոլորի յանցաւորը, հապա Տիլը... Նա անհետացել է։

Որո՞նում են և գտնում Տիլին։ Նա գառեած էր երկաթուղու րելմների վրայ—Տօրիասի կարմրաւուն զլիարձիլ ձեռքին։ Կանչում են նրան, խօսում են հետը, բայց նո տեղից չի շարժւում, միայն մի գաւան քրքիջ է արձակում։ Նա դժուած էր...

Այդ փոքրիկ Նօվելլայի բռվանդակութիւնից երեսում է, որ նրա զլիաւոր հիմքը հոգեբանական վերլաւծումն է, թէև պակաս չեն կենցաղագրական տեսարանները։

Իր ձեռվ գրանից աւելի բարձր է «Առաքեալը» («Der Apostel»), սակայն այսուել էլ նիւթն է աւելի մութ և միստիկական։ Բայց մինք կ'անցնենք երկրորդ կատեղօրիայի գրուածքներին։

IV

Սօցիալական գրամաներից առաջին տեղն է բռնում Զուլհակներ (Die Weber), որի նիւթը վերցրած է անցեալի պատմութիւնից։ Այդ գրաման մեծ խլրաւում բարձրացրեց ոչ միայն Գերմանիայում, այլ և ուրիշ երկրներում։ Իշխող գասակարգերն էին նրան հալածողները, յուզուած կապիտալիստներն էին նրա զէմ աղմուկ բարձրացնողները։ Եւ այդ երեսյթը որոշ չափով հասկանալի կը գառնայ, եթէ աչքի առաջ ունենանք, որ «Զուլհակները» իսկապէս մի կենդանի բողոք է կապիտալիզմի դէմ, մի ցնցող պատկեր է աշխատաւոր զասի գրութեան։

Գործողութիւնը տեղի է ունենում Շլեզիայի լեռներում—
1844 թուականին։ Հառապտմանը իր հօրից էր լսել այդ պատ-

մական գէպքի մասին, իսկ յետոյ աւելի հիմնաւոր կերպով ուսումնասիրել էր փաստը զրական աղբիւրներից *):

Դրամայի առաջին գործողութիւնը պատկերացնում է չուլհակների փող ստանալը գործարանատէր Դրայսիգերի գանձապահից Զափազանց ազգու է այդ տեսարանը. գանձապահը խստութեամբ ցոյց է տալիս իւրաքանչիւր ջուլհակի հաշիւք, վճարում է փողը, առանց ուշք դարձնելու նրանց բողոքներին ու աղերսանքին: Թշուառները դողդողուն ձեռքով վերցնում են փողը և հեռանում: Բայց այդպէս չի վարւում ջուլհակ Բէկկերը: Նա համարձակ կերպով յայտնում է, որ դա իրանց իսկական վարձատրութիւնը չէ, այլ միայն չնչին փշրանքները, որ մի անգութ տղրուկ է գործարանատէր Դրայսիգերը, և այն: Մօտենում է Դրայսիգերը բայց Բէկկերը գեռ շարունակում է իր արդար բողոքը: Վէճը սուր կերպարանք է ստանում: Բաղմութիւնն աւելանում է... Հէնց այդ բոպէին մի անսպասելի գէպք գրաւում է հաւաքառածների ուշադրութիւնը: Ուժ տարեկան մի նիհարիկ երեխոյ ուշաթափ գետին է փուռում: Դրայսիգերը բարկանում է և կշտամբանք թափում ծնողների հասցէին, որ չը գիտեն կարգին խնամել իրանց երեխաներին: Սակայն ծնողները չին գէպքի պատճառը, այլ քաղցածութիւնը: Բէկկերի առաջարկութեամբ մի կտոր հաց են տալիս երեխային, որ նա աղահութեամբ կլանելով հացը հեռանում է, իսկ գործարանատէրը գեռ շարունակում է յանդիմանել բանուորներին, դեռ խօսում է նրանց աղերախտութեան մասին...:

Երկրորդ գործողութիւնը ընթերցովին տանում է Անզօրդէի խրճիթը, որը պատկերացնում է ամենածայրային աղքատութիւնը իր ամբողջ էութեամբ: Այստեղ զալիս է ցնցոտիներով ծածկուած մի կաղ ու յղի կին և ալիւր աղերսում:

—Արգէն մի քանի օր է, որ երեխաներս ոչինչ չեն կերել, ասում է նա և դառն արցունք թափում աչքերից: Բայց ի զուր, ամբողջ խրճիթում ուտելու ոչինչ չը կայ և հեռանում է զատարկածեան:

Դրանից յետոյ գալիս է պահեստի զինուոր Մօրից Եղերը

*) Յիդ ճնշուած, կեղեքուած ջուլհակների ապստամբութիւնը մանրաման կերպով նկարագրուած է Հէնրիի ճարաչկէի „Deutsche Geschichte im neuzeehnten Jahrhundert“ աշխատութեան Վ-րորդ հատորում: Իսկ 1885 թուականին լոյս տեսաւ տնտեսոգէտ Ալֆրէդ Ցիմմերմանի մօնոգրաֆիան՝ „Blüte und Verfall des Leinengewerbes in Schlesien“ վերնադրով, որ Հատուպտմանի լուրջ ուշադրութեանն արժանացաւ:

և սկսում է գովել զինուորական կեանքը և վատաբանել ջուլ-հակների գրութիւնը։ Նրա ներկայութեամբ խրճիթում սկսում են ճաշի պատրաստութիւն տեսնել, բայց ինչ են ուտելու... Ծան միս ձաշակում են այդ անսովոր կերակուրը և քիչ յետոյ ստամոքսի ցալից գանգատում։ Տեսնում է այդ ամենը Եգերը և սարսափահար լինում։ Նա մեծ զայրոյթով է խօսում գործարանատէրերի մասին։ Օձեր ու գահիճներ է անուանում նրանց։ Զուլհակները ուշի ուշով լսում են նրա ճառերն ու ոտանաւորները և նոյն իսկ ոգնորւում են, երբ նա գործարանատէրերի հասցէին ասում է.

—Դուք մարդասպաններ էք, դուք դահիճներ էք սատանայական ցեղից, Բայց արգէն ժամ է հասկանալու, որ մեր ժամանակն էլ հասել է...

Այդ բոպէին վեր է ցատկում ծերուկ ջուլհակը—Բառւմերու և ձեռքերը երկարացնելով, բացականչում է.

—Ահա տեսէք ինձ ինչ են արել, իմ ինչն են թողել... Միայն կաշիս ու սակորս... Ա՛յ դուք դահիճներ սատանայական ցեղից...

Դրանից յետոյ գործողութիւնը տեղի է ունենում գարեցրատանը։ Այստեղ են հարուստ դիւղացին ու կոմերի մօտ ծառայող անտառապահը։ Նրանք արհամարհանքով են վերաբերում դէպի ջուլհակները... Հետզհետէ ամբոխը մեծանում է... Զուլհակները սկսում են երգել իրանց սիրելի երգը Դրայսիգերի մասին։ Միջամտում են ժանդարմները, տեղի է ունենում ընդհարում...

Այդ մոռայլ ու մութ խորշերից, ցնցող տեսարաններից յետոյ, ընթերցողի առաջ սպատկերացնում է գործարանատէր Դրայսիգերի շքեղազարդ սենեակները։ Այդուղ խօսակցում են պաստօր կիտտեհառուզը և ուսուցիչ Վայնօլդ։ Առաջինը պաշտպան է Դրայսիգերի, իսկ երկրորդը—բանուորների։ Նրանց խօսակցութեան ժամանակ ներս են մտնում Դրայսիգեր ամուսինները, իսկ գրսից լսում է ջուլհակների ծաղրական երգը։ Զայրանում է Դրայսիգերը... Երիտասարդ ուսուցիչը փորձում է պաշտպանել ջուլհակներին, նկարազրում է նրանց թշուառ վիճակը, նրանց սովո՞ւ ու կարիքները, բայց Դրայսիգերը աւելի կատաղում է և պաշտօնից զրկում է բանուորի այդ ինքնակոչ պաշտպանին։ Հեռանում է ուսուցիչը։ Այդ բոպէին ներս է մտնում գործակտատար Պֆէյֆերը և յայտնում է, որ ձերբակալուած է խտոնակիչ Եղերը։ Բերում են Եղերին։ Նա սկսում է համարձակ կերպով խօսել ու վիրաւորել թէ Դրայսիգերին և

թէ նրա գործակատարին, իսկ դրսում ամբոխը աւելի կատաղում է... Նա վերջապէս ոստիկանութեան ձեռքից խլում է Եգերին... Դրութիւնը աւելի կրիտիկական է դասնում: Դրայսիգերը կնոջ հետ կառք է նստում և գաղանի կնրպով վախուստի դիմում: Քարերի մի ամբողջ տարափ է թափւում նրա բնակարանի վրայ. ջարդում են ապակիներն ու գոները: Ամբոխը ներս է լցում, սկսում է թալանն ու աւերումը: Այդտեղից ջուհակները յաղթական արշաւանքով, ազատութեան երգեր երգելով, առաջ նն դիմում:

Վերջին գործողութիւնը ծերուկ ջուլհակ Խիլզէի խըրճիթումն է տեղի ունենում: Հին գաւանանքի, հին բարոյականութեան ներկայացուցիչն է այդ ծերուկը: Նա Տօլստօյի նման քարոզում է խոնարհուել չարիքի առաջ, հազանդուել թշնամու լծին: Նա ամբողջ օրտով հակառակ է ջուլհակների ապաստամբութեանը: Նրա որդին, Գօթլիբը, տատանուում է հին և նոր համոզմունքների մէջ տեղը, իսկ հարսը—Լուիզան ամբողջ հոգով ապատամբներին կողմնակից է: Ներս են մտնում ջուլհակները Բէկերի առաջնորդութեամբ: Վերջինս սկսում է համոզել Խիլզէին:—Ինչ որ չեն տայ կամքով ու յօժարութեամբ, ասում է Բէկեր, կը վերցնենք ոյժով ու բռնութեամբ...

Բայց Խիլզէն մնում է անդրդուելի:

—Դուք կը հեռացնէք երկու զինուորի, նրանց տեղ կը գնն տասը, պատաժանում է նա դառն ժպիտով և նստում իր ստայնի առաջ:

Բայց այդ բոպէին սկսում է իրարանցում. լսում է զինուորների հրացանաձգութիւն, գնտակը գալիս զիպչում է յամառ ծերուկին: Նա մեռնում է..., իսկ գուրսը լսում է հազարաւոր ջուլհակների միահամուռ երգն ու աղմուկը:

Դրանով վերջանում է զրաման, ինչպէս տեսանք, նա գրիթէ լուսանկարչական ձշութեամբ, միայն աւելի գեղարուհատորէն, վերարտադրել է պատմական փաստը: Հէնց այդ ճշտութրւնն է պատճառը, որ նա զուրկ է զլսաւոր հերոսից: Եթէ հեղինակը ուղինար մի այնպիսի ձե տալ իր դրամային, ինչպէս, օրինակ, Շելլերի Շելլերլմ Տելլը, այն ժամանակ պիտի հեռանար պատմական իրողութիւնից, որ ցանկալի չէր նրա համար:

Հառապտամանի «Մենակ մարդիկ» («Einsame Menschen») գրաման * անհամապատասխան ամուսնութեան պատկեր է տալիս: Բայց այստեղ անհամապատասխանութիւնը բոլորովին ուրիշ զրոշմ է կրում, քան միւս գրամաներում:

Այստեղ ընդհարումը տեղի է ունենում այնպիսի մարդկանց մէջ, որոնցից իւրաքանչիւրն իր չափով ազնիւ է ու մաքուր, անկեղծ է ու համոզուած:

Գլխաւոր հերօսը Յովհաննէսը իրան մենակ է զգում, որովհետև կինը—կէթէն չի կարողանում հասկանալ նրա մաքի ելեէջերը: Նա իր ամբողջ էութեամբ սէր է, մի անարատ ու անջինջ սէր, բայց սիրային անձնուիրութիւնը յագուրդ չի տալիս Յովհաննէսին: Ուրիշ է նրա պահանջները...

Ծնողներն ու շրջապատողներն էլ չեն հասկանում նրան: Յայտնուում է ուսանողունի Սննան, հասկանում է այդ պահանջները և գրանով գրաւում Յովհաննէսի սիրտն ու խելքը... Սակայն շրջանով նա էլ հեռանում է, նորից հոգեկան մենակութեան մէջ թողնելով Յովհաննէսին: Յուսահատութիւնը աւելի գորեղանում է:

Նա լճի ալիքների մէջ է որոնում իր փրկութիւնը...

Այստեղ էլ ընտանեկան կատաստրոֆ, այստեղ էլ մարդկային զոհ: Սակային այդ զոհը իր ամբողջ էութեամբ տարբերում է ընտանեկան կարգերի այլ տիպի զոհերից...

«Մենակ մարդիկ» գրաման չափազանց տպաւորիչ—հետաքրքրաշարժ է, որովհետեւ նա իր մէջ պարունակում է հոգեբանական զարմանալի ծառութիւն, տիպերի բելիէֆ պատկերացումն և ժամանակակից հակագիր կարծիքները կնոջ ու ամուսնութեան մասին:

VII

Չորրորդ կատեգօրիայի պատկերներից, կօմեդիաներից յայսնի է «Կոլլեգա Կրամպոս»:

1891 թ. աշնանալին երեկոներից մէկն էր: Բներլինի «Bargnaysche Theater» անունով թատրոնը լի էր խուռն բազմութեամբ. այդտեղ էր և Հառապտաման: Ներկայացնում էին Մօլիէրի «Ժլատը»: Երիտասարդ հեղինակի վրայ մեծ տպաւորութիւն թողեց ժլատութեան այդ տրագի-կոմիկական տիպը: Նրա յիւ

*) Աւելորդ ենք համարում մանրամասն առաջ բերել նրա բովանդակութիւնը, որովհետև նրա հայերէն թարգմանութիւնը տպագրուեց այս տարբեաչ «Մուրճում» (№№ 3—8):

շողութեան մէջ զարթեցին հին ծանօթութիւններն ու ապաւորութիւնները և նա վճռեց մի կօմեդիա գրել: Մի քանի շաբաթից յետոյ ցանկութիւնն արդէն իրականացած էր *): «Կոլեգակա Կրամպտօն» («College Crampton») էր նոր կօմեդիայի անունը:

Հերոսը պրօֆեսոր Կրամպտօնն է: Նա յայտնի նկարիչ է, բայց գժբախտ է զգում իրան: Այստեղ էլ կինն է գժբախտութեան պատճառը: Վերջինս հարուստ ու նշանաւոր ընտանիքից է, բայց հոգեպէս աղքատ է և չի հասկանում իր ամուսնուն, չի ըմբռնում նրա պահանջները: Դժբախտանում է Կրամպտօն, սակայն Յովհաննէս Ֆոկիերատի նման ջուրը չի նետւում, այլ անձնատուր է լինում արբեցողութեան. նա զինով ու զարեցրով է հանգնում իր վիշտը...

Առաւօտ է: Կրամպտօն դարթնել է քնից: Հաւաքուել են աշակերտները և սպասում են նրա պատուէրներին: Նա ամենից առաջ իր ծառայ—Լէֆլէրին ուղարկում է գորգը գրաւ դնելու և գարեջրի համար փող ձեռք բնրելու: Այդ տեսարանը բաւական ընորոշում է Կրամպտօնի վիճակը՝ նրա արբեցողութիւնն ու նիւթեական պայմանները:

Սրբեցող է Կրամպտօն, բայց իր կոչմանն արժանի նկարիչ: Նա շատ բարձր է գնահատում գեղարուեստը և զայրոյթով է պատասխանում պատուէր տուղին, որը մեծամիտ տունով է խօսում նրա հետ:

—Ես նկարիչ եմ և ոչ ներկարար, բայց ականչում է Կրամպտօն:

Նա արհամարհանքով է խօսում գեղարուեստից ձեմարանի մասին, ասում է, որ այնտեղ առաջ դնալ, հոչակ ստանալ կարող են միայն նրանք, որոնք զիտուն ունալ ու հաճոյանալ, գիտեն իրանց վրձինը շարժել ուրիշները քմահաճոյքի համեմատ: Նա ոգեսրուած քաջալերում է ճեմարանից արձակուած Մաքս Շտրէլէրին, բայց միենայն ժամանակ պատուիրում է միշտ բարձր պահել գեղարուեստը, չընկնուել ամբոխի կարծիքի առաջ:

—Երբ մուրդ մի չնորհացի գործ է ստեղծում, ասում է նա, այն ժամանակ ամեն մի փողոցային դատարկաբան թքում է այդ գործի վրայ և բացականչում. «Դու էլ դատարկաբան դարձիր», բայց միթէ կարելի է լսել այդ բացականչութեանը...

Կրամպտօն շատ զիւրահաւատ մարդ է և այդ յատկութիւնը դնում է նրան ծիծաղելի զրութեան մէջ: Աշակերտներն ու պրօֆեսորները անհամբեր սպասում են կոմսի գալուն... Սպա-

*) Paul Schlenther: „Gerhart Hauptmann“ եր. 154.

Դեկտեմբեր, 1901.

սում է և կրամպտօն, բայց նրա սպասելիքը բոլորովին ուրիշ է, նա կարծում է, թէ կոմսը այցելելու է ճեմարանը միմիայն նրա համար որպէս զի տեսնի իր արհեստանոցը, տեսնի իր նկարները: Նա մի առանձին պարծանքով է խօսում իր և կոմսի մտերմութիւն մասին: Սակայն ինչպիսի հիասթափումն, ինչպիսի ծիծաղաշարժ վախճան: Կոմսը գալիս է և գնում առանց կրամպտօնի անունն անդամ յիշելու: Բայց այդ գեռ բոլորը չէ: Մի քանի օրից յետոյ կրամպտօն զրկում է պաշտօնից իր արբեցողութեան ու խովարար բնաւորութեան համար: Եւ կոմսը ստորագրում է հրաժարեցնելու թուղթը:

Ծիծաղելի, բայց միննոյն ժամանակ ցաւալի վիճակի մէջ է ընկնում պարծենկոտ կրամպտօնը: Ամենքը թողնում հեռանում են նրանից: Նոյնիսկ կինը հեռանում է. Նա գնում է ծնողների մօտ: Միայնակ է մնում կրամպտօն և կորչում է կեանքի ալիքներում: Բայց շուտով նրան օգնութեան են համանում նախկին աշակերտ Մաքս Շտրէլէրը և աղջիկը—Գերտրուդան: Նըրանք բարձրացնում են կրամպտօնին կորստեան անդունդից և բերում են փրկութեան նաւահանգիստը: Մաքսը ջերմ սիրով սիրում է Գերարուդային: Նա ուզում է երախտագիտական զգացմունք ցոյց տալ դէպի իր նախկին ուսուցիչը, դէպի իր սիրերեցեալի հայրը: Նրա մեծ եղբայրը—Ազօլֆը պեսսիմիստ է և կարծում է, որ այլ ևս անկարելի է ուղղել կրամպտօնին, անհնարին է նրան նորմալ ճանապարհի վրայ կանգնեցնել: Բայց Մաքսը բոլորովին այլ քարծիքի է... Երկար որոնումներից յետոյ նա գտնում է կրամպտօնին: Պատկեր նկարել տալու պատրուակով բերում է նրան իր բնակարանը և առաջարկում է աշխատել մի սենեակում, որ զարդարուած է ճիշտ այնպէս, ինչպէս նրա նախկին առանձնասենեակը: Սկզբում զարմանում է, նոյն իսկ վիրաւորում է կրամպտօնը, յետոյ երկմտում, իսկ վերջը երբ տեսնում է իր աղջկան, Գերտրուդային, հասկանում է, թէ բանն ինչումն է...

Նա մնում է իր աղատարարների մօտ... Նա փրկուած է... Բայց մինչև Քրիստոնութեան տակ է գրուած «Կօլլեգա կրամպտօն», ուստի տեխնիկական մի որոշ նմանութիւն կայ նրանց մէջ: Այդ երկու պիտիների մէջ էլ աչքի է ընկնում մի զիսաւոր գործող անձն, որի բարոյական թուղթութեան շուրջը պատում է ամբողջ գործողութիւնը: Երկուսի մէջն էլ շաղկապուած են մարդկային հոգու կոմիկական ու տրագիկական յատկութիւնները: Բայց կայ և մի խոչոր տարբերութիւն, որ այսպէս կա-

«Ժլատի» աղջեցութեան տակ է գրուած «Կօլլեգա կրամպտօն», ուստի տեխնիկական մի որոշ նմանութիւն կայ նրանց մէջ: Այդ երկու պիտիների մէջ էլ աչքի է ընկնում մի զիսաւոր գործող անձն, որի բարոյական թուղթութեան շուրջը պատում է ամբողջ գործողութիւնը: Երկուսի մէջն էլ շաղկապուած են մարդկային հոգու կոմիկական ու տրագիկական յատկութիւնները: Բայց կայ և մի խոչոր տարբերութիւն, որ այսպէս կա-

բելի է բնորոշել. — «Ժլատը» բարոյագիտական կատակերգութիւն է, իսկ «Կօլեգա կրամպտօնը» — հոդերանական:

Անսպասելի աշողութիւն ունեցաւ «Կօլեգա կրամպտօնը» և թերեւ այդ աջողութիւնն էր պատճառը, որ Հառապտման հետեւալ տարին (1892) լոյս ընծայեց մի նոր կատակերգութիւն — «Մուշտակը» («Der Biberpelz») վերնագրով:

VII

Պատմական դրամաներից նշանաւորն է «Ֆլորիան Գէյէր»: Ընթերցողին, երեխ, յայտնի կը լինի այն մեծ շարժումը, որ տեղի ունեցաւ XVII դարում, որ այնպէս ցնցեց պապականութեան հիմքը և մեծ հարուած հասցերեց կաթոլիկ եկեղեցում: Գերմանացիներն էին այդ շարժման զեկավարողը: Լիւթերի արծարծած մտքերն էին նրա ոգին կազմողը: Բայց այդ շարժումը զուտ կրօնական բնաւորութիւն ունէր, իսկ հասարակ ժողովուրդը գեռ տանջւում էր տնտեսապէս, գեռ ճնշում էր ազնուականութեան կողմից: Վերջապէս լցուեց դառնութեան բաժակը, բռնկուեց գիւղացիների ապստամբութեան ձայնը (1525 թ.):

Սկզբում ապստամբուեցին Շուարիայի գիւղացիները, իսկ յետոյ նրանց միացան և միւմները: Շուատով ասպարէզ եկան այն նշանաւոր 12 յօդուածները, որոնցով գիւղացիները պահանջում էին՝ վերացնել ճորտութիւնը, թեթևացնել իրանց ծանր լուծը և ապատութիւն չնորհել գիւղական համայնքին: Առաջ յեղափոխական տարրի առաջնորդ դարձաւ Ֆլորիան Գէյէր: Նա թողեց ասպետական պաճուճանքը, արհամարհեց ազնուականի փառքն ու պարծանքը և եկաւ գոեհիկ ամբոխի զլուխն անցնելու: Հաղարաւոր զոհեր ընկան այդ կուում, բայց դժբախտարար շարժումը չը հասաւ իր նպատակին, յեղափոխութիւնը չը տուեց ցանկալի հետեւանքը. զոհ գնաց և Ֆլորիան Գէյէր:

Պատմութեան այդ տխուր էջը գրաւել էր և ուրիշների ուշադրութիւնը: Դեռ տարիներ առաջ լոյս էր տեսել զեմօկրատ Վիլհելմ Ցիմմերմանի աշխատութիւնը այդ մասին, մի աշխատութիւն, որի իւրաքանչիւր տողից, իւրաքանչիւր բառից երեւում է սէր զէպի մնչուած ու հարստահարուած գիւղացիները: Այդ գիրքը մինչի օրս էլ գերմանացի բանուորների ընթերցանութեան ամենասիրելի նիւթերից մէկն է: Պարզ է ուրեմն թէ ինչու ճնշուածների պաշտպան Հառապտմանը կանգ առաւ

այդ նիւթի վրայ: «Ձլօրիան Գէյէր» դրեց նա իր պատմական դրամայի վերնագիրը:

Այդ դրաման բաղկացած է նախերգանքից և հինգ գործողութիւնից, որ տեղի են ունենում զիսաւորապէս Վիւրցըուրգ, Ռօտենբուրգ և Շվայնֆուրտ քաղաքներում:

Նախերգանքը պատկերացնում է ասպետների վիճակը Վիւրցըուրգ ամրոցում, նրանց զայրոյթը 12 յօդուածի առթիւ և առհասարակ նրանց խորհրդակցութիւնը ընդգէմ ապստամք գիւղացիների: Այստեղ ասպետները այն կարծիքն են յայտնում, թէ զիւղացիների շարժումը հակառակ է օրէնքին, հակառակ է բարոյականութեանն ու նահապետական սովորութիւններին: Բայց այստեղ է նաև Գէյէրի գաղափարակիցը—Հանշատայնը, որը պաշտպանում է զիւղացիներին, արդարացնում է նրանց շարժումը:

Առաջին գործողութիւնը պատկերացնում է զիւղացիների լաղթանակը, որը այնքան փառք ու մեծարանք է հասցնում Ձլօրիան Գէյէրին:

—Quot capita, tot sententiae *), բացականչում է հումանիստ բէկտօր Բեկէնմյէրը:

—Եղբայրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն, լաւում է ամեն կողմից, բայց խրաքանչիւրը իր չափով, իր տեսակէտով է ըմբռնում այդ բառերի իմաստը...

Մնացած չորս գործողութեան ընթացքում զարգանում է գիւղացիների կորստարեր պարտութիւնը, որ և վերջանում է Գէյէրի մահով: Ստոր դաւաճանութեան զոհ է գնում ազատութեան պաշտպանը. ոչչանում են նրա «աև խմբերը», հանգչում է ապստամբութեան կայծը»:

Հառապտան իր այդ դրամայով ուզեցել է պատկերացնել մի խոշոր պատմական երեսյթ, մի գաղափարական հերոս, բայց դժբախտաբար փորձն անաջող է անցել:

Ճիշտ է, դրաման տալիս է մի ամփոփ գաղափար պատմական անցքերի մասին, բայց շատ թոյլ է տեխնիկայի կողմից:

Դէպքերը տեղի են ունենում զիսաւորապէս բեմից դուրս, իսկ բեմի վրայ լսուում են միայն անվերջ պատմութիւններ ու դատողութիւններ դրանց մասին:

Հէնց այդ պատճառով էլ դրաման էպօսի տպաւորութիւն է թողնում:

Իսկ զիսաւոր հերոսը—Գէյէր զուրկ է սեփական պատմութիւնից: Նա աւելի շատ խօսում է քան թէ գործում: Նրա

*) Որքան գլուխներ, ալնքան կարծիքներ:

ներքին աշխարհը, նրա հոգու ելեէջերը մնում են մթին քողով ծածկուած և ընթերցողը չի կարողանում որոշ զաղափար կազմել այդ գիւղացի դարձած ասպետի բնաւորութիւն մասին: Խոկապէս հերոսը, իր գործով պիտի ցոյց տայ հերոսութիւնը: Մնացած երեսյթները նրա շուրջը պիտի պատուեն: Այդպէս են, օրինակ, Շէքսպիրի բոլոր հերոսները: Խոկ Հառապտմանը ընդհակառակը պատկերացրել է շրջապատող հանգամանքներն ու դէպքերը, թերևս ենթադրելով, թէ զրանցից պարզ կը լինի և հերոսի կատարած դերը...

VIII

Դառնանք այժմ Հառապտմանի այն երկերին, որոնց մէջ գերակշռող զերը բոնում է միստիկական տարրը: «Զրասոյզ զանգը» և «Համնենէ» է զրանց անունը:

Առաջինի ֆաբուլան հիմնուած է ժողովրդական աւանդութեան վրայ, այն աւանդութեան, որի մասին խուզ է լինում և «Թլորիան Գէյէր» դրամայում:

—Երկրի մէջ տեղում,—ասում է հումանիստ Բէզէնմէյէր, կախուած է մի մեծ զանգ, որը երբեցէ պիտի հնչեցնէ իր ձայնը, այնպէս բարձր, ամսպէս ահարկու, որ նոյն խոկ խուլերը պիտի լսեն... Դուք կեղեքիներ, մարդկային հոգին ու մարմինը հարստահարողներ, բաց արէք ականջներդ և հասկացէք, որ մօտ է ձեր ժամը...

Դեռ ութսունական թուականներին Հառապտման «Մեռած մնացը» սիմբօլական ձևով երգել է այդ զանգի մասին, որի ձայնը ոչ ոք չի լսում այս աշխարհում:

Այդ միենոյն աւանդութեան մասին յիշում է և Լիբլինգ Ալէքսի վէպերում. դրա վրայ է հիմնուած և Շիլլէրի «Զանդակի երգը» ու Գեօթէի նշանաւոր բալլագան: Սակայն զրանցից ոչ մէկը այնքան մտածելու նիւթ չեն պարտնակում իրանց մէջ, որքան Հառապտմանի երկը, որ առաջին անգամ 1896 թ. լոյս տեսաւ և մինչև օրս մօտ 50 հրատարակութիւն է ունեցել, միայն զերմաններէն լեզուով:

Զանդակագործ Հենրիին է զրամայի գլխաւոր հերոսը, նա ուզում է շինել մի անզուգական զանգ, որը կարողանար հնչեցնել սէր ու եղբայրութիւն, ծշմարտութիւն ու արդարութիւն: Ահա վերջապէս նրա նպատակը իրագործուած է, տեսչալի զանգը պատրաստ է: Հենրիին ուզում է բարձրացնել նրան սարերի գաղաթը, որտեղ ջրային ոգին իր «բրէկէկէմս»

է հնչեցնում, որտեղ անտառային ոգին ճիւղից-ճիւղ է թռչկոտում...

Ահա մօտ է Հենրիխը իր նպատակին, մօտ է զանգը սարերի գագաթին: Բայց յանկարծ կառքը շուռ է զալիս և զանգը գլորւում է դէպի անդունդը, դէպի լճի խորքը: Հենրիխի ամբողջ սիրտն ու էութիւնը այդ զանգի մէջն էր. ընկնում է զանգը, ընկնում է և նրա վարպետ—Հենրիխը: Ահա նա սարի ներքեւումն է. քարերը ջախջախնել են մարմինը, բայց նա գեռ կենդանի է: Նրա կիսաշունչ մարմինը գտնում է կախարդուհի Վիտիխան և բերում է իր խրճիթը, որտեղ ապրում է գեղանի ֆէան—Շառութենդելայնը:

Հենրիխը տեսնում է նրան և կարծես իր մէջ մի անհասկանալի ոյժ է զգում. Ես քեզ տեսել եմ դեռ շատ առաջ, ասում է նա Շառութենդելայնին, ես լսել եմ քո ձայնը և հէնց այդ ձայնն էր, որ ուզում էի հնչեցնել տալ իմ զանգի միջոցով, բայց այդ հրաշքն ինձ չը յաջողուեց և ես լաց եղայ արիւն արցունքով...

—Դու լաց եղար...!? Զարմացած բացականչում է ֆէան, բնչաչս, ես չեմ հասկանում, ինչ է արցունքը...

Այդպիսի անմեղութիւնն ու անարատութիւնն աւելի հրապուրում է Հենրիխին: Նա աղերսում է վերցնել իր ճակատից փշէ պսակը... Նրան այլևս չի զրաւում ոչ կոփւ, ոչ պատիւ և ոչ փառք: Հարկաւոր է միայն սէր—Շառութենդելայնի սէրը: Իսկ ֆէան չի հասկանում այդ խորհրդաւոր իսօպերի իմաստը. չի հասկանում Հենրիխի տենչանքը: Նրա համար պարզ է միայն մի բան՝ Հենրիխի մահը մօտ է և նա վագում է պառաւ Վիտիխին կանչելու: Բայց անտարբեր է Վիտիխը. Նրան չի հետաքրքրում Հենրիխի վիճակը. նա գիտէ, որ այդ է լինելու բոլոր մարդկանց վախճանը. ուստի և փոխանակ օգնութեան հանելու, հանդարտ կերպով սկսում է կերակրել իր սիրելի կատուին և անտառային ոգիներին...

Հենրիխին պատահած փորձանքի լուրը տարածւում է ամբողջ գիւղում: Գալիս են տեղական պաստօրը, ուսուցիչն ու սափրիչը գժբախտ վարպետին գտնելու... Երկար որոնումներից յետոյ նրանք համսում են կախարդուհու խրճիթին և այդտեղից տանում կիսամեռ Հենրիխին:

Նրանց հեռանալուց յետոյ սկսւում է անտառային էլֆաների պարը: Փայլում է լուսինը աղօտ ճառագայթներով, հեռուցից, շատ հեռուցից լսում է որոտ ու կայծակ: Վերջապէս գալիս է Շառութենդելայնը և միանում պարողներին: Գալիս է և անտառային ոգին. որոտն ուժեղանում է. թափւում է հեղեղ և

Էլփաների քնքուշիկ երգեցողութեան հետ հնչում է նրա կոպտա-ձայն երգը: —Գարնանային սիրոյ երգը: Լսում է Բառատենդելայ-նը երգի ելեէջերը և մոռայլում: Նրա անարատ սրտում խօսում է սիրոյ առաջին զգացմունքը և թափիծի արցունքը քամում է աչերից: Հանդարտում է բնութիւնը. մենակ է Բառատեն-դելայնը, բայց ահա ջրհորից դուրս է գալիս ջրային ոգին—նե-կելմանը: Նա տիեմում է Բառատենդելայնի տիսրութիւնը. տես-նում է արցունքի կաթիլը նրա ձախ աչքում և բացականչում:

—Օ՞հ, ինչ հրապուրկիչ կաթիլ է դա, ինչ հրաշալի յա-կինթ. նրա մէջ երեսում է ամբողջ աշխարհի թափիծն ու եր-ջանկութիւնը: Արցունք է այդ կաթիլի անունը:

Իսկ զարմացած Բառատենդելայնը մրմնջում է ինքն իրան.

—Այժմ ես հասկանում եմ, թէ ինչ է արցունքը...

Սիրահարուած է Նեկելմանը Բառատենդելայնի վրայ. Նա աղերսում է նրանից գնալ ջրհորի խորքը և այնտեղ ապրել միասին, սիրել միմեանց: Բայց փէան չի համաձայնում, նա ու-զում է աշխարհ մտնել, մարդկանց մէջ ապրել...

Իսկ զարպետ Հենրիխը... Նա արդէն իր տանն է, նրա շուրջն են կինն ու երեխաները: Սնսպասելի փորձանքը սզի մէջ է դրել ամբողջ ընտանիքին: Տանջում է Հենրիխը. բայց այդ տանջանքը աւելի հոգեկան է, քան թէ փիզիկական: Նա դառն կսկիծով պատմում է կնոջը:

—Իմ շինած զանգն անպէտք էր, Մագդա, լեռնային բար-ձրութեան համար: Նա անդունդ գլորուեց, որսինեան անկա-րող էր լեռներում արձագանք բարձրացնել... Հովում նա կա-րող էր զանգահարել, իսկ լեռներում—ոչ... Ա՛խ, եթէ յետ զար իմ երիտասարդութիւնը, այն ժամանակ ես նոր ոյժ, նոր եռանդ կ'ունենայի այդ մեծ գործի համար...

Մագդան չի հասկանում Հենրիխի հեռաւոր նպատակը, բայց անչափ սիրում է նրան և պատրաստ է օգնել ամեն բա-նում... Վերջապէս գալիս է պաստօրը և յայտնում է, որ մի համր կին ուղում է բժշկել Հենրիխին: Ներս է մտնում խոր-հըրդաւոր բժշկուհին: Դա Բառատենդելայնն է, միայն կերպա-րանափոխուած: Հենրիխի հետ մենակ մնալուն պէս նա բժշկում է նրան իր հրապոյրներով: Առողջանում է Հենրիխը, որպէս զի նորից ապրի, ցանկայ ու տոկայ, ձգտի ու ստեղծէ... Նրա յանկարծակի առողջանալը հրաշք է թւում բոլորին... Բայց հրաշքի առարկան երկար չի մնում իր ընտանիքում, իր հարևան-ների շրջանում: Նա Բայուտենդելայնի հետ բարձրանում է սա-րերը, որպէս զի այնտեղ սկսէ իր մեծ գործը...

Հենրիխն աշխատում է լեռնային բարձունքի վրայ: Նա

թողել է տուն ու հայրենիք, կին ու երեխաներ և ամբողջապէս անձնատուր է եղել Բառատենդելայնի հրապոյրքին: Նա անդուր, անդադար աշխատում է թզուկների ընկերակցութեամբ. նա ուղում է շինել մի չը տեսնուած զանգ, որի ձայնը հնչելիս պիտի լսուի սոխակների գայլայլիկը, աղաւնիների մնչիւնը. ջերմ արցունքի աղեցութեամբ պիտի հալչի մարդկային սրտի սառացցը, պիտի ոչնչանայ կիրքն ու նախանձը, վիշտն ու տանջանքը... Նա այնպէս ոգեսրուած է այդ գաղափարով, որ մոռացել է ամեն բան... Գալիս է պաստօրը նրան համոզելու, որ տուն վերադառնայ, բայց Հենրիխը մնում է անդրդուելի...

—Ձեր խօսքերն ինձ վրայ նոյնքան են ազգում, ասում է նա պաստօրին, որքան և ջրասոյզ զանգը, որը այլ ևս երբէք զօղանջելու չէ...

—Կը զօղանջէ, վարպետ, կը զօղանջէ, կրկնում է պաստօրը և հեռանում...

Հենրիխը շարունակում է իր գործը՝ նա վերջ ի վերջոյ կորցնում է մարդկային զգացմունքները, դառնում է դաժան ու անդութ:

Ժամանակը սահում է առաջ ու առաջ, իսկ Հենրիխը գեռ սարումն է, գեռ աշխատում է իր զանգի վրայ, նա արդէն բուլրովին մոռացել է ընտանիքին: Բայց մի օր սարալանջում երեւում են երկու մանկիներ, որոնք հազիւ հազ բարձրացնում են մի կաւէ անօթ: Հենրիխի զաւակներն են այդ մանկիները. Մագդանի դառն արցունքներն են նրանց բարձրացրածը: Հենրիխը ճանաչում է նրանց և մի տխուր նախազգացումով բացականչում.

—Ո՞ւր է Մագդան...

—Նա մեռաւ... պատասխանում են երեխաները, նա խեղդուեց լճում և քեզ շատ բարե ուղարկեց...

Բօթաբեր լուրը զնցում է Հենրիխին, նա լիշում է իր անցեալը, պատկերացնում է անձնուէր Մագդայի կրած տանջանքները և դառնացած սրտով անիծում է իր գործն ու հրապուրիչ ֆէային.

—Կորիք, հեռացիր ինձանից, ասում է նա Բառատենդելայնին:

Եւ Բառատենդելայնը հեռանում է ու յուսայատութեան մէջ անձնատուր լինում Նիկելմանին—ջրային ոգուն:

Նա նրա կինն է դառնում: Իսկ խորը վիշաը հալածում է Հենրիխին: Նա ընկճուած է ու յուսանատ և ուզում է մի անգամ էլ տեսնել իր սիրեցեալ Բառատենդելայնին: Պառաւ Վիտիխան յայտնում է, որ այդ բանի համար պիտի իր ամբողջ կեան-

քը վճարէ: Հենրիխը համաձայնում է: Յայտնուում է Բառական-գելայնը և հիացած գրկախառնում է Հենրիխին: Վերջինս իր սիրեցեալ ֆէայի գրկում փշում է վերջին շունչը, իսկ այդ բուպէին նրա ականջին համուում է ջրասոյզ զանզի զօղանջիւնը—այնքան տիրագին, այնքան խորհրդաւոր: Այդ զօղանջիւնը վերջին անդամ զարթեցնում է մեռնող Հենրիխի հաւատը, թէ պիտի բացուի արշալոյսը, պիտի փայլէ արեգակը...

Կարելի է ասել Հառուպտմանի ոչ մի գրուածքը այնքան թեր ու գէմ կարծիքներ չէ առաջացրել, ինչպէս «Ջրասոյզ գանգը»: Շատերը նրան մինչև եօթերորդ երկինքը բարձրացրին, շատերն էլ մինչև ոչնչութեան անդունդը իջեցրին: Այս դասակարգի քննադասների շարքումն էր և և Տօլստոյ, որին գուրչեկաւ դրամայի ձեռը *): Նա կտրուկ կերպով յայտնեց իր բացասական կարծիքը Եւ ուրիշ կերպ էլ չէր կարելի սպասել «Կո տակօ Առկաստեօ»-ի հեղինակից...

«Ջրասոյզ զանզից» ոչ պակաս միստիկական է և «Հաննելէիր բովանդակութիւնը»:

Աղքատիկ ընտանիքի զաւակ էր Հաննելէն: Նրա մայրը կարիքների ծանր լծի տակի ճնշուելով, մեռաւ, որբ ու անտէր թողնելով մատաղահաս Հաննելէին: Կենդանի էր նրա խորթ հայրը—քարտաշ Մատտեհնը, բայց նրա մէջ արդէն վաղուց անհետացել էր հայրական զգացմունքը, գորովալի խնամքն ու հոգատարութիւնը: Նա գիտէր միայն հարել, թափառել այս ու այն կողմ և տուն գալուն պէս ծեծել անմեղ Հաննելէին:

Ի՞նչ կարող էր անել գժբախտ որբուհին: Նա տանջուեց, տանջուեց և վերջը վճռեց վերջ դնել իր կեանքին: Անվերջ թշուառութիւնը զարգացրել էր նրա երեակայութիւնը: Նրան թւում էր, թէ երկնային բարձրութիւնից միշտ դէպի իրան է կանչում մօր քնքուշիլ ձայնը...

Հառուպտման իր այդ դրամայով ուզեցել է ցոյց տալ, թէ ինչպէս ներկայ սօցիալական կեանքում, ընտանեկան չարաբաստիկ պայմաններում զոհ են գնում նաև գեռահաս էակները —անմեղ զաւակները և նա միանգամայն հասել է իր նպատակին: Դրանից աւելի ազդու, աւելի ուժեղ ձևով չէր կարելի ներկայացնել ընտանեկան թշուառութեան զոհուած որբուհու հոգեկան ամբողջ աշխարհը:

Ինչպէս դէռւար չէ համոզուել մեր բերած օրինակներից, Հառուպտման երբէք չէ հեռացել նատուրալիզմի ընդգծած ու-

*.) „Научное Обозрение“, 1901, № 5.

զիից, բայց միևնոյն ժամանակ երբէք ամբողջապէս չէ կանգնել նրա վրայ։ Նրա գրուածքներում գրեթէ միշտ շաղկապուած են եղել բնականն ու գաղափարականը, իրականն ու վերացականը։

Նա ունի մի զգայուն սիրո, որ միշտ հակուած է դէպի թշուառների ու ընձուածների կողմը, ունի կեանքը զիտելու ընդունակութիւն, որ հասկանում է ներկայ սօցիալական ցաւը և կարողանում է զատել դառն իրականութիւնը պատահական երևոյթներից. վերջապէս ունի գրելու մի առանձնայատուկ չնորհք, որ գրաւիչ, նոյն իսկ հրապուրիչ է դարձնում նրա երկերը։

Դեռ երիտասարդ է Հառուպտմանի գրիչը և ընդունակ է ստեղծագործել, և հասարակութիւնը սպասում է նրանից աւելի մեծ երկեր...

Ե. ԹՈՓՉԵԱՆ

Յ Ր Ո Մ Ո Ն Կ Ր Տ Ս Ա Ե Ր

ԵԿ

Ռ Ի Ս Լ Է Ր Ա Ի Ա Գ

VI

Սիդօնիի վրեժիննդրութիւնը:

Քսան տարուց աւելի էր, որ Սիգիզմունդ Պլանիւսը բնակում էր Մօնոպուժում, բայց երբէք նա այդքան ուշ վերադարձած չը կար տուն, առանց քրոջը նախաղղուշացնելու: Ուստի օրիորդ Պլանիւսը սարսափելի մտատանջութեան մէջ էր: Քոյրու եղբայր մի սիրու, մի հոգի էին կազմում, և օրիորդ Պլանիւսը վերջին ամիսների ընթացքում մասնակից էր եղել գանձապահի բոլոր անհանգստութիւններին, բոլոր վրդովմունքներին, այնպէս որ ամենաչին պատճառ բաւական էր, որ սկսէր դողալ ու յուզուել: Հէնց որ Սիգիզմունդը մի քիչ ուշանում էր, նա մտածում էր.

—Տէր Աստուած... Մի բան պատահած չը լինի գործարանում:

Ահա թէ ինչու այդ երեկոյ, երբ հաւերը թառեցին ու քնեցին, օրիորդ Պլանիւսը հաւաքեց ձաշը, առանց ձեռք տալու նրան, և նստեց փոքրիկ ու ցածիկ գահլիճում ու սկսեց խռովայոյզ սրտով սպասել եղբօրը:

Վերջապէս, ժամի տասնմէկի մօտերքը, զանգը խփեցին: Զանգահարութիւնը շատ երկշու էր ու տիսուր և ամենին չէր նմանում Սիգիզմունդի ուժգին զանգահարութեանը:

—Դուք էք, պարսն Պլանիւս,—հարցրեց պառաւ օրիորդը վերնագաւթի վրայից:

Նա էր, բայց մենակ չէր: Նրա յետեից գտիս էր մի Դեկտեմբեր, 1901.

բարձրահասակ, բոլորովին ճկուած ծերունի, որ ներս մտնելիս բարի երեկոյ ասաց դանդաղ ձայնով։ Այդ ժամանակ միայն օրիորդ Պլանիւսը ճանաչեց Ռիսլէր աւագին, որին չէր տեսել նոր տարի օրուայ այցելութիւններից ի վեր, այսինքն զործարանում տեղի ունեցած գէակերից յետոյ։ Նա քիչ էր մնում ցաւակցութեան բացականչութիւն արձակէր, բայց եղբօր ու Ռիսլէրի լուրջ լուակեցութիւնից հասկացաւ, որ պէտք էր լոել։ —Քոյք իմ, օրիորդ Պլանիւս, անկողնիս սպիտակեղէնը փոխէք։ Մեր բարեկամ Ռիսլէրը մեղ պատիւ է անում քնելու այս գիշեր մեղ մօտ։

Պառաւ օրիորդը խսկոյն գնաց ու սկսեց պատրաստել սենեակը գրեթէ քնքոյց հոգատարութեամբ, որովհետեւ, ինչպէս յայտնի է, «իմ եղբայր պ. Պլանիւսից» զատ Ռիսլէրը միակ տղամարդն էր, որ բացառութիւն էր կազմում բոլոր տղամարդկանց ատող օրիորդ Պլանիւսի համար։

Կափէ-շանտանից գուրս զալիս Սիդօնիի ամուսինը սկըզբում սարսափելի գրգռուած զրութեան մէջ էր։ Նա քայլում էր Պլանիւսի կուռաը բռնած և ցնցւում էր ամբողջ մարմնով։ Այժմ այլ նու նա ցանկութիւն չունէր գնալու Մօնուում՝ ծրարն ու նամակը վերցնելու։

—Թող ինձ... զնա, —ասում էր նա Սիգիզմունդին, —ուզում եմ մենակ մնար

Բայց Սիգիզմունդը վախնուում էր նրան մենակ թողնել այդպիսի յուսահատութեան մէջ։ Աննկատելի կերպով նա քիչ քիչ հեռացնում էր Ռիսլէրին գործարանից, և սրտի թելազրութեամբ ծերունի գանձապահը ամբողջ ճանապարհին իօսում էր իր բարեկամի հետ միմիայն ֆրանցի մասին, որին այնքան սիրում էր նա։

«Այ, նրա սէրը ճշմարիտ, հաստատուն աէր է... նրա սըրտի տէր մարդիկ զաւաճանել չը զիտեն...»

Այդպէս խօսելով՝ նրանք հեռացան Պարիզի աղմկալից կենտրոնից։ Այժմ նրանք գետափումն էին, անցնում էին Կանգանաբանական պարտէզի մօտով և մտնում Սէն-Մասոս արուարձանի խորքերը։ Ռիսլէրը չէր գիմազրում և թողնում էր, որ Պլանիւսը քաշ տայ իրան։ Ծերունի զանձապահի խօսքերը սպեղանի էին նրա խոցուած սրտի համար։

Այդպիսով նրանք հասան Բիէվոփի^{*)} տիփի կաշեգործարաններին, որոնց ծակոտկէն ցամաքանոցները ցանցածե գծագրուում

^{*)} Սէնալի վուակներից մէկը, որ թափում է Սէնալի մէջ Պարիզում։

էին երկնքի կապուտակի վրայ, և յետոյ Մօնսուռիի դժգոյն հարթութիւններին, այդ ընդարձակ հողաբաժիններին, որոնք խանճուած ու փորփորուած են այն հրեղէն չնշից, որ Պարիզը տարածում է իր ամենօրեայ աշխատանքի շուրջը, ինչպէս մի վիթխարի վիշապ, որի՝ ծխով ու շողիով լի արտաշնչութիւնը շքացնում է բուսականութիւնը ամեն տեղ, որ որ համառում է:

Մօնսուռիից մինչև Մօնսուռիի ամրութիւնները մի քայլ է միայն: Այդտեղ հասներուց յետոյ Պլանիւսի համար այլ ևս դըժուար չէր քաշ տալ Ռիսլէրին իր մօտ: Նա իրաւամբ մտածում էր, որ իրանց ընտանեկան խաղաղ յարկը և քոյր-եղբայրական անդորր ու անձնուէր բարեկամութեան տեսարանը այդ թշուառ մարդու սրտին կը ներշնչեն մի տեսակ նախաճաշակումն այն երջանկութեան, որ նա վայելելու է իր նզրօր, ֆրանցի հետու Եւ, յիրաւի, ներս մտնելուն պէս՝ այդ փոքրիկ առունը սկսեց արդէն գործել իր բարերար ազգեցութիւնը:

—Սյո, այո, ձիշտ ես ասում, սիրելի բարեկամ,—ասում էր Ռիսլէրը մեծ-մեծ քայլերով ման գալով ցածիկ դահլիճում,
—ես չը պէտք է այլ ևս մտածեմ այդ կնոջ մասին: Այսուհետեւ նա ինձ համար մեռած է: Աշխարհումն ոչ ոք չունեմ այլ ևս բացի իմ քաղցրիկ ֆրանցից... Չը զիտեմ՝ բերել տամ նրան թէ ինքս գնամ մօտը. այսպէս թէ այնպէս, վճռուած բան է, որ ես ու նա միասին կ'ապրենք այսուհետեւ... Իմ սրտի փափազն է եղել միշտ մի տղայ ունենալի ֆրանցը իմ տղան կը լինի: Ուրիշ տղայ ես չեմ ուզում այլ ես: Ի՞նչպէս կարող էի ես գոնէ մի րոպէ մտածել ինքնասպանութեան մասին... Ի՞նչ յիմարութիւն: Դրանով միայն մեր պատուական աղջիկպարոնին կ'ուրախացնէի... Զէ, չէ, ընդհակառակը, ես ուզում եմ ապրել իմ սիրելի ֆրանցի հետ և ապրել միմիայն նրա համար:

—Կեցցես,—ասաց Սիզիզմունդը, —այ այդպէս պէտք է լինի սղամարդը:

Այդ րոպէին օրիորդ Պլանիւսը ևկաւ յայտնեց, որ սենեակը պատրաստ է:

Ռիսլէրը ներողութիւն իմադրեց այն անհանգստութեան համար, որ ինքը պատճառում էր նրանց:

—Դուք այնքան լաւ, այնքան երջանիկ էք ապրում այստեղ... Մեղք է իմ կողմից, որ տիրութիւնս բերեցի ձեր տունը:

—Են, բարեկամ, դու էլ շատ լաւ կարող ես մեզ նման երջանիկ լինել.—ասաց Սիզիզմունդը ուրախութիւնից փայլող երեսով—ես քոյր ունեմ, դու էլ նզրայր ունես: Էլ ի՞նչ է պէտք մեզ:

Ռիսլէրի երեսին ժպիտի նման մի բան երևաց: Նա արդէն

երեակայում էր իրան ու ֆրանցին այդպիսի մի խաղաղ ու քուակէրական տնակում ապրելիս:

Ճիշտ որ խելացի բան էր մտածել քեռի Պլանիւսը:

—Են, քննելու ժամանակ է,—ասաց նա յազմական կերպարանքով... Արի տանեմ սենեակդ յոյց տամ քեզ:

Սիգիզմունդ Պլանիւսի սենեակը առաջին յարկումն էր: Մի մեծ սենեակ էր այդ, պարզ, բայց մաքուր կերպով կահաւորուած. պատուհաններից և անկողնի շուրջը կախուած էին բամբակաթել վարագովներ և աթոռների տակին յատակի փայլուն աղիւմների վրայ փոռուած էին փոքրիկ քառակուսի գորգեր: Նոյն իսկ պառաւ տիկին ֆրօմօնը ոչինչ չէր կարող ասել այդ սենեակում տիրող կարգ ու կանոնի և մաքրութեան դէմ: Դարակների վրայ շարուած էին մի քանի զրբեր. «Ձեռնարկ կարքով ձկնորսութիւն անողների համար», «Օրինակելի գիւղուկան տնտեսութի», «Բարեմի հաշուեցոյցք: Բնակարանի ամբողջ մտաւոր բաժինն էր այդ:

Քեռի Պլանիւսը նայում էր իր շուրջը հպարտութեամբ: Զրով բաժակը զրած էր իր տեղում ընկուզենու սեղանի վրայ, ածիւելու սարքն էլ՝ արդասեղանի վրայ:

—Տեսնում ես, Ռիսլէր... Ամեն բան, ինչ որ պէտք է, կայ... Իսկ եթէ մի բանի պակասութիւն զգաս, բանալիները պահարանների վրայ են... կը բանաս ու կը վերցնես... Նայիր, ինչ հիանալի տեսարան է այստեղից... Այժմ մի քիչ մութ է, բայց վազը առաւօտ որ զարթնես, կը տեսնես, թէ ինչքան հիանալի է:

Նա բաց արեց պատուհանը: Սկսում էին թափուել անձրեի խոշոր կաթիլներ, և գիշերային խաւարը պատառող կայծայինները յոյց էին տալիս երկաթուղու հողաթմբի երկար ու խաղաղ գիծը, որ ձգւում էր դէպի հեռուն, և նրա եզերքին շարուած հեռագրական սիւները ու տեղ-տեղ երեցող զօրանոցների մոռայլ դռները: Ժամանակ առ ժամանակ շրջապատի ճանապարհի վրայ լաւում էր պահակախմբի ոտնաձայն և հրացանի կամ թրի շաշիւն, յիշեցնելով, որ զինուորական շրջանումն էին: Այդ էր Պլանիւսի այնքան գոված հորիզոնը, որից աւելի մելամազձիկ հորիզոն դժուար էր գտնել:

—Դէ այժմ, բարի գիշեր... Պառկիր ու հանգիստ քնիր...

Բայց այն բոպէին, երբ ծեր գանձապահը ուղում էր դուրս գալ, Ռիսլէրը յետ կանչեց նրան.

—Սիգիզմունդ:

—Հը՞ ինչ կայ—հարցրեց Սիգիզմունդը կանգ առնելով: Ռիսլէրը մի քիչ կարմրեց, շրթունքները շարժեց այն-

պէս, ինչպէս մարդ շարժում է, երբ սկսելու է խօսել, բայց սաստիկ ճիգ գործ դնելով իր վրայ, ասայ միայն.

—Չէ, չէ... ոչինչ... թարի զիշեր, սիրելիս:

Սեղանատանը քոյր ու եղբայր գեռ երկար խօսում էին ցած ձանով: Պլանիւսը պատմում էր երեկոյեան պատահած սոսկալի դէպքը, Սիդօնիին տեսնելը, և կարող էր երեսկայել, թէ որքան բացականչութիւններ արձակուեցին՝ «Ախ, ձեր կիւնարմատները» ու «Ախ, ձեր տղամարդիկ»: Վերջապէս, փոքրիկ պարտէղի դուռը կողպելուց յետոյ, օրիորդ Պլանիւսը բարձրացաւ վերև իր սենեակը, իսկ Սիդիզմունդը մի կերպ տեղաւորուեց կողքի փոքրիկ առանձնատեսնեակումը:

Կէս զիշերուան դէմ գանձապահին քնից վեր թոցրեց քոյրը, որ սաստիկ վախուորած ձայն էր տալիս նրան շշունջով.

—Եղբայր, պարոն Պլանիւս:

—Հը:

—Լուցիք:

—Չէ... ի՞նչ է պատահել:

—Ա՞խ, սոսկալի էր... Սարսափելի հառաջի նման մի բան լսուեց, սաստիկ ուժգին, սաստիկ տիսուր... Ներքեի սենեակիցն էր գալիս ձայնը:

Սկսեցին ականնջ դնել: Դրսեւում տեղատարափ անձրև էր գալիս և անձրեակաթիւների դիպչելուց տերևները հանում էին այն աղմուկը, որի հնորհու քաղաքից դուրս մարդ այնպիսի կատարեալ միայնակութեան և դատարկ տարածութեան տպաւորութիւն է ստանում:

—Քամին է այդ... ասայ Պլանիւսը:

—Ես համոզուած եմ, որ այդ քամուցը չէ... Անւս... ականջ դրէք...

Մրրկայոյզ աղմուկի մէջ մի հեծութիւն էր լսում, կարծես մի հեկեկանք, բաղկացած մի դառնագին շեշտով կրկնուող անունից.

—Ֆրանց... Ֆրանց...

Սարսափելի էր այդ և աղեկտուր:

Երբ Քրիստոս խաչուած ժամանակ արձակեց դէպի երեխքի դատարկ տարածութիւնը իր յուսահատ ճիչը՝ «Էլի, Էլի, լամասաբաքտանի», նրա ձայնը լսողները անշուշտ նոյնափսի նախապաշտուած սարսափ զգացին, ինչպէս այն սարսափը, որ այդ բոպէին ամիրեց յանկարծ օրիորդ Պլանիւսին:

—Ես վախենում եմ,—մրմնջաց նա, —լաւ կը լինի, գնաք տեսնէք:

—Չէ, չէ, լաւ է մենակ թողնենք: Եղբօր մասին է մաս-

ծում... ինչպէս մարդք Միմիայն եղօր յիշատակը կարող է նրան
մի քիչ սփոփել:

Եւ ծերունի գանձապահը նորից քննից:

Միւս առաւօտ նա, ըստ իր սովորութեան, զարթնեց, երբ
հնչեցնում էին վաղորդեան զօրակոչը ամրութիւններում, որով-
հետեւ այդ զօրանոցներով շրջապատուած տնակը կարգաւորում
էր իր ամրողջ կեանքը զինուորական ժամահարութիւնների հա-
մեմատ: Քոյրը, արդէն վեր էր կացել, կուտ էր տալիս հաւերին: Տեսնելով, որ Միգիզմունդն էլ վեր է կացել, նա մօռեցաւ
նրան մի քիչ այլայլուած:

—Տարօրինակ բան է,—ասաց նա, —Ռիսլէրի սենեակից
ամեննեին ձայն-ձոյն չի գալիս... Եւ սակայն պատուհանը բո-
լորովին բաց է:

Միգիզմունդը սաստիկ զարմացաւ ու գնաց ծեծեց սե-
նեակի գուռը:

—Ռիսլէր... Ռիսլէր:

Նա ձայն էր տալիս մի քիչ անհանգիստ սրասով:

—Ռիսլէր, սենեակումն ես... դեռ քնած ես:

Ոչ մի պատասխանու նա բաց արեց գուռը:

Սենեակը ցուրտ էր: Զգացւում էր, որ զրսի խոնաւու-
թիւնը ամրողջ զիշերը ներս էր թափանցել բաց պատուհանովը:
Առաջին հայեացքը զցելով անկողնի վրայ, Պլանիւսը մտածեց.
«Չի պառկել քնելու»... Յիշաւի, վերմակին ձեռք չէր տուած, և
դեռ ծիսացող լամպը, որ մոռացմամբ չէին հանգցրել, ու քնառու-
թեան տենդի միջոցին ամրողջապէս դատարկուած ջրի չիշը և
առհասարակ սենեակի բոլոր ամենաչնչն մանրամասնութիւնները
ներկայացնում էին խոռվայոյզ անքնութեան հետքեր, բայց
գանձապահին ամեննից չատ սարսափեցրեց այն, որ բոլորովին
բաց էր պահարանի այն աշքը, ուր ինքը ինսամքով պահել էր
այն նամակն ու ծրարը, որ իր բարեկամը պահ էր տուել իրան:

Նամակը չը կար այնտեղ: Խսկ սեղանի վրայ բաց ծրարի
մէջից երեսում էր մի լուսամնկար, — Միգիզմի պատկերը տասն
հինգ տարեկան հասակում: Իր կրծկալաւոր զգեստով, ճակատի
վրայ բաժանուած կամակոր մազերով և դեռ անչնորհ փոքրիկ
աղջկայ բռնազբօսիկ զիրքով երբեմնեան օրիորդ Շէքը, օրիորդ
Լը Միրի աշակերտուհին, ամեննեին չէր նմանում այժմնան
Միգիզմին: Եւ հէնց այդ էր պատճառը, որ Ռիսլէրը պահել
էր այդ լուսանկարը, իբրև մի յիշատակ՝ ոչ իր կնոջից, այլ
«փոքրիկ Շէքից»:

Կարծես երկինքը փուլ եկաւ Միգիզմունդի գլխին:

— Իմ մեղքս է, — ասում էր նա ինքն իրան: — Բանալինե-

րը չը պէտք է թողնէի այստեղ... Բայց ում մաքովը կ'անցնէր,
թէ նա գեռ չի մոռացել... Նա երդւում էր, որ այդ կինը այլ
ևս զայութիւն չունի իր համար:

Այդ միջնորդին օրիորդ Պլանիւսը ներս մտաւ այլայուած
կերպարանքով:

—Պ. Ռիսլէրը գնացել է... բայց ականչեց նա:

—Գնացել է: Բայց չէ որ պարտէզի գուռը կողպած էր:

—Պատի վրայովն է անցել... Հետքերն երեսում են:

Նրանք նայեցին միմեանց սարսափահար:

Պլանիւսը մտածեց. «Անշուշտ նամակի պատճառովն է»...

Անկասկած կնոջ նամակից մի արտակարգ բան էր իմացել Ռիսլէրը, և, չուզելով տանտէրերին զարթեցնել, նա զաղտագոզի փախել էր առանց աղմուկ հանելու: Ինչու: Ի՞նչ նպատակով:

—Այ կը տեսնէք, քոյրիկ,—ասում էր խեղճ Պլանիւսը,
շտապ-շտապ վերջացնելով հագնուելը,—անպատճու այդ անդգամը էլի խաղ է խաղացել նրա կլիմին:

Պառաւ օրիորդը աշխատում էր համոզել, որ նա սխալ-
ում է, բայց եղբայրը շարունակ կրկնում էր.

—Chai bas gonfianze!...

Ու երբ հագնուեց պրծաւ, իսկոյն գուրս վագեց տանից:

Դիշերուայ տարափից թրջուած գետնի վրայ Ռիսլէրի ոտների հետքերը երեսում էին մինչև պարտէզի գուռը: Նա ոլէտք է լոյսը բայցուելուց առաջ գնացած լինէր, որովհետեւ բանջարների մարդկերի և ծաղիկների թմբերի վրայ երեսում էին լոյսնեցն ու անկանոն քայլերի խոր հետքեր: Պատի ներսեի կողմից նկատուում էին սպիտակ քերծուածքներ և մի փոքրիկ փլուածք կատարում: Քոյր ու եղբայր դուրս եկան շրջապատի ճանապարհը Այդտեղ քայլերի տեղերը անկարելի էր լաւ որոշել Սակայն երեսում էր, որ նա գնացել էր Օռէանի ճանապարհի ուղղութեամբ:

—Կարեկի է դուք ենք մեղ ու մեղ տանջում,—ասաց օրիորդ Պլանիւսը,—զուցէ նա վերադարձել է գործարան:

Սիզիզմունդը զլուխը պտտեց: Օ՛հ, եթէ նա տսէր մաքովը անցածը:

—Լաւ, դուք վերադարձէք տուն, քոյրիկ... Ես կ'երթամ, կը տեսնեմ...

Եւ ծերունի «chai bas gonfianze»-ը հրացանի գնդակի պէս սլացաւ գէպի առաջ, սպիտակ բաշը աւելի վեր ցցուած, քան սովորաբար:

Այդ պահին շրջապատի ճանապարհի վրայ սաստիկ երթե-

ւեկութիւն կար. անդադար գնում-գալիս էին զինուորներ, բան-ջարավաճառներ, փոխոխուող պահապաններ, օֆիցիոների ձիեւ-ը ման ածող սպասաւորներ, զօրանոցների պանդոկատէրերը իրանց սայլակներով, մի խօսքով սկսուել էր այն ազմուին ու իրարանցումը, որ տեղի է ունենում առաւօտները ամրոցների շուրջը։ Պլանիւսը լայն-լայն քայլերով առաջ էր գնում այդ ի-րարանցման մէջ, երբ յանկարծ կանգ առաւ Զախ կողմում, հողաթմբի ստորոտում, մի փոքրիկ քառակուսի չէնքի առաջ, ուր հում գաճի վրայ կարդացւում է սև տառերով։

ՊԱՐԻԶ ՔԱՂԱՔ

Քարհանքների մուսքը,

նա նկատեց խոնուած բազմութիւն և զինուորների ու մաք-սատան ծառայողների համազգեսատներ՝ խաւնուած թափառա-չըրջիկների ճմուռած ու հողոտ վերնաշապիկների հետ Շե-րունին բնազդաբար մօտեցաւ այդ խմբին։ Մի երկաթաձող կլոր գունակի տակ մաքսատան ծառայողներից մէկը քարէ աստիճանի վրայ նստած խօսում էր ձեռները լայն-լայն շար-ժելով, կարծես թէ մի բան ձեռքով ցոյց տալով։

—Այս նստած տեղումն էր,—ասում էր նա... Նստած էր կախուել ու ինչքան ուժումը կար ձգել էր պարանը... այ այսպէս... ինչպէս երեսում է, հաստատ վճռած է եղել մեռնել, որովհետեւ գրանիցը մի ածելի հանեցին, որով անշուշտ պէտք է մորթէր իրան, եթէ պարանը յանկարծ կարուէր։

Բաղմութեան մէջից մէկը բացականչեց՝ «Ենթած մարդ»... իսկ յետոյ մի ուրիշը, յուզմունքից խեղդուող ու դողդոջուն ձայնով, հարցրեց վախվիելով։

—Հաստած է, որ արդէն մեռել է։

Բոլորը սկսեցին ծիծաղել, նայելով Պլանիւսին։

—Հաւի իսելք ունի այս մարդը, առ,—բացականչեց մաք-սատան ծառայողը... Զը լսեցիք, որ ասացի, թէ բոլորովին կապտել էր այս առաւօտ, երբ պարանից հանեցինք ու տա-րանք այն զօրանոցը։

Հեռու չէր այդ զօրանոցը, բայց Պլանիւսը հազիւ-հազ կարողացաւ ոտները քաշ տալով համական այնտեղ Շատ էլ ինքն իրան ասում էր խեղճը, թէ ինքնասպանութիւնները հազուա-դէպ բան չեն Պարիզում, մանաւանդ ամրութիւնների այդ եր-կար գծի վրայ, ուր օր չի անցնում, որ մի գիտակ չը գտնեն, ինչպէս մի վտանգաւոր ծովի ափում, բայց ոչինչ չէր կարողա-

նում փարատել այն սարսափելի նախազգացումը, որ առաւօտից ի վեր ճմկում էր նրա սիրաբ:

—Ախ, կախուածին էք ուղում տեմնել,—ասաց նրան զօրանոցի դռան մօտ կանգնած զինուորականը... ահա այստեղ է:

Դիակը զրել էին մի սրահի մէջ մի իշուանուկ սեղանի վրայ: Հեծելազօր զինուորի մի վերարկու, որ զցուած էր վրան, ծածկում էր նրան սմբողջապէս, կազմինով այն սովորական ծալքերը, որ միշտ ունենում են պատանքները չորացած ու ձգուած դիակի շուրջը: Մի խումբ օֆիցէրներ և քաթանէ անողրավարակը հագած մի քանի զինուորներ նայում էին հեռուից ու ցած ձայնով խօսում, ինչպէս եկեղեցում, իսկ մի զինուորական բժիշկ բարձր պատուհաններից մէկի վրայ կռացած, զրում էր մահը հաստատող պաշտօնական թուղթը: Սիգիզմունը զիմնեց նրան:

—Կարելի՞ է թոյլ տաք տեսնեմ,—խնդրեց նա մնղմօրէն:

—Տեսէք:

Նա մօտեցաւ սեղանին, տատամսեց մի բոպէ, յետոյ, սըրտապնդունով, բաց արեց մի ուռած դէմք ու մի ահազին մարմին, որ անշարժ պառկած էր իր անձրից թրջուած չորերի մէջ...

—Ախ, վերջ ի վերջոյ քեզ սպանեց նա, սիրելի ընկեր... մրմնջաց Պլանիւսը ու ծունկ չոքեց հեկեկալով:

Օֆիցէրները հետաքրքրուած առաջ էին եկել և նայում էին մեռելին, որ մնացել էր բաց:

—Տեսէք, բժիշկ!—ասաց նրանցից մէկը,—ձեռքի մէկը փակած է, կարծէք թէ մի բան սղմած լինի մէջը:

—Ցիրաւի, —պատասխանեց բժիշկը մօտենալով դիակին... Այդ պատահում է երեխն հոգևարքի ջղաձգութեան միջոցին: Ցիշում էք, Սօլֆէրինոյում Զօրապետ Բօրդին այսպէս պահած ունէր ձեռքում իր աղջկաթուան մէդալիօնը: Հազիւհազ կարողացանք դուրս հանել ձեռքի մէջիցը:

Եւ այդպէս խօսելով նա փորձում էր բանալ խեղճ մեռելի կծկուած ձեռքը:

—Վա, —ասաց նա, —այս նամակն էր այսպէս պինդ սղմնել ձեռքումք:

Եւ նա ուղում էր արդէն կարդալ նամակը, բայց օֆիցէրներից մէկը առաւ ձեռքիցը ու տուեց Սիգիզմունդին, որ մնացել էր ծնկաչոք:

—Կարդացէք, պարոն: Գուցէ համողուցեալի վերջին կամքն է յայանուած այդտեղ:

Սիգիզմունդ Պլանիւսը ոտքի կանգնեց: Մրահը մութն էր

և նա, օրօրուելով, մօտեցաւ պատուհանին ու կարգաց արտասուակալած աչքերով.

«...Այո, սիրում եմքեզ, սիրում... աւելի քան երբ և իցէ և ընդ միշտ... Ի՞նչ միտք ունի մաքառելը և դիմադրելը... Մեր ոճիրը մեղնից գորեղ է

Այդ այն նամակն էր, որ Ֆրանցը գրել էր իր հարսին մի տարի առաջ և որ Սիրոնին ուղարկել էր իր ամուսնուն տանից արտաքսուելու միւս օրը, ուզելով գրանով վրէժ հանել թէ ամուսնուց և թէ տեղրից միաժամանակ:

Ռիսլէրը կարող էր գեռ ապրել կնոջ դաւաճանութիւնից յետոյ, բայց եղբօր դաւաճանութիւնը սպանել էր նրան:

Երբ Սիրիզմունդը հասկացաւ նամակի միտքը, շշմնց բուլորովին... Նամակը ձեռքին անշարժ կանգնած, նա մեքենայօրէն նայում էր դէպի դուրս բաց պատուհանովը:

Ժամի վեցը խփեց:

Այնտեղ, Պարիզի վերեռում, որ չէր երիտմ, բայց որի ժը խորը լսում էր, ծանր, տաք ու զանդաշարժ մշուշ էր բարձրանում, սև ու կարմիր եղերքներով, ինչպէս վառօդի ծուխ՝ կռուի դաշտի վրայ... Քիչ-քիչ սկսեցին մշուշից գուրս գալ ու շողզողալ վաղորդեան ցոլքով եկեղեցիների զանգակատները, ոսկեղօծ գմբէթները, աների սպիտակ ճակատները։ Յետոյ, իրար խոնուած տանիքների վերեռում ցցուած գործարանային հազարաւոր ծիննելոյզները սկսեցին միաժամանակ եռանդուն կերպով արտաշնչել իրանց ընդհատ չողին քամու ուղղութեամբ, ինչպէս ճանապարհ ընկնող չողենաւեր... Կեսանքը վերսկսւում էր... Դէպի առաջ, մեքենայ, Վայ նրանց, որոնք կը մնան ճանապարհին...

Այդ միջոցին սարսափելի զայրոյթ բարձրացաւ ծերունի Պլանիւսի սրտում.

— Ո՛խ, անզգանմ... անզգանմ... ալաղակեց նա, թափահարելով բռունցքը, և ոչ ոք չիմացաւ, թէ ում էր ուղղում նա այդ խօսքը՝ կինարմատի թէ քաղաքին:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՅԱԿԵՐԺԱՀԱՐՍԸ

(Պուտին)

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Դնէպրի ափը. ջրազագ:

Զաղացպանն ու նրա աղջկը:

Զաղացպան:

Ո՞հ, բանն էլ այդ է, որ դաք բոլորդ
Ցիմնը էք, յիմար, ջահէլ աղջկերք:
Թէ ձեզ պատահեց մի նախանձելի
Ոչ հասարակ մարդ, դուք պիտի նրան
Էլ ամենին ձեռքից չը թողնեք:
Խոկ ինչով.—ազնիւ, խելացի վարքով
Հրապուրել նրան, մերթ փաղաքշանքով,
Եւ մերթ խստութեամբ, մի-մի անդամ էլ
Հարևանցօրէն խօսք պիտի գցել
Պսակի մասին, խոկ ամենից շատ
Անարատ պահել կոյսի պատիւը—
Այդ անգին գանձը: Դա, ինչպէս խօսքը,
Եթէ դուրս թուաւ, էլ ձեռք չի ընկնի:
Բայց ամուսնութեան թէ էլ յոյս չը կայ,
Հօ կարելի է մի բան վաստակել
Իրան, կամ գոնէ ծնողի համար:
Պէտք է մտածել՝ «ուս ինձ յաւիտեան
Հօ չի սիրելու և փայփայելու»:
Է՞հ, չէ, դուք իսկի ընդունակ էլ չեք
Մի լաւ բան անել: Միթէ յարմար է.
Խոկոյն գժւում էք և երջանիկ էք
Զբի կատարել նրա հաճոյքը:

Պատրաստ էք ձեր սիրելիի
Վզից կախ ընկնել իսկ այդ սիրելին,
Տեսար—չքայաւ, հետքն էլ չերեաց:
Եւ գուք էլ ոչինչ օգուտ չունեցաք...
Օ՞հ, գուք բոլորդ էլ այդպէս յիմար էք:
Քեզ հարիւր անդամ միթէ չնմ ասել.
Է՞յ, աղջիկ, նայիր, այնքան էլ տիմար
Մի լինիր, բախտը քո ձեռքից չը տաս.
Մի թող իշխանին, և յիմարաբար
Քեզ չը կորցնես: Եւ ինչ գուրս եկաւ.
Դէհ, այժմ նստիր ու միշտ գու ողբա՛,
Ինչ որ յետ բերել չես կարող արգէն:

Աղջիկ:

Ինչու ես կարծում, որ նա ինձ թողեց:

Զաղացպան:

Ի՞նչպէս թէ ինչու, նա սովորաբար
Շաբթուայ ընթացքում քանի անդամ էր
Զաղացը զալիս: Հը... ամենայն օր,
Բայց երբեմն էլ ե՛ երկու անդամ.
Յետոյ ըսկեց աւելի քիչ զալ,
Եւ ահա արգէն իններորդ օրն է՝
Նրան չենք տեսնում: Որան ինչ կ'ասես:

Աղջիկ:

Նա զբաղուած է, քիչ հոդսեր ունի:
Զաղացպան հօ չէ, ջուրը չէ գործում
Նրա փոխարէն: Նա միշտ ասում է՝
Որ նրա գործը ամենից ծանր է:

Զաղացպան:

Այն, ինչպէս չէ, հաւատու նրան:
Ե՞րբ են աշխատում այդ իշխանները:
Եւ զա ինչ գործ է: Աղուէս, նապաստակ
Որսալ, քէփ անել, քերթել զրացուն,
Իսկ յիմարներիդ այդպէս համոզել:
Խեղճուկ, նա ինքն է աշխատում, բանում,
Իսկ իմ տեղ՝ ջուրը... Բայց օր ու գիշեր
Ես հանդիսա չունեմ—այստեղ կարկատիր,
Այնտեղ կարկատիր, մի տեղ փտած է,
Մի տեղ ջուր է զցում. թէ կարողանաս

Նորոգման համար խնդրել իշխանից
Գէթ մի քիչ դրամ, շատ լաւ կը լինէր:

Աղջիկ:

Աիդ:

Զաղացպան:

Ի՞նչ է:

Աղջիկ:

Երա ձիու քայլերի
Չայնն եմ լսում... եա է, նա...

Զաղացպան:

Տես, հա,

Աղջիկ, յիշիր իմ խորհուրդները...

Աղջիկ:

Գալիս է, գալիս: (Մոնում է իշխանը. ձիապանը տա-
նում է ձին):

Իշխան:

Ողջնն, սիրելիս,

Ողջնն, չմղացպան:

Զաղացպան:

Ողորման իշխան,

Բարով էք եկել. վաղուց է, վաղուց,
Պայծառ աչքերիդ կարօսում էինք:
Գնամ քեզ համար մի բան պատրաստեմ
Հիւրասիրելու: (Քնում է):

Աղջիկ:

Այս, վերջապէս դու
Ինձ միտք բերիր: Միթէ ամօթ չէ:
Որ այսքան երկար սպասել տալով
Դու անզթաբար ստիպում ես ինձ
Զուր տեղը տանջուել: Ի՞նչ մաքեր ասես
Գլուխս չեն եկել. ինչ ահ ու զողով
Զեմ պաշարուել ես: Մերթ ինձ թւում էր,
Թէ ձին քեզ գցեց անդունդ կամ ճահիճ,
Մերթ՝ թէ թանձրախիս, մութը անտառում

Արջը սպանեց, թէ դու հիւանդ ես,
Թէ ինձ չես սիրում... Բայց, վանք Սուտծու,
Դու ողջ առողջ ես և տուաջուայ պէս
Դարձեալ սիրում ես, այնպէս չէ:

Իշխանի:

Այս,
Իմ մնզին հրեշտակ, առաջուայ նման.
Ոչ, տուաջուանից դեռ էլ աւելի

Աղջիկ:

Բայց դու տիսուր ես, ինչ է պատահել:

Իշխան:

Ես տիսուր եմ. ոչ, ես միշտ ուրախ եմ,
Երբ քեզ տեսնում եմ:

Աղջիկ:

Ոչ, երբ ուրախ ես,
Հեռուից վազում ես զէպի ինձ ու կանչում.
Ուր է ազաւնեակս, ինչ է անում նա:
Յետոյ համբուրում ու հարցնում ես,—
Արդեօք ուրախ եմ, որ քեզ տեսնում եմ,
Արդեօք այդպէս վազ սպասում էի...
Իսկ այսօր—դու ինձ անխօս լսում ես,
Ինձ ոչ զրկում ես և ոչ համբուրում,
Անշուշտ մի բանից դու վրդովուած ես.
Բայց ինչից, ասա. գուցէ ինձ վրայ
Դու բարկացած ես:

Իշխան:

Ես չեմ կամենում
Զուր տեղը կեղծել, դու ճիշտ ես ասում.
Ծանր թախիծ եմ կրում սրտիս մէջ
Եւ դու չես կարող փարատել նրան.
Ո՞չ քո սիրատենչ փաղաքշանքներով,
Ո՞չ մխիթարել, ոչ էլ բաժանել:

Աղջիկ:

Բայց ցաւ եմ զգում, որ քո վշտերով
Ես չեմ վշտանում քեզ հետ միասին:
Ասա գաղտնիքդ. եթէ թոյլ կը տաս,

Ես լաց կը լինեմ, թոյլ չես տայ—կաթիւ
Մի արտասուզ էլ չի հոսի աչքիցս:

Իշխան:

Ի՞նչ ուշացնեմ, որքան շուտ ասեմ,
Այնքան էլ լաւ է: Իմ մնպին ընկեր,
Դու գլուխս, որ այս ունայն աշխարհում
Զը կայ մնայուն մի երջանկութիւն—
Ոչ յայտնի տոհմը, ոչ զեղ և ոչ գանձ,
Ոչ մի զօրութիւն չեն կարող բնաւ.
Մեզ ազատ պահել աղէտից: Եւ մենք
Երջանիկ էինք, այնպէս չէ, հոգիս:
Գոնէ քեզանով, քո սիրովը ևս
Երջանիկ էի, և այսուհետեւ
Ինչ էլ պատահի, ուր էլ որ լինեմ,
Միշտ քեզ կը լիչեմ, ընկեր սիրելի:
Այն, ինչ որ այժմ ևս կորցնում եմ,
Չի փոխարինի աշխարհում ոչինչ:

Աղջիկ:

Քո խօսքերը դեռ ես չեմ հասկանում,
Բայց արգէն սիրտս դողում է ահից.
Ճակատագիրը մեզ սպառնում է,
Եւ մեզ պատրաստում մի վիշտ անծանօթ—
Գուցէ՝ անջատում...

Իշխան:

Դու գուշակեցիր.

Անջատում է մեզ ճակատագիրը
Նախասահմանել:

Աղջիկ:

Ո՞վ մեզ կ'անջատէ.
Միթէ ազատ չեմ քեզ հետեւիլու,
Ուր որ էլ գնաս: Ես աղի շորեր
Կը հագնեմ. ճամբին, թէ կուրի պահուն
Քեզ հաւատարիմ կը ծառայեմ ես.
Կոռից չեմ վախում, գէթ քեզ հետ լինեմ:
Ոչ, ոչ, մի ասիր, ես չեմ հաւատում,
Գուցէ ուզում ես դու խօսք դուրս քաշել,
Կամ ինձ հետ դատարկ կատակ ես անում...

Իշխան։

Ո՞չ, այսօր միտքս կատակ չէ գալիս,
Խօսք էլ դուրս քաշել ինձ հարկաւոր չէ։
Ես չեմ պատրաստւում կոիւ զնալու,
Ո՞չ հեռու ճամբայ։ Ես տանն եմ մնում,
Բայց պէտք է քեզնից բաժանուեմ լնդ միշտ։

Աղջիկ։

Սպասիր, այժմ ես հասկանում եմ։
Դու պսակւում ես։ (Խշանը լռում է)։
Դու պսակւում ես...»

Իշխան։

Ի՞նչ պէտք է արած. դու ի՞նքդ դատիր.
Խշանները հօ ազատ չեն, ինչպէս
Դուք աղջկերքգ։ Հարսնացու նրանց
Չեն ընտրում այնպէս, ինչպէս որ իրանց
Սիրաը ուզում է, այլ ուրիշ մարդկանց
Հաշուի համաձայն, և ուրիշների
Օգուտի համար... Քո վիշտը Աստուած
Եւ ժամանակը կը միսիթարեն։
Ինձ մի մոռանար, իրեն յիշատակ
Այս գլխի զարդը վիր առ և թոյլ տուր
Ինքս հագցնեմ։ Բերել եմ նաև
Մի սիրուն մանեակ—մյդ էլ վերցրու։
Հա, այս մէկն էլ տուր քո հօրը—նրան
Ես խոստացել եմ։ (Տալիս է նրան ոսկով լի մի քսակ)։

Մնամս բարեւ։

Աղջիկ։

Ես...»

Սպասիր, մի բան պէտք է ասէի—
Չեմ յիշում թէ ինչ։

Իշխան։

Միտդ բեր։

Աղջիկ։

Քեզ համար

Պատրաստ եմ ես ողջ... Ո՞չ, այդ չէ, սպասիր...»

Անկարելի է, որ դու իսկապէս
ինձ կարողանաս յաւիտեան թողնել...
Բայց բանն այդ չէ... Հա, միտս եկաւ.
Այսօր կրծքիս տակ մանուկդ խաղաց:

Իշխան:

Դժբախտ, ինչ անել. գէթ նրա համար
Դու քեզ պահպանիր: Ես չեմ թողնի քեզ,
Եւ ոչ քո մանկան: Ժամանակով էլ
Գուցէ ես կը գամ և ձեզ կ'այցելեմ:
Մի տիսրիր, թոյլ տուր, որ վերջին անգամ
Քեզ կրծքիս սեղմեմ: (Դուրս դնալով):
Ուհ, վերջացաւ ողջ:
Կարծես սրտիցս մի քար վայր ընկաւ.
Ես փոթորիկի էի սպասում,
Բայց բանն անցաւ բաւական հանդարս: (Խշանը
գնում է, իսկ աղջիկը մնում է անշարժ):

Զաղացպան (մտնում է):

Շնորհ չք անի արդեօք գալ ջրա...
Հապա ուր է նա. ասա՞ ուր գնաց
Մեր իշխանը: Վահ, ինչ զլխի զարդ է,
Ամրող թանկագին քարերով ծածկուած,
Այնպէս փայլում է: Ի՞նչ ուլունքներ են...
Ի՞սկ արքայական շքեղ ընծայ է:
Ախ, մեր բարերար... իսկ այս ինչ բան է,
Քսակ, չը լինի թէ փող է... ի՞նչ է,
Սառած կանգնել ես, չես պատախանում,
Մի խօսք չես ասում. թէ անսպասելի
Ուրախութիւնից խելքդ թռել է.
Թէ ապուշութիւն եկաւ քեզ վրայ:

Աղջիկ:

Ես չեմ հաւատում, անկարելի է,
Ես նրան այնպէս ջերմ սիրում էի...
Կամ նա գազան է, կամ քարացել է
Նրա սիրտը:

Զաղացպան:

Ում մասին ես խօսում:

Ա. ՈՉԻԿ:

Ասա ինձ, հայրիկ, միթէ իշխանին
Ես կարող էի բարկացնել. միթէ
Մի շաբաթուայ մէջ գեղեցկութիւնս
Զքացաւ, թէ նրան իրաւ հմայեցին:

Զաղացպան:

Ի՞նչ պատահեց քեզ:

Ա. ՈՉԻԿ:

Հայրիկ, նա գնաց:
Տես, ձին քշում է, իսկ ես անխելքս
Նրան բաց թողի: Նրա վէշերից
Ես չը բռնեցի եւ ձիու սանձից
Կախ չընկայ: Թնդ նա բարկութիւնից
Զեռքերս կտրէր մինչև արմունկը,
Թնդ հէնց այստեղ էլ ջարդէր իր ձիու
Ռոքերի տակ:

Զաղացպան:

Ի՞նչ պատահեց սրան:

Ա. ՈՉԻԿ:

Արգեօք գու գիտես, որ իշխանները
Մեղ պէս ազատ չեն. կին են վերցնում
Ոչ իրանց սրախ, կամքի համաձայն...
Իսկ նրանք հօ միշտ աղատ կարող են
Խարել, լայ լինել, երգուել և ասել.
«Ես քեզ կը տանեմ իմ ասպարանքը,
իմ ննջարանը. քեզ կը հագցնեմ
Դիպակ և թաւիշ»: — Նրանք ազատ են
Խեղճ աղջկերանց սովորեցընել
Կէս գիշերուանից տեղից վեր կննալ
Իրանց շվոյից և մինչ արշալոյս
Զրազացի մօս ժամանակ անցնել:
Նրանց հաճոյ է, որ իշխանական
Սիրտը միշտ բերկրի և զուարձանայ
Մեր անբախտութիւնմբ: Յետոյ, մնան բարով.
Գնա, հնգեակս, ուր որ կամենաս,
Եւ սիրիր, ում որ քո սիրտը կ'ուզէ:

Զաղացպան:

Ա՛, ահա թէ ի՞նչ...

Աղջիկ:

Բայց ովէ նրա
Հարմացուն, որին ինձ փոխարինեց:
Օ՛, ես կ'իմանամ, կը դանում նրան.
Ես կ'ասեմ նրան՝ այդ չարագործին,
Հեռացիր մեղնից, դու հօ տեսնում ես՝
Երկու էզ գալիքը չեն կենում երբէք
Մի որջում...

Զաղացպան:

Ցիմար, եթէ իշխանը
Հարմացու ընտրի, ով կը յանդգնի
Արգելել նրան: Հէնց դրա համար
Քեզ ասում էի...

Աղջիկ:

Եւ նա կարող էր,
Ինչպէս բարի մարդ ինձ հրաժեշտ տալ,
Եւ ընծայ բերել: Ի՞նչպէս, և դրամ:
Նա իր արարքը մտածեց դնել
Փողով. նո ուղեց արծաթազօծել
Լեզուս, որպէս զի նրա մասին վատ
Լուր չը տարածուի և նրա ջահել
Կինը չիմանայ... Հա, մոռացայ ես.
Նա ասաց որ այս արծաթը տամ քեզ,
Որսինեան դու շատ բարի էիր,
Եւ քո աղջկան թոյլ էիր տալիս
Նրա ետեւից քաշքառել, որ դու
Քո աղջկանը խիստ չէիր հսկում...
Իմ անկումը քեզ օգուտ կը բերէր: (Տակիս է նրան քը-
սակը):

Զաղացպան (արտաստոքն աչքերին):

Ի՞նչ օրի հասայ. Աստուած իմ զլիսիս
Ի՞նչ փորձանք բերաւ: Մեղք է քեզ համար,
Որ դու քո հօրը այդպէս դառնագին
Յանդիմանում ես: Միակ զաւակս ես,
Ամբողջ աշխարհում միակ միսիթար

Իմ ծերութեան մէջ: Եւ ինչպէս ես քեզ
Երես չը տայի: Աստուած ինձ պատժեց,
Որ ես հայրական պարտականութիւնս
Թոյլ կատարեցի:

Աղջիկ:

Օ՞հ, ես խեղդւում եմ,
Եւ սառը օձը ճնշում է վիզս...
Ո՞չ թէ մանեակով, այլ մի ժանտ օձով
Նա ինձ փաթաթեց... (Պոկում է իրանից մարդարիոը):
Ահա հէնց այսպէս
Կը պատոի քեզ, անիծեալ օձ-կին,
Քեզ, որ միմեանցից մեղ անջատեցիր:

Զաղացպան:

Դու զառանցում ես. իսկ զառանցում ես:

Աղջիկ (հանում է զինի զարդը):

Ահա իմ պսակը, անարդ պսակը.
Ահա թէ ինչով մեզ պսակեց նենգ,
Ստոր թշնամին, երբ հրաժարուեցի
Ես այս ամենից, ինչ որ ինձ համար
Առաջ շատ թանգ էր: Մեր պսակը լուծուեց.
Հեռացիր ինձնից, պսակ իմ: (Գցում է Դնէպրի մէջ իր
զինի զարդը):

Ամեն ինչ

Վերջացաւ այժմ... (Ընկնում է դետը):

Ծերուկ (վալր ընկնելով):

Օ՛, զայ ինձ, զայ ինձ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ի շա ան ական ապարանք:

Հարսանիք է. Եռապսակները նուած են սեղանի շուրջը: Հիւեր-
աղջիերանց խմբերգ:

Խնամի:

Հարսանիքը շատ ուրախ անդկացաւ:
Ողջն քեզ, իշխան, քո երիտասարդ
Իշխանուհու հետ: Տայ Աստուած, որ դուք

Միմնանց հետ սիրով, համերաշխ ապրէք,
Իսկ մնաք էլ ձեղ մօտ յաճախ քէֆ անենք:
Ինչու էք լոել, սիրուն աղջկերք,
Ինչու էք դուք մունջ, սիպատկ կարապներ.
Թէ բոլոր երգեր երգեցիք արդէն,
Թէ կոկորդներդ երգից ցամաքեց:

Խմբերգ:

Խնամի ջան, խնամի,
Այ, անչնորհք ինամի.
Հարս տեսնելու գնացինք—
Բանջարանոց մնաք մտանք,
Եւ մի տակառ գարեջուր
Ամբողջովին թափեցինք,
Ողջ կաղամբը ջրեցինք,
Ցանկապատին զլուխ տուխնք,
Աղօթք արինք մնաք դռնին.
Դոնիկ ջան դու, դռնիկ ջան,
Դէհ, շուտ ցոյց տուր մեզ ճամբան,
Հարս տեսնելու մեր ճամբան:
Խնամի ջան զլխի ընկիր,
Զեռքդ ջէրդ դու ցցիր,
Ջէրիդ փողը զընդալիս
Ի՞նչպէս է մեզ դուր դալիս:

Խնամի:

Չարաձձիներ, ի՞նչ երգ էք ընտրել.
Դէհ, շնուր վերցրէք, բայց խնամուն էլ
Մի յանդիմանէք: (Պարզմատրում է աղջկերանց):

Մի ձայն:

Քարերի միջով,
Դեղին աւազով հոսում է մի գետ,
Այդ արագահոս գետի ջրերում
Պար են բռնում միշտ երկու հատ ձկնիկ,
Երկու հատ ձկնիկ, երկու տարեխիկ:
Իսկ դու լսել ես, իմ քոյրիկ ձկնիկ,
Այն լուրի մասին, մեր գետի մասին,
Թէ ի՞նչպէս մի օր, մի սիրուն աղջիկ
Խեղզուեց գետի մէջ, թէ նա խեղզուելիս,
Ի՞նչպէս անիծեց իր սիրելին:

ԽՅԱՄԻ:

Ի՞մ սիրունիկներ, ախր այդ ի՞նչ է,
Հարսանիքի էլ կարծես թէ երգ չէ:
Այդ ով ընտրեց, դէ ասէք, անսնեմ:

Աղջիկներ:

Ես չեմ... ես էլ չեմ...

ԽՅԱՄԻ:

Հաւպա ով երգեց:
(Շշնջիւն և իրարանցում աղջկերանց մէջ):
Իշխան:

Ես զիտեմ ով էր: (Վեր է կենում տեղից և կամաց ասում
ախոռապետին):

Զէ որ այստեղ է
Զաղացպանուհին: Դուքս գցիր նրան,
Եւ իմացիր տես, ով համարձակուեց
Նրան ներս թողնել: (Ախոռապետը մօտենում է աղջկերանց):

Իշխան (ինքն իրան):

Նա այստեղ գուցէ
Այնքան ձայն, աղմուկ կը բարձրացնի,
Որ ես ամօթից չեմ էլ իմանայ
Թէ որտեղ թագնուեմ:

Ախոռապետ:

Նրան չը գտայ:

Իշխան:

Փնտրիր, ես զիտեմ, որ նա այստեղ է.
Նա էր երգողը:

Հիւր:

Տես թէ ի՞նչ մեղք է.
Մարդու գլուխը ու ստն է ընկնում,
Ափսոս, որ դառն է. բայց վաս չէր լինի
Քիչ քաղցրացնել...
(Նորապատկները համբուրում են. լսում է մի թոյլ ճիչ):

Իշխան:

Նա է, այդ նրա
Կանդոտ ճիշն է... ի՞նչ է:

Ախոռապետ:

Ոչ մի տեղ

Զը գտայ նրան:

Իշխանի:

Յիմար:

Փեսելբայր:

Բայց արդեօք

Ժամանակը չէ, որ իշխանունուն
Յանձնենք ամուսնուն և չէմքամիջում
Մենք գայլուկ չաղ տանք նրանց գլխներին:

Խնամի:

Ի հարկէ, ճիշտ որ ժամանակն է.

Հապա մի այստեղ բերէք աքլարը:

(Նորապսակներին ոտացնում են տապակած աքլար, շաղ
են տալիս նրանց գլխին զայլուկ և տանում ննջարան):

Խնամի:

Տիրուհի, հոգեակս, մի լար, մի վախիր,

Հնազմնդ եղիր: (Նորապսակները զնում են ննջարան,
ամենքը ցրտում են բացի ինամուց և փեսելբօրից):

Փեսելբայր:

Ուր է գաւաթը.

Ամբողջ զիշերը պատուհանի տակ

Ես պիտի շրջեմ, և վատ չէր լինի

Գինով տաքանալ:

Խնամի:

(Լցնում է նրա զաւաթը):

Առ, անուշ արա:

Փեսելբայր:

Ուհա, չնորհակալ եմ: Ի՞սկ որ ամեն ինչ

Ծատ լաւ անցաւ, չէ: Հարսանկը հօ՝

Նմանը չունի:

Խնամի:

Այն, փառք Աստուծոյ,

Բոլորը լաւ անցաւ, բացի մի բանից:

ՓԵՍԵՂԲԱՅՐ:

Ի՞նչ բանից:

ԽՆԱՄԻ

Ախր այս երգը իսկի

Բարի նշան չէր, և հարսանիքի
Երգ էլ չէր, Աստուած զիտէ, թէ ինչ էր:

ՓԵՍԵՂԲԱՅՐ:

Ե՞ն, միշտ պէսք է որ այդ աղջկերը
Մի օյին սարքեն: Ախր վայել է,
Որ իշխանական պերճ հարսանիքը
Դիտմամբ խանդարեն:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Դ ա հ լ ի ճ:

ԽԵԼԱՅԻՆՈՒՅԻ

ԽԵԼԱՅԻՆՈՒՅԻ:

Սնւս, կարծես փողը փչում է. բայց ոչ,
Նա չէ դալիս, չէ: Ախ, նանի, երբ նա
Դեռ փեսացու էր, իմ կշտից մի քայլ
Չէր հեռանում, և պատահում էր,
Որ աշքը ինձնից չէր հեռացնում:
Հէնց ամուսնացաւ,—ամին ինչ փոխուց,
Այժմ նա վաղ է ինձ զարթեցնում,
Եւ հրամայում է, որ ծին շուտ թամբեն,
Մինչև կէս զիշեր Աստուած զիտէ թէ
Նա ուր է զնում: Վերադառնում է—
Հազիւ հաղ քաղցր մի խօսք է ասում,
Հազիւ սիրալիր ձեռքով շփում է
Սիպտակ երեսս:

Դայեակ:

Ե՞ն, իշխանուհի,

Տղամարդը ճիշտ որ տքազաղ է.
Կնւ-կնւ-կնւ... տեսար թեր թափ տուեց
Ու փախաւ գնաց: Իսկ կինը—ինչպէս
Թիսկան հաւը՝ նստիր քո տեղը
Ու ճուտեր հանիր: Երբ փեսացու է—

Նա ամենին տեղը չի նստի,
Զի ուտի-խմի, երկար կը նայի,
Եւ չի կշտանայ, հէնց որ պսակուեց—
Հոգսը շատացաւ. պէտք է այցելել
Հարեաններին, կամ որսի գնալ,
Կամ կը սլանայ դէպի պատերազմ,
Այստեղ կամ այնտեղ, իսկ տանը նստել
Զի կարողանայ:

Իշխանուիի:

Ի՞նչպէս ես կարծում,
Արդեօք նա չունի գաղտնի սիրուհի:

Պայեակ:

Օ, մեղք մի գործիր, ախր ումի հետ
Նա քեզ կը փոխի. գու ամեն բանով
Յաղթել ես նրան. խելքով, հրաշալի
Քո դեղեցկութեամբ, սովորոյթներով
Եւ ուշիմութեամբ: Մտածիր, հոգիս,
Ո՞ւմ մէջ այգքան դանձ նա պիտի դանի,
Եթէ ոչ քո մէջ:

Իշխանուիի:

Եթէ որ Աստուած
Աղօթքս լսէր, երեխայ տար ինձ,
Ես այն ժամանակ լսու կ'իմանայի
Ամուսնուս դէպի ինձ դրաւել նորից...
Տես, որսորդներով բակը լցուեցին,
Մարզս տուն եկաւ. բայց ինչու համար
Նա չէ երեսում: (Մտնում է որսորդը):
Ո՞ւր է իշխանը:

Որորդ:

Նա մեզ հրամայեց տուն վերադառնար:

Իշխանուիի:

Բայց ինքն ուր է:

Որորդ:

Իշխանը մնաց
Մենակ անտառում Դնէպրի ավին:

Իշխանուհի:

Դուք յանդկնեցիք թողնել իշխանին
Անտառում մենակ: Շատ հաւատարիմ
Ծառաներ էք գուք: Գնացէք, իսկոյն
Թռէք նրա մօտ, ասացէք, որ ձեզ
Ես եմ ուղարկել: (Որսորդը գնում է):

Ա՛խ, Տէր իմ Աստուած,
Անտառում մենակ այս կէս զիշերին,
Ե՛ւ վայրի գաղան, և դաժան մարդիկ,
Ե՛ւ մարդագէլեր թափառում են միշտ—
Միթէ փորձանքը շատ կըսպասել տայ.
Շուտով մնմ վառիր պատկերի առաջ:

Դայիակ:

Իսկոյն կը վառեմ, իսկոյն, աչքիս լոյս:

ՏԵՍԱԲԱՆ ԶՈՐՌՈՅԻ

Դ ն է պ ր. դ ի շ ե ր ւ թ ւ

Յաւերժամանսկ

Ուրախ խմբով մենք
Խորը յատակից
Գիշերն ելնում ենք,
Տաքանում լուսնից...
Միրում ենք մենք զիշերներով
Գետի տակից հեռանալ,
Միրում ենք ազատ զիխով
Գետի երես բարձրանալ,
Միմնանց ձայն տալ, հնչուն օդը
Ազմուկներով մեր լցնել,
Եւ մեր կանաչ թաց մազեր
Օդում թափ տափ տալ, չորացնել:

ՄԷԿԸ:

Սնւս, թռչնիկը թփերի տակ
Թրթռում է խաւարում:

Մի ուրիշը:

Մեր և լուսնի միջն մէկը
Ման է գալիս տիերում: (Թագհւում է):

Խըսան:

Դէպի այս տիսուր տիերն ակամայ
ինձ մի անյայտ ոյժ հրապուրում է միշտ...
Օ, ծանօթ վայրեր, վշտալի վայրեր,
Սյստեղ ամեն ինչ ես լաւ յիշում եմ.
Ահա ջաղացը... նա արդէն քանդուել
Ու փուլ է եկել, նրա անխւների
Ուրախ վշտոցի ձայնը չէ հնչում:
Երկանքը կանգնել, էլ չէ պտըտում.
Երեկի պառաւ խեզ ջաղացպանն էլ
Մեռել է: Նա իր թշուառ աղջկան
Երկար ողբում էր: Սյստեղ շատիդ կար,
Նա խափանուել է... Վաղուց է, վաղուց,
Ոչ մի մարդ այստեղ էլ ոտ չէ դնում:
Սյստեղ պարտէզ կար շաւրջը ցանկապատ.
Միթէ նա արդէն անտառ է գարձել,
Ահա և կաղնին՝ այն սուբրական.
Սյստեղ ծառի տակ նա ինձ գրկնլով
Գլուխը խոնարհեց ու լոկց... միթէ
Կարելի բան է: (Մասկնում է դռանը, տերեները թափում են):

Այս ինչ եմ տեսնում:

Մասի տերեներն յանկարծ գեղնեցին,
Եւ ոլորուելով ու շխչնալով,
Թափուեցին վրաս, իմ առաջ ահա
Կանգնած է կաղնին մերկ և սի, ինչպէս
Մի անիծած ծառ: (Մանում է ծերուկը ցնցատիների մէջ և
կիսամերկ):

Ծերուկ:

Բարնվ քեզ, փեսայ:

Խըսան:

Ո՞վ ես դու, ծերուկ:

Ծերուկ:

Ես այս տեղերի

Ազուան եմ:

ԿԵԼԱՅԻ:

ՄՐԻԹԷ սա ջաղացպանն է։

ԾԵՐՈՎԼԻ։

Ի՞նչ ջաղացպան։ Իս իմ ջաղացը
Ծախսել եմ արդէն սատանաներին,
Իսկ փողը տուել յաւէրժահարսին—
Գուշակող աղջկաս, որ նա պինակ պահէ։
Փողը թաղուած է Դնէսլր գետի
Աւազների տակ. նրան հսկում է
Միաչեայ ձուկը։

ԿԵԼԱՅԻ։

ԽԵՂՋ, նա գժուել է։
Նրա մաքերը այնպէս են ցրուած,
Ինչպէս ամպերը փոթորկից յետոյ։

ԾԵՐՈՎԼԻ։

Այս երեկոյեան դու ինչու չեկար.
Մեղ մօտ ինչոյնք կար և մենք քեզ երկար
Սպասում էինք։

ԿԵԼԱՅԻ։

Ո՞վ էր սպասում։

ԾԵՐՈՎԼԻ։

Ո՞վ էր սպասում. ի հարկէ, աղջիկս։
Դու զիտես, որ ես բոլորի վրայ
Նայում եմ միայն մատերի միջով/
Եւ աղատութիւն տողիս լիովին.
Թէկուղ նա քեզ հետ նստի ողջ զիշեր,
Մինչև ի լոյսը—մի խօսք չեմ ասի։

ԿԵԼԱՅԻ։

ԽԵՂՋՆԵԼ ջաղացպան։

ԾԵՐՈՎԼԻ։

Ի՞նչ ջաղացպան եմ,
Քեզ հօ ասում են, որ ես ազռաւ եմ,
Ո՞չ թէ ջաղացպան։ Հիանալի դէպք.
Երբոր (յիշում ես) նա իրան զցեց

Գետը, վազեցի նրա ետելից
Եւ հէսց ուզեցի այն ժայռի գլխից
Ինձ ջուրը նետել, և մէկ էլ յանկարծ
Զգացի՝ երկու զօրաւոր թիեր
Խոկոյն իմ կռան տակերից բուռան
Եւ ինձ օդի մէջ կախուած պահեցին:
Այդ ժամանակից մերժ ես թռչում եմ
Այս ու այն կողմը, մերժ կռուկուտում եմ
Սատկած կովերին, մերժ նատում եմ ես
Գերեղմանի վրայ ու կռկում եմ:

Իշխան:

Ի՞նչ խղճալին է: Քեզ ով է նայում:

Ծերուկ:

Այս, նայել ինձ շատ լաւ կը լինէր.
Ես ծերացել եմ, ուահանջող դարձել:
Շնորհակալ եմ, ինձ խնամում է
Յաւէրժահարսը:

Իշխան:

Ո՞վ:

Ծերուկ:

Իմ թռռնիկը:

Իշխան:

Հասկանալ սրան անկարելի է:
Ծերուկ, դու այստեղ, այս անտառի մէջ
Քաղցից կը մեսնես, կամ թէ դազմը
Քեզ կ'ուտէ: Արդեօք չես կամենայ գալ
Իմ ապարանքը և ինձ հետ տալրել:

Ծերուկ:

Քո ապարանքը, ոչ, չնորհակալ եմ,
Ինձ կը հրապարես և յետոյ, գուցէ,
Խեղքես մանեակոլ: Այստեղ ապրում եմ
Եւ կռւշտ, և աղատ: Քո ապարանքը
Ինձ հարկաւոր չէ: (Քնում է):

Իշխան:

Եւ այս բոլորի

Պատճառը ես եմ. սոսկալի բան է

Խելքից զրկուելը։ Մեռնելը լաւ է։
 Մեռելի համար աղօթք են անում,
 Յարգանք ցոյց տալիս. մահը նրա հետ
 Հաւասարում է իւրաքանչիւրիս։
 Սակայն այն մարդը, որ խելքից զուրկ է
 Նման չէ մարդու, իդուր խօսելու
 Շնորհք է տուած—նա խօսքին տիրել
 Զի կարողանայ։ Նրա մէջ նոյն իսկ
 Գաղանը իրան եղբօրն է տեսնում։
 Մարդիկ ծազրում են և ամեն մէկը
 Նրա նկատմամբ թոյլ կը տայ իրան
 Ինչ որ կամենայ։ Նրան Աստուած էլ
 Զէ դատում։ Թշուառ, խեղճուկ ծերունի,
 Նրա այն տեսքը նորոգեց իմ մէջ
 Իմ զղջումների բոլոր տանջանքը։

Ուսորդ։

Ահա իշխանը, հաղիւ, հազ գտանք։

Իշխան։

Ինչու էք եկել։

Ուսորդ։

Մեզ իշխանուհին
 Ուղարկեց այստեղ. նա վախենում էր
 Որ և է փորձանք քեզ չը պատահի։

Իշխան։

Անսանելի է նրա խնամքը.
 Թէ ես մանուկ եմ, որ մի քայլ անել
 Ինձ չի կարելի առանց դայեակի։ (Գնում է։ Յաւէրժա-
 հարսերը երեսում են ջրի երեսին)։

Յաւէրժահարսեր։

Այս հարթ դաշտում նրանց ետքից
 Եկէք վազ տանք շտապով.
 Եկէք, քնյրեր, նրանց ձիւնց
 Խրտնեցնենք սուլոցով,
 Մեր քրքիչով, ծփանքով։
 Ուշ է արդէն, կանչեցին
 Աքլարները հեռում,
 Ալիքները ցրտեցին,

Զի՞նջ լուսինը մայր մտաւ,
Մութը պատեց երկնքին:

Մէկը:

Քիչ էլ մնանք, քնյրիկ ջան:

Մի ուրիշ:

Ո՞չ, ոչ, ժամ է. թագուհին—
Մեր քոյրիկը շատ է խիստ,
Սպասում է անհամնդիստ: (Անհետանում են):

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դ ն է պ ր ի յ ա տ ա կ ը:

Յաւերժահարսերի ապարանիք: Յաւերժահարսերը մանում են
իրանց բազուհու ուրեզր բոլորած:

Աւագ յաւերժահարս:

Հերիք է մանէք, քնյրիկներ: Արել
Մայր մտաւ արգէն—լուսինն է փայլում
Մեզ վրայ ինչպէս մի շողչողուն սիւն:
Հերիք է, հերիք, լնդ տուէք դէպ' վեր—
Եւ երկնքի տակ խաղացէք աղատ:
Բայց թէ ոչ ոքի ձեռք չը տաք այսօր:
Չը համարձակուէք գրգռել ափում
Ման եկողնիրին, չը ծանրացնէք
Ձինորսի ուսկանն ախմով ու խոտով,
Եւ չը հրապուրէք մանկան ջրի մէջ՝
Պատմելով նրան անուշ հէքեաթներ
Ձկների մասին: (Կալիս է փոքրիկ լսուէրժահարսը):

Ո՞րտեղ էիր դու:

Ա. Պ. Ջիլի:

Դնորս եկայ, ցամաք իմ ողապիկիս մօսա
Նա երեկոյեան խնդրեց ինձ գտնել
Գետի յատակում այն գրամները,
Որ մի ժամանակ նա ջուրն էր զցել:
Ես շատ վնարեցի, թէ ինչ է փողը,
Ես չը դիտեմ էլ, բայց նրա համար

Մի բուռն խխունջ տարայ, դրանով
Նա շատ ուրախ էր:

ՅԱԼԷՐԺԱՀԱՐՄ:

Խելագմբ ժլատ:
Լսիր, աղջիկս, քեզ վրայ եմ ես
Այսօր յոյս դնում: Մեղ մօտ, գետափը
Գալու է մի մարդ. զգնչ եղիր դու,
Եւ գնուրս եկ նրան գիմաւորելու:
Մեղ ազգական է—նա քո հայրն է:

Ա.ՂՋԻԿ:

Նա՝ որ քեզ թողեց և ամուսնացաւ
Ուրիշ կնոջ հետ:

ՅԱԼԷՐԺԱՀԱՐՄ:

Այն, նա: Միրիբ
Եւ գգուիր նրան և պատմիր ինչ որ
Ինձնից լսել ես թէ քո ծննդեան
Եւ թէ իմ մասին: Եթէ հարցնէ,
Արդեօք ես նրան գեռ չեմ մոռացել,—
Ասա, որ դարձեալ նրան յիշում եմ
Եւ սրտով միրում ու սպասում եմ
Միշտ նրա գալուն: Դու հասկացար ինձ:

Ի.ՂՋԻԿ:

Օ՛, հասկացայ:

ՅԱԼԷՐԺԱՀԱՐՄ:

Դէհ, զնոն (Սենակ): Այն օրից,
Երբ ինձ գցեցի խելագարի պէս
Այս ջրերի մէջ, ինչպէս անարգուած
Յուսահատ աղջիկ, և Դընէպրի
Խորքում ես դարձայ սառը և հզօր
Մի յալէրժահարս,—ես ամենայն օր
Վրէժինդրութեան մասին եմ խորհում,
Եւ այսօր կարծես, ժամը հասել է:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴԻ

Գ. Ե Թ Ա Փ Ը

ԻՇԽԱՆ:

Դէպի այս տիսուր ափերն ակամայ
ինձ մի անյայտ ոյժ հրապուրում է միշտ...
Այստեղ ամեն ինչ յիշեցնում է
Անշած օրերը և ազատ, կարմիր
իմ ջանէլութեան թէև վշտալի,
Բայց անուշ վէպը: Այստեղ երբեմն
ես ազատ էի և ազատ սիրով
երջանիկ: Անխելք... եւ կարողացայ
ես այդպէս անմիտ հրաժարուել բախտից...
Տիսուր մտքեր է ինձ յիշեցնում
երէկ ծերի հետ իմ հանդիպումը:
Ինզ, տարաբախտ հայր, ինչ սոսկալի էր:
Գուցէ այսօր էլ նրան համզիպեմ,
եւ համաձայնի թողնել անտառը
եւ մնալ մօտիապրել... (Փոքրիկ լուէրժահարար դուրս է զա-
լիս ափը)

Ի՞նչ եմ տեսնում ես,
Ո՞րտեղից ես գու, հրաշալի մանուկ:

*)

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

*) Պուշկինի ալս պօէման չէ վերջացած:

Դեկտեմբեր, 1901.

ԳԵՐՄԱՆԱՅԻՆԵՐԸ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՀ

Այս օրէն, երբ Գերմանիան գաղթային քաղաքականութեան շրջանը թեակոխեց, իրեն համար մասնաւոր շահեկանութիւն մը ստացաւ Սրենելքը: Դեռ բաւական տարիներ առաջ հեռատես գերմանացիներ, ինչպէս Ֆրիդրիխ Լիստ և Մոլտկէ՝ յաջորդաբար իրենց հայրենակիցներուն ուշագրութիւնը կը հրաւիրէն Փոքր-Ասիայի վրայ: Գրեթէ Գերմանիայի չափ ընդարձակ այն թերակղզին իր աշխարհագրական սքանչելի գիրքով, արգասաւոր հողովն ու բնական ճոխ հարստութիւններովը հազուաղիւտ գաղթավայր մը կը ներկայանար իրենց աշքին, մանաւանդ որ համեմատաբար հեռու ալ չէր Մայր-հայրենիքն:

Տնտեսական զիտութիւններու նշանաւոր պրօֆէսօր Վիլհէլմ Ռօշեր արդէն «հոգւով սրբով» կը մարզարէանար թէ՝ Փոքր-Ասիան այն երկիրներէն է, որոնք ապագային Գերմանիայի ժառանգութիւն պիտի կազմին, թէ՝ այդ երկիրը շատ աւելի նպատակայարմար է գերման գաղթականութիւններու համար քան Ամերիկան, ուր գերմանական դրամագլուխն ու ոյժերը նոր երկրէն կը ծծուին և իրենց հայրենիքն բոլորովին կ'օտարանան: Խսկ հոչակաւոր քաղաքատնտես Ռոդբէրտուս աւելի հեռուն երթալով՝ կ'երացէր կայել այն օրը, երբ թրքական ժուռանգութիւնը Գերմանիային պիտի փոխանցուի և գերմանական զօրքերու ու բանուորներու գունդեր Վասփորի վրայ պիտի կանգնին:

Արենելքին տրուած այս կարհորութիւնը աւելի մեծացաւ մանաւանդ ֆրանկօ-գերման վերջին պատերազմէն ի վեր, երբ գերմանացի «Frau»-ներն ու մինչեւ անգամ «Քրայլու»-ներն ալ տեսունական ապշեցուցիչ գործունէութեամբ մը Գերմանիան ծայրէ ծայր կեցուցին և գերմանական յարածուն ճարտարարուեստին (Industrie) համար սկսաւ օրբստօրէ զգալի դառնալ արտածութեան շուկաներ ճարելու անհրաժեշտութիւնը: Թիւրք կառավարութիւնը, որ իր աւանդական ապուշու-

թեամբ չէր գիտցած օգտուել տարիներով իր ծառայութեանը մէջ դանուող Մօլտկէի տաղանդէն, Նապօլէօնի դէմ տարած անոր փայլուն յաղթանակէն իւելայեղած՝ փութաց իր բանակին վերակազմութիւնը յանձնել «Ալման» զինուորականներու, որոնց թիւը ստուարացաւ մանաւանդ Թիւրքիայի վերջին պարտութենէն ի վեր:

Վլհէլմ Բ., Գերմանիան ինքնամփոփ պահելու աւանդականութեան վրայ յամառող Բիսմարկին հողաթափները ծեռքը տալէ եաքը՝ կայսրութեան արտաքին քաղաքականութեան զեկը երբ ափն առաւ, հրէայ վաճառականի մը ճարպիկութեամբ գիտցաւ. ընդարձակել Տաճկաստանի մէջ ձեռք բերուած գերմանական ազգեցութեան հողը: Իր օրով գերման շահերը հսկայաքայլ յառաջ զիմեցին հոն. ինք անձամբ երկու անգամ զնաց եըլզըզի պալատին մէջ խսկ գրիախանուելու իր սփրելի եղբարոյ հետ, որմէ ամեն անգամ ալ չմուցաւ իւղու պատաներ փրնողնելու այդ սրտաշարժ գուրգուրանքին փոխարէն: Այսօր գերմանացիները արգէն երկաթուղիի քանի մը կարեոր զիծեր կը շահագործեն Օսմանեան կայսրութեան մէջ, գերման զաղթականներ սկսած են ծայր տալ Պաղեստին ու Փոքր-Ասիա և Պոլսոյ մէջ գերմանական ազգեցութիւնը անզիճելի կերպով ամենէն զօրաւորներէն է: Իրարու ետեէ վազող այս յաջողութիւններէն քաջալերուած՝ «Արևելքի սէրբ» սկսաւ վարսկել գերման ժողովրդի բոլոր խաւերը. զինուորականներուն ու զրամատէրերուն ետեէն շուտով գիտնականներ ու խուզարկու ճամբորդներ ալ սկսան գէսի Տաճկաստան ուխտաւորիլ և տընտեսական այս արշաւանքը արդէն մատնաւոր կազմակերպութիւններու ծնունդ տուած է Գերմանիոյ ամեն կողմերը: Հիւսիս-Աքրիկետան, Շայրագոյն-Արևելեան և այն ընկերութիւններու քայլ երեան եկան Արևելեան ընկերութիւններ, որնց գրլիւաւորներն են մասնաւորապէս Հալլէի և Բերլինի Արևելեան ընկերութիւնները: Կարծ ժամանակէ մի ի վեր Միւնխէնի մէջ ալ կազմուած է այսայիսի ընկերութիւն մը «Միւնխէնի Արևելեան ընկերութիւն» անունով:

Միւնխէնի այս ընկերութիւն նպատակն է, ինչպէս իր ծրագրէն կը տեղականանկը՝ ուսումնասիրել մօտաւոր և հեռաւոր Արևելքի քաղաքակրթական շրջաններուն զարգացման պարագաները: Ընկերութիւնը իր խուզարկութեանց շրջանակին մէջ առած է այդ երկիրներու գիտական եղելութիւնները: Իր այս նպատակին համեմ համար հետեւեալ միջոցները ընտրած է. 1) Գիտական բանախօսութիւններ, 2) Հրապարակային դասախոսութիւններ, 3) Արևելեան լիզուներու դասընթացքներ.

4) Հրատարակութիւններ. 5) Տեղադրական, արհեստագիտական և վաճառականական-աշխարհագրական բնաւորութիւն ունեցող ցուցահանդէսներու կազմակերպութիւն. 6) Դէպի Արեւելք ճանապարհորդութեան գիւրացում: Ամեն ոք կրնայ անդամ գրուիլ տարեկան 8 մարկ վճարելով, իսկ միանուագ 250 մարկ վճարողները ցկեանս անդամ կը դառնան:

Ահա այս ընկերութիւնը անցեաները մասնաւոր յայտարարութիւնով մը կը ծանուցանէր թէ՝ իր ընդհանուր քարտուղար գօկտօր Հուգո Գրօթէ, որ գեռ վերջերս Փոքր-Սահայէ վերադարձած է՝ նոյնմեր 26-ի երեկոյեան դասախոսութիւն մը պիտի կարդայ «Երկաթուղիները Փոքր-Սահայի մէջ» վերնագրով:

Դասախոսին անձնաւորութիւնը հետաքրքրական էր ինձի համար, որովհետեւ այս սմառ պատահմամբ կարդացած էի երկու տարի առաջ «Die Kritik» հանդէսին մէջ հրատարակուած իր մէկ յօդուածը, որ շատ աննպաստ կը խօսէր հայերու մասին: Անականկալօրէն պատեհ առիթը կը ներկայանար յօդուածազիրը անձամբ լսելու և իր փաստերուն աւելի մօտէն ծանօթանալու, ուստի երկու ուսանող հայ ընկերներու հետ գնացի որոշուած տեղը:

Լուիտագոլտ մեծ սրճարանի փառաւոր գահինը հետզհետէ լքցուեցան մօտ 200 հոգիի բազմութիւնով մը: Ատեանը բացաւ ընկերութեան նախագահ և Միւնխէնի համալսարանի հասարակական գիտութիւններու ծանօթ պրօֆեսօրներէն Գէորգ Ֆոն Մայէր: Բաւական երկարօրէն բացատրեց Արեւելքի և մասնաւորապէս Փոքր-Սահայի նշանակութիւնը Գերմանիայի համար: Շեշտեց սա պարագան թէ՝ գերմանացիները ոչ միայն պիտի սորվեցնեն արևելյաներուն, այլ և շատ բան պիտի սորվին Արևելքէն, որ նախնական քաղաքակրթութեան օրորանը եղած է և ուր գեռ կան հին նուրբ արհեստագիտութեան մնացորդներ, որոնցմէ պէտք է օգտուիլ: Յետոյ պարզեց ընկերութեան ծրագիրն ու ապագայ ակնկալութիւնները և խօսք տուաւ դասախոսին:

Մինչև հոս շատ գեղեցիկ, բայց ահա եկաւ առջնիս տնկուեցաւ երկայնահասակներէն աւելի երկայնահասակ երիտասարդ մը, հարսանեկան խնամքով մը հագուած, սպիտակ ձեռնոցներով ծածկուած ձեռքերը իրարու մէջ մնցուց ու արձանացած ռիսաւ խօսիլ: Քառորդ ժամու մը չափ լարուած մաթիկ ըրի, ականջներուս չէի ուզեր հաւատալ, բայց ալ կասկածելու տեղի չկար, «Die Kritik»-ի յօդուածն էր բառ առ բառ: Մարդը՝ տաժանելի ճիզով բան մը գոյց ըրած դպրոցականի մը մեկնակա-

նութեամբ կը կրկնէր իր հին յօդուածը, առանց «և» մը իսկ փոխած ըլլալու։ Միակ նորութիւնը մոգական լապտերին ցոյց տուած պատկերներն էին, որոնք Պոլիսէն Գաղատիա (Էնկիւրի) տանող երկաթուղիի գծին վրայ գտնուած քաղաքներ, հին չէնքեր և բնական տեսարաններ կը ներկայացնէին։ Որչափ այդ լուսանկարներու մասին իր կողմէ աւելցուցած համառօտ բացատրութիւններէն կրցանք տեղեկանալ, պարոնը՝ 99 թուականին այդ գծով անցեր է 900-ին ալ ճանապարհորդութիւն մը կատարեր է Տրապիզոնէն մինչև Մեծ-Հայք։ Ամբողջ գասախօսութիւնը կամ աւելի ճիշտ է ըսել արտասանութիւնը՝ ոչ մէկ նորութիւն կամ լուրջ ուսումնասիրութիւն կը պարունակէր և մեր վրայ առհասարակ շատ տաղտկալի ու տիսուր տպաւորութիւն թողուց։ Թէս զերմանացիներուն բերանը հիացումն բաց էր մնացեր, մանաւանդ ի տես այն գունազեղ պատկերներուն, որոնք ցանկալի «Աւետեաց երկրին» հրապուրիչ նախաճաշը կուտային իրենց։

Այս տպաւորութիւն թարգման հանդիսանալով նախագահ պրօֆէսօրը դասախիօսութենէն վերջը—ջերմագին չնորհակալութիւններ յայտնեց յարգելի գոկտօրին, որ իբրև երենելի խուզարկու մը, այնքան հմտալի կերպով և գեղարուեստական ոճով մը կրցաւ պատկերացնել ամբողջ Փաքր-Ասիան իր անցելին ու ներկային մէջ և ունկնդիրներուն Պոլիսէն մինչև Էնկիւրի ձրի ճամբորդութիւն մը կատարել տալու չափ մնծ հաճոյք մը պատճառեց։

Այդ հաճոյքին բարի վայելում մաղթելով, հիմա «Մուրճի» ընթերցողներուն ներկայացնեմ այն կարծիքը, զոր այդ «երենելի խուզարկուն» յայտնեց հայերու և անսնց գրացի ժողովուրդներուն մասին։

—Սաւամպօլի անիսիղճ և կենցաղամոլ էֆէնախներուն վրայ պէտք չէ չափել օսմանցի ժողովուրդը, այլ պէտք է ճանչնալ թիւրք հողագործը, մանաւանդ Անատոլուի թիւրք զիւղացին։ Զափաւոր առնականութիւն մը, ինքնազիտակից հանդարտաբարոյութիւն մը և պաշտօնեայ գասակարգին վատթար վարչութեան հանդէս զերացանցօրէն ազնուոգի զիջսզութիւն մը կը յատկանչեն հարազատ թիւրքը։ Ով որ գաւառներու մէջ բուն ժողովրդին հետ չփուփի, թիւրքերը կը յարգէ ու կը սիրէ, յոյները կ'արհամարհէ, իսկ հայերը կ'ատէ։ Միալ է բոլորովին այն մեղադրանքը, զոր յաճախ թիւրքերուն կ'ընեն, այսինքն արմատեսուկան մոլութիւնը և անհոգութիւնը։ Թիւրքը, մանաւանդ Անատոլուի գիւղացին՝ ժիրօրէն կը մշակէ իր հողը, թէն նոյն անխոնջ անճարակութեամբ ինչպէս իր նախորդները։ Իրաւ է

որ վաճառականութեամբ և ուրիշ հարստացուցիչ գործերով չեն զբաղիր, բայց ասոր միակ պատճառը թիւրքին ասպետական մեծովի բնաւորութիւնն է, որ հարստութիւնը կ'արհամարհէ և իր արեկեան հայեցողական կենցաղին չնորհիւ քիչով կը գոհանայ: Հարստութիւնը գլխաւորաբար հայերուն ձեռքն է, ուրոք, ինչպէս նաև յոյները՝ երեք հողագործութեամբ չեն պարապիր, այլ միմիայն առեւտուրի միջնորդներ, հողագործական արդիւնաբերութեան վաճառողներ, ասլրանք ներմուծողներ են և այս բոլոր գործերու մէջ անգութ կերպով կը խարեն միամիտ, բարի թիւրքը: «Եոյն մը երկու հրէայ կը խարէ, հայ մը՝ երկու յոյն», կ'ըսէ Արեելեան առածը: Հայկական ջարդերու միջոցին Եւրոպայէն գուրս ընկերային այս պարապան ուշադրութեան չամուեցաւ: Կրօնական մոլեուսնդութենէն աւելի՝ հայերու ազրուկային զբաղումին դէմ եղած բուռն ընդվլումն էր կոտորածներու հիմնապատճառը. թիւրք ժողովրդին համբերութիւնը սպառած էր այլևս հայերու վաշխառուական հարստահարութեանց հանդէպ:

—Թիւրքերը ոչ միայն ծոյլ և բարբարոս չեն, այլ մինչեանգամ կաննընբէրդ յիսնապետը 1897-ին հրատարակած իր «Փոքր-Ասիայի բնական հարստութիւնները» գրքին մէջ «Արեւելքի գերմանացիները» կ'անուանէ զանոնք: Թիւրք ազգաբնակութեան առողջ ու զօրեղ կորիդ մը կայ արդէն Անատոլուի մէջ, ուր հետզհետէ կը համախմբուին Կովկասին ու Բալկաններէն զաղթող մուհանձիրներ (մահմեղական զաղթականներ): Ասոնք իրանց հայրենիքէն կը զաղթեն ոչ թէ կարօտութենէ ստիպուած կամ աշխատանքէ խրտչենուն՝ այլ միմիայն այն պատճառով, որ կիսալուսինը ալ չի ծածանիր իրենց վրայ: Եւ ազգային զզացման այս զարգացումը նշանակութեան արժանի է: Փոքր-Ասիան կ'երեի թէ այսպիսով օսմանցիութեան նոր հաւաքատեղին ըլլալու սահմանուած է, և հոս գերմանական քառարականնութեան ազգեցութեան տակ թիւրք ժողովուրդը թերես կարողանայ մատուր ու տնտեսական ուժի մը բարձրանալ: Գերմանիոյ կայսեր Պոլիս այցելութեան միջոցին, սուլթան Համիդ յայտնած է իրեն թէ՝ ինք այն յոյսը կը տածէ, որ գերմանացի գաղթականներ Անատոլուի երկաթուղային գծին երկանքին բազմաթիւ քանակութեամբ պիտի հաստատուին և իրենց ջանասիրութեամբն ու ուշիմութեամբը Փոքր-Ասիայի զիւզացիներուն ու արհեստաւորներուն զրդոիչ օրինակ մը պիտի հանդիսանան:

Գերմանացի գաղթականը սիրով պիտի ընդունուի պատւոր ու աշխատասէր թիւրք գիւղացին և երկուքին բնաւո-

րութեան մէջ եղած որոշ աղբականութեան չնորհիւ շատ լաւ պիտի ապրեն իրար հետ։ Միմիայն վաճառականապէս նրբացած յոյներէն և հայերէն պէտք է վախնալ, սակայն այդ վտանգին ալ առջեր կարելի է առնել, եթէ առետրական միջնորդութիւնը լոկ գերմանացիներու ձևոքալ հոգացուի։ Եւ որպէս զի կարելի լինի գաղթականութեան գործը մեծ ծաւալով և շուտով յառաջ տանիլ, գերմանական կառավարութիւնը կրնայ փոխադարձ ծառայութիւն մը մատուցանել թիւրքիային՝ օտար գրաւման ցանկութիւններու դէմ անոր ամբողջութիւնը ապա հովելով։

Ասոնք են ահա գր. Հուգօ Գրօթէի զիմաւոր կարծիքները։

Կը յիշեմ գերմանացի գրող Լիխտանբէրգի պարագային յարմար սիրուն մէկ խօսքը՝ «Ազգը մը, որ կ'ուզէ որ բոլորն հաւեռովիլ, բոլորն ալ արհամարհուելու արժանի է»։ Այս ճշմարտութիւնը եթէ մտքերնիս պահենք, ոչ մէկ գիշեր քուներնիս պիտի վրգովի այս կամ այն լրի հայհոյութիւններուն համար։

Գալուզ թիւրք ժողովրդին, երբ ամբողջ Տաճկաստանը օրէ օր կը քայլայուի և գերմանական երկաթուղիներէն աւելի արագ քայլով գէպի կործանման անդունզը կ'աճապարէ, գերմանացի ճամբորդը այդ ժողովրդին իր «Եօթն փորձանք» կառավարութեան հանդէա բռնած ընթացքը «ազնուոզի զիջողութիւն» կ'որակէ։ Այս պարագային այդ երկու բառերը իրարու քով դնելու համար կ'երի թէ մասնաւոր բառարան մը կը զործածէ գոկորը, բայց մեր և մարդկային բոլոր լեզուներու մէջ զիմովին տարբեր որակականներ կուտան այդ ընթացքին. զորօրինակ՝ անամանամիտ, սարկամիտ և այլն։ Խսկ թէ թիւրքերը անոր համար միայն տնտեսական աւելի լայն գործունէութիւն չեն ցուցներ, որովհետև իրանց ասպետական բնաւորութեան չնորհիւ հարստութիւնը կ'արհամարհնեն ու շատ քիչ պէտքեր տնին, եթէ գատողութեան այս տեսակէտէն մեկնելու լինինք, աւելի առաջ Աֆրիկէի բոլոր վայրենիները մէյմէկ ճշմարիտ ասպետներ պէտք է համարենք, քանի որ այս երանելիները օր մը օրսանց մտքերնէն չեն անցուցած հարստութիւն զիզել և հագուստի ու ապրուսաի մէջ ալ թիւրքերէն հարիւր անզամ աւելի սակաւապէտ են։ Ու երբ գերմանացիները իրենք՝ գերմանական անուան այդչափ մեծ պատիւ կը համարեն «Արեւելքի գերմանացիները» կոչելու թիւրքերը, ալ մեզի ուրիշ խօսք չպիտի մնար, բայց միայն փոխադարձ տրամաբանութեամբ մը «Եւրոպայի թիւրքերը» տիտղոսը տալ իրենց, եթէ սակայն Գէօթէններու և Շիլլեններու ազնուական ոգիները չխոռվէին այս բաղդատութիւնէն։

Գիտնական դօկտորը իր ապուշութիւնը այնչափ առաջ կը տանի, որ Կովկասէն ու Բալկաններէն Թիւրքիան համախմբուող մահմեդականներուն գաղթումը ազգայնական զգացումի կը վերագրէ: Մինչդեռ այդ գաղթականները Թիւրքերէն աւելի Զերքէզներ, Զէչններ, Թէրքէրէմներ, Լէզգիներ ևայն ոչ ազգայնական տեսակէառվ, այլ լոկ կրօնականով իրարու հետ կապ ունին: Իսկ թէ այսպիսի տարրեր Փոքր-Ասիայի մէջ համախմբուելով՝ ապագային գերմանական աղդեցութեան տակ քաղաքակրթական ինչ ոյժ կը կազմէն, այդ ալ ապագան պիտի ցուցնէ գերմանացիններուն: Թիւրքերը իրենց աշխարհակալութեան օրէն ի վեր ոյժն ու իշխանութիւնը իրենց կողմը ունենալով հանդերձ՝ քաղաքակրթապէս մինչև այսօր չկրցան մըրցիլ մեզի պէս խեղճ, անպաշտապան «ույենաներու» հետ. հապաերը վաղը մեր տեղը Վիլհէլմի բանակին սուխններովը պաշտպանուած և շատ աւելի քաղաքակիրթ գերմանացի գաղթականները յաջորդեն, դժուար չէ գուշակել, թէ ինչ օրի կը համնին թիւրքերը, եթէ երբէք... գերմանական կոտորած մը չկարողանան սարքել:

Թէ գերմանացիններուն Փոքր-Ասիայի մասին մնուցած մնձամեծ երազները ինչ չափով ու նրչափ ժամանակէն իրագործելի են և թէ ինչ աղդեցութիւն պիտի գործեն մեր բախտին վրայ, այդ մասին մտադիր եմ խօսելու, երբ աւելի լուրջ առիթ մը ներկայանայ: Իսկ առայժմ վստահօրէն այսպան կը նամ ըսել, որ եթէ գերմանական Արևելեան ընկերութիւններու Փոքր-Ասիայի մասին հաւաքած բոլոր տեղեկութիւնները այս կշիռը ունին և ապագային ալ գօկտօր Հուգօ Գրօթէի նման «երեկի խուզարկուաներու պիտի վստահին դէպի «Աւետեաց երկիրը» չուող իրենց կարաւաններուն առաջնորդութիւնը՝ առնուազն երեք անգամ քառասուն տարի անապատին մէջ կը թափառին վերջիվերջոյ ալ երբէք չճաշակելու պայմանով այդ ցանկալի երկրի «կաթն ու մեղրը»:

ՍԵՐՈԲԵՆՑ ԱԾԵԲԸԼ*)

I

Փաքը չէր Սերոբենց ընտանիքը. ութ հոգի էին ապրում՝ նրանց ազքատիկ խրճիթի սևացած յարկի տակ—մի հայր, մի մայր ու վեց աղջիկ։ Հեշտ բան չի զիւղացի մարդու համար ութ քաղցած բերան կերակրելը, ութ մերկ մարմին հագցնելը, մանաւանդ որ Սերոբը ստիպուած էր մենամենակ քաշելու ընտանեկան լուծը։

«Ա՛յս, Աստուած, ինչ կը լինէր, որ մի հատիկ եղբայր էլ ես ունենայի. ինչդ կը պակսէր, որ մի երկու տղայ էլ ինձ տայիր»—ասում էր նա շատ անգամ աշխատանքի ծանր ժամանակ։

Ասենը, Սերոբը հէնց մանկութիւնից ձախորդութեան սառը գրկումն էր մեծացել. Դեռ տասը տարեկան էր նա, երբ անողոք տիֆը ներս սողաց նրանց շէմքից, մի ամսուայ ընթացքում հանգցրեց պայծառ օջազը ու ջնջեց բազմանդամ ընտանիքը, ենթարկելով փոքրիկ Սերոբին ճակատագրի հաճոքին։ Անօգնական որբի շուրջը հանդէս եկան ինչ որ բարեհոգի խնամակալներ, որոնք հետզհետէ հալեցին ու կուլ տուին նրա հայրենական ժառանգութիւնը, թողնելով միայն մի խարխուլ խրճիթ, իսկ Սերոբին՝ վարձքի համար վերցրին իրանց մօտ հացափոր ծառայելու։

Որբի բաշած օր ու արեն ինչ պիտի լինի։ Շոբիկ

*) Արաբատեան դաշտի հայ զիւղերում խաղողի զեռահաս վաղներով նորատունկ այդին անուանում է ածեր։

ոտով, կեզտոտ շորով ու բաց կըծքով օրն ի բուն աշխատում, չարչարւում, աղք ու ցեխի մէջ խոնարհ ծառարսթիւն էր անում տարաբախտ փոքրիկը և այդ բուլորի փոխարէն մի ճոթ ցամաք հայ էր միայն ստանում, իր միշտ, միշտ քաղցած ստամբուխն բաւականութիւն տալու համար: Այդ ժամանակն էր, որ Սերոբի սրախոս ընկերները դրոշմեցին նրա ճակատին Սոված մականունը, որը և առմիշտ կապուած մնաց նրա անուան հետ:

Անցան այդպէս մի քանի տարիներ: Վերջապէս նա կամաց կամաց խելքի հասաւ, թողեց իր «բարեհոգի» խնամակալներին և վարձով ծառայութեան մտաւ մի ունեոր ու ասուուածավախ գիւղացու մօտ: Որպէս աշխատաւոր, Սերոբը աննման էր. նրա բազուկների ոյժը, անխոնչ ջանասիրութիւնն ու անսահման հաւատարմութիւնը կատարելապէս հիացրին բարեպաշտ տանտիրոջը, որը իր հոգու վարձքի համար վճռեց Սերոբենց քանդուած օջաղը վերահաստատել ու պայծառացնել: Բարի ծերունին մի լաւ հարսնացու ընտրեց, իր հաշուով Սերոբին ամուսնացրեց, բացի դրանից մի թեթե տան սարք ու մի արտատեղ ընծայեց և օրհնելով արձակեց, որ ինքնագլուխ ու աղատ աշխատի:

Այդ օրուանից Սերոբը ոտք դրեց իր հայրենական տունը և կիսաւեր խրճիթի մի պատի տակ կծկուելով, սկսեց բերանի գոլով տաքացնել նրա սառն անկիւնները՝ երկարատե ծառայութեամբ հաւաքած սև կոպէկները իրար վրայ կիտուելով, մեծացել, շատացել ու քառասուն ոռուբլու չափ մի խոշոր գումար էին կազմել: Սեփական ընտանիքի, տուն ու տեղի տէր գառնալով, Սերոբը իր խնայած ամբողջ գումարով մի լաւ ձի առաւ ու սկսեց բեռնակրութեամբ պարապել: Ո՞րքան քաղցր, ո՞րքան հաճելի էր թւում սեփական աշխատանքի կարստ Սերոբին այդ տաժանելի պարապմունքը, որով նա օրէն ապրուստ էր վաստակում ու պապենական խորակուած օջաղը կամաց կարգի բերում:

Շուտով նորածին մանուկի հմայիչ ճիշը քաղցր հընչվաներով տարածուեց նրանց անհրապոյր խրճիթի ցուրտ անկիւններում։ Խանգարուած օջաղը կամաց կամաց տաքացաւ ու աթարի գառը ծուխը նրա երդկից քուլա քուլա բարձրանալով, ամպերի հետ խառնուեց։

Բայց փուչ աշխարհի ոչ մի անկիւնում երջանկութիւնը անվերջ չի լինում։ Սերոբենց ընտանիքի այս բախտաւոր գրութիւնն էլ երկար չը տևեց. նրանց օջաղի ամրապինդ սիւնը, Սերոբի թև ու թիկունքը—հաւատարիմ ձին մի օր անսպասելի կերպով հիւանդացաւ ու վեր ընկաւ։ Խեղճ կենդանին շատ չարչարուեց, գէուդէն ընկաւ ու գալարուեց, տնքաց, տնքաց, երեք անգամ հոգեց քաշեց ու անշնչացաւ...

Անողոք ճակատագրի այս սարսափելի հարսւածը հիմքից ցնցեց տարաբախտ ընտանիքի կարճառե բարօրութիւնը, յուսահատութեան ու վշտի մէջ թաղելով խեղճ ամուսիններին։ Այդ գժբախտ գէպքից երեք օր անցած, երկրորդ աղջիկը լոյս աշխարհ եկաւ։

Սերոբի սիրաը սեւացաւ, ծիծազն երեսից փախաւ ու ծանր վիշտը մի երկու հատ բարակ ակօս քաշեց նրա լայն ճակատի հարթ մակերեսոյթի վրայ։ Դառաւ մուայլ, գիւղագրգիռ, բարկացկոտ, և օր ամենից սարսափելին էր, սկսեց խմել։ Նիհար գրպանի անկիւններում մնացած սև կոպէկները անխնայաբար վատնուում էին գինետան գարշելի մթնողրատում։ Սպիրակի կորըստաբեր թոյնը, թմրացնելով ուղեղն ու անզգայացնելով սիրտը, ազատում էր Սերոբին սրտամաշ վշտի սուր ճիրաններից։

Վերջապէս Սերոբի գրպանը գատարկուեց և գինետան գուռը նրա անփող քսակի առջե փակուեց. նամարդ ընկերներն էլ երես թեքեցին ու նա ստիպուած եղաւ այնուհետեւ միայնակ տանը նստել։ Յուսահատութիւնն այնպէս տիրել էր նրան, որ ձեռը բան չէր բըռնում ու բերանը խօսք չէր գալիս։ Աստուած այնքան էր ողորմացել նրա խեղճ ընտանիքին, որ ոչ աշնան

պատրաստած բնաղունի ալիւրն էր վերջացել և ոչ հացի տաշտն էր դատարկուել, թէ չէ, վայն եկել էր ու նրա մանր երեխաներին տարել:

Անցան մի քանի թունալից օրեր դառը մոտատանջութեան ու հողեմաշ վշտերի մէջ։ Ոչ մի ժամանակ Սերոբը այնքան մենակ ու անօգնական չէր զգացել իրան, որքան հիմա, երբէք նրա հոգին այս աստիճան չէր կարօտել մի խրախուսող բարեկամի, մի քաջալերող խրատի։

Վերջապէս մի առաւօտ Սերոբենց գուռը բացուեց ու ներս մտաւ քեռի Գոգորը, բարձրահասակ ու լայնաթիկունը մի ծերուկ։ Տանտէրը իր թուլացած մէջը սիւնին դէմ տուած ու ձեռները ըներակներին սեղմած, դառը մաքերի ծովն էր ընկղմուած։ Խոկ տանափիկնը հիւանդ էր ու անկողնու մէջ պառկած։

—Բարի լոյս, քըւոր որդի, օֆ-օֆ, —ասաց բարի ծերունին պատկառելի հանդարտութեամբ առաջ գալով ու տէրողորմեայի սե հատիկները մեղմութեամբ համարելով։

—Աստծու բանին, —քեռի Գոգոր, մի տեսակ դըժկամութեամբ պատասխանեց Սերոբը, տեղից կանգնելով ու թախալից աչքերը նորեկի վրայ ուղղելով, —Համեցիր նստիր։

Քեռի Գոգորը առանց շտապելու տեղաւորուեց սիւնի առջև փռած հնամաշ թաղիքի վրայ ու բռնոթամանը գրպանից հանելով՝ ասաց.

—Ի՞նչ կայ, քըւոր որդի, ինչու ես էլպէս տխուր։
—Է՛հ, ի՞նչ ասեմ, քեռի Գոգոր, Աստուած դլխիս քար գցեց, տունս քանդուեց, ձիս սատկեց... խեղդուած ձայնով պատասխանեց Սերոբը ու ցուցամատով սրբեց այտի վրայով ցած գլորուող արտասուրի կաթիլը։

—Է՛հ, զնաս չունի, որդի, փառք իրան, դա մի թեթև անաջողութիւն է, գիմացիր, սիրտ լայն պահիր. դու քեռ ջահէլ ես ու առողջ, մի յուսահատուիր։

—Ասում ես մի յուսահատուիր, քեռի Գոգոր, ախր

ի՞նչպէս չը յուսահատուեմ։ Զէ որ մեր ամբողջ ընտառիքը էն ձիու երեսին էր մտիկ անում ու նրա աշխատանքովն ապրում։

—Հասկանում եմ, Սերոբ ջան, ես հասկանում եմ քո նեղ դրութիւնը, տեսնում եմ ցաւիդ մեծութիւնը, բայց էլի ասում եմ, որ ախ ու վախը դարդիդ դարման չի անիլ. օֆ-օֆ, էս էրուած ու կրակուած ջանը քեզ համար կենդանի օրինակ,—ասաց քեռի Գոգորը, աջ ձեռովք ամուր խփելով իր դարդոտ կրծքի չոր ոսկորներին։

—Հապա ի՞նչ անեմ, քեռի Գոգոր, ասան, սովորեցրու, հօրդ հոգին լոյս դառնայ. դու մեծ մարդ ես, դու փորձուած ես. քո գլխովդ շատ չար ու բարի է անցել. մի խելք դիր իմ գլուխս, ոտք պաշեմ, մի ճամբայ ցոյց տուր այս սարսափելի դրութիւնից դուրս դալու, թէ չէ, շուտով ես կը խեղդուեմ մարերի ծովում, ես կը ցնդուեմ կսկծի ձեռից…

—Կը գժուես, այո, կը գժուես, որդի։ Ա՛խ, ձախորդութիւնն ամեն բան կ'անի. օֆ-օֆ, —վերջացրեց ծերուկը ու խորը հառաչելով, մի պտղունց վերցրեց կծու բռնոթու բուժարար փոշուց։

—Քեռի Գոգոր, Աստուած սիրես, ինձ ազատիր. վիշտը ուտում է սիրտս ու մաշում հոգիս. ասան, ի՞նչպէս ազատուեմ ես նրա ձեռից. ուր փախչեմ; ի՞նչ անեմ։

—Ի՞նչ անես. այ ասեմ; որդիս. տեղիցդ վեր կաց, բահդ դիր ուսիդ ու ինձ հետ արի, —ամեն մի նախադասութեան վրայ առանձին շեշտելով արտասանեց քեռի Գոգորը ու պտղունցում մնացած բռնոթու կիսատը քաշելով, բեխերը սրբեց, մօրուքը շփեց ու տեղից կանգնեց։

—Արի, որդի, —շարունակեց նա դէպի գուռը դիմելով, —արի գնանք աշխատելու։ Օրհնուած աշխատանքը կը փարատի հոգուդ թախիծը ու հալալ քըրտինքը կը լուանայ սրտիդ դառնութիւնը։

Եւ Սերոբը բահն ուսեց ու լուռ հնազանդութեամբ քեռի Գոգորին հետեւց:

II

Քեռի Գոգորն էլ անիրաւ բախտի խորիժ զաւակներից մէկն էր՝ նրա ծերացած սրտի հեռաւոր խորըում թաղուած էր մի անմոռաց վիշտ։ Լուսահոդի Շուշանի, իր պաշտելի ամսւանու, անմոռանալի յիշատակն էր դա։

Քեռի Գոգորը վերին աստիճանի ջերմեռանդ քրիստոնեայ էր ու մոլի ծիսապաշտ։ Զը կար նրա երկարատև կեանքում մի օր, որ նա ժամասացութեան ներկայ չը լինէր, և ոչ որ չէր յիշում մի դէպք, երբ նա որեւ պատճառով պասը լուծած լինէր։ Ամեն օր, բարիլոյսը բացուելուու՝ առաջին անգամ նա էր մօտենում ժամի գուան սև խաչքարին ու խորին երկիրածութեամբ համբուրելով, ջերմեռանդութեամբ ազօթում, մինչև տէրտէրի դալը։ Յետոյ նա եկեղեցի էր մտնում և ձախտկողմեան գասում բռնում էր պատուաւոր տեղը։ Իրիկուն-առաւաւոտ ամենայն ճշտապահութեամբ եւ կեղեցի յաճախելով, նա վազուց ի վեր անդիր էր արել բոլոր շարականները, մաղթանքները, փոխերը, նոյն իսկ Աստուածաշնչի մեծ մասը։ Մէջքը ժամի սիւնին յենոծ, և աչքերը Տիրամօր իւլաներկ պատկերին յառած, նա կիսաձայն մըմնջում էր ամբողջ ժամասացութիւնը մի ծայրից մինչև միւսը և այդ բանը նա սիրում էր անել այնպէս, որ ամեն մի ազօթքի սկզբի նախադասութեան առաջին բառերը ամենից շուտ նրա ջերմեռանդ շրթունքներից էին դուրս թռչում, որից յետոյ կրկնում էին տէրտէրը կամ տիրացուն։

Նրան ամենքը սիրում էին դեռ երիտասարդութիւնից, երբ նա «օֆ»-երով չէր տակնուվրայ անում ունկնդիրների սիրալ, այլ իր քաղցրահնչիւն ձայնի մէլամազձուտ ելեէջներով էր շարժում նրանց սրտի ամե-

նաքնքոյշ լարերը։ Այդ ժամանակ նա գեռ տիրացու Դրիգոր էր և ամբողջ ժողովրդի միտայն հաւանութեամբ ընտրուած տէրտէրայոււ։

Բայց ճակատագիրը այլ կերպ էր անօրինել։ Տիրացու Դրիգորին վիճակուած չէր տէրտէրական սև փարաֆայ հաղնելլ։ Հենց այն օրերում, երբ սպասում էր ձեռնադրութեան հրամանը, նրա կինը, գեղեցիկ նուշանը, թոքերի բորբոքում ստացաւ ու մի քանի օրից յետոյ վախճանուեց...

Նուշանի մահից յետոյ անցան երեսուն երկար տարիներ։ Ժամանակի աւելիչ ոյժը մղեց նրա բազուկների գօրութիւնը, հանդցրեց բոցավառ աչքերի կրակը, բայց չը կարողացաւ սառցնել գունատ շրթունքների ջերմ ազօթքը ու կարճացնել անճարին մեկնած օդնական ձեռքը։

Քեռի Գոգորը ուշի ուշով գիտում էր իրան շըրջապատող խեղճութիւնը և կարեկից հայեացքով հետևում էր ազքատ հարեանների տանջալի կեանքին, և հենց որ նկատում էր, թէ նրանցից մէկը մնացել է անօդնական, խոկոյն վազում էր այն կողմը, բռնում էր նշան արօրի մաճը, ցանում էր արտը, ջրում էր այգին, թաղում էր թուփը, մի խօսքով կարեկից եղբայր էր հանդիսանում։

III

Սերուն էլ շատ նեղ աեղումն էր, յուսահատութեամբ ու վշտով լցուած էր նրա խարխուլ իրծիթը, ուստի քեռի Գոգորը իր ստը ներս գրեց այնտեղ։

Պարնանային առաւօտ էր երկար ժամանակ գընում էին նրանք ծաղկազարդ ծառերով հովանաւորուած այգիների բարբարոտ ու ծուռտիկ ճանապարհով, մինչև որ հասան Սերոբենց այն հողաբաժնին, որը նրան վարձքի համար ընծայել էր իր նախկին աստուածավախ բարերարը։ Այդ հողի գլխին բարի ծերունին կանդ-

առաւ, նստեց նորածիլ դալար կանաչի վրայ, կորացած մէջքը բարդի ծառին յենեց, —մի զոյգ ծորալի «օֆ»-եր արձակեց ու բռնոթամանը գրպանից հանեց:

—Նստիր, Սերոբ ջան, նստիր մի քիչ հանգստանանք, —դիմեց նա կողքին կանգնող երիտասարդին:

Վերջինս իր ուսի սուր բահը փափուկ հողումը տնկեց ու քեռի Գոգորի ոտների մօտ նստեց:

—Էս հողը քննն է, կարծեմ, բըւոր որդի:

—Իմն է, քեռի ջան, լուսահոգի Թաթոս ամու ընծայածն է:

—Աստուած հոգին լուսաւորի. քանի տարի է, ինչ քո ձեռքիդ է:

—Կը լինի վեց տարի:

—Հապա ինչու ես ծուլութիւն արել. ինչու այսքան ժամանակ այգի չես գցել. տեսնում ես, չորս կողմէ բոլորը տնկած է:

—Եէ՛, քեռի Գոգոր, ինչ ես կորցրել ու ինչի ես ման գալի: Այգի տնկել լաւ ես ասում, լաւ երազ է, եթէ բարին կատարի: Բայց ովէ տուել մեղաւորին արքայութիւն: Էստեղ իմ մէջքս կոտրուել, իմ սիրտս փորումն սևացել է, դու էլ ասում ես այգի տնկեիր. կ'ասես երամենց տղերանց պէս վեց աժդահայ ախպէր ունեմ յետելս կանգնած:

—Սերոբ ջան, դիտես ինչ կայ, —ասաց Գոգորը պղտղնցում մնացած բռնոթու կիսատը բաշելով, —ձիգ սատկեց —մնաս չունի, մենակ աշխատիր: Դու դեռ երիտասարդ ես և ուժեղ, ու քեզ պէս առողջ տղամարդի համար գժուար չէ մի փոքրիկ գերդաստուն կերակրելլ: Բայց օտարների դռներին աշխատելով, դու միենոյն ժամանակ չը պիտի մոռանաս, որ առջեղ կայ ծերութիւն, կայ հիւանդութիւն և հազար ու մի տեսակ ձախորդութիւն, երբ այդ բազուկներդ այլ ևս չեն կարող օրէն ապրուստ վաստակել: Առ այժմ մի հատ լաւ այգին այս հողի վրայ՝ բաւական կը լինէր քեզ համար: Ինչու չես տնկում. օգնական չունես: Այ, ես կը դառնամ քո մեծ

եղբայրը. թէև ծերութիւնն ու վիշտը մզել են բազուկներիս միջի դօրութիւնը, բայց էլի մնացած ոյժն էլ կարող է օգտակար լինել քեզ համար։ Մի բան ասեմ, հանաք մի համարիր. արի հէնց այսօրուանից սկսենք այս հողը ձեւը ու եկող ամսին անպատճառ մի տախտակ ։*) տընկենը. մի ծիծաղիր։ Ես վստահ եմ, որ Աստծուն էլ հաճելի կը լինի մեր թափած քրտինքը։

Այդ խօսքերի հետ քեռի Գոգորը վեր կացաւ տեղից, գտակը ծառի ճղլին դրեց, չուխէն հանեց, թաշկինակը գլուխը կապեց և Աստծու անունը տալով, բահը վերցրեց։

Սերոբը մնացել էր շուարած, տեղումը նստած։ Այնքան անսպասելի էր այդ բանը նրա համար, որ չէր կարողանում աչքերին հաւատալ։ Սոված-Սերոբ ու սեփական այգի. ինչքան տարբեր բաներ, որքան իրարից հեռու հասկացողութիւններ ենք Եւ այն ամենը, ինչ որ այդ բոպէին կատարւում էր Սերոբի աչքի առջե., մի տեսակ հաճելի երազի տպաւրութիւն էր գործում։

Սուր բահը քեռի Դոգորի վարժ ձեռներում գործում էր աջողութեամբ։ Խոնաւ հողի սե կունծզերը իրար վրայ գիզուելով ու հետզետէ երկարելով մի բարալիկ թումբ կազմեցին, որի վրայ կաթկաթում էր ժրաշան ծերուկի կնճռոտ ճակատից հոսող քրտինքը։

Ծեր անդամները շուա են վաստակում։ Առաջին թումբը կապելուց յետոյ ալեսոր բանուորը բահը գետնում ցցեց, կոշտացած ձեռով քրտինքը սրբեց ու բըռնոթի բաշելու սլատրաստութիւն տեսաւ։

Սերոբը իր պէլացած աչքերի անթարթ հայեացը ուղղել էր նրա վրայ և տեսողութեան բոլոր ոյժը լարել, ուզենալով որոշել՝ երազ է իր տեսածը, թէ ճշկրի։

— Վեր կաց, բըռոր որդի, — քաղցրութեամբ ասաց քեռի Դոգորը, — դժուարութիւնն անցաւ. հիմքը դրուեց,

*) Խողովի այզում եղած թումբերի ամեն մի շարքը առանձին առած ասում է տախտակ։

աչքդ լոյս. այ, տեսնում ես, այգուդ առաջին թումբը
արդէն պատրաստ է:

Սերոբը սթափուեց։ Ոչ, երազ չէր այս բոլորը։ Ճիշտ
որ առաջին թումբը արդէն պատրաստ է։ Նրա զարման-
ցած աչքերը այժմ շատ լաւ են տեսնում այն ոև-
կունծղերի երկար շարանը, որ ճանառի *) մէջքի պէս
դուրս է ցցուել դալար խոտերի միապաղազ կանաչ մա-
կերևոյթից։ Այս, այգու հիմքը արդէն գրուած է։ Սե-
րոբի սիրտը թնդաց ուրախութիւնից. յանկարծ նա գժի
պէս վեր թռաւ նստած տեղից, անխօս վաղեց դէպի
ծերուկը, երկու ձեռով ամուր բռնեց նրա աջը ու ջղա-
ձգաբար մօտեցրեց իր այրուող շրթունքներին։ Նա ջերմ
համբոյրներ էր դրոշմում, նա լիզում էր այն հողատար
ձեռը, որը նրա բարօրութեան հիմքն էր գնում; բախ-
տաւորութեան ճամբան էր ցոյց տալիս։

—Այս, քո Սաեղծողիդ մատաղ, քեռի ջան, էս ի՞նչ
լաւ բան սովորեցրիր ինձ, —բացականչեց Սերոբը, —ես
կ'աշխատեմ, կը չարչարուեմ; իմ քրտինքով կ'ողողեմ այս
ամբողջ հողը և եթէ Աստուած աջողի, մի լաւ այգի կը
կանաչացնեմ այս տեղում։

—Ուրեմն արի շարունակենք, ողորմած Աստուածը
ոյժ կը տայ մեր բազուկներին և կ'օրհնի մեր արդար
աշխատանքը, —ուրախութեան ժպիտը երեսին՝ տաց
քեռի Գոգորը։

Սերոբը ծերունու ձեռից առաւ բահը ու մեծ ե-
ռանդով շարունակեց նրա սկսած գործը։

Այսուհետեւ մի ամբողջ ամիս Սերոբն ու Գոգորը
իրանց քրտինքով թրջում էին նորաբուս թումբերը,
մինչև որ կարողացան մի տախտակ դլիսէդլուի խաղողի
դալար մատներ տնկել ու կանաչացնել։ Նորաբողբոջ
վազները իրանց զուարթ տեսքով միտիթարութիւն էին
պատճառում երկու աշխատաւորներին և կրկնակի եռանդ.
ներշնչում նրանց։

*) Ճանառը ձուկ է։

«Աշխատանքը կը փարատի հոգուդ թախիծը և քրտինքը կը լուանայ սրտիդ դառնութիւնը»—ամեն օր հաճութեամբ կրկնում էր Սերոբը քեռի Գոգորի իմաստուն խօսքերը։ Եւ իսկապէս, ձիու կորուստը շուտով մոռացուեց ու նրա սիրտը նորից բացուեց. թախիծը կորաւ, վիշտը հալուեց... Կամաց կամաց Եղսանի արտասուքներն էլ ցամաքեցին ու Սերոբենց խրճիթի սեացած յարկի տակ անէծքի ու հայհոյանքի փոխարէն նորից լսուեցին ուրախ ծիծաղի քաղցր հնչիւնները։

Անցան մի քանի տարիները Սերոբենց նախկին անմշակ հողի տեղ այժմ փռուած էր մատաղ ծառերով շրջապատուած մի գեղեցիկ ածեր, որը ապագայ բարօրութեան քաղցր յօյսերով լցնում էր տիրոջ սիրտը. և նա ոչ մի ջանք չէր խնայում՝ իր նորատունկ այգին ինչպէս կարգն է մշակելու։

«Վնաս չունի, չարչարուիր,—աշխատանքի ծանր րոպէներին ինքն իրան սիրտ էր տալիս Սերոբը,—շատը գնացել, քիչն է մնացել. մի երկու երեք տարի էլ ատամներիդ հուալ տուր ու աշխատիր և այնուհետեւ հանգստութեամբ վայելիր անխնայ թափած դառը քըրտինքիդ քաղցր վաստակը»։ Նա սկսում էր մոքում հաշուել, թէ որքան խաղող կարող է տալ ամեն մի թուփը, ապա ամեն թումբը, ամեն տախտակը և վերջապէս ամբողջ այգին, ու երբ նրա հաշուով տարեկան սպասուելիք արդիւնքը համառում էր հարիւրների, քիչ էր մնում նա խենթի պէս կանգնած տեղում թըռչկուար ու բացականչէր. «Այս, երանի կը լինի էն օրը. այն ժամանակ էլ ինձ Սոված-Սերոբ չեն ամիլ»...

Վերջապէս հասաւ այդ երանելի ժամանակը։ Սերոբենց ածերը սկսել էր արդիւնք բերել, որը տարեկան մի քանի տասնեակ ոռւթլիներից արդէն հասել էր մինչև հարիւրի. բայց դա դեռ բոլորը էր։ Այգին նոր էր

հասունանում։ Փարթամ վազների առողջ կուտրակները^{*}) գեռ կատարելապէս չէին զարդացել. տարիների հետ զուդընթացաբար պիտի աւելանալ նաև տուած արդիւնքը։ Մի խօսքով այդու վրայ ոոկէ յոյսեր շատ կային։ Եւ Սերոբը ուրախ էր։

Նա՝ իր կեանքի այս աջողակ տարիներում գանգատուելու մի հատիկ առիթ միայն ունէր,—արու զաւակի բացակութիւնն էր գա, որը սկսել էր արդէն լուրջ մտահոգութիւն պատճառել երկու ամուսիններին։ Հինգանգամ յղութիւնից ազատուել էր Եղսանը և վեց հատ աղջիկ էր բերել, վեցն էլ սիրուն, չէկ մազերով, թուխ աչքերով. վեցն էլ կայտառ ու առողջ։

Պէտք է ասել, որ Սերոբի տնտեսական դրութիւնը հիմա բաւական լաւ էր։ Լաւ ասածը այն էր, որ հացը՝ աաշտից ու ցորենը՝ պարկից չէր պակասում։ Բացի դրանից նա ձեռք էր բերել մի կով, որի շնորհիւ առաջուայ կաթի կարօտ երեխաները կարողանում էին պասն ուտիսից զանազանել ու կուշտ փորսվ մածոն ուտել։ Էհ, փառք Աստուծոյ, էլ ինչ պիտի լինէր։ Զախորդ տարիներից մնացած մանր մունր պարտքերն էլ բոլորովին մաքրել էր Սերոբը. այնպէս որ նրա ֆէշը քաշող, գուռը ծեծող չը կար այլ եւ։

Այժմ տների վերաշինութեան մասին էր մտածում Սերոբը. Իր համեստ եկամուտից աւելացած կոպէկները իրար վրայ հաւաքելով, նա մի փոքրիկ գումար էր կազմել, որով մտադիր էր առաջիկայ ամառը պապենական բլբլոտած խրճիթի տեղ երկու սիրուն սենեակ շինել։

IV

«Լաւ, շատ լաւ, Սոված-Սերոբ. գու լաւ արիր, որ իմ ուղարկած խնամախօսին սեերես յետ դարձրիր, իմ

*) Կուտրակ անուանում է խաղողի թուփի ստորին հաստ մասը

բարձր անունը գետնովը տուիր ու պատիւս հողի հետ
հաւասարեցրիր»:

Մի իրիկուն այսոէս զայրացած խօսում էր Մուխ-
սոնց Մանուկը իր նորաշէն տան գեղեցիկ պատշգամ-
բում մեն-մենակ արագութեամբ շրջելով ու պապիրոսի
ծուխը ադահութեամբ ծծելով:

«Ես Մուխոսու թոռը լինեմ,—շարունակեց նա հետ-
ըզհետէ տաքանալով,—ութ այդի ունենամ, վեց աչք
ջրաղաց, երեք ձեռք տուն, ու Սոված-Մերորի պէս
մի շուն...»:

Նա մի ըսպէ լուեց, տաքացած ճակատը ձեռով
տրորեց ու պապիրոսի ծուխը կուլ տալով, շարունակեց.

«Գիւղի մեծ մասը իմ պարտքերի տակ տնքայ.
տարին տասներկու ամիս գաղած-աշխատածը իմ սըն-
դուկը լցնի, իմ անունը Մանուկ-աղայ լինի, կարողու-
թիւնս տասնեակ հազարներով հաշւուի, և այս բոլորից
յետոյ Սոված-Մերորի պէս մի էշ գիւղացի իմ ուղար-
կած ինամախօսին քարի՝ *), իր աղջիկը ինձ չը տայ,
թէ—երկու կին է թաղել...»

Այս խօսքերի հետ նա մի կողմ շպրտեց պապիրո-
սի քոնթուկը ու ձեռները տրորերով ներս մտաւ կէս-
ասիական կէս-եւրոպական ձեռվ կահաւորուած մի
փոքրիկ, բայց վայելուչ սենեակ, որտեղ տարածուած
էր կարտոֆիլի մոմի դուրեկան ու երկչու լոյսը:

Մենեակի պատուաւոր անկիւնում հպարտութեամբ
բազմել էր մի գեղեցիկ ու մեծ դրամարկղի դիմացի անկիւ-
նում կանգնած պահարանին ու այնտեղից հանե՛ով մի
շիշ արագ ու մի արծաթէ բաժակ դրեց լուսամուտի

*.) Աղջկատիրոջ կողմից ինամախօսին որուած մերժողական պա-
տասխանը ժողովրդական լիզուով ասում է քարել:

առջեւի կլոր սեղանի վրայ, յետոյ նու կրկին մօտեցաւ պահարանին, հանեց այնտեղից մի ափսէով զուրդել, ու մէկը միւսի յետևից կուլ տուեց մի քանի բաժակ թունդ արալ, ամեն մի բաժակից յետոյ անուշ անելով թարմ զուրդելից մի համեղ կտոր։ Չորս հինգ բաժակ լուռւ թեամբ խմելուց յետոյ, Մանուկաղան հանեց շալ արխալուզի վրայից հագած մոխրագոյն պիդջակը և գցեց մօտիկ դրուած ու պարսկական թանկագին դորդով ծածկուած փափուկ տախտի վրայ, ապա նա վերցրեց բուխարական ազնիւ մորթուց կարած ու դդակը ու նոյնպէս շպրտեց տախտի վրայ ու քթի տակ մըրթմըրթալով, սկսեց թաշկինակով սրբել կնճռոտած ճակատից կաթկաթող քրտինքը։

«Սովոր շանուորդի, — շարունակեց Մանուկը ձեռները քամակին դրած արագութեամբ անցուդարձ անելով սենեակում, — դու էնքան սիրտ ունենաս, որ համարձակուես էս խայտառութիւնը ինձ հասցնել... ի՞նչ պիտի ասեն էգուց դիւզացիք, հը... «Սոված-Սերոբը Մանուկաղային քարեց», հա. հա, հա, հա...»։

Այդ դառը քրքիջը բերանին՝ Մանուկաղան մօտեցաւ սեղանին, մի բաժակ արագ էլ գցեց ու կրկին շարունակեց իր մենախօսութիւնը.

«Զէ, չէ, Սոված-Սերոբ, հէնց որ ածերդ քիչ հասունացաւ ու քաղցած փորդ կուշա հացի երես տեսաւ, դու էլ արգէն չափդ կորցրել, խելքդ թոցրիր»։

Նա մի բոպէ կանգ առաւ սենեակի մէջաեղում ու ձեռը ճակատին դրած խոր մոտածունքի մէջ ընկաւ։ Այդ վայրկեանին նրա գլխում հրէշային ծրագիրներ էին կազմակերպւում։

«Նատ լաւ», — յանկարծ բացականչեց նա ամսուր ծափ տալով ու սատանայական հրճուանքով դէպի դուռը թռչելով։

— Կարօ, — բզաւեց նա կոկորդի բոլոր ոյժով։

— Համմէ, — լսուեց ստորին յարկից ծառայի զիլ ձայնը, որին յաշորդեց փայտէ սանդուխների շտապ

թրլպթրլպոցը։ Մի քանի վայրկեանից յետոյ սենեակի դռան ամբողջ բարձրութեամբ ցցուեց Կարօի երկար հասակը։

—Ադա, —ասաց աղան, —էս բոպէիս որտեղ էլ որ լինի, կը գտնես ու ինձ մօտ կը բերես Զախալենց Սերդոփին. լսում ես, գետնի տակին էլ որ լինի, պիտի գըտնես, հասկանո՞ւմ ես, թէ չէ գլուխով կը ջարդեմ։ Դէ, էլ մի կանգնիլ, շուտ արա, թռիր, Այ, գետնին թքեցի, մինչեւ թուքս ցամաքելը թէ որ չես եկել, հոգիդ կը հանեմ։

—Աչքիս վրայ, աղայ, —ասաց Կարօն ու «թռաւ»։

—Իսկ Մանուկը՝ դիւային ժպիտը շրթունքներին մօտեցաւ կլոր սեղանին, մի բաժակ արազ էլ կոնծեց ու ձեռները արորելով շարունակեց խօսել.

«Թու գեռ ինձ չէիր ճանաչում, Սոված-Սերոր, այ ես քեզ կը ճանաչացնեմ։ Ես քեզ ցոյց կը տամ, թէ Մանուկ-աղային բարելը ինչ է նշանակում։ Շատ չի բաշիլ, հէնց էդուց առաւօտ լաշակեր շան պէս կը փոշամնես քո արածդ...»։

Մանդուխներից բարձրացող ոտնաձայները ընդհատեցին Մանուկի մենախօսութիւնը և նա շտապով գուրս վագեց պատշգամբը։

—Հը, գտար, —անհամբերութեամբ հարցրեց Մանուկը ծառային, որի գլուխը գեռ նոր էր երկում ոանդուխների վրայից։

—Գտայ, աղայ, հրէս հետս բերել եմ, —պատասխանեց Կարօն ցոյց տալով իրան հետևող երիտասարդի վրայ։

—Դէ լաւ, ապրիս. թող Սերգօն էստեղ մնայ, իսկ դու բո բանիդ գնա, —հրամայեց աղան Կարօին ու ձեռը երիտասարդի ուսին դնելով, տարաւ սենեակը։

Զախալենց Սերգօն մօտ երեսուն տարեկան մի կարճահասակ ու լայնաթիկունք տղամարդ էր, որի կը լոր դէմքը զարդարուած էր երկու խոչոր սպիներով։ Նրա խիստ յօնքերի տակ սլաղացող կապուտակ աչքերից

սաստիկ չարութիւն ու անզուսպ անիրաւութիւն էր կաթկաթում:

—Գիտես ի՞նչ կայ, Սերգօ ջան, —կիսաձայն ասաց Մանուկ աղան, սենեակի դուռը ամուր փակելով ու ձեռը խօսակցի ուսին դնելով:

—Ի՞նչ պիտի լինի. կամ դէզ կայ՝ կրակելու, կամ այդի՝ կնդելու, կամ մարագ՝ վառելու, կամ, վերջապէս, տուն կայ քանդելու, —պատասխանեց Սերգօն, ձեռները գոտին խրելով ու իր պլալան աչքերը օճորբին ուղղելով:

—ԱՇ սատանայ. տես ինչ ձեռաց գլխի ընկաւ, —ժպտալով ասաց Մանուկը, Սերգօի մէջքին կամացուկ խփելով: —Հա, դէ լսիր, թէ ի՞նչ եմ ասում, —շարունակեց աղան, դէմքը սաստիկ լրջացնելով ու ձայնը աւելի ցածրացնելով: —Սոված-Սերոբի ածերը տեսած կը լինես, չէ:

Որպէս պատասխան առաջարկուած հարցին, Սերգօն հեղնօրէն ժպտաց, որով ուզում էր հասկացնել, թէ այդպիսի միամիտ հարցը շատ անպատուաբեր է իր համար: Ո՞վ չը գիտէ, որ Զախարենց Ակոբի տղէն իր հինգ մատի պէս է ճանաչում գիւղի բոլոր այգիները և աչքերը խուփ էլ կը գտնի նրանց մէջ եղած լաւ տեսակի խաղողներն ու ամենալնտիր ծառապտուղները:

—Քանի՞ տախաակից է, —շարունակեց աղան առաջ լրջութեամբ:

—Չորս: Բայց ի՞նչ այդի է, շանսորդու ածերը, ասենք, սուտ չը կայ, ամեն մի թուփը մի հատ հարիւրանոց արթէ, —պատասխանեց Սերգօն էլի աչքերը առաստաղին սեպելով:

—Տես ի՞նչ եմ ասում, Սերգօ, —ըսպէական լոռւթիւնից յետոյ սկսեց մանուկ աղան, —էս գիշեր մի երեք հատ լաւ տղայ կը գտնես, միմի սուր էտոյ *) կը

*) Էտոյցը մեծ ու կեռ դանակ է, որը սովորաբար դործ են ածում այգեպանները:

տաս ձեռքները ու Սոված-Սերոբի ածերը էնպէս կնդել
կը տաս, որ չօրս տախտակեցը մի հատ կուտրակ էլ
կանաչ չը մնայ:

—Պայ, դու սխալ ես, աղայ, կնդելը լաւ չէ, կըն-
դածը շուտով նոր ճիւղեր կը տայ: Կ'ուզե՞ս էնպէս ար-
մատահան անեմ, որ փարթամ այգու տեղը էդուց-էլօր
բոխկ ցանեն, —հրէշային չարախնդութեամբ վրայ բե-
րեց Սերգօն, իր կապուտ աջքերը աղայի ճակատին
յառելով ու այնպիսի ոգեսրութեամբ չուխի թեքերը
յետ ծալելով, որ կ'ասես հէնց այդ վայրկեանին նա
պատրաստում է սկսելու իր աւերիչ գործողութիւնը:

Որքան էլ Մանուկ-աղան քարասիրտ էր, որքան էլ
նա սովոր էր անտարբերութեամբ նայել իր վաշխա-
ռուական ճիրաններում թրպրտացող արիւնաքամ զո-
հերին, այնուամենայնիւ նա մի տեսակ սառսուռ զգաց
Սերգօի այդ գիւային ոգեսրութեան առջև:

Թէհ երկու խօսակիցներն էլ համահաւասար չար
էին, երկուսն էլ արենխում ու անաքանդ, բայց և
այնպէս տարբեր էր նրանց չարութեան նպատակը: Մէ-
կը մղկտացնում, լացացնում, հոգի էր հանում՝ զուտ
շահադիտական, կամ երբեմն էլ վրիժառական նպատա-
կով, իսկ միւսը ուրախութեամբ քանդում, աւերում,
տակն ու վրայ էր անում ամեն մի լաւ բան, որովհետեւ
այդ գժոխային գործողութիւնը բոպէական հաճոյք էր
պատճառում նրա սրտին:

Ահա այս աննպատակ, կամ աւելի ճիշտը՝ անշա-
հասէր չարութիւնն էր, որ սոսկում ազդեց Մանուկ-ա-
ղային. «Կ'ուզե՞ս էնպէս անեմ, որ այդ նորահաս այ-
գու տեղը էդուց-էլօր բոխկ ցանեն», նորից հնչեց նրա
ականջում Սերգօի վերջին հարցը, որին նա չը կարո-
ղացաւ իսկոյն և եթ պատասխանել:

Մանուկի ներսում վաղուց ի վեր մեռած խիղճը
այդ վայրկեանին շունչ առաւ:

Մի բոպէաշափ անորոշ գրութեան մէջ մնալուց
յետոյ վերջապէս Մանուկ-աղան վճռականութեամբ

ձեռները թափահարեց ու կլոր սեղանին մօտենալով,
ջղային շտապողութեամբ երկու բաժակ արադ գցեց:

—Անուշ էլաւ, աղայ ջան,—վրայ բերեց Սերդօն,
ապա թերերը նորից վեր քաշեց ու կոկորդը մաքրեց.

—Լաւ ասացիր, Սերդօ, շատ լաւ կը լինի,—խոր-
հըրդաւոր կիսաձայնով փափաց Մանուկը, խօսակցին
մօտենալով ու աջ ձեռը նրա ուսին դնելով,—արմա-
տահան կ'անես, չորս տախտակն էլ գլխէդլուխ. ան-
պէս կ'անես, որ էլ կանաչի նշան չերեայ. հասկացմբ.
թէ ծառեր էլ կայ, բոլորը բրդէք...

—Ասում ես բոխկատեղ շինեմ, հա. էս աչքիս
վրայ,—մեծ հաճոյքով պատասխանեց Սերդօն, աջ ձե-
ռը կապուտակ աչքին դնելով:

—Եհ, շատ ապրիս, աչք վարդի վրայ. դէ որ
էգպէս է, առ մի թաս արադ տամ փորդ տաքացրու.
գիտեմ աղլիքներդ սառած կը լինին հիմա:

—Տնւր, տնւր, ողորմի հօրդ հոգուն. վազուց է,
որ կատիկս չեմ թրջել:

Մանուկազան վերցրեց մի մեծ թէյի բաժակ, պոլն-
կէպոռւնկ լցրեց արազով ու մեկնեց Սերդօին: Վերջինս
առաւ բաժակն ու սկսեց բարեմազթել.

—Աղայ ջան, քո կենացը, ողջ մնաս, կեանքդ եր-
կար լինի. ինչքան ապրես, լաւ ապրես. միշտ աջողու-
թեան մէջ լինես—ջանդ՝ առողջ, սիրտդ՝ ուրախ, ճա-
կատդ՝ բաց: Բարերար Ասսուածը քեզ ողջ պահի ինձ
համար ու քո շուաքը իմ գլխից անպակաս լինի:
Տէր, Դու էլ ամեն քրիստոնեայի բանն աջողաս—ասաց
ու բաժակը շրթունքներին մօտեցրեց:

Նա խմնւմ էր մանր կումերով ու հանդարտ, աշ-
խատելով որքան կարելի է երկար պահել արադի թասը
շրթունքներին սեղմած: Վերջապէս նա դատարկ բա-
ժակը մեկնեց աղային ու աչքերը առաստաղին ուղղե-
լով սկսեց բեղերը սղալել:

—Հը՛, մէկ էլ կը խմբս:

—Դու գիտես:

Երկրորդ բաժակն էլ գատարկուեց:

—Դէ բաւական է, էլ չեմ տալ, թէ չէ կը հար-

բեռ ու գործից յետ կ'ընկնես:

—Ո՞վ հարթի. մէրը մեռնի՛ Սերգօի:

—Լաւ, լաւ, պարծենալու ժամանակ չի. առաւօտը
կ'իմանանք քո տղամարդութիւնը: Ենուտ արա, գիշերն
անցնում է:

—Բա տղերթանց համար ջուր ու մուր չես տալիս:

—Ի՞նչպէս չէ, կարօին կանչիր:

Մի բոպէից յետոյ Կալոն իր երկար ու կորացած
հասակով կանգնած էր դռան շէմքում:

—Աղա, երկու չափ արազ, մի տկճոր գինի տուր
Սերգօին, թող վեր առնի տանի:

Աղայի հրամանը կատարուեց: Սերգօի լնկերները
խսկոյն հաւաքուեցին, արած գինին ու արազը կուշտ
ու կուռ խմեցին և էտոցներն առնելով, Սերգօինց ածերը
գնացին: Զորս հոգի էին նրանք, չորսն էլ ուժեղ ու
երիտասարդ:

Այդին հասնելով, նրանցից ամեն մէկը մի տախ-
տակի ծայրին կանգնեց, «Եա, սուրբ Կարապետ», կան-
չեց ու աւերմունքը սկսեց:

Գարնանային սրանչելի գիշերներից մէկն էր. եր-
կինքն աստղալի, երկիրը՝ ծաղկագարդ: Օդը լցուած
էր դալար կանաչի անուշ բուրմունքով: Լուս էր
ամեն ինչ, հանգիստ ու խաղաղ. և համատարած
խաղաղութեան մէջ լուսում էր միայն մատաղ վագերի
թոյլ արմատների ցաւալի ողբը: Զարբաշ գիւղացու-
դառը քրտինքով մնուած թուփերը դաժան ձեռների
վարժ շարժումներով մի ակնթարթում պոկւում էին
հողից, ապա գլխատուած թոչունների պէս՝ օդում
թրպլտում և ընկնում նորից:

Այս բոլորը տեսնում էր բարետու երկինքը իր բիւ-
րաւոր փայլուն աշիկներով, տեսնում էր և անդթաքար
լուում... Միայն ամաչկոտ սիրուն լուսինը աշխատում էր
իր արծաթափայլ դէմքը ծածկել շուրջը լողացող սպի-

տակ ամպերի քօղով, որպէս զի ակամայ հանդիսատես
չը լինի ցածում կատարուող բարբարոսական աւերջու-
թեանը:

V

Այդ չարաբախտ գիշերը Սերոբի վաստակած ան-
դամներին բազցը բունը մօտ չեկաւ: Տիուր մաքերը
պաշարել էին նրա թմրած դլուխը ու մի տեսակ վատ
նախազգացում իր ճնշող ծանրութեամբ խեզդում էր
նրան, թւում էր թէ այսօր բարձր շատ կոշա է ու ան-
կողմնը վերին աստիճանի տնյարմար: Նա անդադար
արջում էր այս ու այն կողքի վրայ, որպէս զի կարո-
ղանայ մի կերպ աւելի հանդիսատ դրութիւն գտնել բայց
չէր աջողուում: Խեղճի կողքերի տակ կ'ասես վշեր լինէին
ցցուած, որոնք անդադար ծակծկում էին մարմինը ու
փալցնում քունը: Խոկ հէնց որ նա փորձում էր մի
վայրկեանով աչքը խփել, զանազան ահուելի տեսիլներ
իրանց այլանդակ կերպարանքով պատկերանում էին
նրա բորբոքուած երեակալութեան մէջ ու նու երկիւղից
շտապով բանում էր իր քնահարամ՝ ուռած աչքերը:

Խրճիթում տիրող թանձր խաւարը այդ բոպէին
չափազանց անտանելի էր թւում Սերոբին: Նա զգու-
շութեամբ ելաւ անկողնուց, մթութեան մէջ չօշափելով
գտաւ լուցկին ու վառեց սիւնին ամրացրած փոքրիկ
լամպան, որի արձակած երկչոտ շողերը ոլացան դէպի
աղբատիկ խրճիթի անկիւնները: Յետոյ նա պառկեց,
իդուր յուսալով, թէ հիմա արդէն աչքը կը կպչի: Նոյն
անհանգստութիւնը տանջում էր նրան և նա նախան-
ձում էր ամուսնուն, որ իր կողքին միևնոյն վերմակի
տակ անուշ երազների մէջ էր ընկլմուած:

—Եզսան, այ Եզսան,—կանչեց Սերոբը, իր կնոջ
կողքին թեթև հրելով:

—Հը, ի՞նչ կայ, —մի քիչ վախեցած հարցրեց Եղ-
սանը, իր քնաթաթախ ու աչքերը լայն բանալով:

— Ակի, հէնց էնպէս... ասացի տեսնեմ քնած ես
թէ զարթուն,—ստեց Սերոբը:

— Դու ինչո՞ւ չես քնում:

— Էնպէս, քունս չի տանում, սիրտս մի տեսակ
տխուր է:

— Ե՞ս, քնիր, քնիր, Ասուած սիրես,—ասաց Եղանը
ու երեսը կողակցից շրջելով շարունակեց իր անուշ
քունը:

— Եղանն, երեսդ էս կողմ արա, տես ինչ եմ ա-
սում:

— Հը՛, ասա:

— Ասում եմ լաւ չարինք. չը պիտի քորէինք, ողի-
տի տուած լինէինը:

— Այ մարդ, ամօթ է, հացդ երկաթ կը գառնայ.
ով է տեսել, որ տասներկու տարեկուն անմեղ երեխայ-
ին՝ քառասուն տարեկան որբեայրի տղամարդի տան...
թաղեմ նրա թիկունքը, երկուսի գլուխը կերաւ, չը
կշտացաւ, դեռ էլի ազապ աղջիկ է ուզում,—տաքացած
վրայ տուեց Եղանը:

Սերոբը ոչինչ չը պատասխանեց, այլ ճակատը շփեց
ու մի թեթև հոգեց արձակեց:

— Ես գիտեմ; դու նրա անունովն ես խաբւում,—
շարունակեց կինը, աւելի տաքանալով:—Մի տեսնէիր
իրիկունը խնդ երեխաս ինչ էր անում. քիչ էր մնում
սիրտը բերնովը դուրս գար. սիւնի շուաքում կծկուած՝
գոգով արտասուր էր թափում: Զիգարիս ծէրը փո-
րումս մղկտում էր, երբ մտիկ էի տալիս երեխուս աշ-
քերին... Կամ թէ չէ ինչո՞ւ եմ վւազում. փառք Ասո-
ծու, աղջիկս ուրիշների պէս չի պառաւել՝ տանը մնացել.
Էս տարի չեմ մարդու տալ, կը պահեմ եկող տարի կը
տամ. մի կտոր հացը հօ դիմիցո չի կտրուել...

Տիրեց բոպէական լոռութիւն:

— Զէ, Եղան, ես փոշմանել եմ. խայը վկայ, փոշ-
մանել եմ,—երկար մտածելուց յետոյ՝ ասաց Սերոբը:

— Դէ լաւ, որ էղպէս է, էգուց աղջկանդ կոնից

բռնիր ու տար Մուխսոնց Մանուկի առնը կոխիր,—
անզօր զայրոյթով ասաց Եղսանը ու նորից դժգոհու-
թեամբ երեսը դէպի պատը շրջեց:

—Իմ ասածս գու չես հասկանում; այ կնիկ. ինձ
փոշմանեցնողը ոչ Մանուկի հարստութիւնն է և ոչ նրա
աղայութիւնը, այլ իմ սրտիս երկիւղը... գիտես, անի-
րաւ ու անխիղճ մարդիկ շատ կան աշխարհում: ինչ չա-
րութիւն ասես, որ չանեն, ինչ վասս ասես, որ չը տան
մարդու...

Այդ վայրկեանին երկու ամուսինները միաժամա-
նակ մտաբերեցին, թէ ինչպէս մի քանի օր առաջ չար
ձեռով գցած կրակը ագահաբար լափում էր իրանց հա-
րեանի խոտի դէղը. յետոյ նրանց մոքում պատկերա-
ցու կոտորատուած ծառերի ու արմատահան արած վաղ-
ների մի երկար շարք, որոնք բոլորը նենգամիտ թշնա-
միների ստոր վրէժինդրութեան արդիւնք էին:

—Բա՛, անիրաւութիւնն աշխարհը պատել է, —շա-
րունակեց Սերոբը, —ամեն տեսակ չարութիւն, ամեն
տեսակ անաստուածութիւն կարող են անել. ով է նրանց
կուռը բռնողը...

Եւ Սերոբի լեզուն չէր զօրում արտասանելու այն
սարսափելի գործողութեան անունը, որ այդպէս ան-
դիմադրելի երկիւղ էր աղգում նրա սրտին ու ալեկո-
ծում հոգին: Ասենք պարզ ասելու կարիք էլ չը կար,
քանի որ Եղսանը լաւ էր հասկանում; որ ածերն է ա-
մուսնու մտահոգութեան առարկան:

—Է՞հ, մեր Աստուածը ողորմած է, այ մարդ, Նա
չարը կը խափանի. Նա մի առն կաթնակեր երեխա-
ները ջուրը չի լցնի: Քնիր, քնիր, էդպէս վատ վատ
քաներ մի մտածիր:

Եւ միամիտ Եղսանը յոյսը դնելով Աստուածոյ ողոր-
մածութեան վրայ, ինչ որ պառաւական աղօթքի մի
քանի աղաւաղած բառեր մրմնջաց ու հանգիստ սրտով
քնեց: Նշա ամուսինն էր, որ մինչև արլօրականչ չար-
չարուեց իր կոշտ անկողնում տիսուր մոքերի խեղդող

ծանրութեան տակ ու ամենեին կոպը կոպին չը կպցրեց:

Բարիլոյսը գեռ նոր էր բացւում, որ Սերոբը շտապով շորերը ճիտը դցեց ու մտաւ գոմի տաւարին ակը տարու: Յետոյ նա գուրս եկաւ փողոց, առուի ջրով լուացուեց, չուխի փէշով երեսը սրբեց ու կրծքին խաչ հանելով լսրճիթը մտաւ, եղանն ու իր մեծ աղջիկը՝ Սամօն, արդէն ոտի վրայ էին: Սերոբը անխօս՝ օրուայ պաշարը մէջը կապեց, բահն ուսեց ու դէպի ածերը դիմեց:

Նրա դլուխը թմրած էր, քներակները տաքացած ու ամբողջ մարմինը ջարդուած, թուլացած: Ոչ ճանապարհի կողերին շարուած ծառերի ծաղկազարդ տեսրը, ոչ կարկաչահոս առուի անուշիկ երգը, ոչ նրա եղերի դալար կանաչը, ոչ այդիների ափերում: արևկող զառիշ վայրերում կուչուրած մանուշակի նորաբաց ծաղիկները և ոչ նրանց արծակած եղեմային բուրմունքը—ոչինչ չէր գրաւում նրա ուշադրութիւնը և նա շտապում էր ու արտասովոր լայն քայլերով անընդհատ առաջանում:

Ահա Սերոբը մօտեցաւ ճանապարհի այն ոլորանին, որտեղից սովորաբար առաջին անգամ տեսնում էր ածերի գլխի ծառերի շարքը: Նա պտտուեց ոլորանը ու անմիջապէս աչքերը ուղղեց դէպի իրանց այգին: Բայց ի՞նչ... ծառերը չեն երեսում: չի երեսում մինչև անգամ բարձրահասակ ինձորենու ծաղկազարդ գլուխը: Տէր Աստուած, այս ի՞նչ հրաշք է: Սերոբը մեքենայաբար վագեց կողը այգին ու լերդապատառ վռազութեամբ բարձրացաւ այնտեղ կանգնած մեծ քարակոյտի վերի կատարը: Նայում է ու իր աչքերին չի հաւատում: Նա տրսում է կարմրատակած աչքերը, շփում է տաքացած ծակատը ու նորից նայում: Այս ի՞նչ բան է, Տէր Աստուած... մատազահաս ծառերի ծաղկապատ գլուխները կուացել, գեսնին են կպել, այն, իսկը գետնին, նրա լայն չուած աչքերը շատ լաւ տեսնում են այդ բանը:

Այնուհետև Սերոբը ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս
այդին հասաւ:

Ահա վերջապէս նա անխօս կանգնած է ածերի
գլխի ափում և շուշարած հայեացը առջևն է նայում
նա ոյժ չունի առաջ գնալու. ծնկները ծալուել, ոտները
թուլացել են... ափի կանաչ ծածկոցի վրայ խառնի-
խուռն թափթփուած էին պտղատու ծառերի մատաղ
գագաթները. իսկ դվաստուած ծառերի տեղ կարգով
շարուած էին երկար ու կարճ բենչերի *) սուր սուր
ծայրերը, որոնք թունաւոր նետի պէս խոցոտում էին
Սերոբի սիրտը: Եւ ինչպէս ըը ցաւեր խեղճի սիրտը.
ախր ամբողջ ուժ տարի նա հալ ու մաշ էր եղել այդ-
ծառերի շուրջը. նրանց քնքոյշ արմատների համար շա-
լակով աղբ էր կրել, շատ անգամ կժով էր ջրել դո-
գերով քրտինք էր թափել, մինչեւ որ մեծացրել, պատ-
ուաստել ու բերել պտղի էր հասցրել: Իսկ հիմա...

Ա՛խ, երանի դրանով ամեն բան վերջանար:

Բայց ահա թմբերի վրայ ու նրանց մէջերում ան-
կանոն փռուած են արմատահան արած վազների փար-
թամ կուտրակները: Այ, այն մէկը իծապտուկն է, որ
օտար թմբի կրծքին սեղմուած՝ խոնաւ արմատները
դէպի վեր է բարձրացրել. այս էլ եղնաչքն է, մէջտե-
ղից ջարդուած, միջնակում **) ընկած. Էն էլ ասկեարին,
էն էլ հալաղին, էն էլ բիշմիշին—բոլորն էլ ջարդուած,
արմատով հանուած, հարազատ հողից հեռու շպը-
տուած...

Սերոբը կանգնած տեղում բարացել էր: Նա գի-
տում էր այս տեսարանը և նրա կարկամած լեզուն
անդադար կրկնուող «վայ» բացականչութիւնով էր միայն
արտայայտում սրտում ծովացած վիշտը:

Վերջապէս նա գլուխը բարձրացրեց: Դեռ արև ը

*) ԲԵՆՀ—ՊԵՆԵԿԵ.

**) Այդու տախտակները իրարից բաժանող անցքը անուանում է
միջնակ:

կար: Անամակ երկնքի բաց կապտութեան մէջ մեղմիկ փայլում էր պառաւած լուսնի դէմքը:

—Անիմաւ, ո՞ւ էր քո արդար գատաստանը, քո ողորմածութիւնը, —բացականչեց Սերոբը ատամները կրծտացնելով ու թունալից հայեացը դէպի վեր ուղղելով:

Կարծես նրա հայեացը էր որ երկնքն այլայլուեց. լուսինը կարծես ամօթից էր որ իր փայլը կորցրեց, գողաց, գունատուեց: Ծերուկ Մասիսի բարձր կատարը փոքր ինչ դեղնեց:

Այսուհետև Սերոբը արձակեց իր երկայն գօտին, հանդարտօրէն ափում մեկնեց ու սկսեց դարսել նրա վրայ մատաղ տունկերի խեղճուկ մասերը. նա առաջ ուղեց բուրը հաւաքել, բայց տեսնելով, որ այդ բանը իր ոյժերից վեր կը լինի, ջոկեց ընտիրները գլխատուած ծառերից, նրա վրայ աւելացրեց փարթամները կուտրակներից. այս բոլորը ամուր կապեց, շալակն առաւ ու տուն դիմեց:

Հէնց այդ բողեին նորածին արևն իր վառ շողերով լուսաւորեց Սերոբի թախապատ դէմքը ու իր սոկեփայլ շրթունքներով համբուրեց, լիզեց նրա շալակի դալար ծառերի խօնաւ վէրքերը:

—Կորիր, ասաց Սերոբը աչքերը արեւից թագցնելով, —այսուհետև խաւարիր ինձ համար, շեմ ուզում քո լոյսը:

Սգաւորի ու սրտին՝ կարմիր արև չի սաղի:

Սերոբը իր թանկագին բեռը շալակին՝ հանդարտ քայլերով առաջ էր գնում, մեղմ օրօրուելով: Ճանապարհին նրան հանդիպող գիւղացիները կիսաբերան բարիսոյ էին տալիս, յետոյ կանգ առնում, շալակին նայում; մի քանի կարեկցական բացականչութիւններ արձակում ու ցաւալի դէպի տխուր մանրամասնութեամբ հետաքրքրուում:

Սերոբը կ'ասես ոչինչ չէր լսում ու չէր էլ զգում:

Դեկտեմբեր, 1901.

Նա շարունակում էր ճամբան առանց կանդնելու, առանց որ և է մէկին պատասխանելու, սուս ու փուս, ինքն իր անյտակ վշտի մէջ թաղուած:

Գիւղամիջի մարդաշատ հրապարակը հասնելով, նա կանգ առաւ, շալակի բեռը զգուշութեամբ գետին գրեց ու ճակատի սառը քրտինքը չուսի փէշով սրբեց:

Հրապարակի շուրջը շարուած էին գիւղի նշանաւոր խանութներն ու ամենալաւ շինութիւնները, որոնց մէջ միանդամայն աչքի էր ընկնում Մանուկ աղայի սրբատաշ կարմիր քարէ երկյարկանի բարձր տունը՝ իր նորածեւ սիրուն լուսամուտներով ու գեղեցիկ պատշգամբով:

Մի բոպէում դժբախտ Սերոբին իր խղճուկ բեռով շրջապատեցին աղքատ գիւղացիք մուայլ ճակատով, արեառ դէմքով ու կոշտ ձեռներով, որոնց կրակուած շրթունքներից դուրս թռչող ցաւակցական բացականչութիւնները իրար խառնուելով մի խմբովին աղեկտուր ողբ կաղմեցին:

Առաւտաժամը վերջացաւ, և ալեոր ծերուկների կորացած մարմինները երերուն քայլուածքով հրապարակ հասան ու անհետացան սգող ամնոխի ստուար շարքերում: Վերջապէս, ժամի ծուռտիկ փողոցից դուրս եկան երկու ծերունի ևս ու քաղցրութեամբ զրուցելով, հրապարակին մօտեցան: Քեռի Գողորն էր, մէկ էլ տէրտէլը:

—Ճամբայ տուէք, ճամբայ բացէք,—լսուեցին մի բանի խեղդուած ձայներ:

Ամբոխը ծեղբուեց, և պատկառելի ծերուկների աշըբերի առջև պատկերացան բարբարոսական անդժութեան ողորմելի զոհերը: Մատաղ ծառերի ծաղկապատ գլուխները և առողջ վաղերի հաստիկ կուտրակները անկարգօրէն թափուած էին շրջանի կենտրոնում, հող ու փոշու մէջ: Իսկ Սերոբը—ծեռքը խոչած, շինքը ծուռ, դէմքը գունատ կանդնած էր լուռ: Ոչ աղաղակ, ոչ մի անէծք, ոչ արտասուք...

—Օֆ—օֆ,—միմնջաց քեռի Գողորը տռաջ անցանելով,—էս ինչ բան էր ըըւոր որդի, էս ինչ կրակ ու պատիժ էր, օֆ—օֆ—օֆ—օֆ:—Եւ նա իր ոսկրացած մատներով սկսեց շշափել մեռած բոյսերի թարմ վերը բերը:

—Այ ժողովուրդ,—սկսեց տէրտէրը դիմելով ամբոխն, էս ինչ անաստուածութիւն է, որ գուք էք անում: ինչ անիրաւութիւն, ինչ կռապաշտութիւն է սա. ինչու էք իրար տուն քանդում, իրար միս ուտում... բաւական չեղամւ... էս բանդուած գիւղը Սոդոմ Գոմորը դարձրիք, ախր երկնային կրակից վախեցէք: Զէ՞ որ վերև Աստուած կայ, չէ՞ որ այնտեղ արդար դատաստան կայ, —վերջացրեց նա, դողդոջիւն մատը դէպի երկինք ուղղելով:

—Հա, տէրտէր ջան, կայ. վերև Աստուած կայ, արդար դատաստան էլ կայ, —բացականչեց Սերոբը, դժի պէս յանկարծակի վեր թռչելով:

Խեղճ ծերունին մի վայրկեան շփոթուեց Սերոբի անսպասելի հարցից, բայց յետոյ իր ձիւնափայլ մօրուքը շփելով, մեղմութեամբ պատասխանեց.

—Մեղք է, որդիս, էդպէս բաներ մի հարցնիր. դա Աստծուն դէմ կը գայ:

«Մեղայ Աստծու, մեղայ, Տէր», լսուեցին ամբոխի հետ խառնուած բարետաշտ ծերուկների ջերմեռանդ շրթունքներից:

—Զէ, տէրտէր ջան, աջիդ մեռնեմ, ասա տեսնեմ՝ ուղիղ է, որ վերևում արդար Աստուած կայ:

—Հանգստացիր, որդի, մի վրդովուիր. կայ, այո, կայ, և նա կը պատժի չար մարդին, կրակ կը թափի անիրաւի գլխին:

—Հա, դէ՞ որ էդպէս է, թող էս բոպէիս էն բարաշէն մեծ տունը աչքիս առաջին վլչի, —բղաւեց Սերոբը, ցուցամատով Մուխոսնց տունը նշանց տալով. — թող նրա հիմն արեգակին դառնայ... դու ինդրիր,

տէրտէր ջան, դու բարեխօսիր երկնքի առջև, որ Գաբրիէլ հրեշտակի հրեղէն սուրը ներս մտնի այն կարմիր շէմքից. թող Սոդոմ Գոմորի կրակը լափէ այն ահագին շինութիւնը... Տեսնում ես պատշգամբում կանգնածին, այն կռապաշտի զաւակն է էս բոլորի պատճառը, էն սատանի ծնունդն է իմ տուն քանդողը, հասկացմք... Դէ աղաչիր, տէրտէր ջան, քո արդար բերանովդ խընդրիր, որ կործանուի այն բարձր տունը իր մեծ խանութներով, որ բոցերի մէջ պլազայ այն սիրուն պատշգամբը իր վրայի նենդ օձով... Դու էլ բարեխօսիր, բեռի Դոդոր, դու աստուածավախ մարդ ես. դուք էլ աղաչեցէք, այ ժողովուրդ, այ գիւղացիք, այ ախպերտինք, Աստուած սիրողը թող մի մի բերան խնդրէ, դուցէ մէկիդ արդար ձայնը լսելի լինի երկնքին...

ՍԵՐՈԲՐԸ ԼՌԵՋ:

Ունկնդիրների խոնարհուած գլուխները բարձրացան ու հարիւրաւոր աչքերի յանդիմնական հայեցըները ուղղուեցին Մուխսոնց սպիտակ պատշգամբին:

Մանուկ աղան, որ ձախ ձեռը կողքին կանթած՝ աջով ոլորում էր երկայն բեղերը, յանկարծ կարմրատակեց, կրնգի վրայ պտտուեց ու պոօշները կրծոտելով արագութեամբ տուն մտաւ:

Մի զսպուած շշուկ մեղմ ալիքներով հանդարտ բուլորուեց ամոխի կաղմած շրջապատովք:

Երկու րոպէ շահցած՝ Մուխսոնց տան կամարապատ դարբասով դուրս թռաւ Մանուկը, որին հետեւցին երկու բարձրահասակ տղամարդ հաստագլուխ մահակները ձեռներին:

—Գլուխը օձի գլխի պէս կը ջարդէք, —բղաւեց աղան, ինքը հեռու կանգնելով, —կը տրորէք, ոսներիդ տակ աղցան կը շինէք, կը սատկացնէք սոված շանորդուն:

Սկսուեց մի աննկարագրելի իրարանցում: Մահակների անողորմ հարուածները, Սերոբի սրտակտուր

աղաղակը, քեռի Գոգորի հոգեմաշ «օֆ»-երը, տէրտէրի սարսափելի սպառնալիքները և Մանուկ աղայի լոկիրշ հայիոյանքները թանձր փոշու մէջ իրար խառնուելով, մի դժոխային համերգ էին կազմում, որի աններդաշնակ հնչիւնները փոշու ամպի հետ քուլա-քուլա բարձրանալով՝ անհետանում էին երկնային անսահման կապտութեան մէջ։

Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

ՊԱՏԻՓՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Մի հարիւր տարի առաջ Անդրկովկասի մի մասը պարսկական բէժիմն էր ենթակայ: Անցնելով ոռւմների ձեռքը, այդ մասը մեծ փոփոխութիւնների ենթարկուեց, մինչդեռ Պարսկաստանում տիրում են նոյն կարգերը, որոնց ականատես էին երբեմն մեր պապերը Երևանումն նահանգում: Այդ հին կարգերի բնորոշ կողմերից մէկն էլ պատիմների ձեն ու գործադրութիւնն է:

Պարսկաստանում ընդհանուր կանոնագրքերի հոտն անգամ չը կայ, որոշ օրինական ոչինչ չը կայ: Պարսկաստանում մասնաւորապէս պատիմների և ընդհանրապէս բոլոր կարգերի օրէնքները կամայականութիւնների և քմահաճոյքի մի անվերջ և երկար շարք է: Ինչպէս ուզում է դատաւորի քէֆը, այնպէս էլ նա դատ է կարում, կողրապտում է սարփարասար, ինչպէս իր կամայականութիւնն է թելազրում: Այսօր մարդասպանին գըլխատման հրաման է տալիս դատաւորը, վաղը նոյն պայմանների մէջ կատարուած յանցանքը յանկարծ սնվատիժ է մնում, որովհետեւ նրա քէֆը այդպէս է ուզում, որովհետեւ նրա աչքերը կուրացրել են: Այսօր քեարգուզարը մի որեւէ յանցանքի համար, օր. հաւատ հայհոյելու, հարիւր ծիպոտի հարուած է նշանակում, բայց վաղը մէկ ուրիշ քեարգուզար հէնդ նոյն յանցանքի համար առնում է միայն մի քանի թուման տուգանք:

Այժմ էլ Պարսկաստանում ինչպէս և հարիւր տարի առաջ այնպիսի սոսկալի պատիմներ են կատարուում, որոնք յիշեցնում են մարդկութեան շատ հին և վայրենական շրջանները:

Պարսկաստանում գործադրուող պատիմները կարելի է բաժանել հետևեալ խմբերի:

1. Նախնական թերեւ պատիմներ. — Այսպիսի պատիմներ դործ է գրւում աւելի թեթև յանցանքների դէպքում, ինչպէս օրինակ՝ տուն կարելու, վիրաւորելու և այլ նման յանցանքների դէպքում: Այս կարգի պատիմների մէջ առնահեշտը և տանելին համարւում է «Փալախկան»: Յան-

ցագործի ոտները զնում են Փալախկայի մէջ և ամուր սեղմում են, այնքան ամուր, որ մատների ծայրերից սկսում է տրին կաթել։ Այս վիճակի մէջ է մնում նա այնքան, մինչև խոստովանում է իր յանցանքը, որ անմիջապէս դադարեցնում է կորական վճռոր. իսկ եթէ չէ խոստովանում, Փալախկային հետեւում է մէկ ուրիշ աւելի ծանր պատիժ։ Սկսում են անխիղճ կերպով՝ տաքացած շամփուրներով դաղել նրա մերկ մարմինը. իսկ եթէ այդ էլ իր նպատակին չէ հասնում, մի քանի թասեր լաւ տաքացնում և հերթով դնում են յանցաւորի զլիխն։ Այս կարգի պատիժներին են պատկանում նաև սրանք. վերցնում են սուր քարեր և կամ սրացրած փայտեր, զնում ձեռքի մատների արանքը և չատ ամուր կապում են մատների ծայրերից, կամ թէ մեծ քարեր են դնում ոտների, ազգբերի մէջ և հաստ թուկով ոտների ծայրերից կապում։ Նա երկար ժամանակ այս վիճակի մէջ է մնում. յանախ պատահում է, որ ձեռքի մատները կարտառում են, իսկ ոտներից արին է հոսում։ «Չու զնեին» էլ այս կարգի պատիժներից է. սա այնքան սարսափելի և ծանր չէ, ինչքան տարօրինակ։ Չուն լաւ տաքացնում են և անցկացնում յանցաւորի յետոյքից. մի պատիժ, որ իսկապէս պարսկի ուղեղը ընդունակ է հնարել, մտածել այդպիսի բան։

2. Նախնական ծանր պատիժներ.—Շատ աւելի ծանր և սարսափելի պատիժներ կան, որ գործ են զնում ծանր յանցագործների, օր. մարզասպանների վերաբերման։ Այս կարգի ամենածանր և եղերնական պատիժները «Ղամիշ զնելը» և «ամորձիկներից կախնեն» են։

«Ղամիշ զնել», հէնց այդ անունը մարդի սարսուռ է ազդում. — Նախ վերցնում են ամուր եղեգն, լաւ սրում, ապա անցկացնում մատների եղունզների տակից, այնքան խրում, մինչև որ հասնում է բազուկը։ Երբ մի փոքր փուշ մտնում է մեր եղունզի տակ, մի բոպէ անգամ չնկա կարողանում տանել. երեւակայէք ահագին զամբշը, որ կտրել, անցել և հասել է մինչեւ բազուկը. սարսուռ էք չը, ընթեցող։ Իսկ ամորձիկներից կախելը. յանցագործին, ձեռները շղթայած, հաստ թուկով կախում են մի բարձր տեղից (թուկը ամրացած է լինում թերի տակից), ամորձիկներից կախում են լիտրանոց, էլ աւելի ծանր, քար, իսկ ցաւը կատարեալ դարձնելու համար, երբեմն էլ ցընցում են քարը։

Այս երկու պատիժներից քիչ սարսափելի չէ ձիպոտներով ձեռքելը։

Աւելի ծանր է այս պատիժի ձեռք։ Մեղապարտի ոտները և

ձեռները շատ ամուր կապում են իրար, վզի վրայ նստեցնում մէկ ծանր մարդ, երբեմն էլ երկուսը (ծանր մարդ չը գտնուելու դէպքում), մէջքը մերկացնում և սկսում են անողոք կերպով հարուածներ տալ ճիպոտներով, նայած թէ դատաւորը կամ քեարգուզարը քանի ճիպոտի հրաման է տուել. օրինակ, ենթադրենք 50 ճիպոտի հրաման է արձակուած. այդ ոչ թէ նշանակում է 50 անդամ խփել, ոչ, այլ 50 ճիպոտով, ի հարկէ առանձին-առանձին, այնքան խփել, որ բոլորն էլ կոտրուեն, փշուր-փշուր լինեն: 10 ճիպոտով կարող են, հնարաւոր է, մօտ 50 հարուած տալ, գուցէ գեռ աւելի, այդ էլ խփողների կամայականութիւնից է կախուած. բայց առհասարակ, նկատուած է որ խփողները զիտեն ձեր, այնպէս են խփում, որ ճիպոտները հէնց երկրորդ, երրորդ հարուածից յետոյ կոտրուում են:

3. Բուն պատիժներ.—Այս նախնական պատիժներին, որ շատ անդամ էլ խսկական պատիժ տեղ են գործադրուում, հետեւում են բուն կամ խսկական պատիժները: Երբ ձեռքն է դեր խազացել յանցադործութեան մէջ, ձեռքն են կտրում, խոկ երբ ոտը կամ մարմնի ուրիշ անդամը. Նրանից են զրկում. բայց որպէս զի ցաւը աւելի սաստիկ լինի, կտրելուց հէնց անմիջապէս յետոյ ձեռքը կամ ոտքը զնում են ևոացրած ջրի մէջ, և մինոյն ժամանակ այդ անում են այն նպատակով, որ սեղմուի, կուշգայ և արիւն չը հոսի:

Հրացանի կամ թոփի (թնդանօթ) բռնեն էլ այս կարգին են պատկանում: Հէնց նախ անշեալ տարի թաւրիզում երեք թուրք աւազակ-մարդասպանների թոփի բռնեցին: Սրանցից մէկը, որ բաւական հարուած է լինում, նախօրօք կաշառում է թոփչիներին և թոփը այնպէս են բռնում, որ կողքով է անցնում և ազատում է: Տգէտ ամբոխը հրացք է համարում այդ և ենթադրում է, որ Ազգակի մատը խառն է, թէ նա արդար էր: Բայց դատաւորը այս անդամ հրացանի բռնելու վճիռ է արձակում: Խուժանը սպասում էր, որ էլի կ'ազատուի յանցաւորը, բայց իշուր....

Պակաս անտանելի չէ և այն պատիժը, որ յանցաւորին շատ ամուր և խնամքով կապում են սիւնից, որ գլուխն էլ հնարաւորութիւն չունենայ շարժելու և վերից ջուրը կաթիլ-կաթիլ, հաւասար ուժով կաթում է հէնց նրա գանդի վրայ: Եւ այդ գրութիւնը տեսում է ամիսներ, տարիներ, մինչև ծակուում է զանգը և անցնում է ուղեղին: Ո՞հ, ճիշտ, որ սարսափելի է: Այս պատիժը շատ ուշուչ է պատահում:

Ուշուչ է պատահում և այն պատիժը, որ յանցաւորին սպանում են սառոցցով: Մեղապարտին նստեցնում են սառոց-

ների վրայ, գլխի, զզի վրայ էլ դնում են մի քանի կտոր սառյց, հալուելու դէպքում նորից են դնում, մինչև նա մահանում է:

Բանտարկելը շատ թեթև պատիժ է համարւում այս երկրում: Բանտարկեալները առհասարակ շատ աննշան թիւ են կազմում, նախ այն պատճառով, որ դա թեթև պատիժ է համարւում և երկրորդ, որ ամենսագլխաւորն է, գոյութիւն չունի բանտային կառավարութիւն: Բանտարկեալի պէտքերը, ինչպէս՝ հաց, ջուր, ծխախոտ և այլն, հոգում են նրա բարեկամները, իսկ եթէ որոշ մարդկանց տրւում է, այն էլ մի կտոր ցամաք հաց և ջուր, համոզուած լինելով, որ յետոյ մէկին 10-ը կառնեն:

Ո՞հ, ինչ սարսափելի են սրանց բանտերը: Ստորերկրեայ սրջեր, ուր միանգամայն արգելուած է լոյսի մուտքը և բուրում է զղուելի, մահացուցիչ և զաղջ օդ: այդ է Պարսկաստանի բանտերը: Իսկ բանտարկեալի վիճակը. նա ոչ մի հնարաւորութիւն չունի շարժուելու, ոտները, մարմինի մի որեէ մասը ձգելու: Նրա ստները ամրացրած են ֆալախկայի մէջ, ձեռքերը շղթայած յետեր, իսկ վզից շղթայով կապած հաստ սեան: Այդ է մարդասպանի և ուրիշ ծանր յանցաւորի վիճակը բանտում:

4. Անշափահասների պատիժները.—Շատ տարօրինակ և միւնոյն ժամանակ յաւալի են փոքրերի՝ 13—15 տարեկանների պատիժները, ընդհանրապէս թեթև յանցանքների, օր. ձու, հաւ, կամ նման արժէքանոց առարկաններ զողանալու դէպքում: Վոքրիկ կողերի քթերի միջնորմը ծակում, ամուր թել են անցկացնում, ապա ֆարաշը թելի երկու ծայրերից բռնում և պատեցնում է ամրող գիւղի շուրջը, որպէս զի ամանչեն և մէկ էլ այդպէս բան չանեն: Շատ անգամ էլ, եթէ ֆարաշը չարածի է լինում և ուզում է տանջել փոքրիկներին, սկսում է առաջ վազել և թելը աւելի ձգուելով ցաւը սաստկանում է, իսկ տղաներն էլ ստիպուած նոյն արագութեամբ վազում են ֆարաչի ետեից: Այս պատիժը յաճախ է կրկնւում մանաւանդ գիւղերում:

Այս կարգի պատիժներից է և այն, որ յանցաւորի ականջը մեխում են ծառին, երեսը ծածկում և վնացող եկողը երեսը բաց է անում, նայում է, թքում և անցնում: Այս պատիժը գործադրում է նաև չափահասների վերաբերմամբ: Փոքրերի վերաբերմամբ գործ է դրւում նաև ֆալախկան, ճիպոսներով ծհծեւը: ի հարկէ, աւելի քիչ թուով, և ուրիշ թեթև, փոքր ի շատէ տանելի պատիժներ:

5. Սովորական պատիժներ.—Մասնաւորապէս գողութիւնների և ընդհանրապէս միւս յանցանքների դէպքում միշտ էլ

հարուստը հնաբաւորութիւն է ունենում աղատուել, իսկ աղքատը անսպայման կրում է պատիքը:

Երբ երկու մարդ կռւում են, կամ մէկը միւսին փող է պարագնում և յանկարծ գործը հասցնում են դատաւորին կամ թազապետին, էլ բաւական է: Խելօք դատաւորը շատ լաւ գիտէ իր անելիքը: Նա առաջ գանգատաւորին մի լաւ ծեծում, դեռ մի գումար էլ փող է առնում և ձանապարհ զնում: Կանչում է միւսին, նոյնպէս ծեծում, մի քանի օր բանտարկում և մի քանի թուման առնելով ձանապարհում: Բայց գեռ գործը չէ վերջայել. մի քանի օրից յետոյ դատաւորը նորից է կանչում նրանց, ծեծում, առնում և առան ուղարկում ու այսպէս երկար շարունակում է, մինչև որ գանգատաւորն էլ փոշմանում է իր արածի վրայ: Այդ այնքան սովորական բան է, որ ամեն քայլափոխում, ամեն օր պատահում է: Եւ իսկապէս, այժմ շատ քչերն են գանգատի զիմում՝ կոռու, նոյնիսկ գողութեան գէպքում: Այլպիսի հանգամանքներից Փարաներն էլ զիտեն օգտուել, նըրանք իրաւունք են համարում իրանց գնալ, չոքել յանցաւորի գոանը, և միայն այն ժամանակ հեռանալ, երբ կը ստանան մի քանի զսան, իսկ չը տալու դէպքում նա սպառնում է քաշել, տանել դատաւորի մօտ:

Ենթազրենք, թէ մի որ և է զիւզում մարդասպանութիւն է պատահել, դատաւորները ոչ թէ հետեւում, աշխատում են չարագործին բռնել և պատժել, այլ այդ զիւզից ահազին տուգանք են պահանջում, պատճառաբանելով, որ նրանց զիւզումն է պատահել սպանութիւնը, ուրեմն նրանք էլ պէտք է տուժեն:

Այսպէս, մի երկու տարի առաջ հայաբնակ զիւզում ծըռ սպանում է մի հրէայի և վերցնում փողը: Իսկ դատաւորները իմանում են և ատամները սրած մանում են զիւզ սոսկալի պահանջներով: Գիւզացիները ցոյց են տալիս մարդասպանին և պատճառաբանում, որ իրանք մեղաւոր չեն. բայց դատաւորներին ինչ, նրանք իրանց փողի տէրն են և զիւզը 2000 թուման (±000 ռ.) տուժում է: Սա եղակի օրինակ չէ, և ոչ էլ ուշուշ կրկնուող, այլ շատ սովորական: Դատաւորները բոլք առ բոլք աշքները անկած սպասում են, որ մի բան պատահի, որպէս զի կեղեքն, քամեն ժողովրդին և լցնեն իրանց անկուչտ կոկորդը:

ԵԲ. ՖՐԱՆԳԵԱՆՑ

«Փ Ա Ի Ա Ր Ե Ս, Լ Ո Ւ Ս Ի Ն»

Այդպիսի բան գեռ չէր տեսել ի... գիւղը:

Պղտոր, արիւնոտ հեղեղ էր արդեօք, որ եկաւ անցաւ գիւղի վրայով, թէ մի չը տեսնուած հրեղէն փոթորիկ. շակուած գիւղացիներն այդ չիմացան, միայն երբ նրանք իրանց անհնարին սարսափից ուշքի եկան, գիւղում էլ ջահէլ-ջիւան չը կար:

Հոտաղներն օր օրի վրայ սև լուրեր էին բերում դաշտերից. այստեղ, այնտեղ, մի ժայռի սակ, մի ձորակում, խոռոչում տակաւին գիւղիներ կային անթաղ, գազաններին կուր գարձած: Ո՞վ կարող էր իր մեռելին տէր կենալ, թազել. ցերեկը զինուած պահապաններն էին արգելում այդ, իսկ գիշերները տանից ոտք գուրս գնելու հնար չը կար, սար ու ձոր, քար ու բլուր մահ էին որձկում: Եւ ընկածներն անթաղ էին մնում, այդպիսի ժամանակ էր, մի բուռն հողն էլ էր մերժում գիւղին, իսկ անմեղ սպանուածին տէր կենալը՝ յանցանք էր... Քանի մայրեր էին լայս, բանի գլուխներ սև կապեցին: Բազմաթիւ գժբախտների մէջ երջանիկ էր համարւում նոյն իսկ նա, ով իր ջահէլից լուր չունէր, որի գիւղի ոչ ոք տեսած չէր. ով գիտէ, գուցէ փախել ազատուել է, գուցէ մի տեղ թագնուել է, «գուցէն» յոյս էր, անորոշ հեռաւոր յոյս, բայց էլի յոյս էր:

Ծովինարն էլ յոյս ունէր: Մի շաբաթ անցաւ այն սև օրից և գեռ ոչ ոք չէր տեսել նրա Սէփօի գիւղը: Թող չը տեսնեն, թնդն էնքն էլ չը տեսնի, յաւիտեան չը տեսնի, նոյն իսկ կուրանայ, միայն թէ իմանայ, որ իր

աչքի լոյս զաւակը, իր Սէփօն ազատուել է, ապրում է։ Այսպէս էր մտածում մայրը և մեղմիկ օրօնում էր խնոցին իրանց բակում։ Յանկարծ նա խնոցին թողեց, կանուառաւ։ Հարեան բակից լսուեց մի մեղմ, կանացի ձայն, որ երգում էր դառն ողբաձայն շեշտով։

«Դուման բռնեց մեր սարերին,
Զորեր զըմմէն սուգ արին,
Սևիկ կապէք կուրհաք, մէրեր,
Թող չը տեսնեն ձեր աչքեր։
Մառմառ բարեր մըումուռ կ'ուան,
Ապառաժներ կը տքան»։

—Ա՛յս, Սօնա, էլի դու վառեցիր հոդիս, միմնջաց Ծովինարը, հեկեկաց և գոգնոցը գէպի աչքերը տարաւ։

Սօնա... միայն այդ անունը հրքան շատ բան էր ասում՝ Ծովինարին։ Իր Սէփօն սիրածն էր նա։ Մի օր—հազար էրնէկ էն օրին—ինքը Ծովինարն իր աչքով տեսաւ, թէ ինչպէս Սէփօն ու Սօնան փոփուկով խօսում են իրար հետ այն պատի ճեղքից։ Ով մայր է մի տղամարդի, մի սարի պէս տղամարդի, որ սիրում է մի սեաչեայ գեղեցկուհի, նա միայն կը զգայ այն, ինչ որ զգաց Ծովինարն այդ ժամին։ Երկու սիրահարները վախկոտ աշծեամների պէս փախան այս ու այն կողմ, իսկ մայրը... օ', նա միայն ժպտաց երանութեան ժպտով, նա երջանիկ էր, նա հպարտ էր։ Իսկ այժմ... ամեն երեկոյ դուրս է գալիս Սօնան, նստում իրանց սրտհում և կամացուկ երգում է այդ ցաւոտ երգը, որ ով գիտէ երբ և ինչ առթիւ շարադրել են ի... գիւղի աղջիկները և որը սակայն երբէք չի հնանում։ Ծովինարն աչքերը սրբեց, կամացուկ մօտեցաւ բակի պատին, աչքը դրեց նրա համար նուիրական դարձած պատի ճեղքին և նայում էր։ Սօնան նստած էր, գլուխը քաշ ձգած գուլպայ էր գործում և արցունքները կաթիլ կաթիլ թափում էին աչքերից թրջելով ձեռքի գործը։ Նա շարունակեց իր երգը, բայց այնպէս մեղմ, այնպէս աղեկտուր,

որ կարծես ոչ թէ երգում էր, այլ միմնջում էր ցաւից,
բոցոտ սրտի ցաւից.

«Էն ի՞նչ հով էր իջաւ մէկէն
եղ սև սարի կատարէն,
ջիւան-կտրիճ չը ինայեց,
Սրտեր ցաւի ծով կապեց.
Մառմառ քարեր կուց-կուց կուլան,
Զէշոտ ժայռեր կը տըքան:
Դաշտն ելնենք էլ ի՞նչ բաղենք,
Ծաղիկները կը խառնենք.
Շուշան, նարգիզ, կանաչ խոտեր,
Ամեն կարմիր են հագեր.
Ապառաժներ մըռմուռ կ'ուլան,
Մարեր ձորեր կը տքան:
Կանաչ կարմիր ուխտ արեցինք,
Ծե ու կարմիր կապեցինք.
Մեր արցունքը թէ ծով գառնայ,
Բոց սրտերը չեն հովնայ.
Քարոտ սարը մըռմուռ կուլայ,
Ծե ապառաժ կը տըքայ»:

Ծովինարի սիրտը փղձկաց, նրա հեկեկոցն աւելի
բարձր դարձաւ. աղջիկը երկոտ հայեացը ձգեց պատի
կողմը և լռեց, երեխ նա լսեց և հասկացաւ, թէ ի՞նչ
է կատարում պատի այս կողմում: Ծովինարը ի՞նչ սի-
րով կը գրկէր այդ սիրունիկ գլուխը և կը սղմէր իր
մայրական կրծքին Աէֆօի փոխարէն. այդ բողէին Սօ-
նան նրա համար դարձաւ իր կորցրած զաւակը: Նա
կուշտ, կուշտ արտասուեց, սիրտը հովացաւ: Այժմ նա
ոկսեց խղճալ նաև Սօնային, որ այդպէս ողբում էր իր
կորցրած սէրը:

Չը գիտեմ, որիս ցաւն է մեծ, խեղճ Սօնա,
մրմնջում էր նրա շրթունքները, բայց թնդ Աստուած
քո ձայնը լսի, բեզ խղճայ, քո սուգը բաւական հա-
մարի, գուցէ ես մեղաւոր եմ: Ապա նա կամացուկ հե-

ուացաւ պատից, ձեռք առաւ ինոցին և շարունակեց
հարել:

Արդէն երեկոյ էր: Արել կախուեց դէպի արե-
մուտք: Պէտք էր ինոցին հարել, վերջացնել, շուտով
Սերոպը դաշտից տաւարը կը բերէր: Եւ նա արագ-
արագ տարութերեց ինոցին:

Բակի դուռը ճռուալով բացուեց, շէմքի վրայ
յայսնուեց եօթառթ տարեկան մի մանուկ:

Սերոպն էր և արտասում էր...

Մայրը ինոցին թողեց և դողալով առաջ վազեց:

—Սերոպ չան, քէ մատազ, տաւանրը...

Երեխան չը ովատասխանեց, նա հեկեկում էր:

—Խլեցին... տարանի...

—Զէ, հաղիւ ձայն տուեց Սերոպը արտասուքի
միջից:

—Հապա ուր են:

—Դաշտում թողի... մնրէ, ես վազելով եկայ...

Սէփօին տեսայ... քարի տակ ընկած...

Նա էլ չը կարողացաւ շարունակել, արտասուքները
խեղդեցին ձայնը: Բայց այդքանն էլ բաւական էր, որ
մօր սիրտը զգայ սարսափելի իրողութիւնը. Երեխան
դաշտում տեսել էր իր եղբօր դիակը, էլ ինչ հարցնէր
թշուառ մայրը, բերանը փակուեց. միայն կրծքի տակ
մի բան կտրուեց, արցունքը չորացաւ աչքերում: Նա
յետոյ գնաց, մէջը պատին տուեց, ասլա թուլացած
կամացուկ նստեց պատի երեսից սողալով, գլուխը կախ-
ուեց կրծքին և մնաց անշարժ...

Սրել մայր մտաւ. անտառուններն իրանք տուն ե-
կան և ցրուեցին բակում. ինոցին մնաց առանց հարիլ
իր տեղում. խաւարն իջաւ, իջաւ սարերից և ծածկեց
դիւղը. Ծովինարը դեռ նստած էր միենոյն դիրքով,
միենոյն տեղում լուռ, անշարժ: Դժուար էր իմանալ,
մտածում է նա արդեօք, թէ սառել է, բար կտրել. աշ-
ըերը մի կէտի վրայ ուղղած նա նայում էր այն ան-
միտ հայեացքով՝ որ մեծ վշտի սարսափին ունի իր մէջ:

Սերոպն էլ կծկուեց մօր կողքին և մնաց լուռ։ Վիշտ
մարմնացող արձաններ լինէին կ'ասես այս մայրն ու որ-
դին, որոնք հազիւ երեսում էին մթութեան մէջ։ Ժա-
մեր անցան։

Դիւղը ըռեց։ Ծովինարը վերկացաւ, ներս մտաւ
խրճիթը, գուրս բերեց այնտեղից մի բահ և մի մաֆլաշ։
Նրա քայլուածքն ու շարժումներն այժմ վճռական էին
և հաստատ։ Զաւակի դիակը թաղել էր հարկաւոր և
նա կը թաղի, թէկուզ երկինը ու երկիր իրար խառ-
նուեն և գաշտը ողջ հրէշներով լցուի։ Մայրն ինչ կը
հարցնի, երբ իր Նէփօի դիակը գաղանների ճանկերի
մէջ է։ Բայց ինչպէս գտնել, մենակ, սարսափելի խա-
ւարի մէջ, չորս կողմում մահ ու դժոխք։ Նա մի փոքր
մոտածեց։

—Սերոպ ջտն, տեղը կը ճանաչես։

—Հա, մայրիկ, կը ճանաչեմ, հեռու է, շատ հեռու
դիւղից։

—Դէ վեր կաց, քե մտաղ, վեր կաց երթանք։

Զարմացած երեխան մօրը նայեց հարցական հայ-
եացքով։

—Ո՞ւր, մայրիկ։

—Երթանք, թաղենք Աէփօին։

—Մայրիկ, վախում եմ, ախր մութ է, նրանք էնտեղ
կը լինեն, մայրիկ...

—Ես քեզ հետ չեմ, քե մեռնեմ, գնանք, մատաղ.
Է՞ քո ախպէրն է, մեղք է, որ մնայ։

Մայրը նրա հետ է, մայրը նրան կը պաշտպանի։
Է իւրաքանչիւր մայր ամենակարող է իր զաւակի հա-
մար։ Սերոպը սիրո առաւ, և նրանք դուրս եկան
դռնից։

Լուսին չը կար, խաւար էր դուրսը։ Նրանք կա-
մացուկ դուրս եկան դիւղից և բռնեցին խոտոր ճա-
նապարհը։ Քայլում էին ուշիկուշիկ. երեխան նայում
էր մերթ մօրը և մերթ խաւարի մէջ ծրագրուող ա-

ռարկաներին, որոնք հազար ու մի ձեւեր էին ընդունում:

—Մայրիկ, վախում եմ տես, մէկը գալիս է մեր յետերց:

—Սնաս, մատաղ, սուս կաց, մարդ չը կայ, սիրուէր տալիս մայրը, բայց իրօք ինքն էլ ոտնաձայն լսեց, երկուսով էլ յետ նայեցին, բայց մարդ չերևաց:

Քանի հեռանում էին գիւղից, Սերոպին թւում էր, որ խաւարն աւելի և աւելի թանձրանում է: Բայց այդ չէր, որ սարսափեցնում էր երեխային, այլ այն, որ նըրանք շուտով պիտի անցնէին ընկնաւոր, Ծուռաջուլօնց այգու մօտով. Սերոպը ցերեկով էլ այգուեղից դժուարութեամբ էր անցնում, իսկ գիշերը...: Ի՞նչքան բաներ էին պատմել նրան, ասում էին, որ Ծուռաջուլօն միշտ այնտեղ, այն այգում է թափառել, որ այնտեղից շատ անդամ դուրս է եկել, հօտաղների յետեից ընկել. ասում էին, որ նրա մազերն այդ ժամանակ ճիճան էին, աքերը չար, բերանը մեծ ու փրփրուն, ձայնը սարսափելի, որ վերջ ի վերջոյ այնտեղ մի պատ է փլել, Զուլօն տակն է մնացել, բայց գիշերները նորէն դուրս է գալիս և վազվում է այն տեղերում: Արդեօք հիմա էլ այնտեղ չէ, դուրս չի գայ, չի վազի, չի ճայ: Հասան այգուն. ահա փլած պատը:

—Մայրիկ, վախում եմ տես, մէկը գալիս է, Զուլօն է... մաղերը, մայրիկ, աչքերը...

—Մի վախիր, քե մեռնեմ, բռնիր ձեռքս, այ այս պէս:

Յիշաւի Ծովինարն էլ վախեցաւ, նրան թուաց, որ մէկը կար այնտեղ, ուր ուղղուած էր երեխայի վախկոտ հայեացը և որ նա ծածկուեց շատ մօտիկ: Մայր և որդի աւելի մօտ կպան իրար, շտապեցրին բայլերը, որ շուտով ազատուեն այս չարագուշակ տեղերից:

—Սերոպ ջան, գեռ հեռու ենք էնտեղից:

—Չը գիտեմ, մայրիկ, այն մեծ առուն, որ խաչ-

քարին մօտ է, այ այն առուն պիտի անցնենք, յետոյ էլի կ'երթանք, էլի կ'երթանք սև քարի կողմը, այնտեղ է:

Նրանք գնում էին անընդհատ: Լուռ էր շրջակայքը, երկինքը պայծառ, ուր աստղերը պաղ պաղ պլազմամ էին և բնութիւնը կարծես ուշ գիշերին ծոյլ-ծոյլ յօրանշում էր ճնշող քնի ձեռքից, և վառ աստղերի քընքոյց ցոլքերը անկարսղ էին խանգարել աշխարհի քունն ու խաղաղութիւնը: Մի բուի չարագուշակ վույ-վույը հնչուեց և անցաւ քնած շրջակայքի վրայով:

—Մայրիկ, «բայզուշից» ես վախենում եմ, վույ-վույ է անում: լաւ չէ նրա ձայնը, այնպէս չէ, մայրիկ: Մայրը լուռ կացաւ, ինքն էլ էր վախենում այդ վայիւնից: Ահա լսուեց մի այլ թուչնի ճիչ, յուսահատ, անօդնական ճիչ խաւարի ամայութեան մէջ. դժբախտ թըռչունը երեսի բուի ճանին ընկաւ և թրպրառում էր նրա ճիրանների մէջ: Ծովինարի հոգին ցաւեց, ճիշտ այդպէս նրա զաւակն անտէր, անտիբական մնացել է գաղանների ձեռքը: Երեխան զգաց իր ձեռքի վրայ երկու տաք կաթիլ. նա նայեց մօրը, բայց խաւարը չը թողեց, որ տեսնի դէմքը, սակայն մանկական սիրտը ճմլուեց ցաւից, նա զգաց որ այդ իր մօր արտասուըներն են: Արդարեւ յուսահատ վշտի, անօդնական անտէրութեան արտասուքներ էին, որ քամուեցին ծովինարի աշքերից, իսկ երեխան կարծեց, թէ իր անվերջ գանգատներով վշտացնում է մօրը, և մի սիրալիր մանկական խորամանկութեամբ փորձեց ուղղել իր սխալը, մօր սիրտն առնել:

—Մայրիկ ջան, դիտես, ես էլ չեմ վախենում, ախոր դու ինձ հետ ես. որ Զուլօն գայ, դու չես թողնի, բահ էլ ունես. իսկ եթէ նրանք գան, մենք կը տափենք արտերի մէջ, մեզ չեն տեսնի. հա՞, մայրիկ:

—Հա, մեռնեմ քեզ, սուս կաց, որ մեր ձայնը չըլսեն:

Մանուկը լոեց և քայլեց։ Հասան առուին։ Ուշ
գիշեր էր արդէն։ Նրանք կանգ առան։ Յանկարծ մի
ոտնաձայն լսուեց, երկուսով էլ մէկէն յետ նայեցին.
մի ստուեր երեաց ու անյայտացաւ, կարծես մէկը նը-
րանցից աւելի բարձր շտապով անցաւ առուից։

—Ո՞վ է այն, մայրիկ, խօմ Զուլօն չի։

—Մարդ չը կայ, հնգիս, այդ առուի ձայնն է։

Առուից այն կողմը հեռու և հեռու թանձր խա-
ւարն էր առաջները, միայն մուայլ ուրսւագծերով՝ որ-
պէս այլանդակ հրէշներ հազիւ ծրագրւում էին այն
ժայռոտ բլրակները, որոնք եզերում էին Խ... գիւղի
դաշտերը։ Խաւարի մէջ նրանք ասես ամեն րոպէ փո-
փոխում էին իրանց ձեռքը, բարձրանում, իջնում, ոլոր-
ւում, ձգւում և մայլ ու որդի գժուարանում էին ա-
ռանց սարսափի նայել այն կողմը։

—Էնտեղ է, մայրիկ, այ, այնտեղ է։

Երեխան գէպի բլրակներն էր ցոյց տալիս։

Ծովինարը տակաւին կանգնել էր առուի ափին և
խորհում էր. նրա մոգերը սև էին, որպէս այդ գիշեր-
ուայ խաւարը, այլանդակ ու ահաւոր, ինչպէս այն գա-
լարուող ժայռերը։

Գնալ արդեօր, թէ յետ դառնալ։

Նա սարսափում էր ոչ իր համար, Սէփօին կորցնե-
լուց յետոյ, ինչ արժէր իր կեանքը. իսկ եթէ Սերոպին
մի բան պատահի. գիշերը չար, խաւարն անթափանցիկ,
մեռելը սարսափելի։ Մայրն զգում էր, թէ ինչպէս է
դողում երեխայի փոքրիկ թաթն իր ձեռքի մէջ։ Քանի
մօտ էին գիւղին, քանի լաւում էր շների հաջոցը, շր-
ջակայքի սպանից մեռելութիւնն այսքան ծանր չէր։
Այժմ... այս ինչ պատահեց, ամեն ինչ մահ է, ամեն
ինչ սարսափ. Նրանք զգում էին իրանց մենակ ձգուած
մի ամայի անապատի և խաւարի մէջ. գոնէ մի անմեղ
ձայն, գոնէ մի քաջալերիչ շշուկ։ Ծովինարը նայեց ա-
ռուին, այդ աւելի լաւ էր. ջուրը շարժուն էր, դա-

կեանքի պէս մի բան էր։ Կոհակները քսւում էին առիթին, թեթև շշուկ հանում և հազիւ լսելի ճղփիւնով հեռանում գնում։ Այդ շշուկին, այդ փսխուկին էր ականջ դնում Ծովինարը։ Առուն հոսում էր այն բըլրակների ոտքից, որտեղ պառկած էր իր Սէփօն անտէր, անտիրական։ Սրդեօք նրա շունչը չէ, որ փսխը սում է այդ ջրերի մէջ, արդեօք նա չէ, որ մի բուռն հող, մի փոքրիկ փոս է աղերսում իր մօրից, որովհետեւ աշխարհում նա էլ ոչ ոք չունի։ Ոչ, ոչ, մայրը նրան այնպէս չի թողնի։

— Երենպ ջան, բարձրացիր շալակս, առուն անցնենք։

Երեխան բարձրացաւ մօր ուսին, մայրը ջուրը մըտաւ և նրանք անցան։ Հաղիւ մի քանի քայլ ձգած, երեխան կրկին ասաց հազիւ լսելի ձայնով։

— Մայրիկ, Ծուռջուլոյին ես տեսայ, այ անցաւ այն կողմը. մայրիկ, վախենում եմ։

Երեխայի սրատես աչքերը խաւարի թանձր քողի մէջ որոշեցին մի ստուեր, որ մայրը տեսնել չէր կարողանում։ Նա զարմացած էր, երեխան էր սխալում, թէ ինքը։

— Զը կայ, քե մեռնեմ, հանգստացրեց մայրը, Զուլօն չը կայ, պինդ բռնիր ձեռքս, չէ դու ասացիր էլ չեմ վախենում։

Նրանք շարունակեցին ճանապարհը։ Ահա և բըլրակները։ Երեխան կանդ առաւ։

— Այ այն քարի տակն է, մայրիկ, ես վախենում եմ մեռելից։

— Քո եղբայրն է, մատաղ, ես քեզ հետ եմ, մի վախիր։

Մի մեծ ժայռի տակ ընկած էր Սէփօի դիակը։ Մայրը ծունկ չոքեց, գրկեց, լուռ մնաց մի քանի րոպէ, ուղղուեց, իր կուրծքը տրորեց, կրկին կռացաւ, քսեց իր երեսը որդու սառը դէմքին և մնաց անշարժ։ Մի քանի րոպէից յետոյ նա վեր թռաւ տեղից, ձեռք

առաւ բահը և շտապշտապ փորել սկսեց։ Սերոպն իր փոքրիկ ձեռներով, ինչքան կարող էր, քաշում էր հողը փորուածքի ափերից։ Վեհը խորացաւ, մայրը դեռ փորում էր։

—Մայրիկ, Զուլօն, յանկարծ ճշաց երեխան և բոլոր ուժով ձգեց իրան փոսի մէջ. սարսափած մայրը գրկեց նրան և վերև նայեց. նրանց գլխավերելը կանգնած էր մէկը, ինչպէս խաւարի ոգի։

—Զուլօն չի, մատաղ, խօսեց խորհրդաւոր անձը։ Ծովինարը զարմանքից քար կտրեց, այս գիշերային ոգին ինքը Սօնան էր։

—Չը կարողացայ, մէրիկ, չը կարողացայ համբերել, ներիր ինձ. իմ խուլ ականջներն էլ լսեցին Սերոպի բերած սև լուրը. ես իմացայ, որ դու թաղելու ես գալիս, գողտուկ գուրս եկայ ձեր ետեից, որ միայն իմանամ, թէ որտեղ ես թաղում նրան։ Սերոպը միշտ տեսաւ ինձ ճանապարհին, նա միշտ ինձ Զուլօի տեղ դրեց, ես ծածկուեցի. հասայ վերջապէս այնտեղ, այն քարի տակ կացայ, սպասեցի, բայց համբերել չը կարողացայ. ներիր ինձ, մէրիկ։ Սրտի երկիւղի հետ ես դէն եմ ձգել կոյսի ամօթը, մահն աչքս առած, չօլերն ընկած սարերում կորցրած ջէյրանն եմ փնտռում։ Թնդ, մէրիկ, թնդ որ այս կուրացած աչքերս թէկուզ այս խաւարի մէջ մի անգամ էլ նրան տեսնեն, թող որ այս թուլացած ձեռներս քոնի հետ միասին հողը շանգռելով նրան մի տապան շինեն։

Նրա այլուած շրթունքներից բառերը թափւում էին ու թափիւում՝ ասես երբէք վերջ չառնելու համար։ Մի բոպէ ամենքն էլ մոռացան, թէ ուր են գտնւում իրանք և ինչ են անում, վտանգը, խաւարը, երկիւղը բոլորը չքացան կուսական բուռն սիրոյ առաջ։

Ծովինարը փոսի մէջ լուռ հեկեկում էր։ Աղջիկը մօտեցաւ իր սիրելու դիակին, ծունկ չոքեց, կռացաւ նրա վրայ և առաջին անգամ իր կեանքում համբուրեց նրա սառն ճակատը, կուսական տաք համբոյր, որով

կարծես նա աշխատում էր ջերմութիւն տալ իր սիրելի սառած դիակին, ինչպէս մի յարալէզ ոգի, որ փորձում է լիզելով կեանքի բերել կուռում ընկած իր սիրելի հերոսին։ Սակայն ի զուր, մահը խլեց այդ ջերմ համբոյրը կուսական շրթունքներից և յանձնեց յաւիտենականութեանն ու խաւարին։

Վերջապէս Սօնան վերկացաւ, ցած իջաւ գերեզմանի մէջ, բահն առաւ և փորել սկսեց. Ծովինարը հողն էր դուրս տալիս. և Սերոպը նայում էր զարմացած բայց աւելի հանդիսաւ, որովհետեւ այժմ երեքով էին. Փոսը հետզհետէ խորանում էր. Դեռ երբէք խաւարի մէջ աւելի վսեմ գործ չէր կատարուել. երկու սրտեր մրցում էին իրար հետ, մայրը գետինն էր չանդուում իր զաւակի համար, աղջիկը փորում էր սիրելու համար, բայց իրօք իւրաքանչիւրն իր սեփական սրտի գերզմանն էր փորում, և յուզարկաւորը մանկութիւնն էր, որի անմեղութիւնը կարծես հովանաւորում էր նուիրական գործը որպէս պահապան հրեշտակ։

Լուսինը բարձրացաւ. նրա գունատ, պաղ շողերը բլրի կատարից սողալով ընկան նաև նահատակի գունատ գէմքի վրայ։ Վատանգը մեծացաւ, թշնամի աչքն այժմ հեռուից տեսնել կարող էր քարի տակ շարժուող ստուերները. Գերեզմանն արգէն պատրաստ էր. Նրանք պատրաստում էին գուրս գալ, երբ գիշերուայ հովը ձիերի սոնաձայն հասցրեց նրանց ականջին. Հնչերը պահած, երեքով էլ կծկուեցին։

—Ո՞վ էք, ձայն տուին հեռուից։

Պատասխան չը կար։ Յանկարծ մի գնտակ սուլելով եկաւ գէպի գերեզմանը. Զիաւորներն անցան երեկ ենթագրելով՝ թէ իրանց նկատած արուերները գաղաններ են, որոնք գիտկներ են պատուում և հէնց այնպէս արձակեցին մի գնտակ և գնացին։

Ծովինարն ու Սօնան դուրս եկան փոսից. Սերոպն իր տեղումն էր, գերեզմանի շրթանը կծկուած, լուռ նրանք երկսով մաֆրաշի մէջ փաթթեցին դիակը, գե-

բեզմանի մօտ բերին, իջեցրին փոսի մէջ և ապա շտապշտապ հողով ծածկեցին։ Պարտքերից վսեմագոյնը կատարած էր, սիրելու և զաւակի դիակը անթաղ չը մնաց, նրա հետ էլ թաղեցին յուղարկաւորների սրտերը։ Ծովինարն ու Սօնան ծունկ չոքեցին, վերջին անգամ համբուրեցին նուիրական հողաթումբը և աղջիկը իբրև թաղման աղօթք կամացուկ մրմնջաց՝

«Կանաչ կարմիր ուխտ արեցինք,
Սե ու կարմիր կապեցինք.
Ապառաժներ մըումուռ կուլան,
Սարեր, ձորեր կը տքան»։

Վերկացան. մայրը մօտեցաւ Սերոպին։

—Վեր կաց, Սերոպ ջան, վեր կաց, տուն գնանք։ Երեխան լուռ էր և անշարժ, նա քնած էր խորը քնով. մայրը կանչեց կրկին, նա լուռ մնաց, շարժեց ձեռքով և... սարսափած յետ քաշեց ձեռքը, նայեց, արիւնոտ էր։ Դաւաճան ձեռքով ձգուած գնտակն ի զուր չէր անցել. Սերոպի կրծքի վրայ լայն վերք էր բացուած և արիւնը պատել էր շորերը. նա վիշել էր իր շունչը առանց նոյն իսկ մի փոքրիկ ճիշ արձակելու։ Մայրը ճչաց աղեկտուր, գրկեց, բարձրացրեց այդ փոքրիկ, արիւնոտ դիակը, լուսնի շողերն ընկան երեխայի գունատ ճակատին ու այտերին, նա կարծես քնած էր։ Գլուխը թոյլ-թոյլ կախուեց ինչպէս իր ցօղունի վրայ թառամած ծաղիկ։ Զարհուրելի վլտից իրան կորցրած, մայրը չը դիտէր թէ ի՞նչ է անում, նա բարձրացրեց դիակը վեր, վեր, կարծես ցոյց էր տալիս անգութ երկնքին և դատ ու արդարութիւն էր պահանջում։

—Խաւարես, լուսին, ճչաց նա, անիծուին ըո շողերը, արարաշխարհում հէնց սրմն տեսար, լուսաւուրեցիր։ Ելէք, ելէք, գայլեր, բորենիներ, գաղաններ, գուրս թափուէք ձեր որջերից, գուրք աւելի գութ կ'ունենաք քան մարդիկ, եկէք, լայնէք ինձ հետ. մէկին հաղիւ թաղեցի, միւսին գերեզման չը կայ. գաղաններ,

լացէք, կամ պատռեցէք էս էրուած կուրծքս, դուրս քաշէք այնտեղից բոցոտ սիրտս, տաքտաք լափեցէք, որ դուք էլ բոց կտրէք ինձ պէս, ոռնաք սարի ձորեւրում և ձեր չնչով հրդեհէք էս չար աշխարհը:

Ասաց Ծովինարը, ինչպէս հնձուած բոյս, գետին ընկաւ երեխան գրկում և լռեց: Սօնան վրայ վազեց օգնելու, բայց նրա ջանքերն անօգուտ էին. այդքան ահաւոր վիշտը չը կարողացաւ տանել մօր ջարդուած սիրտը. նա արդէն անջնչացած էր:

Միւս առաւօտ Խ... գիւղացիք զարմանքով տեսան, որ Սօնայի մազերն իսպառ ճերմակել էին:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Խ ԿՕՆԳՐԵՍԸ

IV

1901թ. սեպտեմբերի 11-ին, առաւօտեան, Ս. Անգլիէի Հալլում կայացաւ կօնդրէսի երկրորդ նիստը, նախագահութեամբ դոկտօր Սպինո Վատոսնի:

Քննւում է Ը Յանձնաժողովի մշակած հարցը՝ «Քրիստոփական պատերազմի վերաբերմամբ», առաջարկութիւն օրիորդ Հելլէն Բօրխնզօնի: Օրիորդը յարձակւում է եկեղեցու պաշտօնեաների վրայ, որոնք չանքեր չեն գործադրում տարուծելու քրիստոնեաների մէջ այն գաղափարը, թէ պատերազմը, միջիտարիզմը բայցարձակակէս հակառակ են քրիստոնէական վարդապետութեան ոգուն. ևթէ Քրիստոսի պաշտօնեաները քարոզած լինէին այդ միտքը, պատերազմները գաղուց դադարած կը լինէին քրիստոնեայ երկրների մէջ և այսօր եղաքարասպան պատերազմը տսղը չէր ունենալ Հարաւային Աֆրիկայում: Եթէ մենք հետեւում ենք Քրիստոսին, պէտք է ուրեմն կատարենք նրա պատուիրանները, արդ, այդ պատուիրանները միանդաման դատապարտում են պատերազմի սիստեմը: Պէտք է հրատարակել, քարոզել, թէ ով կողմնակից է պատերազմի գաղափարին, նա քրիստոնեայ չէ. խսկական քրիստոնեան միայն խաղաղասէր է:

Դասօն Մօխ բողոքում է վերջին խօսքերի գէմ. խաղաղութեան գաղափարը չը պէտք է կապել քրիստոնէութեան հետ. գեռ Քրիստոսից 550 տարի առաջ կօնֆուցիոսը դատապարտել է պատերազմը. չինացիները քրիստոնեաներ չեն, բայց խաղաղասէր են. խաղաղասիրութեան գաղափարը պէտք է կապել գիտութեան և բարոյականութեան և ոչ կրօնի հետ:

Ը Յանձնաժողովը առաջարկում է հետեւեալ որոշումը, որ կարող է գոհացնել թէ հաւատացողներին և թէ ազատ մտածողներին. այն է՝

«Ի նկատի ունենալով, որ Եւրոպայի ու Ամերիկայի գրեթէ բոլոր պետութիւնները այն դաւանութիւնն ունեն, թէ իրանց

իշխանութիւնը հիմնում են քրիստոնէական բարոյականութեան վրայ,

«Ենկատի ունենալով, որ այդ բարոյականութիւնը արգելում է ատելութիւնը, բանութիւնը և անարդարութիւնը մարդկանց մէջ և պատուիրում է եղբայրսիրութիւն, համակրութիւն և աէր,

«Եերկայ կօնզրէսը այն կարծիքն է յայտնում, որ տոկուն ջանքեր պէտք է գործազրուեն արմատացնելու այդ ճշմարտութիւնները այդ պետութիւնների կառավարութիւնների և քաղացինների մէջ, որպէս զի բոլորովին համոզուեն, որ պատերազմը և միլիտարիկմը բացարձակապէս հակասում են Քրիստոսի վարդապետութեան էութեան»:

«Կօնզրէսը կոչում է անում բոլոր քրիստոնեաց դաստիարակիչներին՝ օդնելու այդ ջանքերին»:

Այս որոշումը ընդունուած է ձայների բացարձակ առաւելութեամբ։

ՓԲԸՆՈՒՄ Է ՀԱՅՈց հարցը

Նախագահը յայտնում է, որ կօնզրէսի քննութեան առաջարկուած այժմէական հարցերից միայն մինը ունենալով միջազգային բնաւարութիւն, այն է հայոց հարցը, կօնզրէսը ստիպուած է քննել միայն այդ հարցը, թողնելով Տրանսվալի և չինական հարցերը, իբրև ներքին քաղաքականութեան վերաբերեալ հարցեր։ Հայոց հարցի համար Ա Յանձնաժողովը պատրաստել է իր զեկուցումը և որոշման բանաձեռ, տեղեկաբեր կարդուած է Մուսասատանի ներկայացուցիչ Նօվիկով, որ Կը ներկայացնի իր զեկուցումը ու. Զ. Առաքելեանի տեղեկագրի ընթերցումից յետոյ. այդ տեղեկագիրը, որ ունի այս վերնագիրը՝ «La question arménienne au point de vue de la paix universelle» («Հայոց հարցը համաշխարհային խաղաղութեան տեսակէտից»)՝ բաժանուած է կօնզրէսի անդամներին։

Կարդացում է տեղեկագիրը, որ բաղկացած է 64 էջից։

Նօվիկով.—Մեր կոլիէզ Առաքելեանի տեղեկագրից յետոյ, ինձ շատ քիչ բան է մնում տաել. կարդալով այդ տեղեկագիրը գուը զարհուրած մնում էք այն յանշաւոր անտարբերութեան առաջ, որով քրիստոնեայ պետութիւնները վերաբերուեցին Հայաստանում կատարուած գարշելի գաղանութիւններին։ Պէտք է տաեմ սակայն, որ այդ աղէտի պատասխանասութեան մեծ մասը ծանրանում է Անգլիայի վրայ, որովհետեւ նա արդելեց Մուսասատանին զսպել և պատժել սուլթանին իր անվտանհութեամբ և կասկածամտութեամբ. արևելքի քրիստոնեանների ա-

զէտների պատճառը եւրոպական մեծ պետութիւնների միմեաց մէջ ունեցած գժութիւնն է։ Այդ պատճառով յանձնաժողովը մշակել և ուղարկում է կօնքրէսին հետեւալ որոշումը.

«Խաղաղութեան Համաշխարհային Խ կօնգրէսը, գումարուած Գլասկօվում 1901 թ. սեպտեմբեր ամսին, ծանօթանալով Բերնի մնայուն միջազգային բիւրօի տեղեկագրի հետ, ծանօթանալով այն յիշատակագրի հետ, «ր ներկայացրել է հայ հրապարակախօս պ. Հ. Առաքելեան Թիւրքիայի հայերի այժմեան վիճակի մասին և այն նամակի հետ, «ր գրել են Ամերիկայի Միացեալ-Նահանգների Խաղաղութեան ընկերութիւնները».

«Ի նկատի ունենալով, «ր Թիւրքիայի հայ ժողովրդի տխուր վիճակը ամեննեին չէ բարւոքուել, «ր կոտորածները և գաղանութիւնները շարունակւում են Հայաստանում, «ր Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական պետութիւնները «չ մի հաւաքական ջանք չը գործադրեցին՝ զերջ դնելու համար այն անկարգութիւններին, «րոնք գործուում են այդ գժբախտ քրիստոնեայ ազգի գէմ».

ՈՐԵՈՒՄ Է.

«Խաղարկել մի ազերսագիր Բերլինի դաշնագիրը ստորագրող եւրոպական պետութիւններին, հրաւիրելով նրանց գումարել մի պաշտօնական վեհաժողով (conférence), լուծելու համար հայոց հարցը՝ գործադրմամբ բէֆօրմների այն ծրագրի, «ր մշակել են 1895 թ. մայիսին անգլիական, Փըրանսիական և ոռուսաց կառավարութիւնները և հաստատուել նոյն իսկ սուլթանից»:

Նախագահ.—Վիճաբանութիւնը Յանձնաժաղավի առաջարկած բանաձերի մասին բացուած է։ (Մենք առաջ ենք բերում այդ վիճաբանութիւնը քաղաքածօքէն, ինչպէս տպուած է «Glasgow Herald» լրագրի մէջ, սեպտ. 12-ին):

Միստ Ֆօքէֆ Ստիւրզ, միստինք Բիրմինգամից.—Ես մեծ համակրութեամբ եմ վերաբերուում հայերին նրանց կրած աղէտների համար և ինքս երկար ժամանակ ապրած լինելով Թիւրքիայում, իբրև միսիօնէր, վկայում եմ, «ր հայերի աղէտների պատճառը թիւրքական յոտի կասավարութիւնն է. սակայն ես ընդգէմ եմ այդ որոշման, որովհետեւ նա առաջ կը

բերի զինաւորեալ միջամտութիւն։ Մեր կօնդրէսի նպատակն է մնայուն և համաշխարհային խաղաղութիւն։ Հետհաբար նա չը պէտք է կայացնի մի այնպիսի որոշումն, որ կարող է պատերազմ առաջ բերել, որովհետեւ Ասգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը միայն պատերազմի միջոցով կարող են ստիպել թիւրքիային գործադրել բէֆօրմների ծրագիրը։

Վերապատուելի հայր Սպրեգ Սմիթ։—Զայնակցում եմ միստր Ստիւրջի ասածին։ Եթէ մենք կայացնենք այդպիսի սի որոշումն, մեզանից կը պահանջին որոշումն կայացնենք նաև Ռուսաստանի հրէաների մասին, իրլանդացիների, բօէրների և Եւրոպայում յուզուող անտիսեմիտական հարցի մասին։ Այդպիսի մի որոշումն հակառակ կը լինի մեր կօնդրէսի սկզբունքներին։

Պրօֆեսօր Քուփդ, Միւնիսէնից։—Եթէ մենք այդպէս վախենք թէ մեր այս և այն որոշումը կարող է պատերազմ առաջ բերել, այն ժամանակ խաղաղութեան կօնդրէսները այլ ևս ոչ մի հարց չը պէտք է արծարծէին։ Վերջապէս այդ վախը անհիմն է։ Մենք յիշեցնում ենք մեծ պետութիւններին այն պարտաւորութիւնները, որ նրանք հանդիսաւորապէս յանձն են առել և չեմ կարծում, որ այդ պետութիւնների միացեալ կամքի առաջ անմիջապէս չը խոնարհուել թիւրքիան։

Նօվիկօվ։—Մեր առաջարկած որոշումը ոչ մի պատերազմ չէ կարող առաջ բերել բաւական է մեծ պետութիւնների բարոյական ազգեցութիւնը՝ բէֆօրմները գործադրել առաջ։ Համար։

Հ. Առաքելեան։—Ես զարմանում եմ, որ մի այսպիսի առաջարկութիւն կարող է որ և է ընդդիմութեան հանդիսել ներկայ կօնդրէսի մէջ, որի միակ նպատակն է, ինչպէս շատ լաւ ասաց մի անգում Ֆրիդերիկ Պասոսի, նուազեցնել մարդկային տանջանքների գումարը։ Մենք ամենքս, տարակոյս չը կայ, համակրում ենք բոլոր հարստահարուած և ճնշուած ազգերին, բայց դուք, պարոններ, մոռանում եք մի բան։ Հրէաներին Ռուսաստանում և իրլանդացիներին Բրիտանիայում չեն կոտորում—չեն մորթուառում ոչխարների նման, մինչ հայերին թիւրքիայում կոտորում են։ Չը պէտք է մոռանաք, որ Եւրոպան պարտաւորութիւն է յանձն առել հայերի վերաբերմամբ Բերլինի դաշնագրով և դրանով հայոց հարցը գարձել է միջազգային հարց, մինչ հրէաների և իրլանդացիների հարցը ներքին քաղաքականութեան շրջանին են վերաբերում, որի մէջ մենք միջամտել իրաւունք չունենք։

Օրիորդ Կիրակոսեան։ հայումի։—Ես Կ. Պօլսից փախած մի հայ օրիորդ եմ և լաւ ծանօթ եմ թշուառ ազգակիցներիս վիճակին։ Ես ևս կարծում եմ, որ առաջարկած որոշումը նոր աղէտ-

Ների դուսը կը բանայ ազգիս համար. Եւրոպան դարձեալ ոչ մի իրական օգնութիւն չի անի մեզ. աւելի լաւ է բարոյական ոյժ գործ դնել:

Օրիորդ Հելլեն Թօփինօն. — Ես միանգամայն ձանակցում եմ յանձնաժողովի առաջարկած որոշման. պէտք է վերջապէս, վերջ դնել թշուառ հայ ժողովրդի անտանելի տանջանկներին:

Նախագտակը փակելով վիճարանութիւնները, քուէարկութեան է զնում բանաձեն և յանձնաժողովի որոշումը ընդունում է բացարձակ առաւելութեամբ:

ՔԵՆՏՈՒՄ Է ՄԻջազգային լեզուի հաւցը.

Պարիզի կօնգրէսը հրապարակի վրայ է դրել մի միջազգային ընդհանուր լեզու ստեղծելու հարցը: Ը Յանձնուժողովը այն կարծիքի է, աական, որ աւելի յարմար կը լինի ընտրել զանազան լեզուների միջից ամենազիւրին կերպով հասկացուող ոճնր, և ոչ թէ պէտք է վերացնել դոյութիւն ունեցող լեզուները, այլ կազմնել մի պարզ միջազգային լեզու, որ պատկանելիս չը լինի որեէ մի առանձին լեզուի: Օրինակ, չէ որ կայ մի միջազգային լեզու երաժշտութեան և մատեմատիկայի համար: Նոր լեզուն պէտք է գործադրուի առետրական և գիտական յարաբերութիւնների մէջ:

Միստ Բայլս գտնում է, որ այդ առաջարկութիւնը միանդամայն անգործածական է: Մենք գեռ չենք կարողացնել ընդունել տալ չափերի և կշիռների մի միջազգային ընդհանուր ցուցակ, իսկ դուք ուզում էք, որ կօնգրէսը Բարելի մի նոր աշտարակ կառուցանի, խառնակելով լեզուները: միջազգային լեզուն ուտօպիա է: Կօնգրէսի առաջին գործը պէտք է լինի ընդունել տալ իրաւարարութեան, արբիտրաժի սկզբունքը միջազգային վէճերի լուծման համար:

Գաստոն Մօխ յայտնում է այն կարծիքը, որ աւելի լաւ է խօսել մի միջազգային օժանդակ լեզուի մասին և չը գործածել միջազգային լեզու գարձուածքը:

Հետզհետէ խօսում են և ուրիշները, որոնք նոյնպէս անգործնական են գտնում միջազգային լեզուի գաղափարը. ի վերջոյ կօնգրէսը քուէարկում է հետեւեալ որոշումը.

Կօնգրէսը յայտնում է, որ նա յարում է մի միջազգային օժանդակ լեզուի ընդունելութեան ընդհանուր սկզբունքին, կօնգրէսը հրաւիրում է ներկայ պատգամաւորներին գումարուել անյապազ բայ լեզուների և ընտրել երկու պատգամաւոր ամեն մի լեզուի համար»:

Քննում է խաղաղութեան ընկերութիւնների միութեան
հաւցը.

Ֆելիքս Մօջըլէ առաջարկում է, որ անհրաժեշտ է սերտ
միութիւն առաջ բերել երկրագնտի վրայ տարածուած խաղա-
ղութեան բոլոր ընկերութիւնների մէջ՝ թէ հրատարակութիւն-
ների, հանդէսների, բրօչիւրների միջոցով և թէ ստեղծելով մի
յատուկ յանձնաժողով, որ այդ միութեան միջնորդ հանդիսա-
նար, հոլոր խաղաղասիրական ընկերութիւնների համերաշխ և
միաբան գործունէութիւնը հզօր զարկ կը տար խաղաղութեան
գաղափարին:

Կօնգրէսը կայացնում է հետեւեալ որոշումը.

«Կօնգրէսը փափագ է յայտնում, որ մի և նոյն երկրում
գոյութիւն ունեցող խաղաղասիրական ընկերութիւնները պէսք
է աշխատեն համախմբուել ի մի ունենալով գաւառական ճիւ-
ղիր, կամ գոնէ ստեղծել իրանց մէջ զանակցական կապ այն
ձևով, որ կանոնաւորեն պրօպագանդան և զիւրացնեն խաղա-
ղութեան բարեկամների ջանքերը ամեն մի երկրում»:

Ժամը 2-ին նիստը փակւում է: Երեկոյեան, Պիսլի քա-
ղաքի քաղաքագետը հանդիսաւոր ընդունելութիւն է անում
կօնգրէսի անդամներին և այդ քաղաքում կայանում է միտինգ
ի պատիւ կօնգրէսի ան զամների:

V

Սեպտեմբերի 12-ին, նիստը բացւում է սըր Ժօղէոլ Պիզի
նախագահութեամբ: Կօնգրէսի անդամների մէջ նկատում է
իրարանցում, յուզմունք, այդ զիշեր կօնգրէսից եկել է յայսնի
հրապարակախօս միստր Ստեղը, բօէրների դատի անվեհեր
պաշտպանը: Լսելով որ խաղաղութեան կօնգրէսը անյարմար է
համարել զբաղուել Տրանսվալի խնդրով, նա շտապել է գալ
և նորից յարուցանել այդ հարցը:

Քննում է խաղաղութեան կազմակերպութեան հարցը:

Միջազգային իրաւունքի՝ Յ Յանձնաժողովի տեղեկագիր էմիլ
Արնօ բայատրում է, թէ արդէն կազմուել է միջազգային մի
դատարան, այն է Հաադի գերազոյն ատեանը, որ պատրաստ է
գործել, երբ զիմեն իրան: ամենքը յոյս ունէին, որ այդ ա-
տեանը կը կոչուէր խաղաղութիւնը պահպանելու, բայց, զըժ-
բախտաբար, այդ կոչումը չեղաւ: Եւ սակայն, հարկ չը կայ
յուսահատուելու. խաղաղութեան զաղափարը ահազին և արագ

առաջադիմութիւն է գործում, բազմաթիւ նամակներ, ուղղուած Բերլինի խաղաղութեան բիւրօյին, Ֆրանսիայի զանազան բանուորական շրջաններից, յայտնում են, որ այդ շրջանները միաբան են խաղաղութեան ընկերութիւնների հետ և գործում են նոյն ուղղութեամբ—տևանել իրագործուած միջազգային եղբայրակցութեան և զանակցութեան իրէան։ Մենք, խաղաղութեան կօնդրէսներս, չը պէտք է այլ ևս բաւականանք դատապարտելով միայն պատերազմի գաղափարը, երեան հանելով պատերազմի դործած աղէտները, այդ միայն բացասական գործունէութիւն է։ Այժմ պէտք է սկսել զրական գործունէութիւն։ պէտք է այսուհետեւ աշխատել ոչ թէ միայն պատերազմը վերացնելու, այլ և խաղաղութեան գործը կազմակերպելու։ Պնդել թէ պէտք է զինաթափութիւնը ներկայ պայմաններում անհնուրին է։ Պէտք է վերացնել առաջ պատերազմի պատճառները, պէտք է ապացուցանել, որ միջազգային վէճերը կարող են լուծուել յաջող կերպով՝ առանց պատերազմի, իրաւագիտական եղանակով, ինչպէս լուծում են անհատական վէճերը։ պէտք է ուրեմն մի օրէնսդրութիւն, որ գործադրելի լինի ոչ թէ մի ազգի, այլ բոլոր ազգերի համար և որին հնազանդեն բոլոր ժողովուրդները, զա կը լինի միջազգային և բնական օրէնք։ այն ազգը, որ չի հնազանդուի այդ բնական օրէնքին, կը համարուի բանազրուած քաղաքակիրթ աշխարհից։ կը համարուի բարբարու։ Ուրեմն անհրաժեշտ է մեզ ամեն ջանք գործ դնել ստեղծել միջազգային օրէնսդրութիւն, հիմն ունենալով այն էտական կէտերը, որ արդէն մշակել են նախորդ կօնդրէսները, այն է։

1) Ոչ մի անհաւ իրաւունք չունի ինքն իր ձեռքով արդարութիւն անել։

2) Այն օրէնքը, որ գործադրելի և անհատների վերաբերմամբ, փոխադարձ վեների ժամանակ, պէտք է գործադրուի եւ ազգերի վերաբերմամբ։ հետեւաբար, ոչ մի ազգ կամ պետութիւն իրաւունք չունի պատերազմ երաւակել մի այլ ազգի դէմ։

3) Բոլոր վեները ազգերի մէջ պէտք է լուծուեն օրինական նանապարհով, միջազգային դատարաններով կամ արքիսրաժուվ։

4) Ամեն մի ազգի ինքնավարութիւնը (աւտօնօմիա) անբնարարելի է։

5) Նուանման իրաւունք գոյութիւն չունի։

6) Ազգերը ունեն անկապտելի իրաւունք ազատաբար տնտել իրանց մինակը։

Այդ հիման վրայ Յ Յանձնաժողովը առաջարկում է կօնգրէսի վճարին հետևեալ եղբակացութիւնները.

I. Խաղաղութեան Խ Համաշխարհային կօնգրէսը եռան դուն կերպով բողոքում է այն ամրաստանութեան դէմ, թէ խաղաղութեան ընկերութիւնների անդամները հակա-հայրենասիրական են։ Խաղաղամսէրները աշխատելով ազատուի իրանց սեպհական երկիրը պատկազմից, դրանով ամենից լու աշխատում են նրա ապահովութեան։

Կօնգրէսը լայտարարում է, որ նա նկատում է զինաթափութիւնը իրեւ խաղաղութեան կազմովերպութեան հետեանք և ոչ իրեւ խաղաղութեան հասնելու միջոց։ Նու համոզուած է, որ երբ ազգերը գործադրեն արդարադատութեան այնպիսի մի միջոց, որ խաղաղութեամբ լուծէ միջազգային վէճերը, այն ժամանակ զինաթափութիւնը ինքնի ըստ ինքեան կ'առաջանար։

Կօնգրէսը ընդունում է, որ Հաազայի ատեանի գոյութիւնը, մանաւանդ նրա գործադրութիւնը, ինչպէս և արբիտրաժի դաշնագրերի կնքումը՝ միջազգային վէճերի խաղաղ լուծման համար, կարող են հասցնել այդ հետեանքին։

II. Կօնգրէսը մեծ հաճոցով հաստատում է Հաազայի արքիտրամի մայուն ատեանի կազմութիւնը, որ մի կարևոր էտապ է խաղաղամսիրական շարժման ասպարէցում։

Կօնգրէսը շնորհաւորում է կառավարութիւններին այդ ատեանի հաստատութեան համար, որ ոչնչացնում է վերջին առարկութիւնները ինպատ պատերազմի անհրաժեշտութեան։ Նու հաստատ չոյս ունի, որ ապագայում ամեն մի միջազգային վէճ, — որ չէ կարող կանոնաւորուել կամ դիմումատիրական եղանակով կամ այլ խաղաղամսիրական միջոցներով — կ'ենթարկուի Հասգայի ատեանի իրաւարարութեան։

III. Կօնգրէսը յանձնարարում է խաղաղութեան ընկերութիւններին հետամուտ լինել, որ իրանց երկիրները դաշնազրեր կ'նքեն միմեանց մէջ, որով պարտաւորուեն ենթարկել Հասգայի ատեանի արքիտրամին ամեն մի վէճ, որ ըս կարողանան բարեկամարար լուծել։

Կօնգրէսը յուս ունի, որ այդպիսի գաշնազրեր կը կ'նքուին անդադար հետեան պետութիւնների մէջ, այն է՝

1) Ամերիկեան 19 հանրապետութիւնների մէջ,

2) Ֆրանսիայի և Մեծն-Բրիտանիայի մէջ,

3) Մեծն-Բրիտանիայի և Միացեալ-Նահանգների մէջ,

4) Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ։

Խօսքը տրւում է միստր Ստէդին, «Review of Reviews» հանդիսի նշանաւոր խմբագրին։

Խնչպէս անդամներից մինը նկատեց, Ստէդ ոռւմբի պէս պայթեց կօնգրէսի գլխին. «Եատ հեշտ է, սկսեց նա, առնել ձին դէպի ջուրը և մի մարդ կարող է առաջնորդել նրան, բայց հազար մարդ չեն կարող ստիպել նրան խմել։ Այդպէս և Հասգի կօնֆերենցիան առաջարկեց ազգերը դէպի աւազանը, բայց

Նա չը կարողացաւ ստիպել խմել. նա չը կարողացաւ ստիպել կառավարութիւններին կատարել որոշումները. մնում է ուրինին, որ ժողովրդական զգացման պայթիւնը ստիպէ նրանց. արդ, կօրդրէսը ևս, իբրև այդ զգացմանը և համաշխարհային խղճմատնքի արտայայտիչ, պէտք է պայթէ: Եթէ դուք մկնի շափ քաջութիւն ունինաք, պէտք է պայթէք. ինչ, դուք, որ երկրի աղն էք, չէք պայթում, զայրոյթի, անէծքի աղսղակներ չէք արձակում, ինչպէս կամենում էք ուրինին, որ ամբոխը փողոցում այդ աղսղակն արձակէ: Damn, damn, damn—անէծք, անէծք, անէծք, արտասանեցէք, երկնքի, երկրի շանթերը կանչեցէք անդլիական ազգի զլիսին, որ գաւաճանելով իր պատմութեան, իր աւանդութիւններին, թոյլ է տալիս իր կառավարիչներին դործել այսպիսի սոսկալի անարդարութիւն, ինչպէս ներկայ եղբայրասպան պատերազմը»:

Կրակոտ առենաբանը յարձակուում է ապա հոգեորականութեան վրայ. ապացուցանելով որ քրիստոնէութեան ողին միանգամայն հակառակ է պատերազմի գաղափարին, նա ասում է, որ բոլոր եկեղեցիները պէտք է փակեն իրանց գոները և քահանաները պէտք է յայտարարեն, որ ոչ մի ազօթք, քարող չեն արտասանի, ոչ մի կրօնական ծէս չեն կատարի, մինչև որ կառավարութիւնը չը գաղարեցնի պատերազմը Միթէ կարելի է գնալ ազօթել, հոգեհանգիստներ կատարել, երբ ձեռքերդ թաթախուած է եղբօրդ արդինով: Անդլիան, չընդունելով բոէրների առաջարկը՝ գաղարեցնել պատերազմը և արքիտրածի յանձնել վէճը, պէտք է համարուի քաղաքակիրթ ազգերի շարքից գուրս, բանադրուած մարդկութիւնից:

Իր ձառը Ստէգ վերջացնում է արաջարկելով՝ բանադրել անգլիական ազգը եւ հրատարակել նրան խղաքակիրթ մարդկութիւնից դուրս:

Այսպիսի մի առաջարկութիւն, տարակոյս չը կայ, մեծ յուղմունք և ընդդիմազրութիւն պէտք է յարուցանէր:

Դօկտօր Դարբի.—Մեր բարեկամ միսար Ստէգը պայթեց, բայց ես անկեղծ կերպով աղերսում եմ կօնզրէսին չը պայթել, այլ պաղարինուութեամբ և արժանապատութեամբ զատել, գործել: Եթէ մենք կայացնենք այդպիսի մի որոշումն, մենք ծաղրի առարկայ կը գառնանք ամբողջ աշխարհի առաջ. բանադրուած մարդկութիւնից. միթէ այդտեղ առողջ միտք կայ:

Պրօֆեսօր Փուխիդ, Միւնխենից.—Մենք պէտք է չնորհակալ լինենք միստր Ստէգից, որ առիթ տուեց մեզ խօսել Տրանսվալի պատերազմի մասին: Անդլիական մամուլը կարծուած է, որ հասարակաց կարծիքը Գերմանիայում թշնամաբար է տրամա-

գրուած դէպի Անդլիան և անգլիատեցութիւն է տիրում Գերմանիայում. այդ սխալ է. գերմանական ազգը հակառակ է այժմեան պատերազմին, իբրև անարդար, բայց նա երբեք չէ կարող մոռանալ, որ Անգլիան եղել է միշտ քաղաքական և ժողովրդական ազատութեան օջախ. նա ապաստարան է տուել աշխարհի բոլոր քաղաքական և կրօնական հալածեալներին. նա տուել է այնպիսի համաշխարհային հանձարներ, ինչպէս՝ Շեքսպիր, Բայրոն, Դարվին. նրա գրականութիւնը ահազին ազգեցութիւն է գործել գերմանական գրականութեան վրայ: Բանադրել այդպիսի մի ազգ նրա համար, որ նրա մի մասը կամ նրա կառավարութիւնը վարակուել է ջինզօական դադարուպ, այդ անկարելի է:

Հետզհետէ խօսում են ուրիշ ճառախօններ, վիճարանութիւնը տեսում է ամբողջ օր և միայն երեկոյեան ժամը 5-ին կօնգրէսը մի ելք է գանում դժուար դրութիւնից դուրս գալու համար, կայացնելով այսպիսի մի ընդհանուր վճիռ. «Կօնգրէսը յայտարարում է, թէ այն ազգը, որ կը մերժէ իր միջազգային վէճները լուծել արբիրաժիք միջոցով և կը դիմէ զէնքին, արժանի չէ նկատուելու իբրև քաղաքակիրթ ազգ»:

Սեպտեմբերի 13-ի նիստը*

Այդ վերջին նիստում շօշափուած և վճռուած հարցերի մէջ նշանաւորներն են. 1) Միախօնարների գործողութիւնները և նրանցից ծագող վասնգները, 2) Աշքրիստոնեայ երկրների մէջ քրիստոնեայ հպատակներին չնորհած դիպլոմատիական պաշտպանութիւնը, 3) Միլիտարիզմը և զինուորագրութիւնը, ևսէ իբրև եղրակացութիւն՝ կօնգրէսի աշխատութեան՝ եղաւ Appel aux nations—«Կոչ ազգերին» կոչուած հրաւէրը:

Ես առաջ կը բերեմ միայն վերոյիշեալ երեք հարցերի մասին կայացրած վճիռները.

I. Կօնգրէսը ի նկատի ունենալով որ ամեն մի ազգի պարտաւորութիւնն է պաշտպանել օտար երկրների քաղաքացիներին, որոնք ապրում են իր սահմաններում և իր սեփական քաղաքացիներին, որոնք ապրում են օտար երկրներում, որչափ ժամանակ որ սրանք յարգում են այն երկրների օրէնքները, ուր լրանք հաստատուած են. ի նկատի ունենալով նոյնպէս, որ խորին պանչացումն պէտք է տածել զէպի այն անհատները, որոնք զոհում են իրանց բարեկեցութիւնը և երբեմն իրանց

կեանքը իրանց հաւատի տարածման համար և որ ամեն մի անհատ իրաւունք և պարտաւորութիւն ունի իր համոզումները տարածել իր նմանների մէջ,

Կօնգրէսը կարծում է

որ պէտք է խստութեամբ պատուիրել միսիօնարներին հեռու պահել իրանց ամեն մի գործողութիւնից, որ կարող է, նոյն իսկ անուղղակի, առաջնորդել իրանց երկիրները գէպի պատերազմ. որ նրանք չը պէտք է երբէք կոչում անեն իրանց կառավարութիւններին՝ վրէժինդիր լինելու իրանց դէմ գործած յանցանքների համար, և որ նրանք պէտք է հասկանան թէ իրանք պարտաւոր են յենուել լոկ իրանց անշահասէր ջանքերի, բարոյական հեղինակութեան գօրութեան և ոչ զէնքի ոյժի վրայ:

II. Ի նկատի ունենալով, որ Ծայրադրուն Արևելքում ոչքրիստոնեայ պետութիւնների մի քանի հպատակներ յարելով որեէ քրիստոնէական դաւանութեան, դրանով իրաւունք են համարում իրանց պահանջելու քրիստոնեայ քաղաքակրթուած պետութիւնների որեէ մէկի դիմումատիական պաշտպանութիւնը, որպէս զի դրանով խոյս տան իրանց կառավարութեան իշխանութիւնից.

Ի նկատի ունենալով, որ այդ նորադաւանների պաշտպանութիւնը անհամար նեղութիւնների պատճառ է դառնում քրիստոնեայ ազգերի համար և առաջ է բերում կոիւններ այդ ազգերի և ոչքրիստոնեայ պետութիւնների մէջ, հետեւրար մի մնայուն վտանգ է ստեղծում խաղաղութեան համար,

Կօնգրէսը կարծում է

որ քրիստոնէական քաղաքակրթութեան ազգերը պէտք է հրաժարուեն չնորհել դիմումատիական պաշտպանութիւն ոչքրիստոնեայ պետութիւնների այն հպատակներին, որոնք գըրկում են քրիստոնէական որեէ դաւանութիւն: (Այս որոշումը վերաբերում է Զինաստանի դէպքերին):

III. Կօնգրէսը ընդունում է, որ զինուորագրութեան սահմանափակումը կամ զինուորական պարտաւորիչ ծառայութեան ջնջումն կարող է մեծ զարկ տալ խաղաղասիրական շարժման և թուլացնել միլիտարիզմի ազգեցութիւնը: Նա յոյս ունի, որ անզլիական ազգը, որին այսօր սպանում է պարտաւորական

զինուորագրութիւնը, կը մերժի զօրանոցների ստրկութիւնը և դրանով կը նպաստի զինաղադարութեան խնդրին, որ արդէն քննուել է Հայագի կօնֆերամնառումն Կօնգրէսը միևնոյն ժամանակ իր եռանդուն հիացումն է արտայայտում կոմս Լ. Տօլստօյին խաղաղասիրական այն գաղափարների համար, որ նա տարածում է իր գրուածքներով:

Նոյն օրը, Կօնգրէսի փակմանից յետոյ, տեղի ունեցաւ բանկէտ և ապա Կօնգրէսիստները կատարեցին նաւով մի զբոսանք՝ գիտելու Սկզբանայի ծովը, լճերն ու լեռները:

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՆԵՐ

ՍՏԵՓԱՆ ՌՍԿԱՆ

(Շարունակութիւն)

Զրկուելով սեփական լրագրից, Ստեփան Ռսկանը իսպառ չը թողեց հրապարակախօսական ասպարէզը։ Նրա առաջ փակուել էին հայ հրապարակախօսութիւնները, բայց կար ֆրանսիական լրագրութիւնը, որ վաղուց սիրով ընդունել էր նրան իր գործիչների շարքում։ Այդտեղ նրան հասկանում էին, այդտեղ նա համակրութիւն և աջակցութիւն էր գտնում։ Թանկագին էին հայ գրողի յատակութիւնները—ազատասիրութիւն և անխախտ համոդմունք։ Այդ յատկութիւնները հայ էֆէնդիների և կղերականների համար աններելի յանցունքներ էին, մինչդեռ ֆրանսիական գրողների շրջանում հէնց դրանց պատճառով էր որ այդ հալածուած հայը եղբայրական վերաբերմունք էր գտնում։ Եւ եթէ չը լինէին այդ օտար բարեկամները, Ռսկանը, ինչպէս ինքն է ասում, մատնուած պիտի լինէր վերջին ծայր թշուառութեան...

Այսուամենայնիւ, նա չէր մոռանում որ մի խեղճ ու ստրուկ ազգի զաւակ է։ Նրա երիտասարդ, զգայուն սրտում կար հայրենիքի գաղափար, այդ հայրենիքի ցաւերն ու գժբախտութիւնները եւրոպական ազատ մոքով բուժելու տենչանք։ Այն ժամանակ, երբ զադարեց «Արեելքը», Ֆրանսիան և Անգլիան զրազուած էին Ղրիմի ահաւոր պատերազմով։ Յայտնի է որ այդ պատերազմը արեելեան քրիստոնեանների պատճառով ծագեց, Ռուսաստանը պահանջում էր որ իր հովանաւորութեան տակ գրուեն յունադաւան քրիստոնեանները, իսկ Թիւրքիայում շահեր ունեցող պետութիւնները, վախենալով Ռուսաստանի ուժեղանալուց, աշխատում էին պաշտպանել Թիւրքիան և նրա մէջ ապրող քրիստոնեանների հարցը ընդհանուր եւրոպական հարց դարձնել։

Թիւրքական լուծի տակ հեծող քրիստոնեաների այդ դատի ժամանակ Ֆրանսիան, իբրև հակառուասկան քաղաքականութեան գլխաւոր զեկավար, յիշեց և հայերին: Էրզրումի ֆրանսիական հիւպատոսը, որ պատերազմի պատճառով Պարիզ էր գնացել, յանձնարարութիւն ստացաւ մի տեղեկագիր պատրաստել թիւրքահայերի գրութեան մասին: Հիւպատոսը դիմոց Ստեփան Ռոկանին, լնողրելով նրա աջակցութիւնը: Պարիզի հայերից միայն Ռոկանն էր կարող կատարել այսպիսի մի գործ: Նըշանաւոր հանգամանք է, որ թիւրքահայերի աղատութեան հարցը հայ առաջադէմ, աղատամիտ հրապարակախօսութեան հիմնական դաւանանքներից մէկն է եղել. պահպանողականութիւնը միշտ գէմ է եղել այդ գաղափարին, միշտ բաւական այն գրութեամբ, որի մէջ ապրում էին թիւրքահայերը: Ստեփան Ռոկանը, իբրև առաջադէմ հրապարակախօսութեան իսկականն, ոգեսրուած նախահայր, եռանգով կպչում է իրան առաջարկած գործին: Մի ամբողջ ամիս, երեսի վրայ թողնելով իր անձնական գործիքը, զբաղւում է հիւպատոսի և նրա քարտուղարի հետ, վերջացնում է եռեղեկազիրը: Բայց վրանից, նա կազմում է և մի յիշատակազիր գարձեալ նոյն հարցի մասին և ներկայացնում է Փրանսիական մի երենլի պաշտօնեայի, որից չնորակալութիւն է ստանում: Այս բոլորի մասին Ստեփան Ռոկանը խօսում է հարեւանցի անկնարկներով, և մնաք, գժրախտաբար բայց նրա խօսքերից, չունենք ուրիշ տեղեկութիւններ, որոնք յանկաչի մանրամասնութիւններ տային այս հետաքրքրական գործերի մասին:

Լուրջ, բազմակողմանի կրթուած, Փրանսիական հասարակութեան մէջ գիրք բռնած Ռոկանին, ինչպէս ասացինք, օտարները աւելի լաւ էին գնահատում: Դրա մի ապացոյցն էլ այն է, որ Յունաստանի արտաքին գործերի մինիստրը նրան է յանձնում իր երկու ազգականներին՝ Փրանսիական լեզուն և զրականութիւնը նրանց ուսուցանելու համար: Այս գէպքը Ստեփան Ռոկանը այսպիսի գեղեցիկ օրինակով է ձևակերպում: «Պատուի թոռ մը կը զիջանի Մեսրոպի թոռէն լուսաւորութիւն և փելիսովայութիւն ընդունելու: Եւ միթէ միշտ չէ գա. Ճշմարիտ լուսաւորութիւնը այսպիսի հրաշքներ գործել գիտէ...»

Մեսրոպի այդ թոռը այնքան քիչ հայրենասէր չէր, որ հրաժարուէր Մեսրոպի տառերից: «Երենելքի» դադարումից անցել էր երեք տարի: Այժմ այլ ևս մենակ չէր հայ աղատամիտ հրապարակախօսութիւնը: Նա արդէն երկու օրդան էր հաստատել երկու, միմեանցից հեռու տեղերում: Կ. Պոլսի մէջ 1856-ից սկսել էր հրատարակուել Սըվաճեանի «Մեղուն», իսկ 1858-ին

Ստեփանոս Նաղարեանցը, կուրծքը ազնիւ խորհրդներով լի, սկսեց Մոսկուայում «Հիւսիսափայլի» հրատարակութիւնը: Երկումն էլ «Արևելքի» արժանաւոր յաջորդներ, երկումն էլ իրականութեան խիստ քննազատներ, առաջադիմութեան ճանապարհը մտրակով և հնութիւնները քանդող քարոզով հարթողներ: 1859-ին Ստեփան Ռուկանը նորից ձեռք առաւ հայ հրապարակախօսութիւնը: Եւ ազատ ու ազնիւ խօսքը հնչում էր երեք տեղից:

Այս անգամ Ռուկանի թերթը այլ ևս «Արևելք» չէ, այլ գրահակառակը—«Արևմուտք»: Այս անգամ պայմաններն էլ ուրիշ են: Նոյն վաճառական հայերը, որոնք հիմնել էին «Արևելքը», այժմ էլ «Արևմուտքի» գործը ձեռք առան, աւելացնելով իրանց թուի վրայ ուրիշ եօթը մասնակցողներ էլ: Այսպիսով կազմուեց 11 հոգուց բաղկացած մի ընկերակցութիւն: Ստեփան Ռուկանը հրաւիրուեց մի տարի ժամանակով լոկ իրբե շարագրող, այսինքըն խմբագիր: Ընկերակցութեան դրած պալմաններից առաջինն էր: «Կրօնի» և անձնական խնդիրներէ զգուշանալու: Դա մի հարկ էր, որ թերթի հիմնադիրները հատուցանում էին տիրող ազգեցիկ դասակարգին: Եւ Ռուկանը յանձն է առնում այդ սահմանափակումով տանել զործը: 1859-ի յունուարի 1-ից սկսում է «Արևմուտք»: դա 15 օրը մի անգամ լոյս տեսնող մի թերթ է, բաղկացած 8 մեծագիր երեսներից:

Նոր թերթի առաջին համարում Ռուկանը յայտարարուեմ է որ ինքը չը պիտի աչքից թողնէ հայ ժողովրդի թշուառութիւնը: Դա ներքին թշնամին է, որ երբեմն յամուն կրօնքի, զոր ալ մէկը չի հալածեր, և երբեմն անհիմն խնդրի մը համար, զոր տղայ մը կը լուծէ, բոլոր ազգը անխնայ կը վրդովէ: Հետեանքը միանգամայն ողբալի է: «Եւ երբ այսպիսի վրդովէ ետև աւերակ սրտերէ և յուսարեկ միաբերէ ուրիշ բան չտեսնուիր հոն, ինչպէս կարելի է որ զրական սէրը ածի կամ զոնէ հաստատ պահուի, հայ ոգին ծաղկի և նորէն բեղմնաւորի, եթէ երբէք պիտի բեղմնաւորի մարդկութեան ծառին այս հինորեայ ոստը: Օտարազգիներ, որոնք այս տեսակ ալեկոծումի ենթակայ չեն, խստիւ կը դատեն զմենդ, բայց մենք չենք կրնար սխալ մեկնութիւն տալ յայտնի աղէտքի մը, վասն զի յիշեալ թշնամին կը ճանճանք ի վաղուատ անտի: Հայ պատմութեան ամեն էջերու վրայ իր արիւալի շաւիղը կը նշմարուի և քիչ ազգային կայ, որ իր մահարոյր չունչէն աղատ մնայ»:

Ի՞նչ պէտք է անել: Պէտք է կառւել այդ թշնամու դէմ, որ նաև մարդկային ազգի և լուսաւորութեան թշնամին է: «Տաժանելի պաշտօն մ'է այս, գիտենք, այլ գիտենք նաև որ

մեր պարտաւորութիւնն է, և պարտաւորութիւնն վեհ բան չկայ աշխարհի վրայ, եթէ անշահասէր և արի իերպով կատարուի այն»:

Բաւական է յիշել կ. Պօլսում և Թիւրքիայի այլ քաղաքներում այդ ժամանակները յուղուած կրօնական վէճերը և եղբայրասպան հակառակութիւնները, որպէս զի հասկանալի լինեն մեր ազնիւ հրապարակախօսի այս խօսքերը, որպէս զի իրօք պարզ լինի, թէ որքան ահոելի մի թշնամու դէմ էր նորից պատերազմ հրատարակում Ստեփան Ոսկանը:

«Միտք և ազատութիւն, ուրկէ միայն կը բդիսեն Եւրոպայի ամեն տեսակ փառքը և հարստութիւնը, — շարունակում է նա: «Արհամարհանքը ուրիշ ժամանակի պահելու է, վասն զի ուր միտքը կը թունաւորուի և իր ազատութիւնը անագործն սիրտով կը զոհուի, հոն ազգ մը չկրնար լուսաւորուիլ և եթէ լուսաւորուած է, կը խաւարի: Այս է մեր ներքին համոզումը. անով ջանք ըրինք մեր թշուառ ազգայիններու զդուշութիւն տալ և որքան կարելի է մտական խստորումնին արգելել: Անով հիմա նորէն կերեինք և կը համարձակինք փոքր հրատարակումի մը ձեռք զարնել:

Ի՞նչ էր սպասում այսպիսի ծրագրով հրապարակ իջնողին: 0՝, Ոսկանը շատ լաւ գիտէր այդ. նա արդէն փորձուած էր Նախատինք, թշնամութիւն, ստոր արարքներ չը պիտի պակասեն: Գիտէ այդ բոլորը առաջին հայ հրապարակախօսը և մի պահնչելի պատմուածքով պարզում է թէ ինչ պիտի լինի ինքը, խաւարի և տղիսութեան հարուածներին ենթարկուող զրոյը, և ինչպէս պիտի տանէ իր գործը: Զենք կարող չը բերել այստեղ այդ պատմուածքը, որ շատ լաւ բնորոշում է Ոսկանի պէս գործողներին».

Կըսուի թէ Նէնկթիմուր քանի մը անգամ զօրաւոր թշնամիի մը հետ զարնուելէ ետքը, կը յաղթուի: Մէկէն անասելի վհասութիւն մը կուգոյ իր վրայ. պատերազմի դաշտը կը թողու և իր տաղաւարին ներքն քաշուած կլսկոի տրտում սիրտով խորհիլ մարդու նախատազրին վրայ: Եր միտքը այս տեսիլով յուղուելու ատեն, մրջին մը կը տեսնէ, որ ոսկեթել տաղաւարին վրայէն կը քալէր դէպի վեր: Ենքը կերկնցնէ և վար կը հրէ զան Մրջինը կը զլորի, վայրկեան մը կը շփոթի, բայց շուտով իր առջի շաւիղը գտնելով կը շարունակէ իր քայլը: Նէնկթիմուր երկու երեք անգամ վար կը նետէ զան, այլ մրջինը վեր ենելէ չդաղրիր: Հետաքըրքութիւն կուգայ սէզ աշխարհակալին վրայ և կուղէ անոր լամառութիւնը փորձել: Ութսուն անգամ թաւալգլոր կը նետէ զանիկա և ութսուներորդին առջի պէս եռանդուն կը գտնէ տկար կենդանին: Ալ չուզէր շարունակել փորձը, կը զգայ որ իր թեր յոդներ է. սիրտը կը շարժի, միտքը կը յափշտակուի և հանդարս կը թողու զանիկա: Մրջինը նորէն վեր կելնէ և յաղթական քայլով աշխարհակալին առջեւն կուզզի դէպի իր նը-

պատակը: «Տկալին յամառութիւնը տուաւ յաղթութիւն», կըսէ և էնկթիմուր իւրովի և ոտքի կելնէ... Բանակը շուտով կը յարդարոփ, թշնամին կը յաղթուի, բոլոր Ասիս կը հնազանդի և էնկթիմուր աշխարհակալի պսակը կառնու ամենէն տկար կենդանիին տուած լոին խրատը ընդունելով:

Մըջիւնին այս յամառութիւնը ամեն տկարներու գօրութիւնն է և միշտ անով աշխատեցանք հայրենիքի և միտքի ազատութեան ծառայել:

«Արևմուտքը», Ստեփան Ռոկանի ասելով, լրադիր չէր, այլ գրական համդէս: Բայց այդ փոքրիկ թերթի մէջ մենք տեսնում ենք թէ գրական հանդէսի և թէ լրագրի կերպարանք: Գրական բաժինը համեմատաբար թոյլ է, բազկացած, մեծ մասամբ, թարգմանութիւններից. թարգմանում են գեղարուեստական երկեր (օրինակ, աբբա Պրէվօի յայտնի «Մանօն Լէսքօն», Ֆլորիանի «Երկու տումսակ» կատակերգութիւնը):

Բայց «Արևմուտքի» գլխաւոր նիւթը, որ այժմ էլ կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ, ինքնուրոյն էր և, պէտք է հնաթաղել, ամբողջովին Ստեփան Ռոկանի գրչի տակից գուրս եկած: Հրապարակախօսութիւնը ամենամեծ տեղն է զրաւում. Խմբագիրը մեծ ուշադրութեամբ հետեւում է հայրենիքում տեղի ունեցող դէպերին, հազորդում է լուրեր, քննադատում է իրողութիւնները և այդ քննադատութեան մէջ դուք ահսնում եք կրակ, ազնիւ կիրք, լայն ու գեղեցիկ հորիզոններ: «Արևմուտքի» ճակատին գրուած էր՝ «Արձադանդ Եւրոպայի լուսաւորութեան»: Եւ դա միանդամայն ճիշտ ու իրաւացի մի վերնագիր էր: Ստեփան Ռոկանը հագով և մտքով եւրոպացած, մի և նոյն ժամանակ ջերմ հայրենասէր հայ էր:

Այդ գաղափարական, բիւրեղեայ հայրենասիրութիւնը նրա վրայ պարտք էր դնում լուսաւորել իր յետադէմ, դժբախտ հայրենակիցների միտքը: Եւ համարձակ խօսքը, որ անկեղծաբար մերկայնում էր ինչ որ վաս է ու խաւարային, յենուած էր եւրոպական ազատ, առաջադէմ գիտութեան վրայ: Դա մի «սըրբութիւն սրբոց» էր Ստեփան Ռոկանի համար, գերազոյն մի ճշմարտութիւն, որով պիտի կառավարուէր ամբողջ աշխարհը, եթէ կամնում է գտնել իր երջանկութեան ճանապարհը: Եւ հայը բացառութիւն կազմել չէր կարող, նա էլ պիտի օր առաջ իւրացնէր այդ գիտութեան գաղափարները, թէ չէ պիտի մնար թշուառ, ստրուկ, ծածկուած հնութեան վէրքերով: Իսկական, աշխարհաշէն հայրենասիրութիւնը սա էր և Ռոկանը այս հայրենասիրութեամբ էր ոգևորուած:

Նա իր մտքի և հոգու ամբողջ կարողութեամբ զինուեց այն ժամանակուաց հայկական կեանքի ամենահրէշտակուոր երեսոյթի դէմ — կրօնական խարութիւնների, ֆանատիկոսութեան դէմ: Նա քա-

րոզում է «Թոյլտութիւն», այսինքն կրօնական համբերոզութիւն և իր քարոզը հաստատելու համար դիմում է անգլիացի փիլիսոփիաց Լոկիլին, յարձակում է «մոլի նոանդի», այսինքն ֆանատիկոսութեան վրայ, բայցարում է խղճի, ներքին համոզունքի ազատութիւնը:

Մենք տեսանք, որ Ստեփան Ոսկանը ծայրայել վարդապետութիւնների կողմանակից չէր. նա անհաւատութիւնն չէր քարոզում, քրիստոնէութիւնը չէր ժիտում, այլ ուզում էր որ նա իր լայն, մարդասէր և առաջադէմ գաղափարներով փայլէ: Կրօնը նա համարում է մարդու խղճմտանքի, ներքին համոզմունքի բան. նա մարդու վեհ սեփականութիւններից մէկն է: Եւ երբ այդ վեհութիւնը լո՞ն է բերում մանր մունք հաշիւնների, երբ դա սկսում է բռնանալ ուրիշի համոզմունքների վրայ, հանրային թշուառութիւնների աղբիւր գառնալ, այն ժամանակ Ոսկանը զինուում է շանթերով և դուրս է զալիս՝ այդ աղճատումը, այդ բանութիւնը հարուածելու համար: Կարելի՞ է ասել թէ նա քրիստոնեայ չէ: Ճշմարիտ, իդէալական քրիստոնեան նա է, ով այդ կրօնի բուն ոգին է բարձրացնում: Խւրաքանչիւր անհատ ազատ է հաւատալու. և պաշտելու իր Աստուծուն այնպէս, ինչպէս ինքն է հասկանում: Ահա հիմնաքարոզ: Եւ Ստեփան Ոսկանը ներկայացնում է քրիստոնէական այդ ոգին «Մոլի Եռանդ» անունով մի զեղեցիկ յօպաւածի մէջ, որ պիտի կարդացածի միշտ, քանի որ գոյութիւն ունի այդ մոլի նուանդը, այդ ֆանատիկոսութիւնը: Ահա ինչ է ասուած այդ յօգուածի մէջ.

Մարդ, իր տղիառութիւնը և մանաւանդ իր տկարութիւնը տեսնելով, միշտ երեակայել է մի արարիչ, մի ամենակարոզ իշխանութիւն, որի արարածն է ինքն էլ: Մարդը ոչ միայն երեւակայել է, այլ և սկզբից ի վեր աշխատել է իր պարտքը կատարել, մի արարածի պարտքը, այն է իր տկարութիւնը խոստովանել և մի աստուած պաշտել: Ամեն մարդու համար աստուած պաշտելը ուրիշ բան չէ, եթէ ոչ նրա հրամանին հնազանդուելը,—այսպէս են ասում կրօնների հիմնադիրները: Աստուծուն հրամանը կամ պատուիրանքը երկնքի օրէնք է անուանում: Երկնային օրէնքը, երբ մարդկանց մի բազմութիւն է միացնում և կապում իրար հետ, անուանում է կրօն: Հաւատը այն ներքին համոզումն է, որ այս կրօնի պատուիրանները ճշմարիտ և անբիծ դաւանում է և հաւատում: Այս ներքին համոզումը, երբ դուրս է յայտնուում, կոչում է արարողութիւն կամ արտաքին պաշտօն և եկեղեցիները հաստատուած են այդ արարողութիւնները կատարելու համար:

Մինչի այստեղ դատապարտելի մի բան չէ տեսնուում և

մարդու ազատութիւնն ու մարդկային իրաւունքը բռնաբարութիւն չեն կրում. ընդհակառակն, այնտեղ հոգեոր առաքինութիւնների մի ազբիւր կայ, որ ոգի է տալիս ազատութեան: Մարդու սիրտը այնպէս է կազմուել որ չէ կարող համոզումը միայն իր համար պահել, նրան ուրիշներին էլ հազորդելու պէտք ունի, և ահա այստեղ էլ սկսում է գժուարութիւնը: Որովհետև բազմութիւնը համարեա միշտ անդէտ է, սրտով միայն հաւատում է և շատ քիչ անգամ է ուղիղ դատում: Նրա միտքը չունի այն զօրութիւնը, որ ներքին համոզմունքը սանձէ, երբ այդ համոզմունքը գրգուում է ուրիշների համոզմունքի գէմ: Հաւատի ազնիւ եռանդը լինում է ջերմ եռանդ և սա մի քիչ էլ բորբոքուելով, արտազրում է մոլի եռանդը, որ մի տեսակ խենթութիւն է: Այն ժամանակ տարբեր համոզմունքի տէրերը թշնամի են երեսում մեղ, օտարի կրօնը ստութեան չէնք ենք քարոզում, և սկսում է արհամարհանքը: Շատ չը գնացած՝ առելութիւնն է վրայ գալիս, թշնամութիւնն է բորբոքւում և վերջապէս հալածանք սրով և ջահով երեան է գալիս երկրի վըրայ: Մարդ այն աստիճան մոլեգնում է, նրա կոյր եռանդը այնքան է գրգուում, որ իր ներքին համոզմունքից դուրս ոչ մի ճշմարտութիւն չէ տեսնում և ուզում է որ ամեն մարդ իր նըման համոզուի: Եթէ այս կամքը զօրութիւն գտնէ, չի վախենայ նրան գործ ածել և արիւն թափել... յանուն իր աստուծու: Իր նկարագրին է. «համոզմունքից դուրս փրկութիւն չը կայ», որ փիլիսոփայութեան առջև կարող է թարգմանուել այսպէս. «խենթութիւնից դուրս իմաստութիւն չը կայ»: Հետեաբար, փանատիկոսութիւնը միշտ տգիտութեան մէջ է հաստատում և տարածում, և միայն այն օրն է դադարում, երբ միտքը նորից իր իշխանութիւնն է առնում և տիրում է կրօներին: Թանատիկոսութիւնը, կարելի է առել, մաքի գերութիւն է՝ կրօնական մի թիւր համոզմունքից: Եւ իրաւ, չէ յիշում մի փիլիսոփայ, այսինքն ազատ մաքով մի մարդ, որ մոլեռանդ լինի:

Այսպէս նայելով հաւատին, այսպէս բարձրացնելով խղճի, համոզմունքի, մաքի աղատութիւնը, Ստեփան Ռոկանը չէր կարողանում հաշտուել մանաւանդ կրօնափոխութեան հետ, երբ այդ բանը ներքին համոզմունքից բղխող մի գործողութիւն չէր, այլ շահագիտական հաշիւների թելազրութիւն: Հէսց այդ պատճառով Ռոկանը այնքան հարուածներ էր թափում Գաբրիէլ վարդապետ Այվազօվսկու վրայ, որ փոխեց կրօնը այն ժամանակ, երբ այլ ևս անկարելի էր մնալ կաթոլիկ եկեղեցու ծոցում: Մանաւանդ տիրում և զայրանում էր Ռոկանը, երբ այդ կրօնափոխութիւնը տեղի էր ունենում ժողովրդի մէջ: Պէտք է

ասել, որ թիւրքիայի հայերը ամենից շատ էին գործադրում այդ շահազդիտական միջոցը։ Շատ և շատ անգամ է պատահել, որ մի խոռվութեան, մի թիւրիմացութեան պատճառով ժողովուրդը զիմել է կրօնափոխութեան։ Այդ բանի մէջ մեղաւոր էին, ի հարկէ, հայ հոգեսրականները, նրանց աջակցութիւնը վայելող աղա վաշխառուները, բայց ամօթալի զրութիւնը դրանից շատ բիչ էր փոխւում։ Դուրս էր գալիս որ հայ ժողովուրդը մի այնպիսի ժողովուրդ է, որ կարող է ամեն, նոյն իսկ աննշան, գէաքում վաճառքի հանել կրօնը, այսինքն իր ներքին համոզմունքը։

Մի այդպիսի գէաքը պատահեց թիւրքաց Հայաստանում «Արևմուտքի» հրատարակութեան ժամանակ։ Դիարբէքիրի հայերի մէջ խոռվութիւն սկսուեց այն պատճառով, որ նրանց իշխանները կլանել էին ժողովրդից ստացած հարկից քառասուն հազար զրուշ և նորից պահանջում էին այդ գումարը։ Ժողովուրդը բողոքում է, հաշիւ է պահանջում։ Տեղային առաջնորդ Յակոբ եպիսկոպոսը, փոխանակ իր հօտի շահերը պաշտպանելու, գիմում է թիւրք փաշային և նրա ձեռքն է մատնում ժողովրդի ներկայացուցիչներին, որոնք բանտարկուում են։ Այդ դրութիւնը այնքան կատաղութիւն է պատճառում ժողովրդին, որ նա գիմում է կրօնափոխութեան։ 150 տուն յունադաւան են դամում։ Հայ կղերականի արատներից մէկն էր սա։ Բայց Ստեփան Ռսկանը միայն կղերականին չէ գատապարտում։ «Ինչ և ըլլայ առիթ այսպիսի անհեթեթ որոշումի մը, — զրում է նա, — Դիարբէքիրի ոչ հայ եպիսկոպոսը և ոչ ժողովուրդը կրնան երբէք արդարանալ լուսաւոր հասարակութեան մ'առջե, վասն զի երկուքն ալ կատակելի զրութեան մը մէջ կը գտնուին։ Կատակելի է ժողովուրդը, երբ կերեակայէ թէ գժտութիւնը բաւական առիթ է հաւատք փոխելու. աւելի կատակելի է եպիսկոպոս մը, որու հօտը օտարներէն կը յափշտակուի և կը ցրուի այսպիսի մարմնաւոր գժտութեան համար։»

Երկու կողմն էլ մեղադրելով, Ռսկանը ցոյց է տալիս ժողովրդին թէ ուր պիտի պաշտպանէ նա իր արդար գատը։ «Հաւատք փոխել անբարոյականութիւն կը սեպուի այս պարագայի մէջ, ուր բոլոր կոփւը քառասուն հազար զրուշի վրայ է», ասում է նա։ Բայց դա չէ նշանակում թէ ժողովուրդը պիտի լոէ։ «Ազգային ընդհանուրութիւնը ազգային ժողովներէն ալ վեր է, եպիսկոպոսներէն ալ, և մէկը չկրնար անպատիժ անգոսնել իրաւունք մը հասարակութուն առջե»։ Ահա այդ հասարակական կարծիքի արտայայտիչը մամուն է, ուրեմն նրան էլ պէտք է գիմէ զրկուած ժողովուրդը։ «Կը պահուիս, ուրեմն կը վախ-

նաս. կը վախնաս, ուրեմն խիղճդ հանգարտ չէ, կը նայ միշտ ըստիլ այն ազգայիններու, որք վեղարի մը ստուերին ներքե կամ դիմակի մը ետև ժողովուրդին գործերը կուզեն տեսնել: Արհեստաւորք, մամուլին յարելու է, եթէ կուզեք կանգնիլ և առաթուր չկոխուիլ ամենէն. հոն է իրաւունքին խարիսխը, ինչպէս մարդկութեան լոյսը: Անկէ ուրիշ զէնք չունիք, ինչու կարհամարհէք զայն. անկէ ուրիշ ապաւէն չկայ, ինչ բան ունիք անոր ասոր քով: Իրաւունքը ինքն իրան միայն կապաւինի՛ մէկ ձեռքը մամուլին վրայ, և վեղարի մը ներքե չգլորիր հաշիւ ինդրելու համար»:

Հազիւ թէ Ոսկանից առաջ մէկը այսպիսի նշանակութիւն տուած լինի ազնիւ, անաշառ հրապարակախօսութեան: Միայն Ոսկանի պէս գաղափարական գործիչը կարող էր այսպէս բացատրել մամուլի իսկական, վեհ գերը: Այն, հազար անգամ արդարացի էր նա, երբ ասում էր թէ հայը, բացի մամուլից, ուրիշ բան չունի իր իրաւունքները պաշտպանելու, իր բողոքը բարձրացնելու, իր անբարեխիզ գործիչներին պատժելու համար: Եւ նա ինքը, իբրև ազատ ու բարեացակամ մամուլի ներկայացողիչ, պարտք էր համարում դատափետել վեղարի արարքները, պահանջել վեղարից որ նա իր ինսամակալութիւնից ազատէ ազգը: Մենք գիտենք, որ Ոսկանը իր կրթութեան հետ ծծել էր մի ատելութիւն գէպի կղերականութիւնը: Սյամ նա պահանջում էր որ բաժանում տեղի ունենայ եկեղեցու և ազգային գործերի մէջ, որ հոգևորականը միայն եկեղեցում գործէ, իսկ նրանից գուրս, ազգային գործերը յանձնուեն աշխարհականների ինամատարութեան: Որովհետեւ ազգութիւնը կրօն չէ, որովհետեւ ազգային լուսաւորութիւնը, առաջադիմութիւնը չէ կարող եկեղեցուն կապուած մնալ:

Երկու խոշոր գէպեր իրաւունք էին տալիս Ոսկանին այսպէս դատել: Երկու շատ համակրելի ընկերութիւններ զոհ էին զնացել կղերականութեան. առաջինը կ. Պօլսի հայ-կաթողիկ երիտասարդութեան հիմնած «Համազգեաց» բարեգործական ընկերութիւնն էր, որին անդամակցել կարող էին բոլոր հայերը, առանց գաւանական խորութիւնների և որի նպատակն էր կրթութիւն տարածել Հայաստանում. նա փակուեց հայ-կաթողիկ կղերի զգուելի մատնութիւնների պատճառով: Երկրորդ ընկերութիւնը հիմնուած էր Զմիւռնիայում և կոչւում էր «Միւնեաց», որա նպատակն էլ գաւառներում գպրոցներ բաց անեն էր, բայց սա էլ քայլայուեց հայ կղերի ձեռքով, չնորհիւ այն կրօնական վէճերի, որոնց յարուցանողը Զմիւռնիայի առաջնորդ Մատթէոս եպիսկոպոսն էր (վերջը կաթողիկոս): Ստեփան Ոս-

կանը, այս երկու ընկերութիւնների փորձով համոզուած որ ազգի մէջ կան արդէն բաւականաչափ մարդիկ, որոնք գիտեն ազգութիւնը կրօնի հետ չը խառնել, ուզում է նորից վերանորոգել լայն ազգային սկզբունքի վրայ զրուած բարեգործութիւնը և առաջարկում է կազմել մի նոր ընկերութիւն, որի համար էլ խմբագրում է կանոնագրութիւն:

Դեռ 1849-ին Պարիզի հայերի մէջ կազմուել էր մի փոքրիկ բարեգործական ընկերութիւն, որ կոչում էր «Արարատեան» և որի հիմնադիրներից մէկն էլ Ոսկանն էր: Սա էր ընկերութեան սկզբնական յայտարարութիւնը զրել սրա ջանկերով էր որ այդ ընկերութիւնը յայտարարել էր թէ կրօնի և քաղաքականութեան հետ գործ չունի, այլ միայն կրթական նըպատակների է հետեւում: «Արարատեան» ընկերութիւնը մի քանի տարի գոյութիւն պահպանեց, բայց Ոսկանը շուտով հեռացաւ նրանից, երբ այնտեղ մուտք գործեց կղերականութիւնը (Այլազօվակի): Նա ուներ վաղուց պատրաստած մի ծրագիր և 1859-ին լրս հանուց այդ ծրագիրը, առաջարկեց գործադրել նըրան: Իմանալով թէ ինչ ընդունելութիւն կը գտնէ այդ ծրագիրը, եթէ յայտնի գտանայ թէ ովէ է նրա հեղինակը, նա թաղցրեց իր անունը գործի աջողութեան համար և «Արևմուտքի» երկրորդ համարում յանձնարարեց այդ ընկերութեան գաղափարը իր ընթերցողներին, յայտնելով թէ ընկերութեան միաժը պատկանում է մի քանի «ուսումնական և սղգասէր անձերու, որք արևմտեայ տեսիլներով և ամեն նախապահարումէ հեռու՝ պիտի աշխատին հայ ժողովուրդին լուսաւորութեան համար»:

Կանոնագրութեան երրորդ յօդուածն ասում է. «Այս ընկերութիւնը կրօնական նպատակ չունի և չկրնար ունենալ երբէք: Այս ընկերութիւնը է և կը մնայ ազգային: Ազգ ըսելով հայերուն ընդհանրութիւնը կիրանանք: Այլ է ազգութիւն, այլ է կրօնք. ազգութիւնը է միութիւն սեսի և կրօնքը՝ ներքին համոզումն մասնաւոր մարդու և բարեգութեան»: Բերելով այդ հիմնական սկզբունքը, Ոսկանը գրում էր.

Թշնամիներէն առաջինը եղեր են միշտ տեսակ մը կրօնականներ, որք մոռանալով մարդկացին օրէնքը ու քրիստոնեալի պարտաւորութիւնը, ուզեր են և զեռ ուզելու կը յանդգնին, եկեղեցիին սահմանէն ենել, աղդալին օրէնքներու խառնութիւն և շահարհական խնդիրները կարգադրել... Հայերու առաջին պարտքն է, եթէ յիրաւի կրթուել կուգեն, վնասուել և քննել թէ ազգերը ինչ օրէնքով կը լուսաւորուին և թէ ինչպէս այս լուսաւորութիւնը կը պահուի մէյ մը սկսելին ետեւ նթէ արևմտեան ժողովուրդները կրօնական կոխներէ չհրաժարէին և դարերով արխին թափելէ ետեւ չհամոզուէին որ անկէ ոչ բարոյական և ոչ նիւթական բարօրութիւն մը կրնայ ծագել երբէք, հիմա ի՞նչ տարբերութիւն կունենար ներոպա Ա-

սիալէն. և եթէ, Աստուած չընէ, վաղեմի փորձը մոռնալով սկսին նորէն կրօնական արխնարբու կոխը, արհեստ, գիտութիւն, լոյս և պարծառութիւն կը մնա՞ն անոնց մէջ, և հին բարբարոսութիւնը չի՞ տարածեր իր ստուերը միտքերու և սիրտերու վրայ: Արախտութեամբ կիմանանք որ վերոյիշեալ ընկերութեան անդամները լա ըմբռներ են զարգանալու ալս հիմաւոր թէութիւնը և միահամուռ որոշեր են լուսաւորութիւնը հաւատոքի խնդիր չընել: Լուսաւորուելու որիշ թէութիւն մըն է հաւատոքի միութիւնը աղջութեան կապ չղաւանիլ և հետեարար, քարգական կամ աղջային խնդիրը կրօնական անլուծելի խնդիրներէն բաժնել: Երբ հեռուէն կը դիտնեամբ հայ բարձութեան մը պառակոսումը և կոյր շարժութերը. երբ կը զզանք մտական խարին ալն դառն արդինքը, որ բոլոր սերոնդ մը ապականել կը սպաննայ, քիչ ուրախութիւն չէ մեզի համար որիշ կողմէ լսել որ կան զեռ հայեր, որք իրենց նախահօր աւանդութիւնը անարատ կը պահեն և հայկական սիրտով կը սիրեն միտքի պատութիւնը. որք հայրենիքի սէրը կրօնի սէրին չեն զոհեր և զիտեն մէկին ծառայել և միաւը պաշտել անկախորէն:

Ընկերութիւնը, սակայն, չաջողուեց: Ութ ամսից յետոյ Սեփան Ուկանը սրտի դառնութեամբ յայտարարում էր թէ մի «նախանձոտ և մոլի կրօնաւորի» (անունը չէ տուած) պատճառով ընկերութեան միտքը ջուրն ընկաւ: Հասարակութեան ուղղած այդ բացարարութեան մէջ մեր հրապարակախօսը նորից և նորից պարզում է իր հայեացքները, որոնք հայկական նոր մտքի գոհարներն են: Այդտեղ Ուկանը յայտնում է որ ինքը դեռ այն ժամանակ, երբ Զմիւռնիայի Մեսրոպեան վարժարանի աշակերտ էր, ուզում էր լուսաւորութիւն տարածել Հայաստանի մէջ: «Հայաստանէն դուրս հայերուն լուսաւորութիւն չկայ», ասում էր նա այն ժամանակ: «Այսօր ևս նոյնը կը կրկնենք աւելի համոզումով, վասն զի աւելի ուսում առինք և աղջեր տեսանքը»: Եւ ահա նրա այժմնան դաւանանքները.

Հայրենիքի սէրը վերագոյն զգայութիւններու կարգը կը դասենք. բայց պատիւլ իրեն զսկել, ապատութիւնը ոտքի տակ առնուլ անկարելի է մեզ: Հայրենիքի սէրը, ինչպէս ամեն կերպ սէր, երբ անսպակ է, պատիւլ միայն կը պահուի և կը փառաւորուի: Յեայտառակ հայրենասիրութեան վրայ վստահութիւն չունինք ընաւ, ու նաև հայրենիքի համար րոպէ մը խայտառակ ըլլալ յանձն չենք առնուր: Մեր հայութիւնը և մարդկութիւնը միասիրտ կապին և կը շարժին երկրի վրայ...

Համոզուած էինք թէ կրօնքը աւելորդ, չըսենք նեղութիւն, է մեր դրօշին, որ ազատութիւնէն ուրիշ դրոշը չէ կրեր երբէք: Համոզուած էինք թէ ողորմէլի ժողովարդի մը ապառնի վիճակը հաւատքով չպատրաստուիր: Հաւատքը սուրբ աւանդ մ'է որ յատուկ պաշտօն ունի և որ չկրնար քարգական աղմուկին գործածովիլ առանց խանգարուելու Հաւատքը որ կը խանդարուի, անբարոյականութիւն կը բերէ, և անբարոյականութիւնը տղէս ժողովուրդի մը հոգեոր լուծումն կրնայ սեպուի, ալոինքն աղջասիրութեան ներհամկ արդիւնք ունի:

Նկատէս ուրեմն մեր ընկերութիւնը չծնած մեռաւ և մեր հայրե-

Նասիրական տեսիլը կը զառնալ վերաստին թուղթերու փոշւոյ մէջ, որ տաս տարի սպասեր էր և ուր կրնայ սպասել զեռ երկար ատեն, մինչև որ հայերուն կորութիւնը բոժուի և կրօնքը, ալսինքն երկնալին խնդիրը, չփոխեալ ազգութեան հետ, որ երկրային խնդիր է միայն Նյո՛, մեր ընկերութիւնը այս անդամ ես չծնած մեռաւ, բայց այս առթիւ ծնած զիտութիւնը այնպիսի պազութիւն մը կարսադրէ որ Նրարաստի սարերու ձիւնէն շատրբերիր, ալսինքն հալելիք չունի:

Կրօնքի բռնաւորները աշխարհական բռնաւորներէն տարբեր դրութիւն մը չունին. օձուել և ետքը տիրել—զաւանութիւն մ' է որ նա՛կ քըրիստոնէութիւնը չկրցաւ իրենց սրբէն վերցընել, նայց վա՛յ այն ժողովուրդին, որու կրթութիւնը, լուսաւորութիւնը և ասպանի վիճակը այս տեսակ մարդերու ձեռք են: Թէ՛ ուշ թէ՛ շուտ իրենց վերջն է ամօթ և ասպականութիւն, ալսինքն զօրութիւններու սիրումն, այսինքն նաև գերութեան պատրաստութիւնն:

Կուզէինք հայերուն մէջ աշխարհական գոյութիւն մը հաստատել և ազգային խնդիրը անով լուծել: Մեծ սրատեսութիւն պէտք չէր դիտելու համար, որ ուրիշ օրերու մէջ կապրինք և կրօնքի միութիւնը խզուելէն ետք զօրութիւն մը չկար որ զայն նորէն կապէր: Նթէ ազգասիրութեան փոքր կայծ մ' ունէին, կրօնաւորներուն առջի պարոքն էր ուրեմն եկեղեցւոց բակը ամփոփուիլ, բարոյականին վեմ զէնքով ժողովուրդը պատրաստել և մեր թերերը ու միտքը ազատ թողով որ ուրիշ զէնք առնունք բարբարոսութեան գէմ... Կրօնաւորք *) ոչ միայն զայս չըրին, այլ և թոյլ շոտին որ ուրիշները ընեն: Պատզամ եղան ամեն բանի, նաև կրթութեան, զոր չեն առեր բարոյականին, զոր չեն կատարեր, փիլիսոփայութեան, որու անունը միայն լսեր են...

Իր ազգի պակասութիւններին այսպիսի ուժեղ տողեր նուիրող մարդը, ի հարկէ, չէր բաւականանայ միմիայն կղերականների արարքները դատափետելով: Ուկանի ազնիւ հայրենասիրութիւնը ցոյց էր տալիս նրան ուրիշ շատ պակասութիւններ էր: Ի՞նչ պէտք էր անել: Ասիայի խորքում և խաւարում նստած ժողովրդին պէտք էր ցոյց տալ Եւրոպան և ասել թէ ինչ պէտք է անէ այդ ժողովուրդն էլ: Ուկանը սկսում է մի շարք օրինակներ տալ: Ահա Միջլէն մի գիրք է հրատարակում՝ «Մէրը» վերնազրով: Ուկանը համառօտ կերպով ծանօթացնում է հոչակաւոր պատմաբանի գլխաւոր մտքերի հետ և խկոյն դիմում է հայերին: Եւ ահա ինչ է ասում:

Հին առենէ ի վեր կինը, Նսիայի մէջ, ստորին: Եթէ չըսենք անարժան, պաշտօն մը կը կոտարէ, և ան կողնի ընկեր է քան թէ տիկին մը իր արժանաւորութեան վերահասու Անշուշտ քրիստոնէութիւնը, հայ ընտանիքներու մէջ մանաւանդ, ամուսնութիւնը մաքրեց, համեստութիւն և քանի մը ուրիշ առաքինութիւններ դրաւ հոն, բայց, ինչպէս ականատես

*) Այս բառը մեր գրչին ներքեւ մասնաւոր նշանակութիւն ունի և չվերաբերիր հայ քահանաներու, զորս կը սիրենք և որք կրնան մեծ ծառայութիւն ընել ժողովուրդին:

եղանք, նիւթամոլ կեանքի հետևանքները այնպիսի ապականաթիւն մը ծառալեր են հմաս որ վասնգի զանգակը հնչելու ժամը եկած կը սեպենք... նթէ հայերը վերածնիլ կողեն, Երազակն վռնտուած իմաստակ-ներուն անհիմ առաջարկութիւնները մերժելու են, ընտանիքը հաստատելով անդրդուելի և նոր բարոյականի վրայ նվիթական կեանքի վայելքը կը տանի յանրանութիւն, և անհնարին է որ լուսաւորութեան վոքք նշոյլ մը փայլի այն բազմութեան մէջ, որ ուտել, խմել, պառկի և միակ զրազում է բալուլչն մինչև գերեզման:

Վերածնութիւն սմմեն բանի մէջ: Բայց մի վերածնութիւն, որ օտարացում չէ, որ սեփական դրական յատկութիւնների զարգացման միջոցով պիտի առաջ տարուի: Ստեփան Ռոկանը ցանկանում է որ վերածնութիւնը արտաքին նշաններով չը լինի միայն արտայայտուած, որ դա շորերի ու ձեերի վերածնութիւն չը լինի, մի կոյր ու անմիտ հոսանք, որ տանում, ոչնչացնում է ազգային առաքինութիւններն էլ:

Հայ ընտանիքներ,—բացականչում է նա, —ոսկին կապարին հետ մի՛ փոխէք, Երազակի արտաքին զարդը բարակ նալու նշան մի՛ սեպէք և մի՛ թողուք, քուրչի մը համար, ձեր համեստութիւնը, որ ժամանակաւ ոզնթի զեղեցկութիւն տուեր է ձեզ: Հայ կիներ, սկսէք նաևս նըստայի ազնիւ կիներու միտուր, միտքը, վեհ զագացութիւնները ընդունիլ և ետքը քը ի նուլի ի նի մէջ ձեր մարմինը ձմլել կամ հայու արինը տրորել, ձեղ օրինակ են նաևս Նղիշէին նկարագրած արի տիկինները և լետոյ օտարազգի պէ պէ կն երւ Ցիշեցէք որ եթէ Երազակի կողմերը «մարդիկ վսեմ զործեր ընելու պարտասուրութիւն ունին, կիները կը սոխպուին այս զործերու զազափարը անոնց առաջ: Մի՛ մռանաք որ կիներու ձեռքն է բարքը, և ինչպէս ուզեն այնպէս կը շինեն զայն: ծառը երր փոքր է, կը շտկուի և մարդ երր տղայ է, կը հաստատուի մալքերու ձեռքին ներքեն... Կիներու բերնի մէջ է լեզուի մը կազմը և մաքրութիւնը: Դիտութիւնէն առաջ սովորութիւնը կը հաստարակէ այսպիսի ճշմարտութիւն մը, մայր են ի լեզու լսելով տոհմի մը լեզուին: Կիներու շուրթերէն կը հոսի ճաշակը, առանց որու գրադիտութիւն չկայ ժողովուրդի մը մէջ: Կիներու սիրտին մէջ է հալրենիք, և երր այս սիրտը զատարկ կը դունուի (ինչպէս շատ հայ տիկիններու քով...), անկարելի է որ հայրենասիրութիւնը, ճշմարիտ հայրենասիրութիւնը, ծիի, ծաղկի, արդինասորի և բազմութիւն մը կանգուն պահէ ազատութեան դրօշին տակ... Կիներու փափուկ ձեռքով կը պատրաստուին այն անդրդուելի ինքնութիւնը, որ մարդու նշանն է, և այն բարոյական զէնքերը, որի գերութեան արմատը կը կոտրեն:

Հայ ընտանիքներ, եթէ զուք ապականուիք, չկայ զօրութիւն մը, որ մեր ոլորմելի ալզը կանգնէ և կազզուրէ: Քաղաքացի կը սպասենք ձեղմէ և ո՛չ մեցնաւէ սուս մարդեր, որք մանկութենէ կը սկսին սոզու, ախտերով տոգորիլ, և առնութեան չհասած կը սոսկան բռնութեան սոսուերէն Ուսումնական կը խնդրենք ձեղմէ և ոչ լեզուազէտ գոեհիկներ, որք բառերուն նշանակութիւնը չսովորած և սև զլուխներուն բերնի զելզեկութիւնը յախշակելով, ելեր են կրթութիւն և քաղաքակրթութիւն կը քարոզեն մոլութեան նշանով:

Հայ ընտանիքներ, հարցուցեք մէջ մը ձեր բոլորտիքը ուսաշարող

զեվսկեկներուն թէ ի՞նչ է ազգ, հայրենիք, կրօնք, սէր. ի՞նչ է լուսաւորութիւն, գիտութիւն, փիլիսոփայութիւն. ի՞նչ է ազատութիւն, արդարութիւն, որէնք. ի՞նչ է բարոյական պարտաւորութիւն և ընկերութիւն. ի՞նչ է ճակատազիր մարդու և մարդկացին սեռի այս աշխարհի մէջ, և մինչև որ պատասխան չառնէք, ձեզմէ հեռու վնատեցէք նըռոպացի թափթթուկը և եթէ հիմակւընէ չպատրաստուիք, հաւասար եղիք որ ձեր վրաց գերութիւնը, տղիսութիւնը, վիշտերու շապիկին հետ, պիտի անցնին թռուէ թռու, և միշտ պիտի լուսի այն ամօթալի արձադանղը, որ հինգդարեաչ եղերք կամփուփէ, -Հայ' վա՛լ...

Աւազ, այս գեղեցիկ խօսքերի մէջ ծանր մարդարէութիւն շատ կար թագնուած: Հայ կինը «կրինօլինով» զարդարուելու քաղաքակրթութիւնը միայն ըմբռնեց և տարաւ հայ ընտանիքը դէալի քայլքայում և օտարացում: Այսօր բիւրաւոր օրինակներ ունինք մեր առջն:

Բացի Միշէի դրիգ, Ստեփան Ոսկանը խօսում է Ժիւլ Արմօնի «Ազատութիւն» գրքի մասին, հայերին խրատներ է տալիս թէ ինչպէս պէտք է հասկանալ ազատութիւնը, թէ ինչպէս չէ կարելի «ազդը կրօնքի ներքն զնել», թէ մաքի, խորհելու ազատութիւնը մարդու նուիրական սեփականութիւնն է: Հայերի փրկութիւնը նա տեսնում է ընտանիքների զարդացման մէջ:

Հայք ազգութիւն չունին, և զեվսկեկներուն «ա՛զգ, ա՛զգ» ըսելը պէտք չէ որ խարէ զիրենք: Ցանուցիր ժառովուրդ մը կը շննեն, որ կը բաղկանաւ ընտանիքներէ: Ասոնց զիրկը կը գտնուի փրկութեան խարսիւը, որ զիրենք նոր մրրիներէ անվտանգ պիտի պահէ: Հայերուն զլիաւոր պարտնը է ուրեմն ընտանիքը կազդուրել և հոն ուզդել ամեն փոյթ և գարման: Ընտանիքը փոքր հայրենիք է. և եթէ հոնկէ քաղաքացիք չելնեն, ի զուր մեծ հայրենիքի մը տեսիլով կերազեն ոմանք...»:

Մի ուրիշ յօդուածում, որ նուիրուած է մեծ յեղափոխութեան այն պատմութեան, որ դրել է Միշնէ, Ստեփան Ոսկանը բացատրում է թէ ինչ սկզբունքների համար էր միրանսիան կաւում XVIII դարի վերջում: Այս պատմութեան ասիթով էլ նա զիմում է հայերին և խօսքը ուղղում է իր հակառակորդներից մէկին: Նա ասում է.

«Խորասաննեան Պետրոս անուն յումայափոխի մը սինլքոր արբանեակները ապստամբ բառը մեր երեսին տոփին իրբե կեղու և ամօթ. և կարծեցին որ պիտի ցխալուասկուինք», Զեվսկեկները մեզ զովութիւն տուին: Ելո՛, ապստամբ ենք, այսինքն 89 վեհ թուականը կր սիրենք հողաւոլ և մարմնուի Նրանիլի՝ յանցանք, որ Եւրոպայի ամեն բարձր միտքերու համակրութիւնը կը շահի և Խորասաննեի հայու մը հակակրութիւնը կը բորբոքէ: Ճարեբախտաբար իրեն նման մարդերու խօսքը չըլլար: Մարդուա իմունքը, միտքը, իրասունքը, ապստամբութիւնով աղստութիւն դաեր և աշխարհք մտեր են:

Վերեռւմ մնենք տեսանք թէ ինչ նշանակութիւն էր տալիս Ուկանը հայ ընտանիքին։ Նա համողուած էր որ ազգութիւնը պահպանողը այդ ընտանիքն է եղել և որ կրօնը այլ ես չէ կարող այդպիսի խարիսխ գառնալ ազգութեան համար, քանի որ միութիւն չունի և բաժանուած է երեք եկեղեցիների մէջ։ Ըստանիքն է մնում միակ յոյսը, և մնենք տեսնում ենք որ Ուկանի հայրենասիրութիւնը այդտեղ է գանում իր ոգեսրութիւնը։ Այդ բանը երեռւմ է մի վէպիկի մէջ, որ կրում է «Հայ դիւցազնուհի մը» անունը։

Հետաքրքրութեամբ է կարդացւում այդ փոքրիկ գրուածքը։ Բժշկութիւն սովորած մի հայ երիտասարդ Մարտելիայից ուղերուում է դէպի հայրենիք։ Շատ կարելի է որ Ստեփան Ոսկանը իրան է պատկերացրել այդ երիտասարդի մէջ։ Շոգենաւից նա նայում է Ֆրանսիայի տիկերին և ասում է ինքն իրան։ «Ասիան այն մայրերու կը նմանի, որք ծնել կրան, բայց որք անկարող են իրենց արգանդի պտուղը բարզաւաճել, Մարդկային ամեն տեսիլները հոն կեանք առին, այլ և ոչ մէկը արմատ ձգելով մեծցաւ հոն։ Եւրոպա դայեակ մ'է միայն, բայց դայեակ, որ մայրէ աւելի սէր ունի և ահա անոր համար է որ յառաջադէմ եղեր ու կատարելութիւններ առեր է։ Ո՞վ Ասիա, ով խորթ մայր»։

Սիրող դայեակի կաթը ծծած արևելցին, ի հարկէ, մի առնձին հրապոյր չէ զգում իր խորթ մօր գիրկը դիմելիս։ Ի՞նչ կայ այնտեղ, այդ գրկումն վհատութիւն է նա պատճառում երիտասարդին, վհատութիւն այնքան հեռուից, երջանիկ աշխարհի այս ափերի մօտ։ Մի անգլիացի ճանապարհորդ խօսք է սկսում հայ երիտասարդի հետ և երբ իմանում է, թէ նա տասր տարի Ֆրանսիայում մնալուց յետոյ զնում է հայրենիք, սկսում է բացատրել թէ ինչ երջանկութիւն է հայրենիք վերադառնալը։ Մեր վհատուծ երիտասարդը մասամբ միայն համաձայն է։ Այն, հայրենիք, բայց ինչ տեսակ հայրենիք։

—Սոոյդ է, —պատասխանում է նա, —բայց երբ ծնած հողին վրայ աւերակէ և թշուառութիւնն ուրիշ բան չեն նշմարուիր, միօթէ հալրենասէր սիրտին բերկրութիւնը անխառն է և թեթև տրտմութիւն մը չի վրդովեր զայն։

—Եսո՛, ասում է անգլիացին, որ մի տարի ճանապարհորդել էր Հայաստանում։ —Ասիացի այս կողմը ողորմելի տեսարան մը կընծայէ, ամեն տեղ թշուառութիւն, վլատակ, ոսկրոտի և փոշի կը պատեն իր երեսը. բայց հայ տոհմը դեռ կապրի այսպիսի աւերալրեաց հողի վրա։

—Կիսամեռ, այնպէս չէ։

—Եւր չիք մահ, յոյս կալ։ Երիտասարդ սիրո մը պէտք չէ որ վհատի։

—Սակայն...

—Երկրի վրայ չպոնուիր ալնպիսի կետ մը, ուր քաջութիւնը չկրնայ հասնիլ բաւական է որ ազգ մը կամք, անքայքայելի կամք մը ունենայ. օր մը աւերակ և տատասկ, թշուառութիւն և տղիտութիւն կը վերնան այն կողմերէ: Հայաստան կրնայ նորէն ծաղկիլ և հինգդարեայ խաւարումէ ետև, լուսաւոր երկիլ և բազմիլ ազգերու մէջ...

Բայց որտեղից էր անգլիացին այդքան յուսատու կարծիք կազմել այն ժողովրդի մասին, որի հարազատ զաւակը յուսահատ ու անմիտթար էր: Իր ճանապարհորդութեան ժամանակ նա ծանօթացել էր հայ ընտանիքի առաքինութիւնների հետ և ահա այստեղից էր նա համոզմունք կազմել թէ կորած չէ հայ ժողովուրդը: Նա պատմում է հայ երիտասարդին մի գէպք հայ ընտանիքի առաքինութիւններից, մի գէպք, որ վաղուց էր տեղի ունեցել, բայց որ հիացմունք էր ազգել այդ օտարական մարդուն:

Արաքսի գիւղերից մէկում ապրում էր մի գեղեցիկ հայ աղջիկ: Շատերին էր նա գերել իր գեղեցկութեամբ, բայց իր սիրաը տուեց մի ժիր, աշխատասէր երիտասարդի, որ մանաւանդ քաջ էր և քրգերին սոսկում էր պատճառում: Երկու սիրահարները արդէն նշանուած էին: Բայց մի օր Երևանի խանը տեսնում է աղջկան և վճռում է որ նա իր կանանցում պիտի լինի: Առեանգում հն աղջկան և տանում խանի մօտ: Բայց այստեղ նա հերոսաբար դիմաւրում է խանի կրգերին և չէ յօժարում իր կուսութիւնը նրան տալ: Իզուր վաւաշոտ իշխողը թախանձում էր նրան, սպառնալիքներ կարդում, վերջը նա ստիպուած եղաւ, աղջկայ յամառութիւնը կոտրելու համար, փակել նրան իր տան սենեակներից մէկում: Այդ բանաւարկութիւնը վերջ ի վերջոյ պիտի գիւղերի բերէր աղջկան: Բայց նրա քաջ նշանածը իմանում է թէ ուր է իր սիրելին և իր ընկերների հետ զալիս է նրան ապաւելու: Բերդի պատուհանների տակ նա նշաններ է տալիս սուլոցներով, աղջիկը հասկանում է և բաց անելով պատուհանը, թռչում է ցած, սաստիկ ջարդուում: Նշանածը արդէն գրկել է իր արիւնոտ հարմանացուին, պատրաստում է վերցնել նրան, փախչել, բայց այդ միջոցին խանի մարդիկ վրայ են համուռմ: Ակսում է փոքրիկ պատերազմ. աղջկայ նըշանածը երկու վէրք է ստանում, բայց յաղթել չէ կարողանում: բոլոր վիրաւորները զերի են ընկնում, սակայն խանը, յուղուած հայ օրիորդի հերոսութիւնից, ազատութիւն է տալիս ամենքին:

Այս պատմութիւնը կերպարանափոխում է յուսաքեկ հայ երիտասարդին. քիչ առաջ նա չէր հաւատում թէ իր խաւար

հայրենիքը, այդ խորթ մայր Ասիան, կարող է հայրենասէր սրտի համար հրապոյրներ ունենալ: Բայց այժմ... Հայ հերոսունին մի անուշ տափաւորութիւն է թողնում նրա վրայ, տափացնում է նրա սիրտը և նա երգում է *):

Զծով շափէ թո՛ղ զիտուն.
Զերկին զիտէ իմաստուն.
Թող սիրաբեկ սիրո զատարկ
Փրփրներու վրայ ակնարկ
Անյոյս հալի և զոչէ
Թէ կեանք մեր այս ոչինչ է:
Ես ձեր սիրով, հայրենիք,
Քարեկամներ, լնտանիք,
Յափշտակեալ կը մոռնամ
Ալիք, անդունդ, մահ անդամ:
Հայրենիքի դաշտ և սար,
Երկինք կապոյտ, արև վա՛ռ
Հոն կը տեսնեմ. և անդէն
Կը համոզուիմ թէ անդին
Եւ կիանք և սէր ճշմարիտ
Ի՞ երանութեան մարգարիտ:
Ո հայրենիք, ի քո յուշ
Հով մը կզգամ շատ անուշ,
Եւ մանկութիւն իմ ահա
Ծաղիկներով կերևար:
Կառչցանամ և որի
Կոտնում շունչեզ կաթողի:
Փռմա՛, շողի, հավ, շարժէ՛,
Ժամ մը առաջ զանձ կարժէ
Համնիլ, ըսել, «քեզ բո՞րմ»
Հող, որ աղուիր ինձ արե»:

Ահա որքան հրաշագործ է հայ ընտանեկան առաքինութիւնը: Միայն նա է, այն, որ հայի տիտուր իրականութեան միջից փայլ է տալիս և ոգեսորում, դէափի իրան քաշում հայրենասէրին: Մեր բոլոր լաւագոյն դորձիչներին է այդոէս զիւթել այդ համնատ ու զեղեցիկ լոյսը: Խաչատուր Արովեանին էլ աշուղ էր դարձրել այդ ընտանիքի սրբութիւնը: Գաւմառ-Քաթիպան, Արծրունին, Բաֆփին հայ կեանքի այդ կազմովն են ոգեսորուել և հաւատացել որ կայ ազգային առաջադիմութեան, վերակեննանութեան տարր, նիւթ, որ այդ ժողովուրդը կենսունակ է:

Եւ այդ մաքուր, կենսունակ տարրը այն ժողովուրդն էր, որ ապրում էր իր հայրենի հողի վրայ: Ատելիան Ռոկանը այդ

*.) Ոսկանի այս ստանառորը տափուած է շատ երգարանների մէջ:

ժողովրդի մէջ է զտնում իր յօյսերը, նրանից է սպասում հայութիւն։ Ֆրանսիացի մի հեղինակ հայերի մասին գրել էր. «Հայերը գրեթէ թիւրք քրիստոնեայ են Յոլոր քրիստոնեայ ազգերից աւելի մօտիկ են թիւրքերին, նրանց լեզուն հեշտութեամբ են սովորում և նրանց ծանրութիւնն ունին գոնէ առ երես։ Ուկանը հետեւեան է պատասխանում այդ ֆրանսիացուն».

Եթէ հեղինակը Պոլիսի կամ ուրիշ քանի մը քաղաքներու հալերը նշանակել կուգէ, այս տողերու մէջ շատ ճշմարտութիւն կար, Բայց իր ըսածը հիմ չունի, եթէ բոլոր ժողովուրդին վրայ տէնարկութիւն կընէ, Ստոյդ է որ հայերը թիւրք լեզուն դիւրա կը սորվին և կը խօսին. սոոյդ է որ Պոլիսի մէջ հայ կայ որ բարքով կատարեալ թիւրք է, բայց անկէ չհետեւիր որ բուն հայուն արինը զարձած ըլլայ ի թիւրքութիւն։

Մենք ևս, երբ Պոլիս էինք, ընտանիքներու մէջ մտնելու ժամանակ, ցուելով կը նշանակէինք հպատակութեան այս կարի խորին դրոշմը և շատ անգամ հայ երեսները զննելու ատեն, կը տեսնէինք «որ քրիստոնէութեան կեղեց միայն մատցեր է այն քաջերուն թռաներու վրայ, որոնց վեհ ողին և բարոյական արիութիւնը հզօր տէրութիւններու ոյժը վշրեցին և կրօնքը ազատեցին հայրենիքը կորուանելով այսինքն հռեկանը նիւթականէն վերագոյն սեպելով։ Կը տեսնէինք որ լուսաւորչական հայը աւելի թիւրք է սիրուով և հոռմէականը՝ բերնով։ Խոաջինը հայերէն կը խօսէր և թիւրքերէն կը վարուէր ընտանիքի մէջ երկրորդը քիչ մը եւրոպական սովորութիւն ունէր, բայց թիւրքի լեզուն բերնէն թողու լանցանք կը սեպէր։

Մտեփան Ուկանի պէս մի մարդ, որ իր ազգի վերածնութեան և ազատութեան գաղափարն էր պաշտում, չէր կարող չը նկատել ազգի մէջ գործող այն անհատներին, որոնք միենոյն ժողովերն ունէին, միենոյն ցաւերն ու իզձերն էին կրում իրանց մէջ։ Տարածութիւնները նշանակութիւն չունեն գաղափարի համար նստած Պարիզում, Ուկանը եղացրանում է ուսւահայ զործիչների հետ Խաչատուր Արովեանը չը կար այդ ժամանակի կենդանի մարդկանց շարքերում։ 10—11 տարի էին անցել նրա անյայտ գերեզմանի վրայով։ Բայց 1858-ին հրատարակում է «Վէրք Հայաստանի»-ն և այդ գրքի ու նրա հեղինակի վրայ առաջին անգամ ուշադրութիւն գարձնողներից մէկն էլ Մտեփան Ուկանն է։

Երեք յօդուած է նա նուիրում Արովեանին։ Դրանց մէջ նա ծանօթացնում է հոչակաւոր քանաքեռյու կեանքի, գաղափարների հետ։ Աղասին յափշտակում է նրան նոյնպէս, ինչպէս յափշտակել էր հեղինակին։ Ռամիկ հայի յաղթանակն է Աղասին։ Հասարակ ժողովուրդը այդ վէպի մէջ գուրս է գալիս իր բոլոր բարոյական առաքինութիւններով, իր բոլոր ցաւալի և ուրախալի հանգամանքներով։ Արովեանը, ասում Ուկանը, մաքում գրել էր գիմել մի հայ իշխանի։ «Բայց շատ չերթար կը համոզուի

որ այս իշխանի աւելի անուն ունին քան թէ սիրտ և միշտ սեւազլուխներուն բոլորտիքը կը թափառին, ստակնին անոնց կուտան և եկնղեցի շինելէ ուրիշ բան չգիտեն այս երկրի վրայ: Կը համոզուի որ ազգութիւնը իրեն ապաւէն չէ ընտրած հարուստ սիրտերը, որք եթէ որդնակեր չեն ամեն տեղ, դատարկ ևն միշտ...»:

Աբովեանի գործի գնահատութիւնը Ստեփան Ռոկան արել է իրան յատուկ գեղեցիկ ըմբռնողութեամբ և լայն գրական դարդացում ստացած մարդու հայեացքներով: Եւրոպական վէպերի տեսակէտից չէ կարելի նայել Աբովեանի վէպին, ասում է նա: Դա մի գրական չէնք չէ, եւրոպական կանոնով կառուցուած: Բայց այդ հանգամանքը չէ արգելում որ մարդ հիմնայ «Վէրք Հայաստան»-ի վրայ: Ամենամեծ առաւելութիւնն այն է, որ նրա մէջ հայ ժողովրդի կեանքը պատկերացրած է այնպիսի հզօր նկարագրական տաղանդով, որ յատուկ է մի Բալզակի, մի Էօֆէն Սիւի: Եւ ահա ինչ գեղեցիկ խորհրդածութիւններ է յարուցանում Աբովեանը Ստեփան Ռոկանի մէջ:

Ձենք գիտեր ո՞ր բանասէրը ըսաւ թէ՝ առանց աւանդութիւններու գրականութիւն չկայ, և մինչեւ այսօր հայերէն գիրքերու մէջ կրօնքի խնդիրներէ և պակասաւոր կամ չոր ժամանակագրութիւնէն ուրիշ բան չեն տեսանուիր: Նու շատ զարմանալի և տրտմալի երևոյթ մ' է, վասն վի երկրի վրայ քիչ ժողովուրդ կը գտնուի, որու գլխէն աւելի մեծ զէպքեր անցած ըլլան, ինչպէս մեր ժողովուրդը: Հայք ո՞չ աւանդութիւններէ զուրկ են, ո՞չ քաջերէ և ո՞չ բնական հանճարէ, բայց կրօնամոլ եւանդ մը միշտ խաւարերէ է իրենց միտքը և հիմա ոմանք հապի կը հասկնան թէ կրօնքը չարգիւեր որ ազգ մը աշխարհացին գրականութիւն, փառք և բարբառ ունենայ... Պ. Աբովեանին ըրածը, եթէ ուրիշ ուսումնականներէ շարունակուի, կրնայ վերջ գնել մեր մոռական աղքասութեան և փոխանակ սննուի կամ օտարազգի զրուածներու՝ տոհմալին զրագիտութիւն մը հաստատել: Ժողովուրդին միրտը—ահա՝ զրագիտութեան աղբիւրը: Իր անցեալը և աւանդութիւնները՝ ահա՝ գրելու նիւթը. ազգ և մարդկութիւն ահա նպատակ, ուր ճշմարիտ բանասէրը կ'աշխատի ուղղել և իր հետ տանիլ բազմութիւնը, որու անդամ է: Գիտենք որ զժուարութիւնը մեծ է և տեսակ մը կրօնաւորք, պաշտպանուած տեսակ մը հայերէ, գեռ երկար ատեն պիտի աշխատին ճնշել և հալածել ազատ միտքերը և հանդարտ շնորու որ բան մը արգիւնատրեն նրանի թէ պ: Աբովեանին դիտաւութիւնը հասկցուէր և իր շափողը մար ազգին մէջ, բայց...

Այսպիսի մաքերի, այսպիսի բողոքների ներկայացուցիչ էր և նազարեանցի «Հիւսիսափայլը»: Եւ իրար մօտենում են այդ երկու օրգանները: Ռոկանը մեծ գովեստներով է խօսում Մոռկուայի ամսագրի մասին, ողջունում է ուստահայերի մտաւոր վերակենդանութիւնը և ցանկութիւն է յայտնում որ «Հիւսիսափայլը» շատ տարածուի թիւրքահայերի մէջ: Նա արտատպութիւնը հասկցուէր և իր շափողը մար ազգին մէջ, բայց...

է «Հիւսիսափայլի» մի քանի յօդուածները. և փոխադարձաբար «Հիւսիսափայլն» էլ «Արևմուտքի» մասին է խօսում, իսկ Նալբանդեանը դառնում է նրա գործակալը Մոսկուայում: 1859 թուականի ամառը Նալբանդեանը ճանապարհորդում է Եւրոպայում և ահա ինչ է գրում իր «Յիշատակարանի» մէջ.

Փարիզում գտնում է քանքարաւոր պ. Ս. Ռականեան ուսումնական աղբալինը, որ քանի մի ժամանակ սորանից յառաջ հրատարակելով Արեմելք անոն օրագիր (խափանուած մի հայ ճիզվիթի դարանագործութեամբ, ամօթ և խայտառակութիւն արդ սեահողի անպիտանին), այժմ հրատարակում է Սրբմուտք կիսամսագիրը:

Սենք գիտենք մի ազատախօս հեղինակի վիճակը անկիրթ ազգի մէջ. այդպիսի հեղինակը ոչ թէ միայն պիտի կուրծք մաշէ, աչքի լուս թափէ ազգին նոր գաղափարք տալու համար, այլ և պիտի տանի այն սկ ու բամբասանքներին, որ անխորհուրդ խաւարասէրքը անշուշտ ուղղելու էին մի այդպիսի հեղինակի վրայ: Խափացին չէ կարող մերկանդամ տեսանել ճշմարտութիւնը. Խփանը պիտի քովով ծածկվի միշտ եղիպատճու աշքից. այս պատճառով ևս տեսանում ենք զանազան խլբումնքն և թշնամական յարձակմունք Նրեմուտքի թէ հիմնադիրների և թէ շարագրողի ջանքը և աշխատանքը ունայնացնելու համար: Զգիտենք թէ մինչև երբ պիտի յարատեէ Հայ-Ճիզվիթների ազգեցութիւնը մեր ազգի վերայ... Ոհ, գլերով, ամիսներով և տարիներով ողբարու նիւթ...

Գուցէ աւելորդ չը լինի նկատել և այն, որ այս խորհրդածութիւններին Նալբանդեանը կցել է իր «Ազատ Աստուածն այն օրից» երգը: Ի՞նչ գեղեցիկ ժամանակներ էին...

Նշանաւոր է 1859 թուականը: Նշանաւոր մանաւանդ Խտալիայի համար: Խտալիան ազատութիւն էր գտնում միանսպիայի օգնութեամբ՝ Նապոլէօն III անձամբ տարաւ իր զօրքերը՝ աւստրիական լուծը ջարդելու և Խտալիայի միութեան և նորոգութեան գարագուխը հաստատելու համար: Խտալիայում բանկուեց մի ճերմ, անձնուրաց հայրենասիրութիւն: Մայիս ամսից, երբ սկսուեց ազատարար պատերազմը, Ստեփան Ռսկանը լայն բաց արեց իր «Արևմուտքի» էջերը՝ այդ արիւնուա պայքարի մանրամանութիւնները նկարագրելու համար: Դա հարկաւոր էր, դա մի սքանչելի օրինակ էր ամենքի համար, որոնք ազատութիւնը յանցանք չէին համարում, այլ փառք և նուիրական բաղձանք: Ռսկանը համարեա ամեն ինչ մոռանում է պատերազմի ընթացքում և ազահութեամբ տալիս է նկարագրութիւններ այն գործից, որ չէր կարող ընդհանուր չը լինել մարդկութեան համար, քանի որ ազատութեան դատն է: Ահա ինչ էր գրում Ռսկանը պատերազմի սկզբում:

Խտալիայի յարութիւնը Քրիստոսի յարութեան օրը կը կատարուի: Անիծած քերանները ըսին. Մեռած է Խտալիա: Ազատութեան զինուրք կը դոչեն. Յարեաւ Խտալիա...

ՕՐԻՆԵԱՌ է բարութիւն նահատակ ազգելու...

Եթէ չը մոռանանք 1849-ի Ոսկանին, եթէ չը մոռանանք թէ ինչ մաքով և ինչ յոյսերով էր նա մասնակցում իտալիայի օգտին արած ուսանողական ցոյցին, հասկանալի կը լինի այս ջերմ իտալասիրութիւնը, որ յափշտակեց նրան իտալական ամբողջ պատերազմի ժամանակի Մի այդպիսի ժամանակ, երբ յարութիւն էր առնում մեռած համարուղ մի ազգ, ֆրանսիական լրագիրներից մէկը տպագրում է հետեւեալ տեղեկութիւնը.

Գիւրղերը նորէն սկսեր են ասպատակել երզրումի զաւառին մէջ: Կերի վիճակը բոլորովին թալլուած է և 3000 հայ ընտանիք մեծ թշուառութեան մէջ կը գտնուին: Գիւրղերը ամեն բան կապուեցին կողոպտեցին, աղջիկներու, տղաներու անգամ չխնայելով: Ինչպէս ուրիշ տեղ, հոս ալ թիւրքի պետութիւնը անկարող է իր հպատակներուն պատիւը, կեանքը, ինչքը յարգել տալ: Փաշան իրեն եղած գանգատաներուն պատասխան տուա, իր սովորութեան, համեմատ, միշտ մի և նոյն խօսք կրկնելով. «Դադ չաքլսը զլմազ»:

Տպագրելով այս լուրը, Ոսկանը աւելացնում է.

Այս անարժան փաշային խօսքը արձանագրուելու արժանի է և օսմանեան տէրութեան մեծ պատիւ կընէ: Հայ բագմութիւնը որս կը սեպուի օսմանեան պաշտօնաւորէ մը և որս... քիւրղերու: Ողորմելի հայեր, չաքալներու բերան ինկեր էք և ձեր հալրենակիցք Եյվազներու ինկաման շնորհելու ետեւէ հն տակախն: Վառօդի աման պէտք է, ինկաման կը պատրաստեն: Վա՞զ Հայկին թոսերը, վա՞զ:

Ահա Ստեփան Ոսկանը իբրև հայ հրապարակախօս, իբրև իր ազգի առաջադիմութեան, բարօրութեան նուիրուած մի կրթուած հայ: Բայց այդ առաջաւոր մարտնչողի պատկերը թերատ կը մնայ, եթէ մենք չիմանանք թէ ինչ տպաւորութիւն էր թողնում նրա հուժկու գրիչը, նրա սուր ու հատու խօսքը: Գաղափարի մարդուն նանաչելու համար պէտք է նախ և առաջ որոնել թէ ինչ էր նա առաջացնում իր համարձակ, անվախ խօսքով:

Եւ մենք տեսնում ենք Ոսկանի շուրջը կատաղութիւն, տամաների կրծտոց: Թէն «Արևմուտքի» հիմնադիրները խօսք էին առել որ Ոսկանը կրօնի և անձնաւորութիւնների մասին չը խօսէ, բայց դա անհնարին էր այնպիսի մի մարտնչողի համար: Բանակրիւը անխուսափելի է այնտեղ, ուր կոիւ կայ, ուր վէրք տալու և վէրք ստանալու անհրաժեշտութիւնը անկարելի է մոռայութեան տալ: Եւ Ստեփան Ոսկանը պատուց իր առջն քաշած պատը, մի տաք, խիստ բանակրիւ էր մզում իր հակառակորդների գէմ: Նա չարունակում էր ամենան խստութեամբ յարձակուել Այվազօվսկու վրայ. դա գեռ հին հակառակորդ էր,

ինչպէս և կրծիկեան էֆէնդին, բայց նորերն էլ աւելանում էին միմեանց ետիքց: Կ. Պօլսում ամբողջ փոթորիկներ էին յարուցանում Ռոկանի յօդուածները: Այդտեղ հակառակութիւնը բոյն դրեց «Մասիս» թերթի մէջ:

Գլխաւորապէս ինչ զէնք է գործածել կոյր, խաւարապաշտ հակառակութիւնը աղատախօս, առաջադէմ գործիչների զէմ: Ամեն տեղ և միշտ միւնունը -չը պէտք է հրապարակ հանել աղգային պակասութիւնները, պէտք է թագդնել նրանց, պէտք է վարագուրել: Եւ ով այդ բանը չէ անում, նա ազգի թշնամին է, օտար է և վատ: Թիւրքիայում այս էին ասում Ռոկանին, ինչպէս Ռուսաստանում ասում էին Նազարեանցին: Ռոկանը պատասխանում էր այդպէս խօսպներին շատ հիմնաւոր պատճառաբանութիւններով:

Ծածկել, ասում էր նա, բայց կարելի է ծածկել արատները այնպէս, որ աշխարհում ոչ ոք չիմանայ: Եւ ազնուութիւն է արդեօք ծածկելը: Վէրքը բաց անել է հարկաւոր, որպէս զի նրա համար դարման գտնուի: Հայրենասիրութիւն չէ ազգը միշտ գովել, ամեն բանի մէջ արդարացնել և էին նախապաշտումով օտարին թշնամի համարել: Մեր օրերի հայրենական սուրբ դաղափարը աւելի լայն է և անկախութեամբ է գործում: Խաւարենաւ ազդ չը կայ: Իսկ գալով հայերին, աւելի ևս հասկանալի է թէ ինչու շատ արատներ ունինա: Հինգ հարիւր տարի է, նա ցրուած է երկրի վրայ, անլուր տառապանքներ է կրել: Անկարելի է որ նա պակասութիւններ չունենայ: Այն էլ մեծ փառք է նրա համար, որ բոլորովին չէ այլակերպուել և ընտանի առաքինութիւնները գեռ պահում է:

Հպատակ ազգ մը չկայ, որ հայուն գլխաւոր թերութիւնները չկրէ իր վրայ, վասն զի անոնք արդինք են պարագաներու և ոչ ընդարոյտ սովորութիւններ: Ելն որ, ուրեմն, նախատինք չէ ուրիշներու, ի՞նչպէս հայերուն ամօթ պիտի սեպուի... Եւ եթէ ամենքը (ազգերը) միահամուս աշխատին ժամանել և զիրար խարել, ի՞նչ կըլլայ մարդկութիւնը, ուր կը մնայ պատմութիւնը, ի՞նչ կանուանի ճշմարտութիւնը և ի՞նչ դէմք կունենայ բարոլականը... Երբեք մարդ իրաւունք ունինք մարդկացին օրէնքը և իրաւոնքը պաշտպանել մեր ոյժին չափ: Իրբեւ հայ ոչ նուազ իրաւունք ունինք համազգիններու առջեւ խատիւ լիշել այն, որ չիրավի պակասութիւն կը սեպուի ամեն աղգերու մէջ: Զենք կրնար գովել վատութիւն մը այն պատճառով, որ հայերու արդիւնքն է, վասն զի ազգութիւնէն վեր արդարութիւն կայ: Հայ ենք և կաշխատենք այս անունը շարատել, բայց չենք կրնար ծիծաղելի ըլլալ վասն զի հայ ենք...»:

Բայց հակառակութիւնը ուրիշ ճար չունէր, ուստի և խուլ էր մնում այս տեսակ պատճառաբանութիւնների ասած: Նա շարունակում էր իր գոռողը: Նա ասում էր թէ Ռոկանը ոչ միայն

հայրենասէր չէ, այլ և հայ չէ։ Պօլսից Պարիզ էին տեղում անստորագիր հայհոյական նամակները «Բանի մը շաբաթէ ի վեր մանաւանդ—ասում է Ռոկանը—մնանուն նամակները կատաղի գոյն մը կամուռն և հուր ու բոց կը տեղան մեր վրայ. դեռ երեկ չէ միւս օր՝ չորսը մէկէն եկան Պօլիսէ և մեր ձեռքը ինկան փրփրալիր»։ Դրանով, ի հարկէ, բաւականանալ չէր լինի և «Մասիսի» մէջ տպւում էին յօդուածներ, որոնց մէջ պատմում էր Ռոկանի անցեալը (մանաւանդ 1848-ի յեղափոխութեան մասնակցելը) իրքի ապացոյց որ դա մի արատաւոր մարդ է և նախատինք է իր ազգի համար։ Էֆէնդիական այդ մեղադրանքների ամբողջ արժէքը հասկանալու համար բաւական է յիշել միայն այն, որ ամօթալի բան էր համարւում որ Ռոկանը բանտ է նըստել գաղափարի համար…»

Ահա ուր էր համարում մտրակող խօսքի ոյժից շշմած գիշերասէր ուղեղների կատաղութիւնը։ Պօլսի մէջ պատերին կըպարին մի ապագրած թերթ, որի մէջ Ռոկանը անուսնուած էր «անարդ և մոլեռանդ օտարազգի», իսկ «Արեմուաքը»—դժոխյախն անիծեալ թերթ։ Անանուն գրողը ուղղակի ասում էր. «Արեմուաք լրագիրը երեցէք, մրկեցէք, փոչի գարձուցէք որպէս զի ուրիշ մէկն ալ անոր ոճէն կամ յանդքնաբար զրուցուածքէն չխաբուի»։

Արձանագրելով այդ փաստերը, Ստեփան Ռոկանը դառնութեամբ ասում է.

Նւ ալս վերջին խրատը կը տրուի և ի գործ կը դրուի պօլսեցի հայերէն 1859 թուականին։ Բայց այրելը պատասխան չէ։ Բանագրանքի սպառնալիքը ոտքերնուս ներքն դրինք. հրարուի սպառնալիքին վրայ կը թքնենք։ Մեր լրագրին փոշին, օր մը, մեզ աւելի պատիւ պիտի ընէ, քան թէ մեր դոյզն և պակստաւոր աշխատասիրութիւնը։ Թիւրքերը զրգատուն մայրեցին բաղնիք տաքցընելու համար։ Թիւրքի հպատակ պօլսեցի քանի մը հայեր օրպիցի կայրեն իրենց կառողութիւնը մարելու համար, Կերմիթէ կոսաւորչեանք բաական լոյս չունին և կրակի տուած օրոգիրներու լոյսով կուզեն լուսաւորուիլ։ Այս կերպով «Արեմուաքին» թերթելը գոնէ վայրեկն մը լոյս եղան։

Եւ այսքան իրարանցում Ստեփան Ռոկանը պատճառեց 10 ամսուայ իր գործունէութեամբ։ Նոյեմբերի 1-ի համարում «Արեմուաքի» համարատու. Դըլէտը յայտնում էր. «Պ. Սուկանեանը, տաս ամիս «Արեմուաքը» ձրի շարագրելէ ետն, կը հրաժարի իր պաշտօնէ զոր յանձն առեր էր որոշ թէութիւնով։ Ի՞նչ էր պատճառը,—հաստատապէս ասել չենք կարող։ Վերեւում պատմեցիք թէ ինչպէս խափանուեց Ռոկանի ծրագրած

բարեգործական ընկերութիւնը։ Այդ առիթով զրուած յօդուածից մենք բերենք և այն տողերը, որոնց մէջ ասուած է թէ գժութիւններ են ծագել և առաջացած սառնութիւնը Արարատի ձիւների պէս են։ Նոյն այդ յօդուածի մէջ, որ Ուկանի վերջին զրութիւնն էր 1859-ին, ասուած է հետեւալը. «Կը դառնանք յառանձնութիւն, և կը շարունակենք ծառայել օտարին, որու հայը որքան աղի ըլլայ, ինչպէս կ'ըսէ Տանթ, գոնէ խայտասակութեան մէջ շթաթղուիր»։

Եւ իրաւ, հետեւալ համարի մէջ Ուկանը այլ ևս չը կայ։ «Արեմուաքի» հիմնադիրների կողմից տպագրուած բացատրութիւնից միայն այն է իրում, որ Ուկանը չէ մնացել մինչև տարուայ վերջը և եթէ ոչինչ վարձ չէ ստացել, պատճառը այն է, որ թերթի հաշիւնները նրա ցանկութեան համաձայն, պիտի տարուայ վերջում տեսնուէին»։

Ուկանի հեռանալը իսկոյն ազգում է թերթի վրայ։ Հետեւալ երկու համարները ճանաչել անգամ չէ կարելի։ Գրող չը կայ և արտատպումներ են անում. մի կտոր Նալբանդեանի «Թափառական Հրէայ» թարգմանութեան առաջաբանից, մի կտոր Վագնէրի ճանապարհորդութիւնից, որ տպուած էր Վիեննայում և, որ զարմանալին է, Յովան Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի», գրաբար ոտանաւորից էլ մի կտոր։ 22-րորդ համարը աւելի ևս զարմանալի է։ Սնգըրյուխ մնացած թերթը այլ ևս ոչինչ չէ գտնում և տպագրում է Մսկիրի «Հրահանգ քրիստոնէական հաւատոյ» հարց ու պատասխանով գիրքը։ Միայն 23-րորդ համարից «Արեմուաքի» էլի կենդանութիւն է ստանում։ Երեան է զալիս մի գրող, որ տարախտաբար թագնուած է Ժ. Դ. տառերի տակ։ Նա թարգմանում է Քրանսերէնից «Նոր Յունաստանի դիւցազները» վերին աստիճանի հետաքրքրական պատմական գրուածքը և նրանով լցնում է «Արեմուաքի» երկու համարները։ Ինքնուրոյն գրուածք էլ ունի այդ ժ. Դ.-ն։ Դա մի շատ գեղեցիկ յօդուած է, Ուկանի ողով գրած, պատասխան «Մասիսին»։ Նոյն վառվըսուն հայրենասիրութիւնը, նոյն վերտարերմունքը կրօնական ապարդիւն եղբայրասպան վէճերին։

Արեմն, հայք,—ասում է նա իրմւ վերջաբան,—մեր միտթեանը միջոց կրօնքը չէ եղած ու պիտի չըլլայ. մեղ իրարու կապողը ձշմարիս լուսաւորութիւնը պիտի ըլլայ։ Նև լուսաւորութիւնը այն օրը պիտի ծագի, երբ պիտի հասկնանք որ մէկուն օգուտը ամենուն օգուտ է, մէկուն վնասը ամենուն վնաս, վերջապէս երբ որ ամենը մէկուն համար, մէկը ամենուն համար աշխատելու պիտի ակսի... Լուսաւորչական, պատական, բողքական բառերը ջնջենք մեր քաղաքալին բառարանին մէջին, թող

Կռուին անոնց վրայ, թէ որ կուզեն, վահքերու մէջ հանգիստ նստող վարդապետները...

Այս խօսքերով է վերջանում աղատամիտ «Արևմուտքը» 1859-ին։ Յաջորդ տարին նա այլ ևս չէր հրաժարակւում...

Ստեփան Ռուկանը նորից գնաց օտարի հաց գտնելու։ Նա էլի իր գրիչն ու գիտութիւնն ունի ապրուստի միակ միջոց։ Բայց այս անգամ նրա գործունէութեան տեղը Խտալիան է, այս երկիրը, ուր դեռ չէր ցամացել աղատութեան համար թափուած արիւնը, ուր Ռուկանը այնքան ոգևորութիւն և հիացմունք էր գտնում հեռուից։ Դեռ Խտալիան չէր գտել իր միութիւնը և նրա մայրաքաղաքը Տուրինն էր։ Այստեղ հրաժարակուող «Խտալի» լրագրի խմբագիրը դարձաւ Ռուկանը։ Նրա տաղանդաւոր գրիչը ֆրանսիացիների մէջ, ինչպէս տեսանք, գիրք էր ստեղծել նրա համար, ծանօթացրել էր քաղաքական և գրական անուանի գործիչների հետ։ Խտալիայում էլ նա այդպիսի ընդունելութիւն գտաւ։ Իր խմբագրած «Խտալի»-ի միջոցով նա իր վրայ է դարձնում առաջին մինիստրի՝ կոմս Կավուրի ուշադրութիւնը։

Խտալական այս մեծ հայրենասէրը, որի անունը այդ ժամանակ հնչում էր քաղաքակիրթ աշխարհի բոլոր անկիւններում, մի ժամանակ նոյնպէս հրապարակախօս էր, լրագրի խմբագիր։ Նա գնահատեց ճայ հրապարակախօսի ընդունակութիւններն ու գիտութիւնը և մօտեցրեց իրան։ Պատմում են, որ Խտալիայի այդ մեծ մարդը, Ստեփան Ռուկանի զրչի ազատ թոփշքներն ու սուր սլաքները տեսնելով, ասում էր նրան։ «Ձեռնոց քաշեցէք. որպէս զի աւելի մեղմ շարժէք գրիչը» *): Դա, ի հարկէ, չէր նշանակում թէ կոմս Կավուր չէր յարգում այդպիսի գրիչը։ Ընդհակառակը, նա Ստեփան Ռուկանին իր անձնական քարտուղարը զարձրեց և բացի դրանից իր որդիների կրթութիւնը նրան յանձնեց։ Այժմ Ստեփանը կարող էր ասել որ Տակիտոսի թոռը Մեսրոպի թոռից էր ուսում և կրթութիւն ստանում։ Ո՛րքան ժամանուն էր Ստեփանի բախտը օտար երկնքի տակ։ Հոչակաւոր, մնածագործ պետական մարդը, Խտալիայի վերածնութեան և միացման հեղինակներից մէկը, այդ արեելցի մարդուն է մտցնում իր տունը՝ իր անձնական գործերը վարելու և իր զաւակներին դաստիարակելու համար։ Սակայն օտար երկնքը, չը նայած որ այնքան սիրուն յոյսեր ունէր, չէ

*) «Մասիս» շաբաթաթերթ, 1901, № 15։

գրաւում մեր հային Եւ երբ, 1861 թուականին վախճանւում է կավուրը, նա նորից վերադառնում է Պարիզ. նորից նրան գրաւում էր հայի մոռայլ երկնակամարը, որ, այսուամենայնիւ, սիրելի էր նրա հայրենասէր, կարեկյող սրտին:

1864 թուականի փետրուարի մէկին Ստեփան Ռոսկանը դարձեալ սկսում է խմբագրել «Արեմուաքը»: Շատ ցաւում ենք որ աղատամիտ լրացրի այս երկրորդ շրջանի մասին մենք ու չինչ չենք կարող ասել. Թիֆլիսում անհնարին եղաւ գտնել այդ և յետագայ 1865 թուի «Արեմուաքը»: Ուստի պիտի բաւականանք Հ. Գալէմքեարեանի անշափ համառօտ «Պատմութիւն Հայ Լրագրութեան» գրքի տուած տեղեկութիւններով, Այգտեղից մենք իմանում ենք, որ «Արեմուաքը» չը կարողացաւ բուլորել իր երկրորդ տարին. դադարեց, բայց յետոյ էլի տպագրուել սկսեց 1865-ի յունուարից: Այս թուականին էլ «քանի մը թիւ միայն լոյս տեսաւ»: Իսկ ինչպէս և ինչ էր գրում Ստեփան Ռոսկանը: Այս հարցին նոյն «Պատմութիւնը» պատասխանում է այսպէս. «Մինչև 1864 շատ ալիքներ տնյած էին արդէն Սէսի և Վոստորի ավելիքն և իրաց կերպարանքը փոխուած էր: «Արեմուաքի» խմբագրին հասուն միտք մը և աւելի հանդարասիրտ մը ստացած՝ առաջին թուով իւր հակառակորդաց երեսը դարձընելէն ետև (?), սկսաւ աւելի լրջօրէն գիտել արենքը և Կ. Պօլսոյ հայ հասարակութեան, հրատարակութեանց, Սահմանադրութեան զբաղելով՝ խոռված միաքերն աւելի անգորրացուց և յինքն յանկոյց (*):

Վերջին խօսքերը մեզ անհաւանական են թւում: Ստեփան Ռոսկանի մահուան առիթով զրած մի յօդուած (**): Վկայում է որ նա, յամենայն դէպօ, կօմպրօմիսներ չարաւ, իր հին կուռքերը չը ջարդեց, այլ, ընդհակառակն, մնաց նոյն ապստամք ողին, նոյն մարտնչողը: Այդ յօդուածը զրողի ձևաքում եղել են «Արեմուաքի» վերջին համարները, ուրեմն նրանք, որոնք հրատարակուել են 1864-ին: Եւ նա ասում է. «Ճարունակուած հակառակութիւններ կը սկսին պղտորել իր մտածումները: Կաշխատին կաշառել զինքը: Ընտանեկան ազդեցութիւններ բանեցնել կը փորձեն: Ինք աննկուն կը մնայ: Բաժանորդները քիչըցնելով կաշխատին լուսցընել զինքը և իրօք կը յաջողին ալ քիչ մը ատեն: «Արեմուաքը» նիւթական միջոցներէ զուրկ՝ կը ստիպուի դադրիլ»:

*) Եր. 191.

**) „Մասկու“, 1901, № 15:

Այս ժամանակները այս միջոցով շատ հեշտութեամբ էին կարողանում վիակել ազատ հրապարակախօսութեան քերանը: Կարկաթայի «Բանասէրը» այդպէս խափանուեց: Մոսկուայի «Հիւսիսափայլը» 1864-ին նիւթական անապահովութեան զոհուեց: Ստեփան Ռոկանը, ստեփան, չը յուսահատուելով իր թերթի ժամանակաւոր գաղարից, հաւատարիմէ մնում իր սկզբունքներին, գրում, պատրաստում է նիւթեր մինչև որ մի բարերար ձեռք նորից տպագրութեան ծախսը հոգում է և «Արևմուագը» նորից սկսում է լոյս տեսնել: Առաջին համարի մէջ Ռոկանը տպագրում է այս բոլորը, ինչ ունէր պատրաստած գաղարումի ժամանակ: Բերենք այդտեղից էլ մի քանի հատուածներ, մանաւանդ որ Ստեփան Ռոկանի հայերէն գրուածներին մենք այլ ևս պիտի հանդիպենք.

Կամքէս բոլորովին անկախ պարագաներ առիթ եղան որ „Արևմուագը“ երիս ամիս զարգեցաւ ներիշ տեղ և առեն կարելի է որ յիշեմ այս պարագաները, ո՞չ զարտկելու միտքով, հասկա պատիւս պաշտպանելու համար, պատիւ, զոր սուս անձեր, աւելի սուս մարզերու վրայ կոթնելով համարձակեցան նաև օտարազգի անձերու և երթեմն անազգի էակներու բերան ձգել: Կրնացին, ինձի դէմ եղած այս նոր նախատինքը կլեկով և բիւր հրապուրքէ մողուած, աշխատութիւնս շարունակել, բայց մեծ խոհմութիւն չէր այսպէս վարուել, երբ հրապուրքի ներքեն լարեր կը տեսնուէին զիս որսալու համար:

Նւելի լաւ սեպեցի, ամեն բան կլուելէ ետե, վայրիկ մը կանգ առնուլ, չորսդիսնացի, ալս լարերը քննել և հնայր եղածին չսփ պատապարովի, քան թէ անզգոյշ քայլով առաջ անցնի, ինչոյէս երկդիմի ուղեցուցներ յորդորելէ չէին զաղրիր: Ասկէ զատ, պատիւը կը հրամայէր որ կարծուած բարեկամներէ բաժնուէի, պատիւը կը հրամայէր որ անզուսպ բերաններու զէմ լուսութիւն պահէի, պատիւը կը հրամայէր որ... և երբ պատիւը կը հրամայէ, ալս տողերը գրողը ամեն շահ և ակնածնութիւն կը մոռնայ, վասն զի իր կեանքէ վե՛ր դրած է միշտ պատիւը... Վասն չունիմ բնաւ մերկուիլ և նշանաւութիւնս պաշտպանելու համար ոսկեկոփ արձաններու զարնուիլ: Նւելի նեղ պարագաներ անցուցի կեանքիս մէջ:

Նոյն Ռոկանը, նոյն թշնամիները, նոյն կոփւը: Տարիները կարող էին վոփսել արտայայտութեան ձեզ, բայց գաղափարները, սկզբունքները—երբէք...

1860-ական թուականների սկզբից Պարփղի Լատինական թաղում ընդհանուրի ուշազրութեան առարկան մի երիտասարդ էր, որ նոր էր վերջացրել իրաւաբանական բարձրագոյն ուսումը: Ուսանողական ժողովներում, կաֆէներում նա ճառեր էր արտասանում իր որոտալից ձայնով, վիճում էր հասարակական և քաղաքական գործերի մասին: Հարաւցի էր այդ մարդը և ամենքի վրայ խոր տպաւորութիւն էին թողնում նրա արտաքինը,

Նրա եռանդը, իսկօքութիւնը՝ Լատինական թաղի ուսանողութեան մէջ ապրում էր հանրապետական գաղափարը, որ մի օր պիտի դուրս գար նապոլէնի գաճը խորտակելու: Եւ այդ թաղի նշանաւոր անձերից մէկն էր այդ երիտասարդ գաստաբանը, որի անունն էր Լէօն Գամբետա: Դեռ չէր եկել 1868 թուականը, երբ Գամբետան դատարանում արտասանած մի պաշտպանողական ճառով միանուգամից յայտնի դարձեց իր անունը ամրող Թրանսիային՝ իբրև համոզուած հանրապետական:

1865 թուականի աշնանը Թրանսիայի այդ ապագայ մեծ գործիչը երկաթուղու կայարանում ճանապարհ էր գնում իր մի մօտիկ բարեկամին: Ներկայ էր և յայնի գրող Էդմոն Արու: Ճանապարհորդը մեր Ստեփան Ոսկանն էր: Նա գնում էր իր հայրենիքը, Զմիւռնիա: Եւ զնում էր՝ գործելու ծրագիր կազմած: Նրան էին յանձնել Մեսրոպեան գարոցի տեսչութիւնը և Զմիւռնիայի բոլոր հայ գարոցների զեկավարութիւնը:

Մի գաղափարական գործիչ կարող էր շատ բաւարար համարել այդքան լայն ասպարէզը: Ոսկանին նա հրապուրեց:

Եւ իգնար այս անգամ: Հայրենի հողի վրայ աշխատելը, ճիշտ է, անդիմադրելի հրապոյր ունի: Բայց կարող էր Ոսկանի շխտակ բնաւորութեան տէր մի մարդ գործել այստեղ մի այնպիսի ասպարէզում, ուր տէրը և կարգագրողը այն իսկ գասակարգն էր, որի դէմ այնքան կոռուկ էր Ոսկանը: Հայրենի իրականութեան մէջ Ոսկանները զեռ տեղ չունէին: Եւ սիալ էր այդ ճանապարհոնութիւնը: Ոսկանը գնում էր հայրենիք իր ազգի համար ընդ միշտ կորչելու:

Մի տարի թէ տարի ու կէս Ստեփան Ոսկանը վարեց տեսչական պաշտօն: Մեզ այնքան շատ չէ հետաքրքրում այդ մանկավարժական գործունէութիւնը: Նա, ի հարկէ, ունէր իր մէջ նորութիւններ, ի հարկէ համապատասխանում էր Ոսկանի աշխատրհայեացքներին և ուզզութեան: Բայց գարոցական մթնոլորտի համար չէր ստեղծուած Ոսկանը: Առաջաւոր հերոս մարտընչող հասարակաց գարոցի, մամուլի մէջ—ահա Ոսկանի աեղը: Կարող էր այդ աղատ, սեփական պատիւն ու արժանաւորութիւնը հասկացող, կամքի և գաղափարի տէր մարդը այնպէս լինել, որ հաւանութիւն և համակրանք գտնէ կղերական և աղայական դասակարգից, այն պահպանողական, լուսավախ կաստայից, որի ձեռքին էր գարոցական գործը: Անկարելի էր այդպիսի մի բան:

Ստեփան Ոսկանի ուսումնական ծրագիրը խուլ դժգոհութիւն է առաջացնում: Աղայութիւնը, թիւրքական բէժիմի տակ միծացած մարդիկ էին ուսումնական մասին ուզզութիւն առւող-

Ները։ Սկսւում են մեր դպրոցական աշխարհում այնքան սովորական ինարիզները։ Հայ ուսուցչի անձնաւորութիւնը, պատիւը այժմ էլ ապահովուած չեն կամայականութիւններից։ Ի՞նչ կը լինէր այն ժամանակները, երբ ազատ խօսքը, եւրոպական հասկացողութիւնները այնպիսի մեծ գժուարութեամբ էին պատուատւում մէր մէջ։ Դժուար չէ երեակայել այն հոգեկան տաջանքները, որ կրած պիտի լինի Ռոկանը իր տեսչութեան ժամանակ։ Ազատութեան զինուոր գրուել, տարիներով հալածուել ազատ գաղափարների համար և այժմ—մի խումբ աղաների հրամանաւարութեան տակի Պէտք էր խունկ ծխել այդ հրամանաւարներին—այնպէս էր սահմանել իրականութիւնը։ Բայց Ստեփան Ռոկանը մէջից ծալուող մէջը չունէր։ Ռոճկի հարց են յարուցանում։ Փողի իշխանութեամբ են ուզում ցոյց տալ իրանց ահապին ոյժը։ Եւ Ռոկանը զգուած հեռանում է պաշտօնից։

Այդ պայքարի մէջ նա կորցրեց իր հաւատը գէպի իր ազգը, բայց ոչ դէպի մարդիկը։ Հայրենասիրութիւնը, ծածկուած բազմաթիւ վէրքերով, տեղի է տալիս գէպի մարդկութիւնն ունեցած սէրին։ Մենք արգէն քանի անդամ ականատես եղանք որ Ռոկանը, հեռանալով իր ազգին ծառայելուց, իսկոյն սկսում էր աշխատել մարդկութեան համար։ Այժմ էլ տեղի ունեցաւ միւնոյնը, բայց ընդմիշտ։ Նա այլ ևս չէ հեռանում Զմիւռնիայից և հիմնում է «Ռէֆորմ» անունով Գրանսերէն լրագիրը։ Այդ գործն էլ գանում է նրա միակ զրադմունքը մինչև կնանքի վերջը։ Հայկական գործերից և գրականութիւնից միանդամայն հեռու է պահում իրան։ Երեսուն տարուց աւել։ Այգան ժամանակ Ստեփան Ռոկանը մնուած էր հայոց գրականութեան համար։

Ի՞նչ կարող ենք ասել այս առիթով։ Փռքրոգի, վախկոտ չէր Ռոկանը, ոչ էլ տոկունութիւնից զսուրկ։ Ո՛քքան մազառել էր, քանի անդամ ճակատը բաց, յաղթական տեսքով երեացել էր իր բազմաթիւ թշնամիների, բայց աւելի բազմաթիւ անտարբեր, զեւ ևս անպատճաստ ազգակիցների մէջ։ Եւ քանի անդամ ստիպուած է եղել հեռանալ այն ասպարէզից, որին պատիւ էր բերում ու օտարի հայոց որոնել։ Կարող ենք ասել թէ նա մինչև կեմանքի վերջը պիտի տանէր այդ ծանր խաչը։ Ո՛չ կազնիներն էլ են տապալւում, իսկ մեր ժոաւոր-գրական աշխարհում հող ու հիւթ չը կայ կազնիներ ամեցնելու։ Մեզանում եղել են շիտակ, ճկուն, բայց բարակ ծառեր, գրանց էլ կատրել է մեր հորիղմանի վրայ բանացած սառն քամին։ Յիշենք Ստեփանոս Նալպարեանցին։ 1864 թուականից նա մնուած էր

հայոց գրականութեան համար և այդպէս մնաց ամբողջ 14 տարի։ Յիշենք Նալբանդեանցին, որ շատ հասկանալի դառնութեամբ առում էր թէ պիտի կոտրատէ իր գրիչը և այնուհետեւ հայ աղքի անունը Լսելին՝ պիտի փախէ։

Մեր առաջին մարտնչողները շատ էին տապալում։ Դա նրանից չէ, որ այդ մարդիկ վիսրուն ու թուլամորթ էին, այլ նրանից, որ շրջապատը խիստ անբարեյածող էր, որ չը կային շաւիլներ, որ նրանց սուրբ տաճանքներով գեռ ճանապարհ չէր հարթուել։ Կոռուի մէջ զինուորների առաջին շարքը միշտ հեշտ է զոհուում, շուտ է զոհուում։ Բայց նրան հետեւող շարքերը արդէն այնպէս չեն...

Ի՞նչպէս էր Ստեփան Ոսկանը խմբագրում իր «Խէֆօրմը»։ Սա արդէն հայոց գրականութեան վերաբերուող հարց չէ։ Կասենք միայն որ նա իր սուրբ գրիչը չը ծախեց և ոչ էլ վարձու տուեց։ Զմիւսնիայի Փրանսիական զաղթականութեան սէրն ու համականքը վաստակեց նա իր հրապարակախոսութեամբ։ Եւ ահա ինչ էր գրում մի Փրանսիայի նրա մահուան առիթով.

«Իր զրչովը մարտնչած է զաղափարներու և սկզբունքներու համար, որոնց ինքն անկեղծօրէն յարած էր և երբէք հասարակաց թերթ մը առեստական ձեռնարկը մը չէր նկատեր։ Զարմանալի կրնաց թուլի այս՝ անոնց որ ստակ շահելու համար կաշխատին, բայց Ս. Ոսկան այս նապատակաւ չը հրատարակեց և ա Խէֆօրմ» լրագիրը։ Եւ ասոր մէջ փնտոելու է իր ոյժը, և այս է որ կը բացատրէ իր ներշնչած ազգեցութիւնը մեր ընկերութեան ընտիր գասակարգին վրայ ։^{*)}»։

Նա քննադատում էր, յարձակում էր, բայց համոզմունքից գրդուած։ Հարստանալու շատ առիթներ ներկայացան, բայց նա աղքատ մնուաւ, որովհետեւ այդպէս ուզեց։

«Այս աշխարհիս վայելքներուն և հաճոյքներուն ծարտու չունէր, — շարունակում է նա. — իր բարձր և հզօր իմացականութիւնը չէր հասկնար զայն, և միմիայն մտաւորական հաճոյքն էր որով կը պարարէր։ Իր երազող և բանաստեղծ հոգիովը ամեն բանէ վեր բնութիւնը կը սիրէր, ճշմարիտ սիրահարի մը աչքով կը նկատէր դալարիքը, ծառերը, ծաղիկները։ Ստեփան Ոսկան գերագոյն իմացականութիւն մ'էր, ուզեց մը կազմաւորուած փիլիսոփայութիւն, գիտութիւն և գրականութիւն մշտկելու համար»։

^{*)} „Քիւլանդիոն“ № 1376։

Գեկոնեմբեր, 1901.

Գաւառական մի թերթ, այն էլ ֆրանսերէն լեզուով Զմիւռնիայի մէջ, չէր կարող, ի հարկէ, շօշափելի արդիւնքներ տալ իր խմբագրին։ Ստեփան Ռոկանը մեծ պահանջներ էլ չունէր. մինչև վերջը նա ամուրի մնաց, ապրում էր հիւրանոցի մի սենեակում։ Նրա զմիւռնացի երկու բարեկամներ 40 ռոկի հաւաքեցին որ տան նրան, բայց նա մերժեց ընդունել, չը նայած իր չքաւորութեան։

Եւ այդտեղ էլ, հիւրանոցում, մենակութեան ու տնանկութեան մէջ, իր 76 ամեայ գլուխը բարձի վրայ գրեց այն մարդը, որ երիտասարդութեան տարիներում այնքան լաւ աշխատում էր իր ազգի համար։ Նրա բարեկամներից մէկը, որ գնացել էր այցելութեան, գրում է հետեւեալը. «Կը վարանէի թէ ինչպէս կրնայի այդ արժանաւոր մած մարդը մխիթարել քաջալերել։ Ալեռ և պատկառելի ծերունին կելէր կը նստէր իւ անկողնոցն մէջ։ և ըսդ հակառակը ինքը զիս կը մխիթարէր, կը քաջալերէր, խօսելով գիտութեան հրաշալեաց վրայ» *).

Նա մեռաւ ներկայ տարուաց փետրուարի 23-ին իր բնակարանում, հիւրանոցի հինգերորդ յարկում, մի մութ ու փոքր սենեակի մէջ։ Նրան թաղեցին բաւական աչքի ընկնող շուքով...

Ստեփան Ռոկան... Շատ քչերն են լսել այս անունը, մասնաւանդ շատ քչերն են կարդացել նրա զրուածքները։ Մոռացուած, անյայտ է այդ ուժեղ, շիտակ բնաւորութիւնը։ Բայց նրան չի մոռանայ մեր մտաւոր զարգացման պատմութիւնը։ Այդտեղ այդ անունը, որ այժմ այնքան քիչ բան է ասում մոռացկոտ սերունդների սրտին ու մտքին, գրաւած ունի փառաւոր տեղ նախ և առաջ իբրև առաջին ազատ հրապարակախօս, իբրև զարթեցնող ըմբոստ ոգի։

Նա մեր մեծ երախտաւորներից մէկն է։ Եւ մենք, գրչի մարդիկս, որ այսօր աշխատում ենք նրա և նրա նմանների սուրբ ոգեստութեամբ հարթած ասպարէզում, պատկառանքով գլուխ ենք իջեցնում նրա նուիրական յիշատակի առջե...

Լ. Է Օ

*) „Մասիս“ 1901 № 26:

ՄԱՏԵՆԱԽՕՍԻԹԻՒՆ

52) Материалы по вопросу о фальсификации пищевыхъ продуктовъ съ приложениемъ законоопроекта. Одесса, 1901 г., цѣна 2 руб. Изд. „Вѣстника Винодѣлія“.

Քաղաքակրթութեան հետ ձեռք ձեռքի տուած զարգացում է մանաւանդ սննդառութեան համար գործ ածուող արդիւնքների կեղծումը կամ ֆալսիֆիկացիսն։ Մեծ քաղաքների շուկաներում, օրինակ, դժուար է ճարել մաքուր, բնական գինի, կաթ, մեղր և յայլն, որովհետեւ վաճառականը գերադասում է աւելի մեծ շահ ստանալ՝ սպառողներին ծախելով իր վրայ աւելի աժան նստող կեղծած արդիւնքները, քան դրանց իսկականները։

Անդատու արդիւնքների կեղծումը յաճախ կարող է նոյն իսկ անվաս լինել սպառողների առողջութեան համար, բայց, չը նայած դրան, ֆալսիֆիկացիան մեծ հարուած է հասցնում ընական կամ մաքուր արդիւնքներ պատրաստողներին, որոնք անկարող են իրանց ապրանքը, կեղծածների նման, աժան ծախել։ Անկարող լինելով մրցել կեղծ ապրանքներ ծախողների հետ, արդիւնաբերողը ստիպուած է լինում աւելի նուազ չափերով զարգացնել իր տնտեսութիւնը։ Օրինակ, եթէ վաճառականը իսկական մեղրի փոխարէն գերադասում է ծախել զանազան աժան ու անվաս նիւթերից պատրաստած արուեստական մեղր, դրանով, ի հարկէ, նա վաս է հասցնում երկրի մեղուապահութեան, որովհետեւ շուկայում իսկական մեղրի պահանջի մի մասը լրացւում է մի ինչոր արուեստական քաղցըր զանգուածով։ Հետեաբար, մեղուապահը պէտք է աւելի նուազ չափերով արդիւնաբերի։

Պարզ է, ուրեմն, որ ֆալսիֆիկացիայի հարցը միայն ժողովրդի առողջապահութիւնը չէ շօշափում, այլ և նշանակութիւն ունի նրա տնտեսութեան կանոնաւոր զարգացման տեսակէտից։ մինչդեռ հարցի այդ կողմի վրայ ուշադրութիւն

չէ գարձնում գոյութիւն ունեցող օրէնքը, որ պատիժ է սահմանում միայն՝ սպառողի առողջութեան վնասող Փալսիֆիկացիաների համար։ Այսպէս է Ռուսաստանում։ Իսկ Արևմտեան Եւրպայում վերջին քսան տարիների ընթացքում թէ կառավարութիւնները և թէ հասարակական զանազան հաստատութիւնները մեծ եռանդով սկսել են մաքառել ժամանակակից առևտութած այդ չարիքի—Փալսիֆիկացիայի դէմ։

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ռուսաստանում դեռ շատ քիչ բան է արուած այդ չարիքի դէմ մաքառելու գործում, „Ենտունի Վիոդելիա“ ամսագրի խմբագիր Վասիլի Թայիրօվը (հայ) ձեռնամուխ է եղել մամուլի միջոցով բազմակողմանի քննութեան և լուսաբանութեան ենթարկել Փալսիֆիկացիայի հարցը և նրա դէմ ձեռք տունելիք միջոցները։ Նրա հրատարակած «Նիւթերի» մէջ բերուած են այդ հարցի վերաբերեալ զանազան մասնագէտների կարծիքներ, յիշատակուած են զանազան հասարակական հիմնարկութիւնների կողմից ձեռք առած միջոցները և տեսութիւններ են արուած եւրոպական երկրներում Փալսիֆիկացիայի դէմ գործ գնուող օրէնքների և միջացների մասին։ Մի խօսքով, այդ գրքի մէջ ի մի են ժողովուած կեղծման հարցին վնրաբերեալ առատ և բազմակողմանի նիւթեր։ Այդ նիւթերի ուսումնամասիրութեան վրայ հիմնուելով, պ. Թայիրօվը առաջարկում է՝ մննդատու արդիւնքների կողման վերաբերեալ մի օրինագիծ, բայց արողական գրութեամբ հանդերձ։

Մեզ թւում է, որ բացի օրէնքների, պետական ու հասարակական վերահսկողութեան և վաճառով ապրանքների լուրջութաօրիական քննութեան՝ կայ մի միջոց էլ Փալսիֆիկացիայի դէմ կոռուելու համար, որի մասին ոչինչ չէ ասուած յիշած «Նիւթերում»։ Մենք մի անգամ արդէն առիթ ենք ունեցել յիշել *), որ սպառողական ընկերակցութիւնների բացուած խանութները լաւ միջոց են կեղծած ապրանքները շուկայից վերացնելու։

Սպառողական ընկերակցութիւնները զնելով ապրանքներ առաջին ձեռքից, արդիւնաբերողներից, դրանով այս վերջիններին պաշտպանում են կեղծ ապրանքներ պատրաստողների մրցութից։ Հետեաբար, կօօպերատիւ գաղափարի լայն տարածումը ժողովրդի մէջ և ընկերակցութիւնների զարգացումը ոչ պակաս դրական միջոց կարող են համարուել Փալսիֆիկացիայի դէմ մաքառելու, քամ օրէնսդրական մանրակրկիտ բնողամնն-

*) Համեմատի՛ր „Մուրճ“ № 6, երես 206։

գացիան, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք որ շատ քիչ սպառողներ կը գտնուեն, որոնք «հաւաս» ունենան իրանց ենթարկել դատաստանական քաջըշուկների մի քանի փունտ կամ շիշ կեզծած ապրանքների համար...

Սակայն մինչև որ կօպերատիւ շարժումը բաւականա-
չափ տարածուի ժողովրդի մէջ—անհրաժեշտ է այս «Նիւթերի»
մէջ յիշած միջոցներով սանձահարել մեր միջնորդ առետրա-
կանների խարդախսափութիւնը։ Ուրեմն պէտք է չնորհակա-
լութեամբ ընդունել պ. Թայիրօվի նախաձեռնութեամբ և ջան-
քերով զլուխ բերած այդ լուրջ հրատարակութիւնը, որից թէ
կառավարութիւնը և թէ հասարակական հիմնարկութիւնները
կարող են լիտակատար գաղափար կազմել ֆալսիֆիկացիայի
հարցի մասին և հնարաւորութիւն ունեն ընտրել կեղծման դէմ
մեր պայմաններում աւելի մեծ դիւրութեամբ գործադրելի
միջոցները։

L. U.

53) А. АЛАВЕРДЯНЦЪ. „Кончина А. С. Грибоѣдова по армянскимъ источникамъ“. Спб., 1901.

1891 թուականին հրատարակուեց Գալուստ Շերմաղա-
նեանի «Եփոթեր հայոց պատմութեան համար» գիրքը։ Շերմա-
զանեան մի շատ հետաքրքրական տիպ է մեր գրականութեան
մէջ։ Ներսիսևան դպրոցի առաջին սաներից մէկը, նա վաճա-
ռական էր, բայց շատ սիրում էր գրականութիւնը և ունի բա-
ւական գրուածքներ։ Սիրում էր նա մանաւանդ պատմութիւնը
և հաւաքում էր պատմուկան նիւթեր։ Պարսկաստանում վաճա-
ռականութիւն անելիս, հաւաքել է տեղեկութիւններ՝ այնտեղ
մեծ պաշտօնների հասած հայերի մասին։ Այս տեղեկութիւննե-
րից ել նա կագմել է իր ծնիւթերը։ Այդ զրքի մի զլուխը, որ
խօսում է Միքայելաղուք անունով ներքինացրած հայի մասին,
թարգմանել է պ. Արահվերդեանց և տպագրել «Русская Стা-
рина» ամսագրում, որտեղից և արտատպել է այժմ։

Ծերմագամնեանը իր գրքի մէջ տալիս է զանազան տեղեւակ մարդկանց պատմուածքները. դրանք աւանդութիւններ են, բայ-րանացի պատմութիւններ, որոնք, ինչպէս յայտնի է, մի յայտնի չափով միայն կարող են պատմական նիւթ համարուել. Ահա այդ աւանդութիւններից մէկն է և Միրզա-Եազուքի պատմութիւնը:

1829 թուականին Թեհրանում սպանուեց ոռւսաց գեսպան Գրիբօեդով, որ յաւէրժապրել է իր անունը ոռւսաց գրականութեան մէջ «Գօրէ օրէ յմա» գեղեցիկ հեղինակութիւնը տառւմ է թէ գեսպանի սպանութեան պատճառը Միրզա-Եազուրն էր: Սա երեանց մի հայ էր, Մարզարեան աղքանունով, որ երիտասարդ հասակում գերի է ընկել պարսիկների ձեռքը, 1804-ի ոռւս-պարսկական պատերազմի ժամանակ: Լինելով մի շատ գրասէր մարդ, նա աչքի ընկնող դիրք է դրաւում Շահի ներքինիների մէջ: Բայց նա չէր մոռացել քրիստոնէութիւնը, թէև մահմեղականացած էր և մտածում էր հայրենիք վերադառնալու մասին: 1828 թ. պատերազմից յետոյ երբ Գրիբօեդով, իրբ գեսպան գնում է Պարսկաստան և պարսիկների տարած գերիներին ազատելու և հայրենիք վերադարձնելու գործովն է զբաղւում, Միրզա-Եազուրը դիմում է նրան և խնդրում է իրան էլ ուղարկել հայրենիք: Դիսպանը ընդունում է նրան Բայց պարսիկ ամբոխը գըրս գըռուում է որ մի մահմեղականացած համարձակում է նորից քրիստոնեայ դառնալ: Եւ որովհետև շարիաթը հրամայում է այդպիսի մարդուն սպանել, ուստի զինուած ամբոխը թափում է ոռւսաց գեսպանատան վրայ, ուր գանւում էր Միրզա-Եազուրը և սկսում է քանդել ու աւերել: Սպանում են գեսպանատան բոլոր ծառայողները, սպանում է Միրզա-Եազուրը, ամենից յետոյ և Գրիբօեդովը:

Մեր կարծիքով, այս պատմութիւնը շատ քիչ արժեք ունի հէնց այն պատճառով, որ գեսպանի սպանութեան կարեւոր և քաղաքական տեսակէտից վերին աստիճանի ծանր գործը միմիայն մի հայի պաշտպանութեան հետեանք է համարւում: Անկասկած, Միրզա-Եազուրն էլ մի կաթիլ իւղ էր, որ ընկաւ վառուած բոցերի վրայ, բայց հազիւ թէ նրան կարելի լինի համարել մեծ հրդեհի միակ պատճառը Ասել այն, ինչ ասել են ականատեսները կամ ժամանակակիցները Շերմազանեանցին, կարող են այնպիսի մարդիկ, որոնք ծանօթ չեն պատմական հանգամանքներին, որոնք նղելութիւնների մասին կարծիք կազմում են մի կամ մի քանի արտաքին երևոյթներից: Գրիբօեզօվի սպանութիւնը, անկասկած, աւելի խոր պատճառներ ունէր: Գրիբօեզօվը այն պետութեան դեսպանն էր, որ խորտակել էր Պարսկաստանի ոյժը, որ զուրս էր վոնդել պարսիկներին ամրող Անդրկովկասից: Դա մի ահազին պայքար էր, և ով ծանօթ է թէ որպիսի կատաղութեամբ ու անհաշտ թշնամութեամբ էր Պարսկաստանը դիմադրում ոռւսներին, սկսած կաջարեան հարստութեան հիմնադիր Աղա-Մամէդ խանից մինչև 1829 թուա-

կանը, նա շատ լաւ գիտէ թէ որքան դժգոհութիւն և ատելութիւն պիտի լինէր ամբարուած թեհրանում ոռւսնկրի դէմ: Դեռ նոր էր վերջացել 1826—1828 թուականների ոռւս-պարսկական պատերազմը, որ այնքան ստորացրել էր Պարսկաստանը, ոչընչացրել էր նրա ոյժն ու նշանակութիւնը: Ահա թէ ուր պէտք է որոնել Գրիբօեզօվի սպանութեան բուն պատճառը: Եւ դրա ապացոյցն է այն, որ պարսից կառավարութիւնը ոչինչ միջոց ձեռք չառաւ ոռւսաց գեսպանատունը քանդող բազմութեան դէմ:

Կարծես բերանացի պատմութիւնների բուն արժէքը ցոյց տալու համար է որ պ. Ալահվերդեանը իր թարգմանութեան կցել է և մի այլ ականատեսի պատմուածք, վերցրած լրագրից: Այստեղ արդէն Գրիբօեզօվի սպանութեան պատճառը Շահի հաւրեմի մի կին է, գերի վրացուհիներից, որ գեսպանի միջոցով ուզում էր ազատուել հարեմից ու հայրենիք վերադառնալ:

Այսքան հակասական են «ականատեսների» պատմուածքները. և հէնց այդ պատճառով էլ նրանք շատ մեծ արժէք չունեն:

Պ. Ալահվերդեանի թարգմանութիւնը, ընդհանրապէս, բաւարար կերպով է կատարուած: Տեղ-տեղ մենք նկատեցինք հայերէն բնագրի լաւ չը հասկացած լինելը: Յիշենք և մի տարօրինակ հանգամանք, պ. Ալահվերդեանը հայերէն գլխատառ Զ-ն կարգացել է Զ: Այսպէս իմամ-Զումէ մօլլայի անունը ոռւսերէնում բազմաթիւ անգամ գրուած է իմամ-Զումէ (Имамъ-Зымъ, եր. 15), Զեանդեանի տեղ գրուած Զեանդեան (եր. 19):

Լ.

54) «Գէօտէ», համառօտ կենսագրութիւն (պատկերներով). Կաղմեց
Ս. Թառայինաց. Թիֆլիս, 1900, գինն է 30 կ.:

«Բանաստեղծների թագաւորի»—Գէօթէի կատարելատիպ կենսագրութիւնը պակասում է նոյն իսկ Գերմանիայում, հանձնարեղ բանաստեղծի հայրենիքում: Դա այն կենսագրութիւնն է, որ էրիխ Շմիդտի ամելով՝ «կարողանար շատ բան պատմել, բանակութից հեռու լինէր, և գիտնական հիմնաւորութիւնը ոճի պարզութեան հետ միացնէր»:

Գեօթէն առաստ նիւթ է մատակարարել գրական այնպիսի խոշոր քննադասների ինչպէս են՝ Շերէր, Հէն, Դիւնցէր, Քարլացլ, Լիւիս, Գրիմ, Բրանդէս և այլն: Բայց այս հեղինակաւոր անձնաւորութիւնների գրիչը չէ պատկերացրել Գէօթէի

ամբողջական գէմքը, մէկը ուսումնասիրել է երիտասարդ Գէօթէին, երկրորդը՝ նրա րօմանտիկական շրջանը, երրորդը հետազօտել է նրա ստեղծագործութիւնները լեզուարանական, կրօնական կամ բնագիտական տեսակէտից, վերջապէս չորրորդը՝ իր սեփական տեսակէտից՝ այսինքն այնքանով է հետաքրքրուել պարզելու մեծ բանաստեղծի կեսնքը, որքան սա իր գուանած աշխարհահայեացքի իդէալն է մարմնացնում:

Ուսումնասիրութեան ճիւղերի այս տարբերութիւնը, բազմազմութիւնն անխուսափելի էր, որովհետեւ ուսումնասիրութեան նիւթը մի հասարակ անձնաւորութիւն չէր, այլ մի հսկայ՝ թէ իրեն մարդ և թէ իրեն գեղարուեստի և գրականութեան ներկայացնուցիչ:

Երբեմն բաւական լիակատար էր համարւում անգլիացի տաղանգաւոր զրոյ՝ Լիւիսի «Գէօթէի կեանքը», որ առանձնապէս չնորհիւ իր սահուն լեզուի և գրաւիչ ոճի՝ շուտով համարենա տմբողջ Եւրոպայում հանրամատչելի դարձաւ։ Բայց Լիւիսի զիրքը վագուց արգէն հնացել է, և «Գէօթէ զրականութիւնը» բնականաբար առաջ պէսք է բերեր գիտութեան և ժամանակակից քննադատութեան պահանջներին համապատասխանող աւելի ընաիր աշխատութիւններ։ Անցեալ դարի իննսունական թուականների առաջին քասորդից սկիզբ գրուեց այն պատկառելի աշխատութիւնների չարքին, որոնք կապուած են Ա. Բիլչօվսկու, Կ. Հայնեմանի, Ռ. Մ. Մայէրի, Վիթլօվսկու, Ռ. Շտայնէրի և ուրիշ յայտնի մնունների հետ։ Այս նոր հեղինականների գործերը, հասկանալի է՝ աստիճանական որոշ տարբերութեամբ, առհասարակ շատ մօտ են երիխ Շմիդաի վերոշնչեալ իդէալին։ Արանցից մէկին Բերլինի համալսարարի պրիվատ-դոցէնտ Ռ. Մ. Մայէրի աշխատութիւնը, մինչև իսկ մի արժանաւոր մրցանակով պատրիեց։

Պ. Թառայեանցի կազմած կենսագրութիւնը, որ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան վերջին հրատարակութիւններիցն է—համարենա ամբողջովին Լիւիսի գրքի հետեղութեամբ է գրուած և յաճախ քաղուածօրէն թարգմանուած՝ նոյն գրքից։ Այս կէտը շեշտում է և ինքը հեղինակը իր երկուող յառաջաբանումն Հետեաբար Լիւիսի պակասութիւնները ազգել են հայ հեղինակի կազմած կենսագրութեան վրայ։ Սակայն պ. Թառայեանցի նոյնաւորակը, անկասկած, աւելի համեստ է եղել՝ նա իր «համառօտ կենսագրութեամբ» ձգտել է հայ ծարաւի ընթերցողներին ծանօթացնել Գէօթէի կեանքի և մասամբ՝ գործերի հետ Բնականաբար նա իր առաջնորդող սկզբունքը պէտք է բնարեր՝ ըստ կարելոյն հանրամատչելի լինել։ Ուրիշ

ազգիւրներից՝ առանձնապէս՝ նորազոյններից, որոնցից յիշատակուում է միայն Բիլօվսկու անունը, —հեղինակը շատ քիչ է օգտուել:

Պ. Թառայեանցի գիրքը բազկացած է 9 գլուխներից և մի փոքրիկ վերջաբանից՝ «Մահարձան» վերնագրով։ Այս իննը վլուխներում հեղինակը համառոտակի խօսում է բանաստեղծի կեանքի, թուուցիկ կերպով՝ գրական գործունէութեան, մասամբ և բնագիտական աշխատութիւնների մասին։ Գրքի զուտ կենսագրական մասը բաւական ամիուի է և աջող։ Այս մասը առհասարակ կրկնակի գրաւիչ կը լինէր, եթէ հեղինակը աւելի օդտուէր մեծ բանաստեղծի բազմաթիւ նամակներից։ Ընդհանրագէս նամակները կեանքի նկարագրութեան ամենալճիա և հաւատարիմ ազգիւրներից մէկն են կազմում։ Հեղինակը յաձախակի ի նկատի պէտք է ունենար նաև Գէօթէի նշանաւոր խնդնակենսագրութիւնը՝ «Wahrheit und Dichtung», որի մասին նա առհասարակ ոչ մի յիշատակութիւն չէ անում։

Մեր նորատակից գուրս է մի համառօտ մատենախօսութեան մէջ երկար կանգ առնել Գէօթէի բազմաբովանդակ կեանքի վերաբերեալ համապատասխների վրայ Բայց թոյլ ենք տավիս մեզ միայն մի-երկու նկատողութիւններ անել։ Պ. Թառայեանցը տիկին Փօն Շտայնի սէրը դէպի Գէօթէն՝ շատ է իդէալականացնում։ Տիկինը յիրաւի հասարակ արարածներից չէր, «մի փափկասուն, նրբազգաց (ծ) և դէպի բարձրը ձկառզ հոգի էր», բայց միաժամանակ մի կին էր բառի բուն նշանակութեամբ, ազատ չէր իրանց սեսի հիմնական առսնձնայատակութիւններից՝ խանդի կողմից անզուսպ, ինքնասիրութեան մէջ՝ հիւանդութէն նա 10 տարուց աւելի բարեկամական մտերիմ յարաքերութեան մէջ էր Գէօթէի հետ, բայց վերջը չը դանդաղեց՝ առանց միջոցների խարութեան՝ ստուեր ձկել մնծ բանաստեղծի անուան վրայ Բաւական է յիշել նրա թողած՝ կտնացի բամբասամքներով լի՛ յայտնի նամակները և մանաւանդ մի պատկիլ-դրաման՝ «Դիբո», ուր անուանարկուում է ոչ միայն Գէօթէն, այլ և իր կինը՝ Քրիստինէն։ Հեղինակը մասսամբ կիւփախն, գուցէ մասսամբ էլ Բիլջօվսկուն հետեւելով Գէօթէի իտալական ճանապարհորդութեանը մեծ նշանակութիւն է առլիս։ Պէտք է նկատել, որ Գէօթէի թէ ընդհանուր և թէ առանձնապէս գեղարուեստական աշխարհահայեացքի զարգացման, կազմակերպուելու ընթացքում աչքի է ընկնում բաժանման, տարբերութեան մի սահման—եթէ կարճ արտայայտելու լինենք՝ Գէօթէն իբրև բնութեան, միւս կողմից՝ իբրև արուեսի երկրպագու։ Առաջինը Գէօ-

թէի երիտասարդ շրջանն է, հանձարեղ բանաստեղծը բնութեան կախարդիչ հոգեզմայլութեամբ համակուած՝ ստեղծագործում էր մի յախուռն, անխուսափելի թափով և միանգամայն ինքնարուղի ոյժով. սա այն շրջանն է՝ երբ նա ոգեսուում էր Ռուսոյի և Հէրդէրի նման անձնաւորութիւններով, որոնք 18-րդ դարում բնութեան պաշտամունքի սկզբնական հեղինակներն էին: Երկրորդ շրջանում մենք արդէն տեսնում ենք առենական Գեօթէին. նա այժմ սառն է, հանգիստ և անխոսվ, երիտասարդական բուռն ջերմութիւնից ազատ՝ զգացմունքի և յոյզերի ներդաշնակութեան բոլից անցած. այն անզուսպ հիացմունքը, որ նա տածում էր դէպի բնութիւնը՝ արդէն մեղմացել է և նա այժմ կլասիկական, հելլէնական ստեղծագործութիւնների մէջն է ու ըստում բարձրագոյն գեղարքունակութիւնը:

Ահա այս երկու շրջանների տարբերութիւնը, շատերի կարծիքով, տեղի է ունենում շատ սուր կերպով, յանկարծակի. և տարբերութեան վճռական սկզբնակալիքը հէնց Գէօթէի իտալական ճանապարհորդութիւնն է համարում: Բայց սա արդէն չափազանցութիւն է: Իտալիայում Գեօթէն, անշուշտ, ստացաւ զօրեղ զրդումներ, ազգու տպաւորութիւններ, դիտելու և վերարտադրելու նոր ձևեր—սա երեսում է հէնց այն եղանակից, որով նա բնութիւնն է նկարազրում իր «Իտալական ճանապարհորդութեան» մէջ. նա բնութեան դէմ առ դէմ այլ ևս խորապէս տպաւորուող, ինքնամոռաց, զգայուն բանաստեղծը չէ, այլ վերլուծող, խորհրդածող մի անձնաւորութիւն, այնպէս որ նրան այժմ լեռնաշղթանների կազմութիւնը, ձևակերպութիւնը կամ գանազան հանքերի չերտերը, կարծես, աւելի են գրաւում քան թէ բնութեան իսկական գեղեցիւթիւնը: Բայց վերոյիշեալ երկու շրջանների յաջորդականութիւնը չէր կարող յանկարծակի տեղի ունենալ, այլ աստիճանաբար. Իտալիան այցելելուց առաջ Գէօթէի մէջ արդէն եռ էր գալիս նոր հակումների սազմը, ներդաշնակ աշխարհահայեցքի ձգտումը:

Իտալական ճանապարհորդութեան «առակը» մի քանի տարի առաջ ակներեւ փաստերով հերքեց Կարլ Հայնէման՝ Գէօթէի մասին զրած իր մի ընդարձակ և տաղանդաւոր աշխատութեամբ, որ ինչպէս երկում է, անծանօթ է պ. Թառայեանցին:

Գէօթէի զրուածքների մասին, ինչպէս նկատեցինք, հեղինակը միայն թուոցիկ տեղեկութիւններ է տալիս: Առանձնապէս կանգ է առնում «Վէրըթէրի», «Էգմօնդի», «Իֆիդենիայի», «Հերման և Դորոթէայի» ու «Թառուստի» վրայ: Առհասարակ նա

հազորդում է այս գրուածքների համառօս բովանդակութիւնը միայն. տեղ տեղ չէ զլանում ի նկատի առնել նաև գրուածքի առաջնորդող իդէան. իսկ գեղարուեստական գնահատութիւնը, բնաւորութիւնների վերլուծումը եայն բաց է թողնում: Գէօթէի մի քանի նշանաւոր գրուածքների մասին — օր. «Torquato Tasso», «Prometheus», «Wahlvermendtschaften», «Wahrheit und Dichtung» և այլն — համարեա ոչ մի յիշատակութիւն չէ անում, առաջին երկուսի անուններն է միայն յիշում: Պակասաւոր է թւում մեզ մանաւանդ այն հանգամանքը, որ բանաստեղծի նամակների առիթով ոչ մի խօսք չէ ասուած:

Պ. Թառայեանցը «Կոէնիների» նշանակութիւնը շատ է մեծացնում: Այն ինչ խայթող, մտրակողական բանակոիւը այնքան էլ չէր յարմարում անզուգական բարեկամ բանաստեղծներին՝ Գէօթէին և Շիլէրին: Առաջինի նշանաբանն էր.

«Bilde, Künstler, rede nicht;
Deine That sei dein Gedicht.»

(Ստեղծագործիր, արուեստագէտ, մի խօսիր — գործդ թող լինի քո բանաստեղծութիւնը). իսկ Շիլէրը ահա թէ ինչ է գըրում Գէօթէին. «Կոէնիների» անմիտ փորձերից յետոյ՝ մենք պէտք է այժմ մեր եռանդը աւելի արժանաւոր և ընտիր երկերի նուրիբենք ու մեր բանաստեղծական բնաւորութիւնը՝ յամօթմեր հակառակորդների՝ բարիին և աղնուին ծառայեցնենք»:

Զենք կարող հաշտուել նաև պ. Թառայեանցի այն գնահատութեան հետ, որով նա վերաբերում է գէպի «Վիլհէլմ Մայստէր»: Այս նշանաւոր վէպը միայն «Թատրոնի ու գերասամնների կեանքի» նկարագիրը չէ, այլ գեղարուեստական մի խոշոր երեսյթ. սխալ է նաև ասել, որ դա «չունէր որ և է տէնագէնցիա»: Ընդհակառակին՝ վէպի թէ առաջին և թէ երկրորդ մասը առաջնորդում է կրթական մի կարենոր տէնդէնցիայով — բէալական աշխարհահայեացքի վարդապետութեամբ: Այս հիմնական իդէան էր, որ առիթ տուեց բօմանտիկ նշանաւոր բանաստեղծներից մէկին՝ Նօվալիսին նկատելու թէ՝ «Վիլհէլմ Մայստէրը» կրում է «գեղարուեստական աթէկիզմի ողի»: Եւ Նօվալիս գրեց հակառակ ուղղութեամբ մի վէպ՝ «Heinrich von Ofterdingen», ուր ընդգէմ իրական աշխարհահայեացքի՝ մի հիառանձ օրհներգ է կարդում յանուն բանաստեղծութեան: Շիլէր «Վիլհէլմ Մայստէրի» առիթով գրում էր հետեւեալը. «Կեանքիս ամենայաւ բախտաւորութիւններից մէկն եմ համարում, որ ականատես եմ այս երկի ստեղծագործութեանը»:

Որովհետեւ հեղինակը Գէօթէի միւս գրուածքների մասին

շատ համառօտ տեղեկութիւն է միայն տալիս, սպասելի էր դոնէ, որ նա առանձնապէս կանգ կ'առնէ «Ձառւստի» վրայ: Բայց նա չէ պարզում այս հսկայական ստեղծագործութեան ոչ միայն ամբողջութիւնը, այլ նոյն իսկ հիմնական գծերը: Նկատենք, ի միջի այլոց, որ հեղինակը սխալում է ասելով թէ՝ «Ձառւստի» միայն զանազան կտորներ, առանձին տեսարաններ, կարելի է ներկայացնել բևմի վրայ: Զը զիտենք ուրիշ անդերում «Ձառւստը» ինչպէս է ներկայացւում, բայց Գերմանիայում ողբերգութեան ներկայացումը տեղի է ունենում երբեմն առանց կրծտաման կամ շատ աննշան կրծտումներով միայն և տեռում է սովորաբար երկու օր—մի նրեկոյ խաղում են առաջին, իսկ հետեւալ երեկոյ երկրորդ մասը:

Հեղինակը կիւփսի հետևողութեամբ կենսապրութեան վերջին երեսներում աշխատում է բնորոշել Գէօթէի ընդհանուր մարդկային արժանաւորութիւնները: Պարտի բնորոշումը մեղթում է ընդհանրապէս ճիշտ և հիմնաւոր: Գէօթէն թէ իբրև արուեստագէտ և թէ իբրև մարդ մի այնպիսի մեծութիւն է ներկայացնում, որ միանդամայն հեռու է հասարաւի մահկանացուների շարքը գասուելուց: Այս է պատճառը, որ չափել նրան սովորական մասշտաբով՝ նշանակում է չը ճանաչել նրան, նրա հսկայական մեծութիւնը նուևմացնել: Այս եղանակով են գնահատել նրան թէ հին և թէ ժամանակակիցներից ոմանք, որոնք շարունակ խայթում են «Ոլիմպոսի մեծ որգեզրին» նրա «հայրենամարտական ստուգութեան», «անհատաւութեան» և «անբարոյականութեան համար»:

Միանդամայն համաձայն ենք պ. Թառայեանցի հետ, որ Գէօթէն քաղաքագիտութեան մէջ վարպետ չէր. բայց նրան ֆրանսիական յեղափոխութեան հակառակորդ յայտարարել՝ երբեք չենք կարող: Գէօթէն միայն յեղափոխութեան եղանակի դէմ էր և ոչ թէ սկզբունքի: Նա հաւասարապէս հակառակ էր թէ յեղափոխութեան պարտպլուիներին և թէ էմիգրանտներին, որոնք միջոցների ոչ մի խարութիւն չեն ընդունում, նոյն արինարբութեան և սարսափելի բնազգներով էին զեկավարում: 1792-ի ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Գէօթէն համարում էր մինչև իսկ «հասարակապետական»:

Պ. Թառայեանցը նոյն իսկ ոճի կողմից շատ է ազգուել կիւփսից: Պարոնի լեզուն բաւական սահուն է՝ այնպէս որ զիրքը հեշտութեամբ է կարտացւում: Տեղ-տեղ անպակաս են ինչպէս լեզուի, նոյնպէս և տառասխաններ: Յիշենք լեզուի սխալ ներից ամենաբնորոշը — նամակ թելագրել «Լիլհէլմ ֆօն Հումբոլ-

զի վրայ» (երես 140): Զենք կարող ուշադրութիւն չը դարձնել նաև մի ուրիշ աչքի ընկնող սխալի վրայ, որ զուտ թարգմանական է. պարոնը Գէօթէի «Die Geschwester» թարգմանում է «Քոյրերը» (եր. 70), այն ինչ գերմանական Geschwester բառը նշանակում է եղյր ու եղբայրներ և ոչ թէ քոյրեր:

Վ. ՆԱԼԲԱՆԴԵՍՆ

55) „Հանդէս Հայագիտութեան“.—Zeitschrift für armenische Philologie—1 հատոր, ա. տետր. Մարտրդ, 1901. չորս տեսքից բաղկացած հատորի բաժանարդագինն է 10 մարկ (Թուասառանում 5 ռ., Անգլիակում 10 շ., Ֆրանսիակում 12 ֆր. 50 ս.):

Մարբուրգի համալսարանի պրիվատ-դօցէնտ՝ դօկտօր Յ. Ն. Ցինկ, որ հայագիտական ուսումնասիրութիւնների համար մի տարրուց աւել է արդէն Կովկասումն է գտնւում՝ պ. Աբգար Յովհաննիսիւսի մասնակցութեամբ սկսել է մի համակրելի ձեռնարկութիւն. յարգելի գիտեականը՝ Եզնիկ վարդապետ Գետնջեցեանի և պարոն Յակոբ Մանուկեանի հետ միասին՝ հրատարակում է վերոյիշեալ հայագիտական համոգէսը, որի առաջին տետրը մի քանի շարաթ առաջ լոյս տեսաւ:

«Հանդէս Հայագիտութեան» լինելու է բաւական բաղմարովանդակ. այնտեղ զետեղուելու են ոչ միայն լեզուագիտական, այլ և գրականական, պատմական, աշխարհագրական և այլն ուսումնասիրութիւններ՝ ինչպէս հայերէն, նոյնպէս եւրոպական գանազան լեզուներով:

Առաջին տետրը բաղկացած է 96 երեսից և ամփոփում է վեց փոքր կամ մեծ յօդուածներ, որոնցից մէկը՝ պ. Ստ. Մալխասիանի «Մը նկատողութիւն» Փաւատոսի պատմութեան մասին» գրուած է հայերէն, իսկ մնացածները գերմաներէն լեզուով:

Պ. Ցինկի յօդուածի նիւթը կազմում է էջմիածնի մատենագրանում գտնուած մի հաւաքական ձեռագիր: Ցիշեալ ձեռագիրն ամփոփում է—ա. Ասմուկ Անեցու Ժամանակագրութիւնը. բ. Հերում պատմիչի ժամանակագրութիւնը (Քրիստոսի ծննդյան մինչև 1294 թ.). գ. Պատմութիւն ազգին Ռուբինանց թէ ուրախ տիրեցին Կիլիկիո. դ. Ազգաբանութիւն բագաւորացն Երուսաղեմի եւ բագաւորացն Կիլիկիո. ե. Ազգաբանութիւն բըրբնայն (պրինց, իշխան) Անտիոքա. զ. քաղուածք Միքայէլ Առորեցու ժամանակագրութիւնից:

Սրանցից առաջինը՝ Ասմուէլ Անեցու ժամանակագրութիւնը՝ Ա. Տէր-Միքէլեանը «յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով և ծանօթութիւններով» հրատարակել է 1893 թուին. բայց այս հրատարակութիւնը պ. Ֆինկի կարծիքով «միանդամայն անբաւարար կերպով է տեղի ունեցել»: Նա իր այս կարծիքը հիմնաւորում է Տէր-Միքէլեանի հրատարակութեան և ձեռագրի համեմատութիւնից քաղած բազմաթիւ փաստերով: Ա. Տէր-Միքէլեանը հրատարակել է նաև վերյիշեալ ձեռագրի Դ. մասը՝ Ռուբինեանց պատմութիւն՝ իրքի յաւելուած Սամուէլ Անեցու ժամանակագրութեան: Այս յաւելուածը նոյնպէս չէ բաւականացնում պ. Ֆինկին:

Զեռագրի Բ. Դ. և Ե. մասերը գեռ անտիպ են. սրանցից Հեթումի ժամանակագրութիւնը՝ պ. Ֆինկ խոստանում է շուտով հրատարակել:

Եղնիկ վարդապետ Գեանջեցեանի յօդուածը զուտ լեզուագիտական բնաւորութիւն է կրում: Հիւրշմանի և ուրիշ գիտնականների կարծիքով հնդկանուրուպական յօ սուֆֆիքսը հայերէնում=ի *) (անուական՝ լոյ): Եղնիկ վարդապետը Հիւրշմանի այս եղրակացութեան հետ համակարծիք չէ և իր ուսումնասիրութեան մէջ աշխատում է ցոյց տալ՝ 1) որ հնդկանուրուպական յօ հայերէնում չէ դառնում ի. 2) որ հայկական ի սուֆֆիքսը ամեն դէպքում միատեսակ ծագում չունի: Համարեա նոյնանըման եղրակացութեան է եկել նաև պ. Ա. Մէյիէն (A. Meillet) իր «Note sur la flexion des noms en-ի» յօդուածում, որ լոյս տեսաւ «Բանասէրի» II համարում: Բայց Եղնիկ վարդապետի ուսումնասիրութիւնն աւելի չուտ է հրատարակուել՝ իրքի Dissertation.

Պ. Մալխասեան իր կարծ յօդուածում շօշափում է Փաւատոս Բիւզանդի պատմութեան վերաբերեալ հետաքրքիր և մինչեւ այժմ զեր չը պարզուած կէտերից մէկը—Փաւատոսի պատմութիւնը սկզբից թերի է թէ ամբողջ արդեօք նրա սկզբքում եղել են առաջին և երկրորդ դպրութիւններ: Բանասէրներն ընդհանուրապէս այս կարծիքի են, որ Ա. և Բ. գպրութիւնները սկզբում գոյութիւն են ունեցել, բայց այժմ կորած են. պրօֆ. Մառը կարծում է մինչեւ իսկ, որ Սեբէոսի պատմութեան Ա. գպրութիւնը հէնց Փաւատոսի պատմութեան առաջին դպրութիւնն է լինելու: Վերոյիշեալ խնդրի հետ կապուած է նաև մի ուրիշ կարեոր հարց—արդեօք Փաւատոսի պատմու-

*) Տե՛ս Hübschmann: Armenische Grammatik, s. 407.

թեան Գ. Դ. Ե. Զ. գպրութիւնների վերնազիրները արդիւնք չեն որևէ խմբագրական ձեռնամխութեան: Այս հարցերի լուծման համար պ. Մալխասեան դիմում է մի հեղինակաւոր ցուցմունքի, որ մինչև այժմ վրիպել է բանասէրների ուշազրութիւնից. նա համեմատում է Ղ. Փարպեցու և Փաւատոսի պատմութեան մէջ յիշուած ներսէս Մեծի անէծքը: Փարպեցին յայտնապէս յիշում է այն ազրիւրը, որտեղից նա քաղել է ներսէս Մեծի անէծքը—«ի պատմութեան երկրորդումն, ճառին հնգետասաններորդի»: Այն ինչ Փաւատոսի մէջ այս անէծքը գտնուում է Դ. գպրութեան ժե. գլխում: Սրանից Մալխասեան ակնյայտնի կերպով եղրակացնում է, որ Փարպեցու ձեռքումն եղած Փաւատոսի Բ. պատմութեան ճառ ժե. համապատասխանում է մեր ունեցած Փաւատոսի Դ. գպրութեան գլ. ԺԵ-ԲՆ. հետեւաբար և Փարպեցու ձեռքի տակ եղած Փաւատոսի Զ. պատմութիւնը պէտք է համապատասխանէր մեր ունեցած Փաւատոսի Գ. գպրութեան. կամ ուրիշ խօսքով ըստ պ. Մալխասեանի՝ «Հինգերորդ դարի վերջերին, Փաւատոսի պատմութեան գրուելուց քիչ ժամանակ յետոյ, այդ պատմութիւնն սկսւում էր նոյն Գ. գպրութեամբ, որով սկսւում է մեր այժմ ունեցած Փաւատոսը, բայց նա կոչում էր ոչ թէ Գ. գպրութիւն, այլ առաջին պատմութիւն: Ուրեմն Փաւատոսի պատմութիւնը սկզբից քերի չունի, այլ ամբողջ է հասել մեր ձեռքը» (Գոյնէ այսպէս է եղել Ե. դարի վերջերում): Պ. Մալխասեան իր յօդուածի վերջում գալիս է նաև այն եղրակացութեան, որ «Փաւատոսի պատմութեան բուն հեղինակին չեն պատկանում ոչ «Խոստաբանութիւն նախագիտելի» յառաջաբանը, որտեղ յիշուում է Գ. գպրութիւնը և ոչ այն խմբագրական աշխատութիւնները, որոնք յիշուած են այդ խոստաբանութեան մէջ: Սրանից էլ ծագում է այս ծանրակշիռ հետեւութիւնը, թէ Փաւատոսի պատմութեան նախնական բնագիրը, նինգերուդ դարից ուշ, ենթարկուել է փոփոխութիւնների մի անձանօր խմբագրողի ձեռնով»:

Յ. Մ. Շմիւր գրաբարից գերմաներէնի է վերածել Թագէս առաքեալի և Սանդուխտ կոյսի նահատակութեան պատմութիւնը,

Պ. Աջարեանի յօդուածը վերաբերում է Վանի բարբառի հնչիւնաբանութեան: Հեղինակը առայժմ կանգ է առել ձայնաւոր տառերի հնչիւնների վրայ: Բերուած օրինակները շատ բազմատեսակ են և հնչիւնները միանգամայն ճիշտ:

Կոմիտաս վարդապետը իր յօդուածում խօսում է հայ ժո-

զովրդական պարերի մասին։ Հեղինակը հայկական պարերի մէջ տարբերում է չորս տեսակ շարժումներ—ձեռների, ոտների, իրանի և գլխի։ Նա այն կարծիքի է, որ հայկական պարերը ազատ են իսկու և կրքեր յուզող շարժումներից։ և եթէ պարի ժամանակ որեէ ուժեղ զգացմունք է արտայայտում՝ դա տեղի է ունենում աւելի շուտ առաջնորդող հզանակի, երդի՝ քան թէ բուն պարի միջոցով։ Նա շեշտում է նաև այն հանգամանքը, որ մեր իսկական ժողովրդական պարերը տեղի են ունենում առանց երաժշտական գործիքների։ Եթէ այս վերջինները մուտք են գործել մեր մէջ, դա պէտք է վերազրել օտար ազգեցութիւնների։ Հեղինակը եւրոպացիններին մեր պարեղանակների մասին գաղափար տալու համար՝ իր յօդուածի վերջում առաջ է բերում մի քանի նմուշներ։

Թէ «Հանդէս Հայագիտութեան» մեր լեզուի, գրականութեան և պատմութեան ուսումնասիրութեան համար ինչպիսի կարեոր մի օրգան է ներկայացնելու՝ միանգամայն աւելորդ հնք համարում պատճառաբանել։

Վ. ՆԱԼԻՔԱՆԴԵՍՆ

1901 թուականի ընթացքում Խուսատանում լոյս տեսած հայերէն լիզուով
հայոց գրենցի համառօտ հայութիւնը լոյս տեսած հայերէն լիզուով

1901 թուականի ընթացքում լոյս են տեսել հայերէն լիզուով
68 գիրք, որոնցից 6-ը՝ նախորդ տարիների գործ են, որոնք
այս տարի արժանացել են երկրորդ տպագրութեան։ Այդ
6 գրքից 3-ը՝ թարգմանական հէքիաթներ են, 1-ը՝ ինքնու-
րոյն վէպ, 1-ը՝ ինքնուրոյն թատերական գրուածք և 1-ը
ժողովրդական երգարան։ Զը հաշուելով լիչեալ և գիրքը՝ տեղը
կը մնայ 62։

Ուրիմն՝ 1901 տարեցը անում մեր գրականութիւնը հա-
րստացել է 62 գրքով, որից 44-ը՝ ինքնուրոյն գրուածքներ են և
18-ը՝ թարգմանական։

Ցիշեալ 62 գրքերը ըստ բովանդակութեան հետեւեալ գրա-
բաշխումն ունեն։ — 11 գիրք բժշկական գրուածքներ են, որոն-
ցից մէկը այս տարուայ մէջ երկրորդ տպագրութեան է արժա-
նացել, զա բժիշկ Վ. Արծրունու «Մի խմիր» գրքոյին է. 9-ը՝
կրօնական գրուածքներ են, որից 3-ը՝ հոգեորական դասակարգի
մասին, 1-ը՝ զասագիրք, 1-ը՝ վանքի նկարագրութիւն և մնացած
4-ը՝ գիտնական, 6-ը՝ ժողովրդական կենաչքի ուսումնակիրու-
թիւններ են, 6-ը՝ վիպական, 5-ը՝ կենսագրական, 4-ը՝ մանկա-
կան, 5-ը՝ հետազօտական, 2-ը՝ զիտական, 2-ը՝ աշակերտելոց
դասագիրք, 2-ը՝ ձանագարհորդական, 2-ը՝ երգիծաբանական,
որից մէկը զաւառաբարբառ, 2-ը՝ հէքիաթ, 1-ը՝ չափաւոր (բա-
նասակալծութիւն) գրուածք, 2-ը՝ պօէմա, 1-ը՝ գիւղատնտեսա-
կան, 1-ը՝ թատերական և 1-ը՝ խոհարարական ձևոնարկ։

Մանկական գրքեր մեզանում շատ են պակասում։

Միշտես խոչոր տառերով, հաստ թղթի վրայ, գունաւոր-
պատկերազարդ, գեղեցիկազմ փայլուն գրքերը զօրեղ գրաւա-
կան են մայրենի լեզուի տարածման նպաստելու գործում։

Այդ տեսակ գրքեր շատ են պահանջւում մանաւանդ մնած
տօներին, երեխաներին ընծայելու համար։ Տարաբախտաբար
նոր չքեղ մանկական գրքեր լոյս չեն տեսնում։

Ե. Ե.

Ն Ա Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ը

- 1) Պերճ Պոօշեան. «Յունօն», վլագակ, Թիֆլիս, 1901 թ., զինն
է 1 ռուբլի:
- 2) Ռ. Յ. Պէրպէրեան. «Դաստիարակի մը խօսքերը». Վիեննա,
1901 թ., զինն է 1 ռուբլի:
- 3) Ե. Թոփչեան. «Բեօրնսօն», հրատ. Յ. Արտմեանցի, Ալեք-
սանդրոսով, 1901 թ., զինն է 10 կոպ.:
- 4) ? «Կենդանական կամ Բուժական մագնետիսմ, թարգմ.
Փարամուզ. հրատ. Շ. Մալյանցի, Շուշի, 1901 թ.,
զինն է 15 կոպ.:
- 5) «Տեղեկագիր» հարիւրամեայ յօքելեանին Ս. Լուս. Ազգ.
հիւանդանոցին Զմիւռնիոյ, 1801—1901, Զմիւռնիա,
1901 թ.:
- 6) Օ. Կարապետին, „Краткий очеркъ развитія горнаго дѣла
на Кавказѣ“, Тифлисъ, 1901 г., դѣна 30 коп.
- 7) Մ. Ք. Մելիսն. «Բնաթերցողների ուշադրութեանը», Յաթում,
1901 թ., զինն է 10 կոպ.:
- 8) Մ. Կուկուն. «Ողնիներ», թարգմ. օր. Մ. Ս., Թիֆլիս, 1901
թ., զինն է 8 կոպ.:
- 9) Բժ. Մ. Շահնազարեանց. «Հայ գպրոցի ցաւերից», Ի Վար-
չականի չուրջը, Մոսկուա, 1900 թ., զինն է 40 կոպ.:
- 10) Օրացոյց 1902 թուականի Քրիստոսի, Եջմիածին, զինն է
.30 կ.: (Ամենայն Հայոց Կակողիկոսի գիւանատնից՝ իբրև
նոր տարուայ չնորհաւորութիւն Նորին Վեհափառութեան
կողմից):

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳԱՆՉԱՐԱՆԻ ՆԱԽԹԱՅԵՐ ՀՈՂԵՐԻ ՊՈՒԴԱՎՃԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Նաւթի գինը իր անցեալ տարուայ 18 կոպ. բարձրութիւնից ընկնելով, ոչ միայն յուսախար արաւ երկու վերջին տարիներումս արքունի հողեր վերցնողներին, այլ, եթէ մի տարի էլ այսպէս շարունակուի, վերջիններիս մեծամասնութիւնը սափառուած պիտի լինի կորցնել իր՝ մինչև օրս արած ծախսերը և յետ կանվնել՝ խզելով գանձարանի հետ իր կապած պայմանը։ Հասկանալի է որ այսպիսի պայմաններում մարդիկ ամին ճիզ թափում են գտանգից մի կերպ ազատելու իրանց ունեցածը։ Եւ ահա այս վերջին կարգի նաւթագործները մի քանի ամիս առաջ գիմել էին համապատասխան մինիստրութեան, խնդրելով փոխիկ իրանց կապած պայմանները, ի հարկէ թեթևայննելով իրանց ծանր, նոյն իսկ անելանելի գրութիւնը։

Բնթերցողի համար պարզ է, թէ ինչ ահազին նշանակութիւն ունի գործի այս կամ այն ելքը ոչ միայն բագուցիների համար, այլ նոյն իսկ մեր երկրի ազգաբնակութեան մի որոշ մասի համար, որ շատով թէ քչով մասնակցում է նաւթային գործերում։

Բնականաբար ամբողջ կովկասում հետաքրքրուում են այդ հարցով, իսկ մասնաւորապէս Բագւում։

Տեղական «Հեփտահօթ Ջելօ» հանդիսում սեպտեմբերից սկսած արդէն չորս ընդարձակ յօդուած է լոյս անսել, որոնցից երկուոը, Տ ստորագրութեամբ, այն տեսակէտն են պաշտպանում, թէ մինիստրութիւնը չը պիտի յարգի խնդրատուների տռաջարկութիւնը։ Ընդհակառակը, ինժենէր Կ. Խատիսեան իր երկու յօդուածով աշխատում է ապացուցանել, որ ոչ միայն խլոնդ-

բատուների, այլ նոյն իսկ գանձարանի շահը՝ պահանջում է փոխել կայացած աճուրդի պայմանները:

Ենդրատուները առաջարկում են, որ գանձարանը իրանցից պուղահարկի փոխարէն ստացած նաւթիք որոշ տոկոսով բաւականանայ, հաւասարեցներով 1 կոպ. պուղահարկը—նաւթի 50%-ին երկու վերջին աճուրդներում գանձարանի հողերը, ինչպէս յայտնի է, շատ թանգ պուղահարկերով են վերցրած 5-ից —12 կ., նաւթի այժմեան գներով (մօտ 7 կ.), պարզ է որ այդ պայմաններով վերցնողների մեծամասնութիւնը չեն կարող առանց վնասի գործել: Հասկանալիք է նոյնպէս որ պայմանի փոխելը գանձարանի համար նշանակում է յօժարակամ նաւթագործինդրատուներին զիջանել իր ստանալիքի $\frac{2}{3}$ մասը: Օրինակ, եթէ 12 կ. վերցնողը 100 պ. նաւթի համար պիտի վրճարէր 12 ռ., այժմ ինդրում է, որ գանձարանը՝ իրանից փողի փոխարէն ընդունի 12×5 տոկոս նաւթ, այսինքն 60 պուդ, որ այժմեան գներով կ'անի մօտ 4 ռ.: Ահա ինչ են աւզում պ. պ. նաւթագործները: Բայց արդեօք աճուրդի պայմանները կարելի է փոխել աճուրդից յետոյ, յետին թուով:

Պետութեան (և հասարտկական հիմնարկութիւնների) ելիմուտքի ազբիւրները մասնաւոր մարդկանց յանձնելու աճուրդը համարեւում է ամենալաւ միջոց թէ գանձարանի և թէ մասնաւոր մարդկանց շահերի տեսակէտից, որովհետեւ բոլոր ուրիշ միջոցներից աճուրդն է, որ գծուարացնում, փակում է զունազան «անձնական բարեհայեցողութեանց» դռները և հնարաւորութիւն է տալիս ամեն մի ցակացողի մասնակցել առուրդին:

Բայց եթէ աճուրդի հետեւնըները առհասարակ կարելի լիներ հեշտութեամբ փսփսինել, այն ժամանակ աճուրդը կը կորցնէր իր միտքը, իր նշանակութիւնը: «Ղօչաղ» մարդիկ միշտ այնպիսի գներ կը նշանակեն, որ միշտ իրանց կը մնան գանձարանի գործերը (այս դէպքում նաւթային հողերը), և հէնց որ բանից կ'երեար, որ անօրուա, նոյն իսկ վնասարեր է այս ինչ կամ այն ինչ գործը, «Ղօչաղ»-ները կը սկսեն միջնորդել, որ գանձարանը զիջանի, փոխի իրանց կապած պայմանը...

Վերջին երկու անդամուայ աճուրդներում հող վերցնողները բարձր պուղահարկ են խօստացել գանձարանին այն պատճառով, որ հաւատացած էին, թէ այսօր չէ վաղը նաւթի զինը անպատճառ պիտի 20 կոպ. համնի: Եւ այս հաշուով էր, որ 12 կ. պուղահարկով հող վերցնողին դեռ մի 100 հազար ռ. էլ փող էին տալիս, որ նա իր վերցրած հողը զիջէր այս կամ այն ըն-

կերութեան։ Այսօր այդ հաշիւները ամենքի համար ծիծաղաշարժ և միամիտ են. իսկ այն ժամանակը երեխաներ չէին 100 հազարներ շպրտողները, այլ փորձուած, «խելօք, հաշուով վաճառականներ»։

Եթէ, իսկապէս, նաւթի գինը այդքան բարձրանար, կամ նոյն իսկ 18 կ. մնար, ամեն մէկը, որ գանձարանի հողի մի կտորը գցել էր ձեռքը, արդէն ապահով, նոյն իսկ հարուստ մարդ էր վինելու, ինչպէս այդ պատահեց առաջին և երկրորդ անգամուայ աճուրդներում հող վերցնողներին, որ $1\frac{1}{2}$ —3 կ. պուղահարկով են վերցրել գանձարանի հողերը։ Եւ սակայն գանձարանը այս բախտաւորներից և ոչ մէկին չասաց թէ՝ «այսինչ, դուք շատ էժան պուղահարկով էք վերցրել հողը, այժմեան պայմաններում երկուտակ էլ եթէ վճարէք, էլի լաւ փող կ'աշխատէք»։ Ինչու ուրեմն, ասում են նրանք այժմ, որոնք դէմ են որ մինխստրութիւնը յարգի խնդրատունների առաջարկութիւնը, գանձարանը պիտի զիջանի յօդուա մասնաւոր մարդկանց և վերջիններին «բաշխի» ընդհանուրի սեփականութիւնը։ Եթէ նաւթագործը կը հրաժարուի իր պարտաւորութիւններից, գանձարանը՝ առանց նրա մայրած փողը վերադարձնելու, նոր աճուրդ կը նշանակի և եթէ այժմ առաջուայ գներով չեն վերցնի, կը տայ պակասով... այսինքն այն գնավ, որ այժմ առաջարկում են գանձարանին իբրև նաւթի մի որոշ տույս։

Սակայն այս հիմնաւոր դատողութիւնների դէմ մի ծանրակշիռ առակութիւն են անում։ Գանձարանը այս գէպքում այդքան խիստ պահպանելով օրէնքը և պայմանագիրը, արդէն ցետուն թուով» փոփոխութիւններ է մոոցել առաջին կարգի աճուրդում մասնակցողների պայմանի մէջ։ Բացի այդ, Գանձարանը իր հողերի մի ահազին մասը առանց աճուրդի տուել է զանազան մարդկանց, զրանով նպաստելով նաւթի գների իշնելուն և ուրեմն վեստելով իրանից թանգ գներով հող վերցնողներին։

«Այժմ, ասում են խնդրատունները, դուք մեզ օրէնքն էք ցոյց տալիս, ապա ուր էր այդ օրէնքը, երբ Ռօմանու ամենալաւ հողերի մի ահազին տարածութիւն տուիք Մոսկուայի կապիտալիստներին առանց աճուրդի և համարեա ծրի. ուր էր այդ օրէնքը, երբ շատ ու շատ ուժեղ մարդկանց առանց աճուրդի հողեր բաժանեցիք էժան գներով... Այդ էժանագին հողերի նաւթն է, որ այսօր խելդում է մեզ... Եթէ նրանց համար հնարաւոր էր շեղուել օրէնքից, այժմ՝ մեզ անխուսափելի մնանկութիւնից ազատելու համար էլ բարեհաճեցէք բացառութեամբ շեղուել օրէնքից»։

Հարցը չափազանց բարդուել է. դրա թէ դրական և թէ բացասական վախճանը բաղմտթիւ զանգատներ պիտի յարուցանի, որովհետև բազմաթիւ մարդկանց համար «ինձնքի և մահու» խնդիր է դա... Եւ այս բարեկռնեան խառնաշփոթութիւնը ծագել է նրանից, որ սկզբից ենթ օրինական հիմքի վրայ չի մնացել հարցը... չեղումներ, բայցառութիւններ են անդի ունեցել «ըստ բարեհայեցողութեան»... և, ինչպէս յայտնի է, օրէնքից մի անգամ չեղուելը՝ դժուարացնում է նորից օրինական հաստատ հիմքի վրայ կանգնելը:

Այժմ մինիստրութիւնը հարցիս քննութիւնը թողել է «Նաև թագործների ժողովին», որ բացուելու է դեկտ. 8-ին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեռած զործիչներին հրապարակական յարդանք արտայալտելու ամենաայլովագական ձեր մէջ. — Յ. Կազարեանի մահուան հարիւամեակի առիթով որպաշտինի մայրաքաղաքներում. — Գամառ-Գաթիպալի մահարանի բացումը և հայի հասարակական անսարքերութեան նոր ապացույցներ. — Անոնդ Ալիշանի հոգեհանգստի առիթով յայտնած ճնոր սկզբունք. — Հայ-Կատթոյիկ Ալիշանի օրինակը ի՞նչ ապացույցի. — Մի թուրք վաճառականի հասարակուկան լայն ձգումները. — Գիտութեան անաշխատոթիւնը. — Հնագիտական Ընկ. ճիզիփ նշանակութիւնը կովկասցիներիս համար. — Քօրութիւնը գրական պրօլետարիալից մասին. — Գրական մշակներին օգնող ընկերութիւններ և գրողների գրութիւնը բարոքելու. նոր կազմակերպութիւն. — Գրական «ինովէլինների» սինդիկատը և կօնար-սենդիկատը. — Ճառագանդի րենտան հայերիս մէջ. — Հայի գանդապաշտութիւնը. — Քառասուն տարրուայ գրական անսպառ նիւթ. — Ա. Կաճկակեանի մահը. — Սաստկադրած պահապանութեան գրութիւնը. — Լուսաւորաւթեան մինիստրի հրամանը.

Մինչի օրս հայ ժագավուրդը մի անմեղ սպիրութիւն ունէր. նա հրապարակական ազօթք կամ հոգեհանգիստ էր կատարում իր երախտագիտառութեանը արժանացած ամեն մի մեռած գործիչի համար, երբէք հարց չը տալով իրան՝ արդեօք հանգուցեալը լուսաւորչական էր, թէ օտարագաւասն: Մեր պարզամիտ հոգենորականներն էլ, մինչի մեր մէջ աստուածաբանների երեան գալը, հայոց եկեղեցու սպան և կանոններին հակասակ ոչինչ չէին գտնում հոգեհանգիստ կատարելու մէջ թէ կաթոլիկ Աղամեանի, թէ բողոքական Գլացուտօնի, թէ մահմեդական Նասր-Էղդին Շահի և թէ չատուրիչների համար: Մերք զիտմամիք չենք խօսում սուլթանի արեշտառութեան համար ամեն տարի թիւրքիայի հայոց եկեղեցիներում կատարուող մազթանքների մասին, որովհետեւ մեզ կարող են առարկել, թէ ստիպուած շատ բան են անում մարդիկ, ուստի այդ իրազութիւնը փաստական նշանակութիւն չունի. կարեսը է ժողովրդի աղաս, ինքնաբուզիս յանկութիւնը՝ ազօթել իր եկեղեցում

Նրանց համար, որոնց յիշատակը թանգ է նրա սրափն։ Եւ յանկարծ... բայց դրա մասին՝ յետոյ, այժմ մենք «լուսաւորչական» գործիչների յիշատակով զբաղուենք։

Այդպէս ահա, հաւատարի՞ւ հայկական բարի սովորութեան, մայրաքաղաքների հայերը երկու ամիս առաջ հոգեհանգիստ կատարեցին Լազարեան ձեմարտնի հիմնադիրի համար, նրա մահանուն հարիւրամեակի ասիթեավ Հայ ազգը իրան երախտապարտ է զգում դէպի Յովհաննէս Լազարեանի յիշատակը, որովհետև այդ նշանաւոր հայը գեւ այն խաւար ժամանակներում, երբ այժմեան սուսաց Հայաստանը հեծում էր մահմեղական լծի տակ և մի հատ կանոնաւոր զարոց չը կար մեր երկրում, մտածեց իր կարսղութեան մի մասը՝ 200 հազար, յատկացնել իր թըշուառ ազգակիցների մտաւոր-բարոյական վերածնութեան՝ բանալով Ռուսաստանի սրաւում մի մեծ կրթական հաստատութիւն։ Մեռնելով, նա իր կամքի իրագործումը յանձնեց իր կըրտսեր եղբօր՝ Յովակիմին։

Այս վերջինը, ինչպէս յայտնի է, իր անձնական կարուղութիւնից էլ համարեա նոյնքան աւելացնելով մեծ եղբօր կառկածի վրայ, 1815 թուեկանին փառաւորապէս զլուխ բերաւ իրանց առնմային անունը կրող ձեմարտնի բացումը։ Այնուհետև Լազարեանների համար մի տեսակ ընտանեկան տրադիցիս էր դասել կատակներով ու նուերներով աւելի և աւելի տպահովել իրանց տոհմային պարծանք զարձած ուսումնարանի գոյութիւնը։ Լազարեանները զանազան ժամանակներում մի միլիոնից աւելի են նույիրել ձեմարտնին, չը հաշուած այդ բնդարձակ և հոյակապ շինութեան վրայ արած ծափերը։ Ուրախութի է տեսնել, որ հայ ժողովուրդը այս սննդամ դայց տուեց որ զործով էլ գիտէ գնահատել այդ մեծ տոհմի արածը։ Մասկուայի հայերը, յաւերժացնելու համար Յովհաննէս Լազարեանի յիշատակը, որոշեցին՝ այդ գաղութի հայ ազգկանց համար ծխական գալրոց բանալ, իսկ Պետական կայու եկեղեցական խորհուրդը վճռել է Լազարեան ձեմարտնում 20 թօշակաւոր աշուկերտներ պահել Միայն թէ—եթէ ճիշտ են լրագրական լուրերը—ինչու այդ թօշակաւորները անպատճառ պէտք է հոգեհորականների որդիներ լինեն։ Մենք գերագասաւթիւն կը տայինք գիւղացիների գաւակներին, որովհետև մեր հոգեհորականները աւելի աշխարհաց են և ճարպիկ, ուստի հազար ու մի ձանապարհ գիտեն՝ աջողնելու համար իրանց որդիերանց կրթութիւնը։ Այլ է խուսար, անօդնական գիւղացին։ Յամննայն գէպս ժողովրդին մուսանալ և միայն նրա չնչին մասի՝ հոգեհորականութեան մասին

մտածել արգարացի չեւ Դրա դէմ կը բողոքէր ինքը Գամառ-
Քաթիպան անգամ, չը նայած որ քահանայի որդի էր:

Գամառ-Քաթիպան հայ ժողովրդի կողմից վազուց արժանի
էր ջօշափելի երախտագիտութեան: Մահարձանը այդ զգացմունքի
արտայայտիչը պէտք է լինէր: Բայց Նոր-Նախիջևանի ո. Խաչ
վանքում յաւիտենական քնով հանգստացած բանաստեղծը ար-
ժանացաւ՝ իր մահարձանի բացման օրը շատ սակաւա-
թիւ յարգողների չնորհաւորութիւններին: «Մայր Արաքսի»-ի
հեղինակը այսպիսի մեծ ժողովրդականութիւն է վայե-
լում մեր մէջ, որ մեղ թւում էր թէ նրա մահարձանի բաց-
ման հանդէսը պիտի ողնորէր հայերի աւելի ստուար խաւերը:
Տարբախտաբար այդպէս չէր. եթէ ընթերցողը ուշագրու-
թեամբ կարգացել է պ. Գ. Զալիսուշիանի հրատարակած չնորհաւ-
որութիւնների ցուցակը, նա պէտք է համաձայնի մեղ հետ,
որ մի քանի ուսանողներ, հոգեորականներ և դրողներ (չը հաշ-
ուելով բանաստեղծի մօտ ազգականներին ու բարեկամներին) հե-
ռառու են «ժողովուրդ» լինելուց, ուրիմն հայերի մեծամասնութիւ-
նը «Ժամանակ» չի գտնէ, երեխ, կտրուել արշինից ու համրիչից
և գէթ հետազրական չնորհաւորութիւնով համազբային բնաւու-
րութիւն տալ այդ համեստ հանդիսին: Յիշած հանգամանկը տւելի
ևս իրաւունք է տալիս կարծելու, որ ինքը հայ հասարակութիւնը
չէր էլ մտածիլ մահարձան կանգնեցնելու. մասին, եթէ բոնու-
ստեղծի բարեկամ պ. Գ. Զալիսուշիանի անհատական եռանդն ու
ջանքերը չը լինէին: Դեռ տեսելին կ'ասենք, հայ հասարակութիւնը
երեխ պահանջ էլ չէր զգալ ունենալ Ռ. Պատկանեանի երկասի-
րութիւնների լիտակտար հրատարակութիւնը, եթէ բանաստեղծի
մի այլ բարեկամ, տիկին Վ. Քանանեանը, չը հոգար այդ
մասին...

Մի երրորդ հոգեհանգիստ էլ պէտք է կատարուէր հայ
ժողովրդի մեծ զաւակներից մէկի՝ Ղեւոնդ Ալիշանի համար,
բայց թիվլիսում նսաած կշմիտանի նորագոյն վարդապետե-
րից մէկը յանկարծ ներչնչուեց մեր եկեղեցու նախանձախլընդ-
րութեամբ և իր ստուարութեամբ:

Ինչպէս այս տեսութեան սկզբաւմ ասացինք, մինչև օրս
անխափան կատարուել են մեր եկեղեցիներում հոգեհանգիստ-
ներ տմին զաւակնութեան գործիշների համար, ուրիմն արժէ
որ պատմութեան մէջ յիշուի այս մեծ անունը, որից նոր դա-
րագլուխ է սկսում... հոգեհանգիստների հարցում: Հայաստա-
նեաց եկեղեցւոյ մէջ այդ նորութիւն մտցնողը Գարեգին վար-
դապետ Յովսէփեանն է, որ քաջութիւն ունեցաւ մի ճնոր
սկզբաւնք» յայտարարել: Այդ սկզբաւնքը հետեւալն է. «Հայ-կա-

թոլիկները լուսաւորչական եկեղեցին համարել են հերձուածող. Ալիշանը կաթոլիկ է, ուրեմն նա էլ համամիտ է այդ կարծիքին: Հետևաբար, Ալիշանի գրական-գիտական գործունքութիւնը յարգելով համգերձ, չը պէտք է թոյլ տալ հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարել այդ մեծ հայի՝ ամբողջ աղբից սիրուած Նահապետի յիշատակին:

Պէտք է նկատել, որ այդպիսի «սկզբունք» պաշտպանողները մի քիչ առաջ, զեր Ալիշանի կենդանութեան ժամանակ, երբ աօնւում էր Մխիթարեանների գրական-գիտական գործունէութեան երկուհարիւրամիակը, դէմ էին, որ հայոց եկեղեցու «հարազատ զաւակները», չորհաւորեն «ուրացող» Մխիթարի հիմնած միաբանութեան յիշած գործունէութեան յօրելեանը, և սաստիկ տրանջում էին, որ այդ առիթով կաթողիկոսը յատուկ ներկայացուցիչ է ուղարկել Վենետիկ... Այժմ այդ նոյն պարոնները և պատուի ոչ արժանի հայրերը յայտնում են, որ հակառակ չեն Մխիթարեան միաբանութեան ամենանշանաւոր նախսին անդամի, Ալիշանի, գրական-գիտական գործունէութեան համար հրապարակական չորհակալութիւն յայտնել, միայն թէ հոգեհանգիստ կատարել մեր եկեղեցիներում անկարելի է. թող կաթոլիկ եկեղեցում կատարուի և իրանք ուրախութեամբ կը գնան... Մի գէպքում չի կարելի չորհաւորել գրական-գիտական գործունէութիւնը, իսկ մի այլ գէպքում հսկառակ չեն... Բայց միթէ հակառութիւններից զրանք ամաչում են. զա մի շատ սովորական բան է զրանց համար: Սակայն մենք կարենոր ենք համարում կանգ առնել այդ «նոր սկզբունքի» վրայ և ոչ հսկառութեան, որովհետեւ կդերական ոտնձգութիւն ենք տեսնում զրած տեօ-ի մէջ: Մեր եկեղեցու տէրը ժողովուրդն է, իսկ հոգենորականները սպասաւորներ են, որոնք պարտաւոր են չը շեղուել մեր եկեղեցու ողուց և կանոններից:

Եթէ «նոր սկզբունք» յայտարարողները վստահանում են մի նոր կանոն մատղնել մեր եկեղեցու մէջ, որով սահմանափակւում է ժողովրդի աղաս կամքը, ազօթելու բնքնաբուղի ցանկութիւնը, այդ գէպքում ամեն մի հայ իրաւունք ունի պահանջել, որ այդ պարոնները և ասստուածաբանները յոյց տային մեղ մի բացորչ կանոն, որ արգելում է օտարազաւանի համար հոգեհանգիստ կատարել մեր եկեղեցում: Մեկ հարկաւոր է յոյց տալ եկեղեցական ժողովներով ընդունած մի կանոն և ոչ այս կամ այն բարձրաստիճան անձի քմահածոքը, որ օրը տասը անդամ կարող է փոխուել, նայած տրամադրութեան կամթեարգութիւններին: Իսկ ոտի տակ հաստատ օրինական հող չու-

նենալ և վեր կենալ բռնաբարել ժողովրդի իրաւունքը — զախայտառակի ծաղր է ժողովրդի զգացմոնքների վրայ։ Եթէ օտարագուանի համար հոգեհանգիստ կատարելլը մեր եկեղեցին արգելում է, հապա ինչու մինչև ժոր սկզբունքի» գիւտը ոչ ոք չը դիտեր մի այդպիսի կանոն, ինչու այժմ էլ ամեն տեղ բայց Թիֆլիսից, Շուշուց և Էջմիածնից, ուր բազմած են պճնազգիստ մեր «աստուածարանները», միւս «պարզամիտ» հոգեորականները, ժողովրդի հետ միացած, հոգեհանգիստներ են կատարում Ալիշանի համար։ Երեի այդ հոգեուրականներն էլ «անխորական» են.., մի յանցանք, որ մեր «աստուածարանները» գուցէ չը ներէին և Քրիստոսին, արգէն չտփից անց «անխորական» համարելով Նրան։ Ի՞նչ կողմից ուզում էք վերցրէք այդ ժոր սկզբունքը», բայց ոչ քրիստոնէական, ոչ տղային, ոչ արգարութեան տեսակէտից չի կարելի համակրել Նրան։ Այդ «սկզբունքը», եթէ չասենք մեռած ձևականութեան և փարիսիցութեան արգիւնք, յամենայն դէպս պէտք է համարել չը մարսած մաքերի և չը պարզուած զգացմունքների մի ողորմելի խառնաշփոթութիւն, աւելի ոչինչ։

Մեր եկեղեցու վարկը զցող այդ մարդիկ երեի կուզենային որ «Ալիշանը ապաշխարի իր մեղքերը» և «կրկին զառնայ լուսաւորչական եկեղեցու գիրկը», որպէս զի արժանանայ... դրանց հոգեհանգստին։ Սակայն ցանկալի էր արգեաք տեսնել մեր դարում մի կաթոլիկ ընտանիքում ծնուած Ալիշանին կրօնափոխ եղած, երբ համատցանելու համար զՀայրենիացն՝ Հայրենիաց» *), հարկ չը կայ անպատճառ ընդունել Էջմիածնի կաթողիկոսի գերիշխանութիւնը։ Իսկ այլ ևս որ էական յատկանիզով մեր «ազգային» եկեղեցուց տարբերում է հայ-կաթողիկ եկեղեցին։ Երկու տեղ էլ արարողութիւնները, պատարազը, շարականները հայոց գրաբարով են լինում, իսկ Գրիգոր Լուսաւորչին Մինիթարեանները աւելի քիչ չեն պաշտում քան Էջմիածնի վարդապետները։ Կարդացէք, օրինակ, Ալիշանի ամենամերջին գրուածքը «Բազմավէպի» № 11-ում և խոստավունէք որ Լուսաւորչի աւելի ոգեստրուած ջտապով հազիւ գտնէք մեր ամբողջ միաբանութեան մէջ...»

Եթէ հայկական թշուառ իրականութիւնը մի քանի դար առաջ (ինչպէս այժմ էլ Թիրքիայում), Ալիշանի գուցէ պապերին ստիպել է քաղաքական որոշ նպատակով մի քայլ անել և Էջմիածնի կաթողիկոսի փոխարէն Հոռմի պապին ընդունել, միթէ այդ արգէն բաւական է արգարացնելու համար այն ստոր ձեր

*) Ալիշանի խօսքերը „Ալրարատի“ առաջարանում

վրէժինդրութիւնը, որ նպատակ է դրել «նոր սկզբունքը»։ Յամենայն դէպս, «պապական» անհամբերողութեան գէմ բողոքողներին չի սազում զործ զնել «էջմիածնական» անհամբերողութիւն։ Փոխանակական բողոքառակութիւններից առաջացած վէրքերը, այդպիսով աւելի են գրգռում, խորթացնում մեր օտարագաւան աղքալիցներին։ Մինչդեռ արեգակի նման պարզ է, որ կրօնը չը կարողացաւ փոխել հայ ծնուած Ալիշանին, սաոցնել նրա հայրենասիրութիւնը։ Նա մեր հարազատ եղբայրն է, որովհետեւ մեր զարում աղքայնական հարցը արդէն դուրս է եկել կրօնական նեղ փաթաթներից։

Մինչդեռ իրան Աւետարանի աշակերտ համարող մեր աստուածաբանները ջանքեր են գործ զնում պարզամիտ ժողովրդի մէջ մոլուանդութիւն քարոզել, մի մահմանդական թուրք վաճառական ընդհակառակն է գործում։ Նա աշխատում է իր հաւատակիցների մաքերից փարատել ֆանատիկութիւնը։ Մեր խօսքը բագուեցի հարուստ Հաջի-Զէյնալ-Աբդին-Թաղիեվի բացաց զպրոցի մասին է։ Այդ նշանաւոր թիւրք միլիոնատէրը չուզեց նմանել ոչ միայն իր արիւնակից թիւրք հարուստներին, այլ և իրրի թէ «քաղաքակրթուած» հայ խոշոր բուրժուաններին, որոնց մէջ կան շատերը նոյն խոկ բարձրագոյն կրթութեամբ թաղիեվը, թէ և անկիրթ, բայց իր հայեացքներավ աւելի է մօտ ամերիկացի միլիոնատէրներին, քան հայ կրթուած հարուստները։ Հաջին աշխատում է բարեկործութիւններ մասել իր կենդանութեան ժամանակ և ոչ մեռնելուց յետոյ։ Նա շինեց թատրոն, գնեց «Կատուն» լրագիրը և ամբողջապէս յանձնեց թիւրք ինաւելիզենցիային, գումար տուեց նակու քաղաքի ինքնավարութեան—արագացնելու համար մաքուր ջուր մատակարարելու հարցը և, վերջապէս, իր հաշուուլ կառուցեց Բագւում մի հոյական զինութիւն՝ մահմետական աղջկանց կրթութեան համար, միաժամանակ խոշոր գումարով ապահովել այդ հիմնարկութեան կանոնաւոր գործունէութիւնը։

Այսպէս ահա մեզբեսէներում մօլլաների աւանդած «զիւտութիւնը» չէր գոհացնում լուսամիտ Հաջուն։ Պարզ է որ նա լաւ հասկանում է որ նոր կեանքը, թիւրք ժողովրդի գոյութեան նոր պայմանները պահնջում են նոր աշխարհայեցողութիւն՝ հիմնուած գիտութեան և ոչ միայն կրօնի վրայ։ Պէտք է գիտութեան ճառագայթները թափանցեն կանանցներում փակուած թրբուհիների մտքի և հոգու մէջ, որպէս զի նրանք ընդունակ դառնան հասկանալ որ իրանք ճակատագրի ու ըրոշմամբ չեն ստեղծուած իրրե տղամարդու ստրուկ կամ նրա վաւաշուութեան առարկայ, այլ մարդ են մարդկային ամենավիճ

իրաւունքներով։ Եւ բաւական է, որ թրքուհին զարգանայ այնքան, որ ըմբռնի այս ծշմարտութիւնը. նրա ընտանեկան մթնութորտը կը փախուի։ Ապա ընտանեկան վերանորոգութիւնը կը կերպարանափոխի և նրա հասարակական կեանքը, կ'ազատի թիւրքի միտքը թէօկրատիտական կատանքներից։

Այդպէս յեղափոխող է զիտութիւնը, որ ձգուում է բացարձակ ծշմարտութեան, առանց նայելու թէ ում է այդ հաճելի, ում ոչ։ Իսկ զեռ շատ շատերին նրա ազատ զարգացումը հաճելի չէ. առանց գիտութեան դրած խոշնդուտների աւելի աղատ են իրանց զգում՝ որոշ տիպի «հիտազօտողներ»... Նոյն իսկ զէպի պատմական անցեալը այդպիսի «զիւնականները» սիրում են տենդենցիօգ վերաբերմունք։ Պատմական քննազատութեան զաղափարը դրանց անյայտ է։ Դրանք չեն ուղում ընդունել որ պատմութիւնը, իրեն գիտութիւն, իր ասածները պէտք է հիմնի զանազան աղբիւրների, յիշատակարանների և անհերքելի փաստերի վրայ. դրանք չեն ընդունում, որ պատմական աղբիւրներն ու յիշատակարաններն անգամ նախ և առաջ պէտք է անցնեն զիտութեան քննութեան ամենախիստ բովից, որ արժանան վկայ, տապացցյ լինելու այս կամ այն ենթագրութեան։ Բնականաբար, զանազան հեղինակներից բերած ցիտազները գեռ ոչինչ չեն ապացուցում, եթէ այդ հեղինակների սառագութիւնը կտապուած չէ։ Այդպէս չքննազատուած դրութեան մէջ է թէ մեր հայերիս և թէ վրացիների պատմական աղբիւրների մեծագոյն մասը։ Հետեաբար, ոչ միայն վրացիները, այլ և մենք հայերս, մեր Վենետիկով և Վիեննայով, չունենք զիտնականօրէն դրուած պատմութիւն։ Այդ պատճառով չէ կարելի չողջունել Մոուկուայի Ռուսաց Կայսերական Հնագիտական Ընկերութեան Կովկասեան ճիշդի բացումը, որ անշուշտ կ'օդնի աւելի մեծ հռանդով ժողովել, նկարագրել և պահպանել մեր երկրի հնութեան բազմազան մնացորդները, պատրաստել պատմական նիւթեր, մաքրել պատմական յիշատակարանները սխալներից, համեմատել և այլն։ Մրացն այդ նախապատրաստական գործողութիւններից յետոյ կարելի կը լինի գիտնականօրէն պարզել մեր երկրի անցեալ իրականութիւնը ամբողջապէս. այդ է իսկապէս պատմութիւնը։ Իսկ նախ քան այդ նախապատրաստական գործը, առանց պատմական լուրջ քննադատութեան, վեր կենալ և բացարձակ պնդել թէ անցեալում փառաւոր էր և ընդարձակ վրաստանը ու ոչնչութիւն՝ Հայաստանը, կամ ընդհակառակը — դա յամնայն գէպս լուրջ զբաղմունք չը պէտք է համարուի... Դժբախտաբար մեր գարենոր հարեաններից մի քանիսը լոկ սեպագիր անցեալի մէջ չեն ուղում մոլորեցնել ծշմարտութիւնը,

այլ և ներկայում, մեր առօրեայ կեանքում, նոյն իսկ թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան գործերում, ուր, թւում է, անտեղի պէտք է լինէր ազգայնական ատելութիւնը սերմանել մամուլի մէջ...

Այդ ասպարէզում գործող մշակների ճանապարհը վիշտ է: Դրանց գրութիւնը նորերս լաւ պատկերացրեց ոռուս վիպասան Բօրօրըկինը, Պետերուրզի Տնտեսագէտների ժողովում կարդացած իր գեկուցման մէջ. «գրական պրօլետարիատի»—զրողների—անապահով վիճակի մասին էր նրա կարդացածք: Աշխատանքի և կապիտալի հարցը, ինչպէս երեսում է, մուտք է գործել և գրական գործունէութեան մէջ: Այստեղ էլ կան գործի տէրեր կամ «գրական խօզէիններ» և վարձով աշխատաւորներ կամ «գրական բանուորներ»: Մինչդեռ գրական բանուորը իր ամբողջ մտաւորբարոյական կարողութիւնը զոհելով հասարակական գործին, մնունելով յաճախ թողնում է ծայրափոյն չքաւորութեան մէջ ընտանիք, որինք. մինչդեռ նա ծերութեան ժամանակ պէտք է «բարեգործութեան» վրայ յայս գնի—միւս կողմից, այդ նոյն զրողների ծանր աշխատանքով «գրական խօզէինները», հրատարակիչներն ու դրավաճառները, իրանց համար փառաւոր պալատներ են կանգնեցնում: Այդքան ձեռնուու է եղել ոռուսաց կեանքում «գրական ճարտարուեսաը» կամ ինդուստրիան Յայց միայն նիւթական կողմից չեն գրական բանուորները կախուած իրանց «տէրերից», այլ աւելի ևս վատթար է նրանց բարոյական կախումը, որովհեան հրատարակիչների միահեծան կամքը, քմտհաճոյքը, ոչնչով չի սահմանափակուած: Այդ կողմից դաւրս է գալիս, որ գրական բանուորը նոյն իսկ աւելի անապահով է քան Փիզիկական աշխատանքով ապրող հասարակ գործաւորը, որ սովորութիւն ունի իր «փողէինի» հետ իրան ապահովող որոշ պայմանագիր կռել: Գրական բանուորները սովոր չեն պայմաններ կապել և յաճախ խաղալիք են իրանց գործ տուողների ձեռքում...

Ճիշտ է, Խուսաստանում գոյութիւն ունեն զմնազան բարեգործական ընկերութիւններ, որոնց նախատակն է օգնութիւն հասցնել գրական հաշմանդամներին: Այդ տիպի պէտք է լինի և վ. Դ. Կօրպանօվի նախաձեռնութեամբ «Ճպազրական աշխատաւորների փոխադարձ օդնութեան ընկերութիւնը Կովկասում»: Բայց Բօրօրըկինի կարծիքով, որի հետ համաձայն ենք և մենք, այդ տեսակ ընկերութիւններով չէ կարելի բուժել չուրիքը: Դրանք միայն թևթեացնում են մի քանի անհամաների ծանր գրութիւնը և ոչ կազմակերպում հարստահարիչների դէմ մաքսուելու: Համար մի ամբողջ դասակարգ: Այդ և պատճառը,

որ Բօրօրըկինի առաջարկութիւնները պէտք է աւելի արժատական միջոցներ համարել: Նրա կարծիքով գրական բանուորաների գրութիւննը կը բարուոքուի, եթէ կազմուի գրողների գաշնակցութիւն կամ սինդիկատ, հիմնուի գրական գործ տուողների և աշխատաւորների ներկայացուցչական բիորո, կազմուի գրողների համար էմիրիստուրային գանձարան, ամսէ ամիս տուրք հաւաքուի և կազմուի գրամագլուխ՝ գործնականապէս մրցելու համար հրատարակիչների և գրավաճառների դէմ: Գուցէ աւելորդ չը լինի այստեղ մեր ընթերցողին յիշեցնել: Որ ուսւ հրատարակիչներն ու գրավաճառները տրդէն մտածում են առանձին սինդիկատ կազմել, որ անշուշտ աւելի կը վատթարացնի գրողների գրութիւնը: Հետեարար շատ խելացի է Բօրօրըկինի առաջարկը գրողների սինդիկատի մասին. դա կը լինի հակաշչիո, մի կօնտր-սինդիկատ գրական խօզէինների հիմնածի դէմ:

Ճիշտ է, ուսւաց կեանքում ընթերցանութիւնը արդէն այնպիսի մեծ պահանջ է դառել, որ գրական մեծ տաղանդները կարող են բոլորովին անտես առնել հրատարակիչներին էլ, գրավաճառներին էլ. մի Տօլստօյ կամ Ֆօրկիյ այնքան եկամուտ կը ստանան իրանց ստեղծագործութիւնների համար, որ շատ կապիտալիստներ և կալուածատէրներ կը նախանձեն: Բայց գրական տալանդի ըենտան, մշտական եկամուտը, միայն բացառիկ գրողների սեփականութիւն է, մինչդեռ գրականութիւնը, մամուլը, պահանջում են գրական բանուորների մի ահազին լեզիօն: Անհ այդ համեստ, բայց միևնուն ժամանակ կեանքի մէջ անհրաժեշտ աշխատաւորների գրութիւնն մտածին պէտք է մտածել:

Այդ է ահա «գրական պրոլետարիատի» հարցը ուսւաց կեանքում^{*)}: Էլ ինչ ասենք հայերիս գրական աշխատաւորների մտածին, երբ մեր մէջ այնքան քիչ է պահանջում գիրք, լրագիր, ամսագիր, որ ոչ մի կապիտալիստ՝ միայն նիւթական շահ ստանալու գիտաւորութիւնը, կոպէկ անգամ չի մտցնիլ հրատարակականի նման անձեռնութ մի գործի մէջ: Մեզանում հրատարակիչը պէտք է միայն գեֆիցիա ի նկատի ունենայ, եթէ, ի հարկէ, չուզի հարստահարել գրողներին:

Թէ ինչ գրութեան մէջ էր հրատարակական գործը մեզանից մի 40 տարի առաջ, այդ մասամբ յայտնի պէտք է լիւ

^{*)} Դժբախտաբար մենք ձեռքի տակ չոնկինք Բօրօրըկինի գեկուցումը ամբողջապահ և ծանօթացել ենք նրա հետ լրուղական ոչ լիտատար աեղեկութիւններից:

նի և ներկայից, բայց աւելի պարզ այդ հարցը վճռում են Ս. Նազարեանի նամակներից մի քանիսը, սրոնք տպուած են «Հումայի» վերջին գրքում: Նա ստիպուած էր 1863 թուականին դադարեցնել «Հիւսիսափայլի» հրատարակութիւնը բաժանող ների պակասութեան պատճառով: «Ես ամենից առաւել բեռնաւորուած եմ, զործ եմ կատարում տամն մարդու փոխանակ, այլ միւս ինչ առնեմ. մի կտոր հայը, որ ունեմ ձեռքումս ոչ Հայոց տուածով, այլ իմ վարժապետութեամբ, կարող չեմ զաւակիս ձեռքից առնուլ և տալ Հայոց հարուստներին. այս ընդգէմ է մարդկային և աստուածային օրէնքին», — ասում է դառնացած Ս. Նազարեանը: Իսկ թէ ինչ էր ստիպուած գրել Ս. Նալբանդեանը, այդ մենք տեսանք «Մուրճի» № 10-ում (երես 184):

Վերջին 40 տարիների ընթացքում առհասարակ շատ քիչ բան է փոխուել այդ կտղմից հայոց մամուլի մէջ, աշխատողների մեծագոյն մասը կողմանի գործերով է պարապում, որովհետեւ անկարող է ապրել միայն զրական աշխատանքի չնչին վարձատրութեամբ. հայ հրատարակիչները կամ պէտք է հաշտուեն գեֆիցիսի հետ կամ դործը տանեն կիսատապոատ, ձրի աշխատողների վրայ յոյսեր զնելով՝ էլ ինչ ասենք զրական «տաղանդի բնինայի» մասին քանի որ հայոց ամենաժողովրդական զրոյներ՝ Բաֆֆին և Գամառ-Քաթիպան չքաւոր տպրեցին և չքաւորութեան մէջ թողին իրանց ընտանիքը, որբերը: Հայը հասկանում է թէ ինչ է կապիտալի, կալուածքի ընտառ, իսկ զրտիան տաղանդի բենտան մի անըմբոնելի գաղափար է նրա համար:

Եթէ ուզում ենք, որ գրականութիւնը և մամուլը մնագնում լուրջ գործօնների գեր կատարեն, պէտք է փոխենք մեր անտարբեր վերաբերմունքը և մտածենք նրա բարւոքելու հիմնաւոր միջոցների մասին: Քառասուն տարին քիչ ժամանակ չէր. այդ միջոցում աշխարհս հիմնովին կերպարանափոխուեց, իսկ մենք մնացինք անշորժ, այսօր էլ ինչպէս 40 տարի առաջ աւելի կրօնական ինսգիններով ենք զրազուած քան հասարակական, տնտեսական, զրական, գիտական և այլն:

Յանցանք է մեր մտածողութեան մեծագոյն մասը նույրել եկեղեցական չնչին հարցերին և ոչնչ չանել ժողովրդի մտաւոր-բարոյականը կուլտուրական ազգերի հասած ասախաններին հասցնել, յանցանք է չը բանալ նրա մտքի առաջ պատուհաններ, որոնց միջով երեսւմ են աւելի լայն, աւելի հեռաւոր հորիզոններ: Այլափակ պատուհաններ են մեզ հարկաւոր և ոչ անվերջ, ձանձրալի վէճեր տէրտէրների, երէցփոխանների, վարդապետների և հողեհանդիսանների մասին: Եթէ ժողովրդական պատուհանների մասին պատուհանների մասին:

ղովուրդը զարգանայ նա այնպէս անտարբեր չի գտնուիլ գէպի կղերական ուննձգութիւնները ինչպէս այժմ, երբ նրան հեշտութեամբ կարողանում են մոլորեցնել զանազան բախտախրնդիրներ։ Երբ ժողովրդի մոտաւոր-բարոյականը բարձրանայ, նա կարուած չի լինի մեր գրականութիւնից, չի ապրիլ իր առանձին, կղզիացած կեանքով և, աւելի մեծ մամնակցութիւն ցոյց տալով հասարակական հարցերում, կը սափափի որ և մեր գրողներն աւելի ուշ դարձնեն կեանքի հիմնական հարցերի վրայ։ Իսկ այժմ մեր գրականութիւնը, մամուլը մի շատ սակաւաթիւ խմբի հետաքրքրութեան առարկայ է, այդ է պատճառը, որ նա աւելի շրջանական, խմբային բնաւորութիւն է կրում քան լայն հասարակական։ Ինչպէս մի անգամ առիթ ենք ունեցել յիշելու, մեր հասարակական կեանքը պտտում է եկեղեցու, դպրոցի, թատրոնի և մամուլի շուրջը. բայց ինչպէս, ովքեր են այդ «հետաքրքրուողները», եթէ ոչ համարեա միայն հէնց այդ ասպարէզներում գործող անձինք։ Դրանցից գուրս տիրում է մի լուս, անտարբեր անպատճ, որի մէջ կէնտ կէնտ երեսում են նոր վախճանուած Աստուածատուր Կաճկաճեանի նման անհատներ, որոնք իրանց ծերութեան հասակում անգամ պահպանում են ուսանողական կեանքի վեհ իդէալներ, մինչև վերջը գերազանելով հասարակական շահերը անձնական աջողութիւններից։ Բայց քանի Կաճկաճեաններ կարող ենք ցոյց տալ գունդպագունդ կեանքի այլասեռող ալիքների մէջ ընկնող բարձրագոյն կրթութիւն ստացած հայերիս մէջ...

ԼԵԽՈՆ ՍԱՐԴՍԵԱՆ

Հրատարակուած է ներքին գործերի մինիստրի հետևեալ կարգագրութիւնը. «Պետական կարգը և հասարակական համագըստութիւնը պաշտպանելու համար եղած միջոցների կանոնագրութեան 7-րդ յօդուածի համաձայն, անհրաժեշտ համարելով յայտարարել սասակայրած պահպանութեան գրութեան մէջ՝ Ռիգա, Իւրեվ, Մինսկ, Մօգիլէվ, Գօմէլ, Դվինսկ, Վիտեբսկ, Բէլօստօկ, Նիժնի-Նօվգորոդ, Կազան, Տօմսկ, Եարօսլավլ, Սարատօվ, Պոլտավա, Սամարա, Քիշինեվ քաղաքները և Վիլնօի նահանգը, ներքին գործերի մինիստրը դրա մասին զեկուցեց կառավարչական սենատին։

Հրատարակուած է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հետևեալ հրամանը. «Խարկօվի ուսումնարանական շըրտեկամբեր, 1901.՝

ջանի իշխանութիւնից վերջին ժամանակ ստացուած զեկուցումներից երեսում է, որ Խարկօվի կայսերական համալսարանում այս տարուայ հէնց սկզբից բժշկական ֆակուլտէտի 5-րորդ կուրսի ուսանողների մեծամասնութիւնը, որին զեկավարում էին 1899 թուին տեղի ուսեցած անկարգութիւնների պատճառով հեռացրած եւ ապա նորից ուսանող ընդունուած անձնաք, սիստեմատիկական հալածանք յարուցեց իրանց այն ընկերների դէմ, որոնք հաւատարիմ մնալով իրանց պարտականութեան, չը մասնակցեցին ուսանողական շարժմանը և 1899 թուին քննութիւն բռնեցին ժամանակին: Այդ հալածանքը բացատրում է նրանով, որ 5-րորդ կուրսի ուսանողների մեծամասնութիւնը, գլխաւորապէս անկարգութիւններին մասնակցողները, որոնք ժամանակաւորապէս հեռացրած լինելով համալսարանից, կորցրին մի տարի, նախանձով էին վերաբերում իրանց այն ընկերներին, որոնք խաղաղութեամբ շարունակեցին ուսումնական պարապմունքները, մի տարով առաջ անցան և մասամբ այժմ արդէն աւարտեցին ուսման դասընթացքը: 5-րորդ կուրսի 124 ուսանողներից անկարգութիւնների այս կուսակցութեանը միացել են 95 հոգի, որոնց մէջ առանձին դեր է խաղում հրէաների իրար հետ սերտ կապուած մի խումբ, որ բաղկացած է 50 հոգուց: Այս կուսակցութեանը յարել են և բժշկական ֆակուլտէտի 4-րորդ կուրսից բազմաթիւ ուսանողներ, որոնք նոյնպէս մասնակից էին 1899 թուի անկարգութիւններին: Այս հալածանքները արտայայտուեցին նրանով, որ այս տարուայ հոկտեմբերին յիշուած կուսակցութեան ուսանողները սկսեցին պահանջել պրօֆէսօրներից, որ դասախոսութիւններին և զբաղմունքներին օժանդակ-ուսումնական հաստատութիւնների մէջ թոյլ տրուի ներկայ լինել միայն այն ուսանողներին և դասընթացքն աւարտած բժիշկներին, որոնց անունները նշանակուած են այդ կուսակցութեան կազմած առանձին ցուցակում, որի մէջ չէին մտած 1899-ին քննութիւն բռնող բոլոր ուսանողների անունները: Բացի սրանից այս կուսակցութիւնը պահանջում էր, որ նրա ցուցակում չը նշանակուած անձանց չը արուեն օրդինատօրի, ասիստէնտի և այլ պաշտօններ: Պրօֆէսօրների մեծամասնութիւնը կարական կերպով մերժեց կատարել այդ պահանջները, բայց մի քանիսը, երկիւղ կրելով անկարգութիւններից, զիջողութիւններ արին, որոնց հետեանքն այն եղաւ, որ հեռացրին մի քանի բըժիշկներին լարօրատօրիաններից և հիւանդանոցներից: Ծէկտօրի ձեռք առած միջոցները՝ կարգ հաստատելու համալսարանում, աջողութիւն չունեցան: Անկախ այս բանից՝ նոյեմբերի 28-ին

գժգոհների կուսակցութիւնը փորձ փորձեց ժողով գումարել՝ քննելու համար Խարկօվի անասնաբուժական ինստիտուտի Ա կուրսից արձակուած ուսանողների հարցը, բայց համալսարանի ժողովման դահլիճնում հաւաքուած 80 հոգին, առաջ քան թէ կարող էր գալ իշխանութիւնը, արագութեամբ գուրս վազեցին դահլիճից՝ ծեծելու մի քանի ծառաների Դուրս գալով համալսարանի շինութիւնից և անցնելով Սումսկայեա փողոցով, ուսանողների այս փոքրաթիւ խումբը, որին միացան և մի քանի ուսանողներ ուղիւ բարձրագոյն դպրոցներից, ցոյցեր արաւ և երկու պատուհան ջարդեց «Յաշնայ Կրայ» լրագրի խմբագրատանը, սակայն ոստիկանութիւնը անկարգութիւնների առաջն առաւ, ձերբակալելով մօտ 70 հոգու, որոնք կարծ հարցուվորձի ենթարկուելուց յետոյ արձակուեցին: Ապա հետևեալ օրը, նոյեմբերի 29-ին, համալսարանում տեղի ունեցաւ նոր ժողով 200 անձերի մասնակցութեամբ, որ քննում էր անասնաբուժական ինստիտուտի Ա կուրսից արձակուած ուսանողներին համալրութիւն յայտնելու հարցը և որ ձայների չնշին մեծամասնութեամբ վճռեց դիմել գործնական գործադուլիս: Նոյեմբերի 30-ին, որպէս գործադրութիւն ժողովի այս որոշման, մի խումբ ուսանողներ, բաղկացած մօտ 300 հոգուց, ժողովուելով Մաքսիմենկօ և Զագուրսկի պրօֆէսօրների գասախօսութիւններին, չվոցով, աղաղակներով և բռնութիւն գործ դնելու սպանուալիքներով խանգարում էին գասախօսութիւնները: Ուսանողները իրանց հետքերել էին լսարան և մի քանի սրուակ ծմբածխածին գազ, որի պատճառով, ինչպէս նաև հոգեկան յուգմունքի չնորհիւ, պրօֆէսօր Զագուրսկի և գասախօսութիւնները լսող ուսանողներից մի քանիսը խոր ուշաթափութեան մէջ ընկան: Նոյն օրը, ժամի 3-ին կէսօրից յետոյ, քաղաքային թատրոնի մօտ հաւաքուած ուսանողների խումբը, թուռվ մօտ 300 հոգի, սկսեց երգել տպուած երգեր, բայց ցրուեց ոստիկանութեան միջոցով: Դեկտեմբերի 1-ին անկարգութիւնները համալսարանում շարունակում էին նոյն եղանակով, ուստի և գասախօսութիւնների ընթերցանութիւնը այդ օրը, բէկտօրի կարգադրութեամբ, դադարեց: Վարչութեան որոշմամբ, որ կայացաւ նոյեմբերի 30-ին, 52 ուսանող, անկարգութիւններին յայտնապէս մասնակցողներից, արձակուեցին համալսարանից, և տեղական ուսումնարանական իշխանութիւնը դիմեց ինձ ինդրելով թոյտուութիւն տալ դադարեցնել դասախօսութիւնները մինչև զեկուեմբերի 20-ը: Ի նկատի առնելով վերոյիշեալը, ես չեմ կարող իմ խորին վիշտը չը յայտնել, որ բարձրագոյն կրթութիւնն աւարտող երիտասարդները կարող էին թոյլ տալ իրանց, և այն էլ

ուսումնարանի պատերի մէջ, անքաղաքավար, խռովայոյզ և անձոռնի վարմունքներ, որոնք այնքան քիչ վայել են կրթուած մարդկանց, և հասնել մինչ այն տեղը, որ բանութիւն գործ դնեն պրօֆէսօրների և ոչ մի յանցանք չունեցող ընկերների վերաբերմամբ, որոնք ցանկանում են շարունակել իրանց պարապմունքները: Անհրաժեշտ համարելով անյապաղ միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու այդ ցաւալի երեսյթը և վերականգնելու ուսուցման գործի կանոնաւոր ընթացքը, ուշագրութեան առնելով նոյնպէս, որ անկարգութիւններին մասնակցում է միայն չնչին փոքրամասնութիւն, որ չէ կամննում պարապել, և այս պատճառով դասախուսութիւնների դադարեցումը կը մնասէր ուսանողների ահազին մեծամասնութեան շահերին, որոնք (ուսանողների ընդհանուր թիւը 1,800 է) չեն մասնակցում տնկարգութիւններին, ես առաջարկում եմ Խարկօվի ուսումնարաննական շրջան կառավարչին—1) դասախուսութիւնները, ինչպէս նաև պարապմունքները լաբօրատորիաներում, կարինէտներում և հիւանդանոցներում չը դադարեցնել՝ պարապելու լիուլի հնարաւորութիւն տալով այն ուսանողներին, որոնք կամենում են պարապել. 2) պարտաւորեցնել համասարանական վարչութեանը անյապաղ ձեռնամուխ լիմել պարզելու այն ուսանողների յանցանքը, որոնք մասնակցել են նոյեմբերի 30-ի և գեկտեմբերի 1-ի անկարգութիւններին, և ենթարկել նրանց, իրանց յանցանքի չափով, արժանի պատժի, սկսած յանդիմոնութիւնից մինչև արձակումը համալսարանից որոշ ժամանակամիջոցներով. 3) խնդրել պարոններ պրօֆէսօրներին ամեն միջոցներով աջակցութիւն դոյց տալ անկարգութիւններին չը մասնակցող ուսանողներին, նոյնպէս և ընթացաւարտներին, որոնք այժմ աշխատում են լաբօրատորիաներում, կարինէտներում և հիւանդանոցներում, յիշելով, որ ծառայողական պարագը և երգումը մեզ բոլորիս վրայ սրբազն պարտաւորութիւն են դնում կատարեալ աջակցութիւն ցոյց տալու բէկտօրին՝ ոչ միայն անկարգութիւնները դադարեցնելու, այլ և նախօրօք նրանց առաջն առնելու գործում, և 4) յայտնել դասընթացքն աւարտող ուսանողներին՝ թէ այն անձանց, որոնք արգելվ կը հանդիսանան ուսման գործի կանոնաւոր ընթացքին, թոյլ չի արուի 1902 թուականին պետական քննութիւն բռնել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նիկարագուայի ջրանցքը.—Անգլիայի զիջողականութիւնը, — Բօդրէրիի և շեմբերէնի վերջին ճառերը, — Գերմանական շովինիզմը վիրաւորուած հշմարիտ խօսքերից, — Վրէշէնի դէպքը, — Աեհական աղիտացիա, — Ազգային համարաբանների հարցը Աւստրիայում, — Վալդէկ-Ռուսասօի վերաբերմունքը դէպի ներսի և զրոի միաբանութիւնները, — Թիւրքաց վեզիրների նշանակութիւնը, — Կիլիկիայի նոր կաթողիկոսի ընտրութիւնը,

Մարդկային մտքի մի նոր վիթխարի ձեռնարկութիւն պիտի յեղաշրջի միջադպային հազորդակայցութիւնները այնպէս, ինչպէս 1869 թուին Լեսսեպսի հանձարով իրազործուած Սուէզի ջրանցքը, որ անջատեց Աֆրիկան Ասիայից և միացրեց Միջերկրական ծովը Կարմիր ծովի հետ, Այժմ մարդկային խիզախ ոգին գտնուած է որ Ամերիկայի ցամաքը խանգարուած է երկու անեղ ովլիխանոսների ալիքներին գրկախառնուել, ուստի նա մի հսկայական ջրանցքով ուզուած է միացնել Ատլանտիան և Խաղաղ ովլիխանոսները:

Դեռ 1880 թուին Լեսսեպսը փրանսիական կապիտալիստներից ակցիօններական ընկերութիւն կազմեց իրազործելու համար այդ միջովիկանական ջրանցքի միտքը, ընտրելով զրահամար կենարունական Ամերիկայի ամենանեղ մասը, Պանամեան պարանոցը, բայց 1888 թուին այդ ընկերութիւնը մնանկացաւ: Համարեա միաժամանակ Հիւսիսային Ամերիկայում կազմուեց եանկիների մի ընկերութիւն, որ ուզում էր մրցել այդ ջրանցքի հետ, փորելով նրանից հիւսիս, աւելի մօտ Միացեալ-Նահանգներին, Նիկարագուայի ջրանցքը: Այդ ընկերութիւնը քայլացուեց և կազմուեց մի այլ ընկերութիւն, որ ընդունեց ինժեներ Մինակօլայի կազմած ծրագիրը՝ այդ ջրանցքը իրազործելու համար: Ապա այդ ընկերութիւնը, չը կարողանալով հա-

ւագել պահանջուող ամբողջ գումարը, համոզեց Միացեալ-Նահանգների կառավարութեան՝ իր ձեռքը վերցնել ջրանցքը վերջացնելու գործը:

Վաշինգտօնի կառավարութիւնը ընտրեց առանձին մի մասնաժողով, պարզելու համար թէ ո՞ն է ձեռնաու՝ գնել Պահանջան մնանկացած ընկերութիւնից նրա գործը շարունակելու իրաւունքը, թէ գերադասութիւն տալ Նիկարագուայի ջրանցքին: Մասնաժողովի զեկուցումը համոզեց, որ Մ.-Ն.-ին աւելի ձեռնաու է Նիկարագուայի ջրանցքը: Մի տարի առաջ Վաշինգտօնի և Լօնդօնի կառավարութիւնների մէջ պայմանագիր գրուեց, որով ջրանցքը բոլոր ազգերի դրօշակների համար ազատ համարուելով, այնուամենայնու մնում էր այդ երկու պետութիւնների վերահսկողութեան տակ: Բայց Վաշինգտօնի սենատը չը հաստատեց այդ պայմանագիրը և նորերս երկու պետութիւնների մէջ կնքուեց մի նոր պայմանաթուղթ, որով ջրանցքի չէզդուութեան պահպանութիւնը վերապահուում է Միացեալ-Նահանգներին: Եւ հասկանալի է Անգլիայի զիջող քաղաքականութիւնը այս վերջին տարիների ընթացքում. նա բռնուած է հարաւ-աֆրիկական դաւիդ:

Անգլիական ազգը սկսել է սաստիկ ձանձրանալ այդ ցաւից: Վերջին ամսուայ ընթացքում մի շարք քաղաքական գործիչներ զանազան քաղաքներում ճառեր ասացին, որոնցից գժուար չէ եղակացնել, որ բոլոր կուսակցութիւնները բուռն ցանկութիւն ունեն վերջ դնել անգլիական ազգի նիւթական և բարոյական շահերին այնքան վնասող այդ արիւնհեղութեան՝ զէթ մինչև էզուարդ VII թագադրութեան օրը, որ նշանակուած է յունիսի 13-ին: Ակսել են մօտալուտ հաշտութեան մասին յամառ լուրեր պարտել: Բոլոր կուսակցութիւնների պարագլուխները համաձայն են, որ խաղաղութիւնը պէտք է պատուաւոր լինի Անգլիայի համար, նոյն իսկ նրա պահպանողականները յայտնում են, որ բօէրներին պէտք է տրուի մօտ ապագայում լիակատար ինքնավարութիւն, ինչպիսին վայելում է, օրինակ, Կամսարն: Արտասահած ճառերից երկուսը մանաւանդ մնծ աղմուկ հանեցին: Զեմբերլէնի էղինքուրգեան և Տօղբէրիի չեստերփիլդեան ճառերը: Այս վերջինի նորից քաղաքական ասպարէզ գուրս գալը մնծ յոյսեր է տալիս անգլիական ազգի մեծագոյն մասին, որ հաւատացած է թէ միայն նախկին առաջին մինիստրը՝ Գլազուտօնի յաջորդ Տօղբէրին, կարող է Անգլիան հանել իր ներկայ նեղ դրութիւնից: Սակայն Տօղբէրին իր ճառով ցոյց տուաւ, որ նա համակարծիք չէ ազատականներին և ա-

ւելի թեքում է աղատական-կայսերականների կամ լիբերալ-իմպերիալիստների կողմը, ինչպէս մենք առել էինք դեռ օգոստոս ամսուայ մեր տեսութեան մէջ։ Այժմ նա այդ աւելի ևս որոշ ապացուցեց իր վերջին ճառով. նա ոչ միայն չի պախարակում Զեմբերլէնի գործոնէութիւնը, այլ և անհրաժեշտ է համարում նրա ներկայութիւնը, եթէ հարկաւոր լինի նոր մինիստրութիւն կազմել երկու հակառակորդ գործիչները այժմ մօտենում են իրանց քաղաքական հայեացքներով և պրինց Ռւելսին կօնդօնի Սիտիի լորդ-մէրի տուած բանկէտում Զեմբերլէնը և Շօգրէքին իրար կենաց էին խմում և իրար կօմպլի-մենաներ ասում...

Բայց աւելի մեծ աղմուկ հանեց արտասահմանում, մասնաւանդ Գերմանիայում, Զեմբերլէնի էդինբուրգեան ճառը, որի մէջ նա բացայաց ճշմարտութիւն էր ասում, առանց զիպլօմասիական զգուշութիւնների դիմելու և համեմեներով քօղարկելու իր միտքը, Բիսմարկի անգլիացի աշակերտը պնդում էր, որ Հարաւային Աֆրիկայի անգլիական զինուորական իշխանութեան ձեռք առած միջոցները իրանց խստութեամբ դեռ շատ հեռու են այն միջոցներից, որ ընդունել են զանազան ժամանակներում միւս բոլոր մեծ պետութիւնները, ի միջի այլոց և Գերմանիան-վերջին ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ։ Թէև Զեմբերլէնի այդ ասածների մէջ զուտ ճշմարտութիւն կար, բայց, այնուամենայնիւ, բոլոր աղքերի չօվինիստները վիրաւորուեցին, մանաւանդ զերմանացի աղջասէրները,

Այդպէս են ստեղծուած երկրագնտիս բոլոր մարդիկ. միշտ ուրիշի աչքի ծեղը աւելի մեծ է երեսում քան սեփական աչքում տնկուած գերանը... Զեմբերլէնի ասածները հաստատելու հուհամար մենք կարիք էլ չունենք դիմել բոլորին յայտնի պատմական իրողութիւններին, այլ բաւական է յիշել վերջերումս Պօգնանում պատահած սրտածմիկ գրաման, որ երեկ յայտնի է ընթերցողին լրագրներից։ Մեր խօսքը Վրէշէնում տեղի ունեցած դէպքի մասին է։

Անցեալ տարի լեհական այդ քաղաքում սկսուեց իրագործուել պրուսական կառավարութեան այն կարգադրութիւնը, որով արգելում էր լեհ երեխաններին կրօնը դասաւանդել իրանց մայրենի լեզուով և պահանջում էր այդ անել զերմաներէն։ Բոլոր աշակերտները մերժեցին զերմանացի ուսուցչի պահանջը—պատասխանել զերմաներէն։ Տասներկու-տասներեք տարեկան տղաների և աղջիկների այդ շըմբոստութիւններին»

քաղսկական կերպարանք տուաւ պրուսական վարչութիւնը։ Կանչուեց ժողովրդական գլուխների տեսուչը, որ կարգադրեց ծեծել անհնազանդ լին մանուկներին։ Ծեծուող մանուկների ճիշը հրատիրեց հարեանների ուշադրութիւնը։ Ուսումնարանի առաջ հաւաքուեց բազմութիւն, որի միջից դուրս եկան մանուկների մայրերը և ներս խուժեցին դպրոց, ազատելու համար իրանց լայցող երեխաններին։ Գրգուած ամբոխը սկսեց քարեր շպրտել դպրոցի պատուհաններին և աղաղակել։ «Ծեծեցէք այդ գերմանացի չներին, որոնք չարչարում են լին մանուկներին»։ Գերմանացի ուսուցիչները ազատուեցին փախուստով։ Եկաւ պօլիցիան և ձերբակալեց խոռվարաններին։ Ապա Գնէզնէում պրուսական գատաստանը յանցաւորներին դատապարտեց 4 ամսից ակսած մինչև $2\frac{1}{2}$ տարի բանտարկութեան։ Այդպէս վերջացաւ պրուսական կոփւը լին մանուկների և դրանց մայրերի դէմ։

Ով ճանաչում է լին ազգի պատուասիրութիւնը և նրա զարգացած ազգային ինքնասիրութիւնը, նա կը հասկանայ թէ ինչ զայրոյթ պէտք է յարուցանէր պրուսական այդ բռնութիւնը։ Գերմանացիների դէմ սկսուեց լեհական շարժում, որ մեծ ծաւլ ստացաւ մանաւանդ Գալիցիայում։ Լազմուեցին միտինգներ, ուր կրակոտ ճառեր էին արտասանուում պրուսական իրժկըժութեան դէմ, հանգանակութիւն բացուեց բանտարկեալների օգտին, որ կարձ միջոցում մի քանի տասնեակ հազարների հասաւ, 70,000 կրօն։ Ամեն գասակարգի և սեռի լեհացիներ բուռն մամնակցութիւն ցոյց տուին այդ ազգային գործում։ Լեհ ուսանողները կամաւոր տուրք սահմանեցին մնջադրուածների օգտին։ Լվօվում և Վարչավայում գերմանական հիւպատոսարանի առաջ մեծ ցոյցեր տեղի ունեցան։ Գալիցիայի զանազան քաղաքների լին վաճառականները և արհեստաւորները որոշեցին խղել իրանց առևտրական յարաբերութիւնները գերմանացիների հետ։ Զրօրհնէքի տօների առիթով գերմանական ֆիրմաներից ստացուած պրէյս-կուրանները վերադարձնուած էին։ «Հի ընդունուած Վրէշէնի պատճառով» մակագիրը վրաները հայլն եայն։

Ի հարկէ, գերմանական ազգի լաւագոյն մասը չէ համակրում պրուսական իշխանութեան այդ բռնի գերմանացման քաղաքականութեանը, և, երբ Վրէշէնի դէպքի առիթով բայիլը ստագի պատգամուոր լին իշխան Ռաձիվիլլը բացատրութիւններ պահանջեց Բիւլօվից, պարզ երեաց, որ գերմանական ժողովրդի ներկայացուցիչների մեծամասնութիւնը պախարտկում

էր վարչութեան բռնի ընթացքը լեհացիների նկատմամբ։ Բայց ինչ կարելի էր սպասել Բիսմարկի աշակերտ Բիւլօվից։ Նա խրոխտաբար յայտնեց որ դա բայխստափի գիտենալու բանը չէ, այլ պրուսական իշխանութեան ներքին դործն է։ «Ազգային եսականութիւնը արդարութիւնից բարձր է»—ահա նրա ասածների ծուծը ինչպէս նկատեց սոցիալիստ Միգերբուրդ՝ XVI դարում տիրում էր ույս regio, ejus religio սկզբունքը, այսինքն «որի երկիրն է, նրա կրօնն է տիրողը», իսկ այժմ «կրօն» խօսքի տեղ զործագրում է «լեզու», և աշխատում են զօտով ընդունել տալ տիրապետողների լեզուն, ինչպէս առաջ՝ կրօնը։

Ի պատիւ Աւստրիայի պէտք է տաել որ այնտեղ աւելի մեծ համբերողաւթիւն է տիրում դէպի զմնազան ազգութիւնների ինքնուրոյնութիւնը։ Նրա սահմանագրութեան 19 յօդուածը ասում է. «Աւստրիայի բոլոր ազգութիւնները հաւասարուած են իրաւոնքներում և նրանցից իւրաքանչյուրին պատկանում է անվիճելի իրաւոնք—պահպանել և զարգացնել իր ազգայնութիւնը և լեզուն։ Պետութիւնը ընդունում է բոլոր լեզուների իրաւոնքի հաւասարութիւնը դպրոցներում և հասարակական պետական հիմնարկութիւններում։ Հիմնուելով այս յօդուածի վրայ, Աւստրիայի համարեա բոլոր մեծ ազգութիւնները ունեն սեփական դպրոցներ և համալսարաններ։ Մինչև այժմ համալսարաններ չունեն միայն ուսումները, սովորութիւնները և իտալացիները։ Այժմ դրանք բայխորատին են դիմում և պահանջում համալսարաններ բանալ ուսումների համար Լվովում, սովորութիւնների համար Լայրախում և իտալացիների համար Տրիեստում։ իսկ չէխուրը, չը բաւականանալով Պրադայի համալսարանով, պահանջում են երկրորդ չեխական համալսարան էլ հիմնել Մօրավիայի Բրիւնն քաղաքում, և Աւստրիայի մայրաքաղաք Վիեննայում էլ ուզում են հիմնել չեխական-ժողովրդական բազմաթիւ ուսումնարաններ։

Ազգայնական հարցը այնպիսի գերակշռող գեր ունի ստանձնած Աւստրիայում որ, ինչպէս մի քանի անգամ տեսանք, բայխըսրատի կանոնաւոր պարապունքները չեն կարողանում առաջ գնալ, մանաւանդ չէխուգերմանական հակառակութիւնների պատճառով։ Բանը ախտեղ հասաւ որ մինիստր-հախսագահ Կեօրքէրը ստիպուած եղաւ սպանեալ բայխորատի արծակումով և կայսրի միահեծան իշխանութիւնը վերականգնելով, եթէ շարունակուի օբստրուկցիան... կաթոլիկ և կեղեցին անգամ այդ երկրում կապւում է ազգայնական շարժման հետ, և գերմանացիները՝ կաթոլիկ հոգհորականութիւնը կողմնակից համարելով չեխական

ձգտումներին, իրանց զրօշակի վրայ զրեցին՝ «Հեռու Հոռմից» նըշանաբանը։ Բայց կաթոլիկ կղերը գեռ շատ մեծ ոյժ ունի երկրում։ Նրա ջերմ կողմնակից է նաև թագաժառանգը։ Այդ պայմանների չնորհիւ Աւստրիան դառել է Ֆրանսիայից աքսորուող միարանութիւնների համար մի տեխալի երկիր։

Ֆրանսիայի միարանութիւնների դէմ ընդունուած օրինագծի մասին խօսելիս մենք առիթ էինք ունեցել մատնանիշ անել Վալդէկ-Ռուսսոյի գործ դրած երկու չափերի մասին։ մէկը ներքին կեանքում, միւսը արտաքինում (տես № 4)։ Այժմ մի նոր փաստ ևս դալիս է համոզելու մեզ այդ բանում։

